# ԷՋՄԻԱԾԻՆ



Ը

2003

ԾԹ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ДУБЛЕТ
Академия наук Армянской ССР
Фундаментальная библ.

Օգոստոս
2003

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** Օրհնության գիրը
Նոր Ջուղայի հայոց թեմի հիմնադրման 400-ամյակի առիթով . . . . . . . . 3
**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
Գերաշնորհ Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանին
«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . 6
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը
Գերաշնորհ Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանին՝
քահանայական ձեռնադրության քառասնամյակի առթիվ . . . . . . . . . 8
**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
պեր և փիկին Արեպ և Մոնիկ Երկանյաններին
«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . 10
**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
Ռաֆայել Պապայանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով
պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 12
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը
եգիպտահայ վարժարանների նախկին սաների՝
Երևանում կայացած հավաքի առիթով . . . . . . . . . . . . . . . . . . 14
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը
Հայաստանի Ճարտարագիտական Համալսարանի
հիմնադրման 70-ամյակի առիթով . . . . . . . . . . . . . . . . . . . . 16
Հայրապետական գնահատություն . . . . . . . . . . . . . . . . . . . . 18

Գարեգին Բ Կաթողիկոսի Հայրապետական փնօրհնությամբ
կարգալույծ է հռչակված Արմավիրի թեմի
Տ. Մաշտոց քահանա Իսայանը . . . . . . . . . . . . . . . . . . . . . 19
Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանը պարգևատրվեց
«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով . . . . . . . . . . . . . . . . . . 20
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը
պատվոգիր հանձնեց Մաքսիմ Հակոբյանին . . . . . . . . . . . . . . 21

## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . 22
Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանի քարոզը՝
խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում . . . . . . . . . . . . . . . . 25
Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյանի քարոզը՝
խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում . . . . . . . . . . . . . . . . 28
Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի քարոզը՝ խոսված

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . 31
Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . 36
Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին
և քահանայական ձեռնադրության . . . . . . . . . . . . . . . . . . . . 39

## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Սուրբ Եպիփան եպիսկոպոս Կիպրացու գովեստը
Սուրբ Աստվածածին և միշտ Կույս Մարիամի մասին . . . . . . . . . . 42
**ՇՆՈՐՀՔ Ծ. ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ** - Քահանան պատարագիչի
պաշտոնին մէջ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 51
**ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ** - Աղանդների գործունեության հոգեբանական
առանձնահատկությունները. դրանց «առաքելությունը»
և անձանց ներգրավման հոգեբանական մեխանիզմները . . . . . . . 59

## ՆԱՐԵԿԸ ԵՎ ՆԱՐԵԿԱՑԻՆ

**ԶԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆԻ** - Նարեկ Նարեկացի . . . . . . . . . . . . . . . . 64
**ՎՐԵԺ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - Գրիգոր Նարեկացին
ժամանակի աշխարհազգացողության ծիրում . . . . . . . . . . . . . . 66
**ԱՌԱՔԵԼ ՍՈՒՐԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - Գրիգոր Նարեկացու
«Մատյան Ողբերգության» պոեմը որպես
համամարդկային հոգեվերլուծություն . . . . . . . . . . . . . . . . . . 78
**ՀԱԿՈԲ ՊԵՏՐՈՍՅԱՆ** - Նոր գիրք Նարեկացու և Նարեկի մասին . . . . . . 88
**ԷՄՄԱ ԿՈՐԽՄԱԶՅԱՆ** - Բարձր Հայքի XIII դարի վերջի և XIV դարի
մանրանկարչության առանձնահատկությունները . . . . . . . . . . . . 91
**ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐՅԱՆ** - Մի դրվագ հայ-արաբական
մշակութային հարաբերություններից . . . . . . . . . . . . . . . . . . 96
**ՎԻԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ** - Ուսումնասիրություն՝
նվիրված Ղրիմում նկարազարդված մի ձեռագրի . . . . . . . . . . . . 107

## ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

**ԱՍՏՂԻԿ ՄԱՀԱԿՅԱՆ** - Կենսագրական նոր բառարան . . . . . . . . . . 112

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Քահանայական ձեռնադրություն և Ուխտի Ս. Պատարագ
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 114
Տ. Նարեկ աբեղա Ավագյան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 116
Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 117
Տ. Դանիել վարդապետ Ֆինդըգյանին շնորհվեց
մասնավոր վարդապետության աստիճան . . . . . . . . . . . . . . . . 118
Տ. Դանիել վարդապետ Ֆինդըգյան . . . . . . . . . . . . . . . . . . . . 118
Ջեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի

օծվեց Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի
նորակառույց Ս. Թուխ Մանուկ եկեղեցին . . . . . . . . . . . . . . . 120
Գերմանահայոց թեմի Ռայխի Ս. Պատարագը Մայր Տաճարում . . . . . . . 121

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
կոնգրեսական Ջոզեֆ Քրոուլիին . . . . . . . . . . . . . . . . . . . . 122
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
ԱՄՆ սենատորների և կոնգրեսականների
աշխատակազմի պատվիրակությանը . . . . . . . . . . . . . . . . . . 123
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
ճանապարհորդ Ֆյոդոր Կոնյուխովին . . . . . . . . . . . . . . . . . 124
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի
մշակույթի և կրոնի գործերի նախարար Լոռենցիու Թընազեին . . . . . . 125

Եկեղեցական բժմ. լուրեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 126

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 128
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . . . . . . . . . . . 131

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"**
**Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie**

ԴԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

## Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՎ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 400-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ, ՈՐ Ի ՍՊԱՀԱՆ (ՆՈՐ ՋՈՒՂԱ), ԻՐԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում ենք Ձեզ՝ իրանաբնակ սիրեցեալ Մեր զաւակներիդ, որ հաւատով ու հայրենապաշտ ոգով պատրաստւում էք տօնախմբել Նոր Ջուղայի հայոց թեմի 400-ամեայ պանծալի յոբելեանը, ինչպէս որ ուրախութեամբ տեղեկացանք Հոգեշնորհ Տ. Շահան ծ. վարդապետ Սարգիսեանից:

Ամենայն Հայոց Հայրապետիս համար գեղեցիկ առիթ է խօսք ուղղելու Իրանում հարիւրամեակների յիշատակներով, նախնեաց հաւատով ու սրբութիւններով ապրող մեր Սուրբ Եկեղեցու զաւակներին: Գոհութեան աղօթք ու փառք ենք բարձրացնում առ Աստուած, որ դարերի փորձութիւնների մէջ Հայրենիքում եւ նրանից դուրս խնամեց իր հօտը փոքրիկ ու պահպանեց քրիստոնէութեան լոյսով հոգեզուարթ:

Նոր Ջուղայի՝ Սպահանի հայոց թեմի 400-ամեան շրջում է մեր հայեացքները դէպի անցեալի յիշատակները, երբ 17-րդ դարասկզբին տեւական աւերիչ պատերազմներից յետոյ Շահ Աբասը Հայաստանից դուրս բերեց բազմահազար գաղթականութիւն, որպէսզի հայ արհեստաւորներով, հողագործներով ու վաճառականներով շէնացնի Իրանի տնտեսութիւնը: Ստուարացան Իրանի հայ գաղթօջախները, հիմնուեց նաեւ Նոր Ջուղան՝ բնակեցուած հիմնականում վաճառաշատ Ջուղա քաղաքի վերաբնակիչներով: Այս անցուդարձերում իր

ողջ ուժգնութեամբ ու վեհութեամբ փեսանելի եղաւ հայ հոգու հաւապարմութիւնը Հայրենի-
քին ու Քրիստոսահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Յայտնի է, որ պարսից Շահը, փա-
րակուսած հայ գաղթականների սիրուց ու կարօտից առ Հայրենիքը եւ Միածնաէջ Մայր Ա-
թոռը, եւ որ «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան».
մտադրուեց Մայր Տաճարը քանդել ու կրկին կառուցել Սպահանում, որպէսզի Իրանի հողը
հարազատ դառնայ փարագրուած հայութեան համար: Բարձրեալի Կամքով միայն 16 քա-
րեր փոխադրուեցին Նոր Ջուղա, ուր հաստատուած բարեպաշտ զաւակները մեր ժողովրդի
կառուցեցին Սուրբ Տաճար Աստուծոյ՝ Ամենափրկիչ փառափես եկեղեցին, որի խորանից
վեր, ինչպէս ամենուր, կանթեղուեց Լոյսը Սուրբ Էջմիածնի: Շողակաթ Լոյսով Սուրբ Էջ-
միածնի շարունակ պայծառ ու զօրացեալ մնացին իրանահայոց հոգիները, եւ իրանահայ
թեմերի կենսագրութիւնը հիւսուեց իբրեւ հայրենեաց սիրոյ բացառիկ պատմութիւն:

Հայ Եկեղեցու թեւերի ներքոյ իրանահայ գաղթօջախներն ապրեցին կենսունակ ու համախումբ, եկեղեցիներ ու դպրոցներ կառուցեցին, որպէսզի նախնեաց հաւատը, իմացութեան լոյսն ու ազգային արժէքները գծեն կեանքի շաւիղը հայ զաւակների, կերտեցին ինքնատիպ մշակոյթ, որը հարուստ է ազգիս անձնանուէր մշակների անուններով: Նրանց լուսաւոր փաղանգի մէջ են դժուարին ժամանակներում մեր ժողովրդին հովուած իրանահայ երանաշնորհ Հայրապետները Հայոց, որ ապրեցին ազատ Հայաստանի այսօրը հայեացքի առջեւ:

Մեր պատմութեան ոսկեգիր էջեր են գրել Ձեր պապերն ու հայրերը, որոնք միաժամանակ Իրանի պատմութեան յիշարժան փարեգրութիւն են կազմում: Այսօր էլ Դուք, հպարտ նախնեաց վաստակով ու ժառանգութեամբ, Ձեր կարեւոր ներդրումն էք բերում Իրանի հասարակական կեանքի առաջընթացին եւ, իբրեւ ազնիւ քաղաքացիներ, բարի համբաւ էք յաւելում մեր ստեղծագործ ու արարող ժողովրդի անուանը: Ցիրաւի, հանգամանքների բերումով ուր էլ ապրեցին, ինչ ասպարէզում էլ գործեցին իրանահայ մեր զաւակները, բոլոր դարերում երբեք չթերացան իրենց վաստակը, անմնացորդ ջանքերն ու հոգու ողջ ուժը բերել հայոց համազգային ծրագրերին, Հայաստանի ազատագրութեան լոյս ձգտումին, իսկ այսօր՝ վերանկախացեալ մեր Հայրենիքի շինութեանն ու նոր յոյսերով լեցուն մեր ժողովրդի վերազարթօնքին:

Սիրելիներ, փարբեր երկրներ Հովուապետական Մեր այցելութիւնների ընթացքին Մենք բազմիցս հիւրընկալուել ենք Իրանահայ Միութիւններում, ինչպէս նաեւ առիթ ենք ունեցել հանդիպելու ուխտաւորաբար Սուրբ Էջմիածին այցելող շատ իրանահայերի եւ միշտ համոզուել ենք, որ, հակառակ վերջին ժամանակների դառնագին անցուդարձերի, ջերմ սիրով էք դուք կապուած Աստուածակառոյց Սուրբ Էջմիածնին ու նուիրական մեր Հայրենիքին: Մեր յորդորն ու պատգամն է, որ միշտ ամուր մնաք Ձեր հաւատքի մէջ, հաստատուն՝ առ Հայրենիքն եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին Ձեր սիրոյ մէջ: Ձեզանով եւ իր բոլոր զաւակներով են կանգուն, պայծառ ու զօրացեալ մեր Հայրենիքը եւ մեր Սուրբ Եկեղեցին:

400-ամեայ արժանայիշատակ այս մեծ փարեդարձի առիթով Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Սպահանի հայոց

թեմի հոգեւոր ուխտապահ դասին, թեմական-եկեղեցական կառոյցների պատուարժան անդամներին, հայրենակցական ու մշակութային միութիւնների բարեջան անդամներին, ողջ իրանահայութեանը եւ հաւատաւոր համայն մեր ժողովրդին ի սփիւռս աշխարհի:

Հայրապետական Մեր գնահատանքն ու բարեմաղթանքներն ենք յղում Իրանի իշխանութիւններին եւ Աստուածասէր ժողովրդին, որոնց բարեացակամ վերաբերմունքը վայելելով՝ հայորդիներն ապահով ու խաղաղ կերտում են իրենց հոգեւոր-ազգային կեանքը:

Թող Բարին Աստուած խաղաղութեան ու բարօրութեան մէջ պահի բարեկամ երկիր Իրանը եւ նրա ժողովրդին, Իր օրհնութեան ներքոյ հաւատաւոր, շէն ու բարգաւաճ պահպանի աշխարհասփիւռ ազգս հայոց՝ ի փառս Իր Սուրբ Անուան, որպէսզի հայոց երկնակամարում միշտ ճառագի մեր հաւատի ու հայրենեաց սիրոյ բորբ արեգակը:

*«Հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա. Կորնթ. ԺԶ. 13):*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Տուաւ Գիրս Օրհնութեան ի 13-ն Օգոստոսի**
**յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**ընդ համարաւ 360**

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԱՐՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ, ՈՐ Ի ՄԱՐՍԷԼ, ՖՐԱՆՍԻԱ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բազմավաստակ սպասաւորիդ:

Սիրելի Սրբազան, ուրախ ենք անդրադառնալու, որ ծառայութեան նկատմամբ դրսեւորած Ձեր նախանձախնդրութեան եւ ուխտապահ ոգու շնորհիւ հոգեւորականի Ձեր առաքելութիւնը պսակուել է եկեղեցաշէն ու ազգօգուտ բազում յաջողութիւններով՝ Ձեզ արժանացնելով եպիսկոպոսական բարձր կոչման:

Աhաւասիկ, քառասուն տարիներ Դուք քաջ եւ բարի հովուի յանձնառութեամբ քահանայագործում էք մեր Եկեղեցու լուսաւոր անդաստանում՝ Ձեր ծառայութիւնը բերելով Սփիւռքում բնակութիւն հաստատած մեր ժողովրդի զաւակներին: Ձեր պաշտօնավարութեան բոլոր վայրերում՝ Դամասկոսի եւ Հոնաստանի հայոց թեմերում, ինչպէս նաեւ Ֆրանսիայում Դուք հոգու եւ մտքի Ձեր կարողութիւններն անձնուիրաբար ի սպաս էք դրել «կենաց խօսքը» հայորդեաց հոգիներում սերմանելու սրբազան առաքելութեանը՝ միշտ հետամուտ, որ օրաւուր զօրանայ Ձեր հոգեւոր խնամքին յանձնուած հայորդեաց հաւատն առ Աստուած եւ սէրն առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Հայոց Եկեղեցին ու Հայրենիքը մեր:

Ազգային մեր կեանքում յոբելեանական 2001 թուականին Ֆրանսիահայ համայնքներ կատարած Հովուապետական Մեր անդրանիկ այցելութեան ընթացքին Մենք բերկրանօք սրտի ականատես եղանք Ձեր ծառայութեան բարի արդիւնքներին: Ձեր քաջալերանքով եւ Ձեր նախաձեռնութեամբ, որպէս Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Հարաւային Ֆրանսիայի, հիմնուել են եկեղեցիներ ու կրթական հաստատութիւններ, իրագործուել են եկեղեցաշէն ու ազգանուէր ծրագրեր՝ միտուած հայ համայնքների զօրացմանը եւ հայորդիների հոգեւոր կեանքի նորոգութեանը:

Սիրելի Սրբազան, այսօր, երբ անձնական ցանկութեամբ կոչւում էք վաստակեալ հանգստի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական այսու Կոնդակով բարձր գնահատանքի ենք արժանացնում բազմամեայ Ձեր ծառայութիւնը եւ գոհունակ սրտով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարին Աստուած առատապէս օրհնի Ձեզ եւ Սուրբ Ներսէս Շնորհալու բարեխօսութեամբ պարգեւի յաջողութիւններ Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին:

Թող Տէրը հանապազ Իր օրհնութեան ներքոյ պահպանի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու հաւատաւոր մեր ժողովրդին:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Օգոստոսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին Հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 179

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ՝ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԱԹԵՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻՊԵԱՆ, ՈՐ Ի ՍԱՆ ՓԱՈՒԼՕ, ԲՐԱԶԻԼԻԱ

Սիրելի Սրբազան, ուրախութեամբ տեղեկացանք, որ Տիրախնամ Ձեր թեմի Թեմական խորհրդի հաւատաւոր ժողովրդի կողմից կազմակերպւում է Ձերդ Սրբազնութեանը նուիրուած մեծարման հանդիսութիւն՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր ծառայութեան քառասնամեայ յոբելեանի կապակցութեամբ: Այս առիթով համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքները:

Սիրելի Սրբազան, Տիրոջ կամքով եւ օրհնութեամբ Դուք, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանի յարկի ներքոյ ամբողջացնելով հոգեւոր Ձեր ուսումնառութիւնը, ծառայութեան ուխտ կնքեցիք Աստուծոյ Սուրբ Սեղանի առջեւ՝ ստանձնելով կուսակրօն հոգեւորականի պատասխանատու առաքելութիւնը Քրիստոսասէր մեր ժողովրդի կեանքում: Երիտասարդ հասակից Դուք հովուական առաքելութեան կոչուեցիք Հարաւային Ամերիկայի հայոց թեմերում՝ ժրաջան ու քաջեռանդ ծառայութեամբ հոգեւոր սնունդ ջամբելով մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին եւ յատկապէս իբրեւ Կորդոբայի հայոց հոգեւոր հովիւ աւելի քան տասը տարիներ Ձեր աւանդը բերեցիք հայ համայնքի զօրացման ու ազգային-եկեղեցական կեանքի պայծառացմանը:

Աստուծոյ կամօք Ձեր ծառայութիւնն առաւել նւս արդիւնաւոր ու բեղուն եղաւ Բրազիլիայի հայոց թեմում, ուր պաշտօնավարեցիք նախ որպէս Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ եւ ապա՝ նորակազմ թեմի առաջին առաջնորդ: Ընդառաջ Թեմական խորհրդի եւ հաւատաւոր բրազիլահայութեան խնդրանքին, երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ օծուեցիք եպիսկոպոս, եւ Ձեզ վստահուեց թեմական կառոյցների կազմակերպումը եւ հեռաւոր մայրցամաքում բնակութիւն հաստատած հայորդիների հաւատն ու ազգային ոգին ամրացնելու, նրանց հոգիներում մեր սրբազան ժառանգութեան եւ մայրենի լեզուի պահպանութեան հանդէպ սէրն ու նախանձախնդրութիւնը զօրացնելու

սրբազան առաքելութիւնը: Ուրախ ենք հաստատելու, որ շուրջ քսան տարիների առաջնորդական ծառայութեան վաստակով Դուք արժանացել էք հաւատաւոր Ձեր հօտի սիրուն ու յարգանքին:

Սիրելի Սրբազան, Ձեր յոբելեանի առիթով Հայրապետական Օրհնութեան այսու Գրով Մեր բարձր գնահատանքն ենք յղում Ձեզ՝ հոգեւոր եւ ազգային առաքելութեան իրականացման գործում փասնամեակների Ձեր բազմարդիւն ծառայութեան եւ Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնի նկատմամբ մշտապէս դրսեւորած սիրոյ ու հաւատարմութեան համար: Ի խորոց սրտի աղօթք ենք վերառաքում առ Աստուած՝ հայցելով, որ Տէրը օգնական լինի եւ զօրացնի Ձեզ Ձեր կոչման մէջ եւ պարգեւի երջանկութեամբ ու ազգաշահ ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի տարիներ՝ ի պայծառութիւն Բրազիլիայի հայոց Տիրախնամ թեմի եւ Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու:

*«Այնպէս լուսաւորեսցէ լոյս Ձեր առաջի մարդկան, որպէսզի տեսցեն զգործս Ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայրն Ձեր որ յերկինս է»* (Մատթ. Ե. 16):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 21-ն Օգոստոսի
ի թուին Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 362

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱՐԵՏ ԵՎ ՄՈՆԻԿ ԵՐԿԱՆՅԱՆՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՐԵՏ ԵՒ ՄՕՆԻՔ ԵՐԿԱՆԵԱՆ, ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐՔԻԱ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ մեր ժողովրդի արժանաւոր զաւակներիդ:

Սիրելի Տէր եւ Տիկին Երկանեաններ, մեծապէս ուրախ ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Ձեր այցելութեան ընթացքին առիթ ունեցանք անձնապէս ճանաչելու Ձեզ եւ Ձեր ազգասէր ու եկեղեցանուէր ոգին: Դուք, արդարեւ, աստուածահաճոյ Ձեր կեանքով ու բարի գործերով արժանի ժառանգներն էք Պոլսահայ աւանդաշատ գաղութի, որ մատուցած բազմարդիւն ծառայութիւններով միշտ պէս հաւատարիմ է իր հաւատարմութիւնը նախնեաց սրբազան արժէքներին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու Լուսաւորչահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Այսօր առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում Ձեր ազնիւ նուիրատուութիւններին՝ ի նպաստ պոլսահայ կեանքում բարեսիրական ծրագրերի իրականացման, որը դրսեւորումն է առ Աստուած Ձեր հաւատքի եւ ազգային մեր կեանքի շինութեանը մասնակից լինելու պատրաստակամութեան: Գոհութիւն եւ փառք ենք մատուցում առ Աստուած, որ ազգս հայոց օրհնուած է Ձեզ պէս բարեգործ զաւակներով, ովքեր կեանքում առաջնային նպատակ են համարում հարազատ ժողովրդին ծառայելը:

Սիրելի Տէր եւ Տիկին Երկանեաններ,

Բարձր գնահատելով հաւատաւոր Ձեր ընթացքն ու մատուցած ծառայութիւններն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, Կ. Պոլսոյ հայոց Պատրիարքութեանն ու պոլսահայ մեր հաւատաւոր զաւակներին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Հայրապետիս յորդորն է, որ Դուք նոյն քաջեռանդութեամբ շարունակէք Ձեր օգտաշատ յանձնառութիւններն ու ծառայութիւնն Ամենապատիւ Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի հոգեւոր հովանու ներքոյ՝ զօրելի աջակցութիւն բերելով Կ. Պոլսոյ հայոց Պատրիարքութեանը եւ պոլսահայ կեանքը շէն ու առաջընթացի մէջ պահող ազգային հաստատութիւններին:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջ կեանքի արեւշատ ու երջանիկ բազում օրեր եւ յարանորոգ յաջողութիւններով պսակի Ձեր բոլոր բարի գործերն ու նախաձեռնութիւնները:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանն. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Օգոստոսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 182

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից առանձնակի գոհունակութեամբ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքն ենք յղում Ձեզ՝ եկեղեցանուէր Ձեր երկարամեայ եւ արգասաւոր գործունէութեան համար:

Ցարգարժան պրն Պապայեան,

Անցնող տասնամեակների ընթացքին հաւատաւոր ու հայրենասէր ոգով Դուք Ձեր փորձառութիւնն ու ամբարած գիտելիքներն անմնացորդ ծառայեցրեցիք հոգեւոր արժէքների հաստատմանն ազգային մեր կեանքում՝ միջնակարգ դպրոցի ուսուցչից եւ բարձրագոյն ուսումնական հաստատութեանց դասախօսից մինչեւ պետական պատասխանատու բարձր պաշտօններում Ձեզ առաջնորդ ունենալով ծնողներից ժառանգած մեծ ու անկեղծ սէրը հարազատ ժողովրդի, Հայրենիքի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ:

Նախախնամութեան կամքով Հայրենի մեր երկրի անկախութիւնից յետոյ Դուք երկիցս ընտրուեցիք Ազգային ժողովի պատգամաւոր, այնուհետեւ նշանակուեցիք Սահմանադրական դատարանի անդամ եւ այսօր մեր լուսաւոր գալիքի տեսիլքով շարունակում էք նուիրումով ու նախանձախնդրութեամբ ծառայել մեր երկրում օրէնքի պահպանութեան եւ օրինայարգ հասարակութեան ձեւաւորման կարեւոր գործին:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն բերած Ձեր ծառայութիւնը նոյնպէս արդիւնաւոր է բազում բարի պտուղներով: Վազգէն Ա. Ամենայն Հայոց բարեյիշատակ Հայրապետը, բարձր գնահատելով որդիական Ձեր նուիրումն ու ծառայասիրական պատրաստակամութիւնը հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, իմաստուն որոշմամբ հրաւիրեց Ձեզ անդամակցելու Մայր Աթոռիս Գերագոյն Հոգեւոր Խորհրդին, որի կազմում ահա աւելի քան տասը տարիներ Դուք եռանդաշատ ծառայութիւն էք բերում ազգային-եկեղեցական մեր կեանքին՝ Հայ Եկեղեցին ներկայացնելով միջեկեղեցական գիտաժողովներում եւ աշխուժօրէն մասնակցելով եկեղեցական յանձնախմբերի աշխատանքներին: Մեր Հայրապետութեան շրջանին Մենք եւս վկայ դարձանք Ձեր հաւա-

փառր ոգուն ու անձնուէր գործին եւ գոհունակ սրտով փառք ենք բարձրացնում առ Աստուած, որ մեր Եկեղեցուն պարգեւում է Ձեզ պէս նուիրեալ ու ծառայասէր զաւակներ:

Առանձնակի գոհունակութիւն է Հայոց Հայրապետիս համար, որ Դուք պետական պաշտօնաւարութեանն ու մեր Սուրբ Եկեղեցուն բերած ծառայութեանը զուգընթաց զբաղւում էք նաեւ գիտական գործունէութեամբ: Այսօր Ձեր անդուլ ու անյոգնաբեկ աշխատանքով սեղանի վրա են մի քանի փաստեղ աշխատութիւններ, որոնք վերաբերում են քրիստոնէութեան, իրաւունքի, պետութեան եւ Եկեղեցու հարաբերութիւնների հիմնահարցերին: Այս առումով ցանկանում ենք առանձնացնել Ձեր հեղինակած «Արդի իրաւունքի քրիստոնէական ակունքները» աշխատութիւնը, որը վերջերս հրատարակուեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանաւորութեամբ եւ գնահատանքով ընդունուեց ինչպէս հոգեւորականների, այնպէս եւ հայ մտաւորականութեան եւ իրաւունքի մասնագէտների կողմից:

Մեծարգոյ պրն Պապյեան,

Ձեր ծառայութիւնները եւ վաստակը բարձրօրէն արժեւորելով Հայրապետական այսու Սրբատառ Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Լիայոյս ենք, որ շնորհեալ պարգեւը Ձեզ համար պիտի լինի նոր խրախոյս՝ առաւել զօրացած ու խանդավառ Ձեր ծառայութիւնը բերելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Այս ուրախ առիթով Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով բաջառողջ երկար կեանք եւ գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Օգոստոսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 180

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐԻ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՎԱՔԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՍ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՒԱՔԻ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հոգու առանձնակի բերկրանքով ողջունում ենք եգիպտահայ վարժարանների համաշխարհային հաւաքի բոլոր մասնակիցներին, որ աւանդական դարձած ձեր հերթական հաւաքի առիթով աշխարհի տարբեր ծայրերից այս անգամ ի մի էք խմբուել ազատ ու անկախ մեր Հայրենիքի սրտում՝ քաղաքամայր Երեւանում:

Սիրելի զաւակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու,

Ձեր հայրերը երբ հաստատուեցին Եգիպտոսում, չունէին տեղական լեզուի իմացութիւն ու նիւթական կարողութիւններ, շատերը նոյնիսկ ջարդերից մազապուրծ գաղթականներ էին, ովքեր իրենց հայրենի երկրից որպէս ժառանգութիւն հոգում ծրարած ունէին միայն քրիստոնէական սուրբ հաւատն ու որդիական սէրը՝ հանդէպ հայրենիին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Սակայն, հաւատարիմ հայ մարդու ստեղծագործ նկարագրին, նրանք դարձան պատուաւոր քաղաքացիները հիւրընկալ այդ երկրի՝ ազնիւ մասնակցութիւն բերելով նրա հասարակական, քաղաքական ու տնտեսական կեանքի զարգացմանը:

Այսօր արժան է յիշել, որ Եգիպտոսում հայորդիների են վստահուել պետական բարձր պաշտօններ՝ վարչապետից մինչեւ նախարար ու արքունիքի անդամներ, ովքեր իրենց նուիրեալ ծառայութեամբ նպաստեցին, որ յարատեւ պահպանուի ու զօրանայ յարգանքն ու վստահութիւնը մեր ժողովրդի զաւակների հանդէպ:

Փառաւոր է եգիպտահայ գաղութի ազգային կեանքի պատմութիւնը՝ լեցուն բազմաթիւ հայրենաշէն գործերով ու նախաձեռնութիւններով: «Ես կեանքս նուիրեցի Եգիպտոսին, որովհետեւ բախտն իմ առջեւ այս գործը հանեց, հրապուրուեցայ անկից եւ կապուեցայ: Բայց օտար երկրի մէջ այդ գործունէութիւնս երբեք ինծի չմոռացուց, որ հայ մըն եմ»: Եգիպտահայ համայնքի արժանի զաւակ Պօղոս Նուբար Փաշայի խօսքերն են այս, ով Եգիպտոսում հասաւ մինչեւ վարչապետի պաշտօնի, բայց եւ միշտ ապրեց Հայաստանի ազատագրութեան տեսիլքով, մտահոգուած հարազատ ժողովրդի ապագայով, մշակոյթի զարգացմամբ ու հայ երիտասարդութեան կրթութեան խնդիրներով: Համայն մեր ժողովրդի համար

աննախադէպ օրինաքեր իրագործութիւն եղաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ստեղծումը Կահիրէ քաղաքում, որի հիմնադիրը Նուբար Փաշան էր եւ առաջին անդամները՝ ազգասէր եգիպտահայերը:

Սիրելիներ, ինչպէս ամենուր աշխարհասփիւռ մեր ժողովրդի կեանքում, այնպէս եւ եգիպտահայ գաղութի մէջ իրենց ծաղկուն վիճակով բացառիկ դերակատարութիւն են կատարել հայկական վարժարանները, որտեղ կերտուել ու ձեւաւորուել են հայորդեաց մաքրաղ հոգիները, ներշնչուել մայրենի լեզուի եւ ազգային մեր արժէքների հանդէպ սիրով ու նախանձախնդրութեամբ: Եգիպտահայ վարժարանների շուրջ երկուհարիւրամեայ պատմութիւնը վառ օրինակ է մեր ժողովրդի գոհողութեան ոգու, ուսման ու գիտութեան հանդէպ աներկբայ սիրոյ, որոնցով կեանքի կոչուեցին ու գործեցին լուսաբաղձ այդ հաստատութիւնները: Այսօր ուրախ ենք դրուատանքով անդրադառնալու, որ Դուք՝ եգիպտահայ վարժարանների շրջանաւարտները, սփռուած աշխարհի չորս ծագերում, անխոնջ ծառայում էք հայրենի մշակոյթին, ուժ տալիս հայ կեանքին, արուեստի, գրականութեան ու գիտութեան զարգացմանը՝ ձեր գործերով պատիւ յաւելելով սփեղծարար մեր ժողովրդին:

Սիրով յիշում ենք Հայրապետական Մեր այցը Եգիպտոսի հայոց թեմ, երբ առիթ ունեցանք ականատեսը դառնալու, որ աւանդաշատ գաղութը, թէեւ թուով նուազած, շարունակում է բարեյաջող կազմակերպել ազգային-եկեղեցական իր կեանքը եւ բարեջան առաջնորդութեամբ մեր Եկեղեցու բազմավաստակ սպասաւոր Գերաշնորհ Տ. Զաւէն արքեպիսկոպոս Չինչինեանի, վառ պահել հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան այն ոգին, որ փառքն է եղել եգիպտահայութեան:

Սիրելիներ, այսու Մեր Գրով սէր ու օրհնութիւն ենք բերում ձեզ՝ մաղթելով, որ ձեր հերթական այս հաւաքը եւ Հայրենիքում ապրած օրերը խանդավառութեան ու նոր ներշնչանքների ակունք դառնան ձեզ համար, դառնան հայրենապաշտ եւ եկեղեցասէր ոգու մէջ առաւել զօրանալու եւ ազգօգուտ նոր նախաձեռնութիւնների առիթ եւ հրաւէր:

Թող Տէրն Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահի ձեզ ամենքիդ՝ պարգեւելով քաջառողջութիւն, գործոց յաջողութիւններ եւ երկնատուր ամենայն բարիք:

Թող Բարձրեալն Աստուած Զօրաւոր Իր Աջով օգնական ու աջակից լինի մեր ժողովրդի բոլոր զաւակներին ամենուր եւ յամենայնի եւ բարի ընթացք ու արդիւնաւորում պարգեւի Հայրենիքում եգիպտահայ վարժարանների աշակերտներիդ հաւաքին:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 5-ն Օգոստոսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 358

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Համայն հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք բերում եւ շնորհաւորում Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի մեծարգոյ տնօրէնութեանն ու դասախօսներին, բոլոր շրջանաւարտներին եւ ուսանողներին՝ կրթական հաստատութեան 70-ամեայ յոբելեանի առիթով:

Գոհութիւն ենք մատուցում առ Բարձրեալն Աստուած, որ հաւատաւոր մեր ժողովուրդն իր պատմութեան ողջ ընթացքին ուսման եւ գիտութեան հանդէպ նախանձախնդիր ոգի եւ սէր է դրսեւորել՝ հիմնելով կրթական հաստատութիւններ, որոնցում գիտութեան լոյսով ու ազգային արժէքներով սնուել ու զօրացել են հայորդեաց սերունդները: Այսօր Մենք ուրախութիւնն ունենք անդրադառնալու Հայաստանի Ճարտարագիտական Համալսարանի տարիների վաստակին, որը, շարունակելով Երեւանի Պոլիտեխնիկական Ինստիտուտի գործունէութիւնն ու աւանդները, կարեւոր առաքելութիւն է իրականացնում հայրենական մեր կեանքում:

Հիմնադրուելով եւ իր կոչման մէջ հաստատուելով Հայաստանում արդիւնաբերութեան զարգացմանը զուգընթաց, Երեւանի Պոլիտեխնիկական Ինստիտուտն իր մասնաճիւղերի հետ միասին երկրի տնտեսութեան տարբեր ոլորտներ է ուղարկել տասնեակ հազարաւոր մասնագէտ շրջանաւարտներ, իր գործունէութեամբ լաւագոյնս նպաստել մեր երկրում գիտատեխնիկական առաջընթացին եւ հայրենական գիտութեան հեղինակութեան աճին:

Մեծապէս գնահատելի է, որ Հայաստանի անկախութեան վերականգնումից յետոյ, գիտակցելով իր կոչման կարեւորութիւնը եւ նորովի կազմաւորուելով իբրեւ Ճարտարագիտական Համալսարան, ճանաչուած ուսումնական հաստատութիւնն իր հոգածու տեսչութեամբ եւ նուիրեալ ու շնորհալի դասախօսներով յաջողութեամբ շարունակում է գիտութեանն ու կրթութեանը սպասաւորելու իր բարձր առաքելութիւնը: Հետեւողական ջանքերով իրականացուող համագործակցութիւնն աշխարհի առաջատար տեխնիկական ուսումնական հաստատութիւնների հետ, գիտական նոր նուաճումների եւ դասաւանդման նոր հնարաւորութիւնների կիրառումը պիտի նպաստեն, որ արդիական գիտելիքներով զինուած եւ համամարդկային ու ազգային արժէքներով զօրացած երիտասարդներն արժանի մասնակցութիւն բերեն մեր երկրի նոր կեանքի կառուցմանը:

Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի 70-ամեայ յոբելեանի այս տօնական առիթով Հայրապետական սիրով Մեր օրհնութիւնն ենք յղում Համալսարանի տնօրէնութեանը՝ ի գլուխ նրա բազմավաստակ ռեկտոր Տիար Յուրի Սարգսեանի, բոլոր դասախօսներին եւ սիրեցեալ ուսանողներին: Աղօթք ենք բարձրացնում առ Աստուած, որ իր ամուր հիմքերի վրայ հաստատուն պահի Ճարտարագիտական Համալսարանի՝ իմացութեան լոյսով յեցուն շինուածքը եւ միշտ մտքով ու հոգով զօրացեալ պահպանի նրա կամարներից ներս ուսանող մեր զաւակներին:

*Թող շնորհները Աստծոյ եւ անբովանդակելի սէրը լինեն ձեզ հետ եւ բոլորի՝ այսօր եւ միշտ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիր Օրհնութեան ի 8-ն Օգոստոսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 359

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2003 թվականի օգոստոս ամսվա ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակով

**«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ»** շքանշանով պարգևատրվել են.
Զարեհ Մելքոնյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Սամվել Անթոսյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

**Օրհնության գիր** է տրվել.
Ս. Վարդանանց եկեղեցի (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱԼՈՒԾ Է ՀՌՉԱԿՎԱԾ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ Տ. ՄԱՇՏՈՑ ՔԱՀԱՆԱ ԻՍԱՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն օգոստոսի 25-ի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակել Արմավիրի թեմի հոգևոր սպասավոր Տ. Մաշտոց քհն. Իսայանին՝ Մկրտության խորհուրդն աղճատելու և հավաքական մկրտություններն արգելող Հայրապետական տնօրինությունը զանցառելու համար:

Կարգալույծ արված հոգևորականն այսև դասվում է աշխարհականների շարքը և կկոչվի ավազանի անունով՝ Հայկ Իսայան:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Տ. ՏԱՐՈՆ ԵՊՍ. ՃԵՐԵՃՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Օգոստոսի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո շքանշան հանձնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Տարոն եպս. Ճերեճյանին՝ ի գնահատումն Սրբազան Հոր ազնիվ ու բազմամյա հոգևոր ծառայության:

Պարգևատրման առիթը Տարոն Սրբազանի ձեռնադրության 40-ամյակն էր:

«Անհավասիկ, քառասուն տարիներ Դուք քաջ և բարի հովվի հանձնառությամբ քահանայագործում եք մեր Եկեղեցու լուսավոր անդաստանում՝ Ձեր ծառայությունը բերելով Սփյուռքում բնակություն հաստատած մեր ժողովրդի զավակներին: Ձեր պաշտոնավարության բոլոր վայրերում՝ Դամասկոսի և Հունաստանի հայոց թեմերում, ինչպես նաև Ֆրանսիայում Դուք հոգու և մտքի Ձեր կարողությունները անձնվիրաբար ի սպաս եք դրել «Կենաց խոսքը» հայորդյաց հոգիներում սերմանելու սրբազան առաքելությանը՝ միշտ հետամուտ, որ օրավուր զորանա Ձեր հոգևոր խնամքին հանձնված հայորդյաց հավատն առ Աստված և սերը առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Հայոց Եկեղեցին ու Հայրենիքը մեր:

Ձեր քաջալերանքով և Ձեր նախաձեռնությամբ, որպես Հայրապետական Պատվիրակի Փոխանորդ Հարավային Ֆրանսիայի, հիմնվել են եկեղեցիներ ու կրթական հաստատություններ, իրագործվել են եկեղեցաշեն ու ազգանվեր ծրագրեր՝ միտված հայ համայնքների զորացմանը և հայորդիների հոգևոր կյանքի նորոգությանը».- ասված է Հայրապետական սրբատառ կոնդակում, որն ընթերցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Շքանշանի հանձնման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հայրեր:

Այսուհետ Սրբազան Հայրն, իր իսկ ցանկությամբ, անցնում է վաստակած հանգստի:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԻՐ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐՆ Է ՈՒՂՂՈՒՄ
ՏԱՐՈՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԵՎ ՎԱՍՏԱԿՅԱԼ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ՔՐՈՋԸ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵՐԱՐ ԲԱՐԵԿԱՄ ՆԵՐԻՑ ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՊԱՏՎՈԳԻՐ ՀԱՆՁՆԵՑ ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Օգոստոսի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հանուն «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի, պատվոգիր հանձնեց Քաջարանի Պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Մաքսիմ Հակոբյանին:

Հանդիսավոր արարողության ընթացքում Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը ներկայացրեց «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի առաքելությունը: Մատենադարանի տնօրենն անդրադարձավ Մատենադարանի աշխատանքներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի աջակցությանը՝ նշելով, որ «Նորին Սրբության օրինակին հետևում են նաև նվիրյալ հայորդիները, որոնց մեջ է տիար Մաքսիմ Հակոբյանը, որն իր ներդրումով մեծապես նպաստել է Մատենադարանի ծրագրերի իրականացմանը, ձեռագրերի ձեռքբերմանը և շենքի բարեկարգմանը»:

Բարձր գնահատելով բարերարի ազգաշեն և եկեղեցանպաստ գործունեությունը՝ Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքում նշեց. «Մեզ համար հոգևոր տաճարի խորհուրդ ունի Մատենադարանը, ուր պահվում են մեր հայրերի աղոթքներով սրբեղծված մատյաններն ու հոգևոր արժեքները: ...Մատենադարանը հարստությունն է ազգի: Յուրաքանչյուր ներդրում Մատենադարանի առաքելության մեջ, նրա գիտական աշխատանքների զարգացման գործում, նշանակում է մասնակցություն ունենալ ազգային կյանքի կերտմանը»:

Տիար Հակոբյանը դեռևս 2002 թ. հոկտեմբերին իր եկեղեցաշեն գործունեության համար արժանացել էր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո շքանշանին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության և Մատենադարանի պաշտոնեության ներկայացուցիչներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՔԱՐՈԶ ԽՈՍԱԿԱՆ

## Տ. ՏԱՐՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(3 օգոստոսի 2003 թ.)

*«Ահա մայր քո»:*
(Հովհ. ԺԹ 27)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով մատուցվող Ուխտի այս Պատարագի քարոզին ես կընտրեմ նյութ մը ծնոլյակսն կապին առնչվող՝ բնաբան ունենալով «Ահա քո մայրը» խոսքերը: Իր հոգին ավանդելէ առաջ Հիսուս խաչին վրա կուտա Հովհաննես առաքյալին այն, ինչ որ ամենաթանկագինն է՝ Իր մայրը: Հիսուսի վերջին խոսքերն էին ասոնք, որոնք կսահմանադրեին Իր հոգևոր ժառանգը: Գիտցեք, որ դժվարին պահերուն մեջ, որ չի պակսիր յուրաքանչյուրի առօրյա կյանքին մեջ, դուք մինակ չեք, ո՛վ հավատացյալներ, ինչպես Հովհաննես առաքյալ, որուն Տերը հանձնեց Իր մայրը խաչին ներքև: Հիսուս զինքը ձեզի կուտա նաև, որպեսզի ան ձեզ մխիթարե իր անսահման խանդաղատանաց մեջ: Ավետարանը կըսե այնուհետև, որ առաքյալը զինքն ընդունեց իր մոտ: Այս մեջբերումը ցույց չի տար միայն վայր մը, ուր Հովհաննես կբնակեր. ավելին, քան հստակ տեղ մը՝ ան կարծարծե հոգևոր փաստողությունն այդ ընդունման:

Սիրելի հավատացյալներ, սիրելի երիտասարդներ, նաև դուք ունիք նույն իղձը Հիսուսի հետ ըլլալու: Այս հիշարժան տարեդարձի առթիվ Քրիստոս և ձեզմե՛ կխնդրե ընդունել Իր մայրը ձեր տանը: Ան է, որ իր մայրական պարտականությունը կատարելով՝ ձեզ պիտի դաստիարակե և ձեզ պիտի օրինակելի դարձնե, մինչև որ Քրիստոս Ինքը հաստատվի ձեզմե յուրաքանչյուրի մեջ: Ուստի հանձնեցեք ձեր անձերը Անոր ամենայն վստահությամբ: Պիտի շողշողաք այն ատեն Քրիստոսի բարությամբ և դուք նաև կդառնաք անպարտելի առաքյալներ՝ կարող տարածելու ձեր շուրջը սիրո կրակն ու լույսը ճշմարտության: Այսպես, դուք պիտի սորվիք դնել զՔրիստոս առաջին տեղը ձեր կյանքին մեջ և դառնալու դեպի Իրեն ձեր մտքերով ու ձեր գործերով:

Սիրելի բարեկամներ, դուք այլևս քաջ գիտեք, որ քրիստոնեությունը պարզ գաղափարաբանություն մը չէ կամ հասարակ միտք մը: Քրիստոնեությունը կյանքն է Քրիստոսի, որ մեզի հատուկորեն շնորհվեցավ Իր Հայաստան իջման ատեն: Քրիստոնեությունն է, որ մեզի սորվեցուց հանդիպիլ Հիսուսի, զԻնքը սիրել ու Իրեն սիրել տալ: Այս է քրիստոնեական կոչումը: Այս քրիստոնեական կոչումի մարմնավորումն է Էջմիածնի այս Տաճարը, պտուղն Իր սիրո՝ շնորհված մեր հայոց ժողովուրդին Իր իսկ կողմն ընտրված: Եվ նյութեղեն դարձնելու համար այդ ոգեղեն սերը, Հիսուս ոչ թե միայն տեղը որոշեց, այլ նաև կառույցի ճարտարապետական հորինվածքը: Միածին Որդին Աստուծո փոխանակեց Իր մարմինը այլևս անտեսանելի այս ճարտարապետական կառույցին, որպեսզի այս սուրբ շինությամբ Ան

մնա մեր սրտին մեջ հավիտենապես երենի և կատարյալ հաղորդական: Այս եզակ շնորհը, որ տրվեցավ մեր Եկեղեցիին, որ մեր ժողովուրդն իսկ է, մեզ կհամակե հպարտությամբ տոնելու նաև 1700-ամյակը քրիստոնեական ճարտարապետության: Հայ արվեստի ճյուղի ամենահինը, ամենաինքնատիպը և ամենատարածունը ճարտարապետությունն է, զոր մեզի համար անկարելի է քանի մը տողերու մեջ մանրամասնել անոր անսահման հարստությունը և բազմաձևությունը:

«Ժողովուրդ որ խավարի մեջ կբնակեր՝ տեսավ մեծ լույս մը» (Եսայի Թ 1).

Այդ լույսը, որ եղավ իր Միածին Որդին, այցելեց Արարատյան այս երկիրը մեր, խորհրդանիշը ջրհեղեղէ փրկյալ մարդկության: Արարատ լեռը, գմբեթասլաց, եղավ օրրանը մարդկության: Արարատ լեռը, գմբեթասլաց, եղավ ջրհեղեղեն փրկյալ մարդկության օրրանը՝ կամոքն Աստուծո, Ստեղծիչին երկնքի ու երկրի, հավիտենական Հայրը մեր Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի:

Իր այցելությամբ Ան սքանչացավ ու ներշնչյալ այս հոյակապ լեռնեն, ամենասքանչելին ի միջի ստեղծագործության, սահմանեց Էջմիածնի ճարտարապետական կերպը, որ դարձավ ոճ երկնային: Այդ այցելությունը եղավ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքին մեջ լուսափայլյալ հանդիսադրությամբ, ուր Քրիստոս կիջներ ձեռքին ոսկյա մուրճ մը՝ խփելու համար նշանակյալ տեղը, ուր մեր հեթանոս նախնիք կաղոթեին Նոյ Նահապետի օրերեն ի վեր: Ուստի այս վայրը ստացավ Էջմիածին անունը, այսինքն՝ այստեղ, ուր Աստուծո Որդին հայ ժողովուրդին տվավ ժամադրություն: Մարմինն Աստվածածնի ձնավ Բանն՝ Հիսուս Քրիստոս՝ փոխելու համար մարդկության ճակատագիրը կորստյան ճանապարհներուն վրա, որպեսզի վերադարձնե զայն լուսավոր ճամփաներու վրա անվախճան: Այսպես է, որ մարմինը բոլոր մայրերու Մոր դարձավ տեսանելի մարմին Ս. Էջմիածնի Տաճարով:

Այո՛, այս սրբավայրը ճանչցավ դժվարին ժամանակաշրջաններ այս 1700 տարիներու պատմության մեջ: Բոլոր ներխուժողներ, ամենավայրագներ, զորս կրնանք ըլլալ, գալով արևելքեն, հարավեն թե հյուսիսեն, հոս արձանագրեցին իրենց կորուստն այս տեղի սրբության դիմաց, քանզի բոլորն ալ վախն ապրեցան աստվածային պատիժի: Այս նվիրական կոթողը, որ երբեք չդադրեցավ ճառագայթելե, կանգուն մնաց ամեն տեսակ չարիքներու և անբարենպաստ վիճակներու ընդմեջեն, բայց ան կմնա կենդանի առավել քան երբեք նոր Հայաստանի սրտին մեջ, անկախ ու հզոր:

Եթե հայ ժողովուրդը, զրկված պետականութենե և ազատութենե, ժողովուրդ, միշտ կողոպտված ու ջարդված, փախչելով ցեղասպանություններե, կարողացավ պահել իր գոյությունը, որովհետև ան կրցավ գտնել այս ճարտարապետական մարմինին մեջ Ս. Աստվածածնի ուժ մը անցերազանցելի իր հավատքեն հառաջ եկած: Ուստի հարգել այս սրբավայրը՝ հավասար է պաշտել Ս. Աստվածածինը, որ կենդանիորեն ներկա է մեր մեջ: Ամենախավարային դարերու ընթացքին իսկ մեր գոյության մենք պաշտպանվեցանք ու փրկվեցանք՝ շնորհիվ մեր ունեցած կապվածության այս սրբավայրի հետ:

Այսօրվան Հայաստանին մեջ, ուր չկա օտարի ճնշող լուծը մեզ վրա, ինչպե՞ս կրնանք դուրս գալ այն վերաբերմունքեն, զոր ոմանք ցույց կուտան՝ հեռանալով մեր նախնյաց այս սրբավայրեն և անոր մե, զոր կներկայացնեն, տկարանալով իրենց պարտականությանց մեջ, տրված ըստ Տիրոջ խոսքին ահա 1700 տարիներ: Ամեն հայ պետք է ըսե, ինչպես սաղ-

մոսերգու Դավիթ զայն կըսէ ուրիշ ձևով Երուսաղէմի առնչությամբ. «Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ. մոռասցի զիս աջ իմոյ»:

Անձի ազատությունը միշտ ցանկալի և գնահատելի է, որովհետև անիկա մարդկային իրավունք է, բայց հեռանալ ազգային հոգևոր ժառանգություններեն և աղոթել տեղերու մեջ անհիշատակ, անձանոթ ու անսուրբ, այս վերաբերմունքը զիս կմաշեցնէ: Հիշեցեք, կարճ ժամանակ առաջ ամբողջ քրիստոնյա աշխարհը, ներկայացված իրենց մեծահարգ հոգևոր Պետերով, եկան այս սրբավայրեն ներս աղոթելու: Անոնք հաստատեցին իրենց այցելության շրջանին եղբայրական մերձեցում մը քրիստոնյաներու միջև այս տեղի նկատմամբ մայրական սիրո մեջ՝ այցելված Քրիստոսի իսկ կողմե:

Այս սքանչելի նախաքայլն առնված է մեր սիրելի Վեհափառի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի կողմե՝ վերստին նորոգելու համար մեր ուխտն ու հնազանդությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ՝ անոր օծման 1700-ամյակի տարեդարձի առթիվ: Բախտ մը, Վեհափառ Տեր, տրվեցավ մեզի, ձեզմե յուրաքանչյուրիս՝ ունենալու խոր անդրադարձ գալիք օրերուն վրա, որպեսզի մեր նախնյաց հավատքը շարունակե ծաղկիլ իր սկզբնական ճանապարհին վրա հասած մինչև մեզի:

Սիրելի բարեկամներ, սիրելի ուխտավորներ, սիրելի Ռուբեն Սևակի ուսանողուհիներ և ուսանողներ, հանձնառու եղեք աղոթքի մեջ, Սուրբ Գրոց ընթերցման մեջ, ուշադիր՝ ունկնդրությամբ և երջանիկ բաշխման մեջ տարբեր առիթներով, զորս մեզի կշնորհե այս տարեդարձը՝ արտահայտելով ձեր վառ հավատքը և ձեր աղոթքը ջերմագին: Ձեր շրջաններեն ներս հայտարարեցեք քաջությամբ և համարձակությամբ թե՛ հոս՝ Հայաստանի, թե՛ արտասահմանի մեջ, թե Քրիստոս խաչիցյալ ու Իր հարությամբ փառավորյալ հաղթեց մահվանը, և վկայեցեք, որ Ան միայն կրնա տալ ճշմարիտ խաղաղությունը մարդուն սրտին մեջ, երջանկությունն ընտանիքեն ներս և ոչ տկարացող սերն՝ աշխարհի ժողովուրդներուն:

Թող խաղաղությունն Աստուծո ըլլա անոնց հետ, որոնք կսիրեն բնակիլ այս սրբավայրին մեջ հավիտենական Էջմիածնի:

Սիրելի հավատացյալներ, բոլորս միասին, հայրեր՝ պատասխանատու ընտանիքներու, մայրեր՝ դաստիարակիչ սերունդներու, երիտասարդ ուսանողներ ջահակիր, վերանորոգենք մեր ուխտն այս առթիվ հանդեպ ամեն ժամանակներու այս հոգևոր կենտրոնին, որ էր, է և կմնա՛ մեր «սար ու չինար, մեր միուճար» Էջմիածինը. Ամեն:

# Տ. ՆՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(10 օգոստոսի 2003 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ եղբայրներ, քույրեր, մայրեր և հայրեր,

Ազգիս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2003 թվականն Իր սրբատառ կոնդակով հռչակել է հոբելյանական տարի՝ ի նշանավորումն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնադրման 1700-ամյակի: Արդարև Ս. Էջմիածնի Մայր Տաճարը 17 դարեր իր բյուրավոր անքակտելի կապերով եղել է հայ ժողովրդի հոգու, սրտի ու մտքի հետ: Չի եղել և չկա ոչինչ ավելի թանկ, ավելի պաշտելի յուրաքանչյուր հայ մարդու համար, քան Ս. Էջմիածինը, նրա վսեմ գաղափարները:

Էջմիածնի հիասքանչ սկզբնավորության փառապանծ հիշատակն է, որ այս տարի կրոնական և աշխարհական հանդիսություններով տոնում է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին՝ գլխավորությամբ Մայր Աթոռի: Մեր բազմերախտ Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորիչն Ավետարանի կենարար լույսը Հայաստանում տարածելու համար ենթարկվեց ի սեր Քրիստոսի կրեց անպատում չարչարանքներ, մինչև որ աստվածային հրաշքով ազատվեց Խոր Վիրապի զնդանից և դարձավ հայ ժողովրդի մկրտիչն ու երկրորդ Լուսավորիչը Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալներից հետո:

Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը դառնում են նորադարձ հայ քրիստոնյա ժողովրդի միասնության խորհրդանշանը: Ս. Էջմիածնի Հայրապետների նպատակն է եղել՝ հայ ազգի մեջ հաստատել խաղաղություն, սեր և միություն՝ ի շինություն, ի բարգավաճում և ի բարօրություն համայն ազգի: Աշխարհում շատ ժողովուրդներ կան, որ ունեն իրենց նվիրական սրբությունները, սրբազան վայրերը, իրենց պաշտամունքի, աղոթքի տները: Ս. Էջմիածինն իր պատկառելի հնությամբ 1700 երկար ու ծիգ տարիներ եղել է հայ հոգու ամրոցը, մեր ազգի լինելության աղբյուրը, հանուն հավատի ու հայրենյաց մաքառումների ներշնչարանը:

Ս. Էջմիածնի պատմության ոսկետառ էջերը լեցուն են նկարագրություններով այնպիսի դեպքերի, իրողությունների, որոնք հյուսում են փառքն ու հաղթանակները հայ ազգի քաջազուն զավակների՝ որդիների ու դուստրերի: Հայ ժողովուրդը միշտ ու տնապես ունեցել է անսահման սեր ու նվիրում դեպի աստվածակառույց այս Տաճարը, այն դարձրել իր հոգևոր հայրենիքը, երբ կտրվել է հայրենի բնաշխարհից: Ս. Էջմիածինը եղել է նաև սրբագործված մշակույթ, հավերժահարս Ավարայր ու Սարդարապատ, խաղաղության ու արդարության նախահազիստ առաջնորդել, որպես այդ նախահանգստի լուսավառ փարոս, համայն քրիստոնյա Եկեղեցիների մշտադալար ծառի մի անկորուստ ճյուղ: Ս. Էջմիածնի Մայր Տաճարը մարմնացումն է նաև Ս. Գրիգոր Լուսավորչի լուսեղեն տեսիլքի: Այդ տեսիլքը գեղեցիկ է, նկարագրված ջերմ հավատքով և նաև պարզությամբ:

Այստեղ կցանկանայի մի քանի վկայություններ բերել, որոնք արտահայտություններն են համայն հայ հավատացյալ ժողովրդի զգացումների:

*Ս. Էջմիածինն ամենայն հայոց և Ամենայն Հայոց Հայրապետությունը աստվածային պարգև է մեր ժողովրդի համար, դարերի պատմությամբ սրբագործված և խոր արմատներ ձգած հայ մարդու կյանքում: Ջլատել նրա ուժը, հեղինազրկել նրան, ազգավնաս գործունեություն է:*

*(Գևորգ Զ Չորեքչյան)*

*Ըլլանք արթուն, ըլլանք արդար, ըլլանք արի և պահենք Ս. Էջմիածինը՝ մեր լույս հավատքի վեմը, մեր հոգիների փրկության ճանապարհը, մեր ազգի մայր դաստիարակը, մեր սիրո միությունը ամբողջ ու անխռով:*

*(Վազգեն Ա Կաթողիկոս)*

*Դարեր եկան, դարեր անցան, Էջմիածին,*
*Քո հիմն անշարժ և անսասան, Էջմիածին:*

*(Հովհաննես Հովհաննիսյան)*

*Կյանքիս մեջ մի հատ սին փառք ունեցա.*
*Ս. Էջմիածնում թաղվել ցանկացա:*
*Սիրելի ազգ իմ, թե Աստված սիրես,*
*Այս իմ մի հատիկ իղձը կատարես:*

*(Գամառ Քաթիպա՝ Ռափայել Պատկանյան)*

*Ամեն մի հայի մաշկը եթե քերես, Ս. Էջմիածինը դուրս կգա:*

*(Ավետիք Իսահակյան)*

*Ի վերայ Աջոյն եւ Սուրբ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան:*

*(Առաքել Դավրիժեցի, 17-րդ դարի պատմիչ)*

Շատ են նման մտքերն ու ասույթները Էջմիածնի մասին, սիրելի հայորդիներ, ես միայն այսքանով բավարարվեցի՝ ասելու համար, թե մեր ժողովուրդն ինչքան է սիրում Էջմիածինը: Ես չեմ մոռանա նաև այն գեղեցիկ խոսքը, երբ գնացել էինք Գևորգ Զ Չորեքչյան Կաթողիկոսի մոտ հայրապետական բարեմաղթանքներ առնելու: Նա խոնավացած աչքերով մեզ ասաց. «Տղաք, սիրեցեք Ս. Էջմիածինը»:

Դուք էլ սիրեցեք Ս. Էջմիածինը, սիրելիներ, ձեր լուման ամեն մեկը որ կդնի գանձանակի մեջ, հավատացեք, որ այն որպես լուսավառ յուղ կճառագի Ս. Գրիգոր Լուսավորչի լուսեղեն կանթեղին:

Այժմ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության ղեկը գտնվում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռքերին: Նա երիտասարդ է, օժտված աշխատանքի անսպառ ու-

ժով: Մի քանի տարի է, ինչ գահակալում է մեր Վեհափառը, սակայն Նորին Սրբությունն արդեն կատարել է շինարարական, կրթական, հոգևոր ու այլ բնագավառների այլազան իսկայական աշխատանքներ: Մայր Աթոռում հոգևոր կյանքը նոր թափ է ստացել: Ես 50 տարի է՝ Էջմիածնում եմ, և կարող եմ ասել, որ Մայր Աթոռը նման մեծ միաբանություն ունեցել է միայն այս վերջին մի քանի տարիներին և մեկ էլ 17-րդ դարում, երբ Ստեփաննոս Լեհացի վարդապետը նկարագրե, թե ինչպիսի ծաղկուն վերելք է ապրել Մայրավանքն այն տարիներին: Այսօր էլ Էջմիածինն այդ ծաղկուն վիճակի մեջ է:

Այո՛, Մայր Աթոռի հոգևոր կյանքում սկսվել է նոր դարաշրջան: Ամեն ինչ ընթանում է դեպի լավը, դեպի բարին, դեպի կատարյալը: Աղոթենք, որ Աստված միշտ անխախտ պահի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, մեր փրկության լաստը և մեր ժողովրդի ուխտի տապանակը. ամեն:

***«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն»:***

# Տ. ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԺԱՄԿՈՉՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(16 օգոստոսի 2003 թ.)

*«Էջ Միածինն ի Հօրէ եւ*
*լոյս փառաց ընդ նմա»:*
(Շարակնոց)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալներ,

Այսօր ազգովին կանգնած ենք աստվածային, հրաշափառ Տեսիլքի առջև, ուր Աստծո Միածին Որդին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս, իջնելով Հայաստան, ոսկե մուրճով գետնին հարվածեց և հաստատեց հայոց հոգևոր ինքնությունը, որը հորդահոս և կարկաչուն աղբյուրների նման սկսեց հոսել Մայր Եկեղեցու ավազանից:

**«Իջավ Միածինը Հորից և լույսի փառքը Նրա հետ»:**

Իր էջքով Աստված ուխտ կնքեց մեր ժողովրդի հետ՝ ոսկե մուրճով կռելով նույն ժողովրդի՝ դեպի հավիտենականություն տանող ճամփան: Սուրբ Լուսավորչի աստվածային տեսիլքն Աստծո և մեր ժողովրդի միջև սիրո հավերժական ուխտն է, որը մեր ժողովրդի աչքի առաջ, սրտերի մեջ ձևավորված է ոչ թե ծիածանային կամ այլ նշանով, այլ՝ մեր հոգու և հավատքի խարիսխ Մայր Աթոռ Ս. Էջմիածնով: Եվ Ս. Էջմիածինը ոչ թե տեսանելի և սակայն ոչ հասանելի ծիածանային նշանն է, որ Աստված կապեց և որպես ուխտ կնքեց Նոյի հետ, այլ տեսանելի և զգալի ուխտն է, որ Արարիչը կնքեց Ս. Գրիգոր Լուսավորչի և մեր ժողովրդի հետ, մեկ ուխտ մի ժողովրդի հետ, որ ժամանակի կնճիռների միջից 1700 տարիներ առաջնորդելու էր՝ երբեք չխամրեցնելով, չնվազեցնելով աստվածային փառքի այն լույսը, որը մեր Լուսավորչի մշտավառ կանթեղից Արագածի վրա հսկում և լուսավորում է հայոց ապագան:

**«Ձայնք հնչեցին սանդարամետք անդնդոց»:**

Երբ Տերն իջավ Հայաստան աշխարհ և գետին հարվածելով լուսեղեն, բոցեղեն տեսիլքի միջով, վեր, դեպի երկինք խոյացրեց, հիմնեց Իր սիրո Տաճարը, կործանեց, ցնցեց սանդարամետները և հավատը հաստատեց իրական Աստծո հանդեպ: Վստահություն և սեր Աստծո հանդեպ, Ով բոլոր բարիքների, բոլոր մխիթարությունների, բոլոր ճշմարտությունների միակ աղբյուրն է, և այն, ինչ դուրս է մնում Աստծո շնորհից, իր մեջ ունի դառնություն, տառապանք և թշվառություն:

**«Ձայներ հնչեցին սանդարամետների անդունդներից»:**

Երբ Աստված իր մխիթարիչ և մաքրագործող լույսը հեղեց երկրի վրա՝ վերջ դնելով խավարամտությանը, դառնությանը, տառապանքին և ապելությանը, փոխարենը սեր մերձավորի հանդեպ և փոխադարձ հասկացողություն հաստատեց երկրի վրա: «Հաւատք, յոյս, սէր. սոքա երեքեան եւ մեծ քան զսոսա՝ սէր է»: Սերը, որ հոգեղեն է, եկեղեցաշեն ու մխիթարիչ:

Սիրելի հավատացյալներ, այսօր մեր կյանքում սանդարամետք անդնդոցը մեր չսիրող, անզգայացած, խամրած և միայն շահի վրա հիմնված հոգիներն են, որ երբ Տեր Աստծո հայտնության իրականության առջև ենք կանգնում, զարհուրում ենք՝ մահվան և սարսափի փենդով պարուրված, փրկություն թախանձելով:

**«Տեսեալ զդյս մեծ Հայրապետին Գրիգորի, պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային»:**

Աստված Սուրբ է և հայտնվում է միայն նրանց, ովքեր սուրբ են և սրտով մաքուր:

Ս. Լուսավորիչն աղոթքների երկունքի մեջ էր, որ արժանացավ աստվածային տեսության: Ո՞վ է, որ փնտրել է Աստծուն և չի գտել կամ խնդրել է և անպատասխան է մնացել: «Աստված միշտ պատրաստ է, բայց մենք՝ անպատրաստ: Աստված մոտ է մեզ, իսկ մենք՝ Նրանից հեռու: Աստված մեր մեջն է, իսկ մենք՝ Նրանից դուրս»: Երբ հրեշտակների գունդը ողողում է Արարատյան երկիրը, որպեսզի Տիրոջ փառքի Տաճարը հաստատի երկրի վրա, այդ սուրբ պահից Աստծո ոսկե ուռամբ լուսեղեն կամարների կերպով ուրվագծվում է հայոց դարձի և փրկության ճամփան:

Հանիր արծաթի վրայից ժանգը և այն ժամանակ այն կփայլի և կշողա: Այսինքն՝ հանիր մարդու սրտի միջից խավարամտությունը, նախանձը, չարությունը, և Աստծո պատկերը կփայլի մարդու հոգում տեսլային փառքի լույսով: Եվ երկու նվիրյալները շտապում են դարբնելու հայոց մեջ տեսլավանդ քրիստոնեությունը մեծ երկյուղով և նախանձախնդրությամբ՝ կոչելով բոլորին. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»:

Սիրելի հավատացյալներ, արդեն 1700 տարի է, ինչ աստվածային տեսիլքով գծագրված Ս. Էջմիածինը կանգնած է պատմության շատ հաճախ կործանիչ հոսանքների առաջ՝ իբրև հարազատ մայր պահելով, խնամելով և ոգեշնչելով իր զավակներին Հայաստանում և Սփյուռքում: Արդեն 1700 տարի է, ինչ Ս. Էջմիածինն առաջնորդում է իր ժողովրդին դեպի հարության պայծառ առավոտ՝ դարմանելով հոգիները և նրանք լցնելով եկեղեցասիրությամբ և ազգասիրությամբ: Ս. Էջմիածինն է, որ հզոր մագնիսի պես ձգում է աշխարհի ամեն մի անկյունում ցրված հայերին՝ գալ և նորոգել ուխտը Աստծո այս Խորանի առջև: Ս. Էջմիածինն է, որ փայլս է մեզ անընկճելի ոգի՝ ամենածանր դժվարությունների դիմաց Տիրոջ տեսլային փառքի լույսով լցնելով մեր մտքերը, սրտերն ու հոգիները:

Մեր Մայր Եկեղեցուց բխող ավանդությունն է, որ պահում է մեզ ամուր և լցնում մեր առօրյան Տիրոջ օրհնությամբ՝ էջմիածնելով մեր հոգու, ընտանիքի խորանները: Ոչ մեկիս համար այսօր նորություն չեն մեր առօրյա տագնապներն ու դժվարությունները. - ավանդազրկություն, ընտանիքների տկարացում, մարդու իրավունքների ոտնահարում, այլասերում և այլն, որոնք կոզիացնում են մեր հոգիները՝ վանելով հեռու-հեռու, այն կորստյան մատնելով: Նոր սերունդը շտապում է որդեգրել Արևմուտքի վատ սովորությունները՝ մոռանալով իրենց ավանդությունը, և տկարացած ընտանիքն ի վիճակի չէ ազգապահպան ավանդությունը փոխանցելու: Վայելքները հեռացնում են արարածին Արարչից՝ դարձնելով անձնակենտրոն ու ծանծաղուտ: Երիտասարդ ընտանիքները կործանվում են ակամայից, չգիտակցված կերպով, երբ ընտանիքին հոգ տանող հայրը բռնում է օտարության ճանապարհը՝ իր ընտանիքի առօրյա հացը վաստակելու համար:

Անող սերնդի հայեցի կրթությունը մնում է թերի, երբ ուսուցիչը դադարում է ուսուցիչ լինելուց՝ առանց գիտակցելու այն մեծ պատասխանատվությունը, որ մեկ սերունդ կամ մեկ

ողջ կյանք են թողնում խավարի և տգիտության մեջ: Ազգային բարձր արժեքները մնում են անուշադրության մատնված: Ազգային մտածողությունը փոխվում է փակին օտարամոլությունը: Եվ այս ամենն աչքի առաջ ունենալով՝ ավելի արդիական և ուժգին է հնչում Ս. Լուսավորչի պատգամը մեր հոգիներին. «Եկեք կառուցենք Սուրբ Խորանը»: Կառուցենք լույսի խորանները մեր սրտերի, հոգիների մեջ, մեր հարկից ներս, մեր դպրոցներում, մեր հարաբերություններում, որովհետև այնտեղից է, որ սպեղանի լույսը ծագելու է մեզ վրա և տալու է մեզ բարի առավոտ:

Սիրելի հավատացյալներ, աստվածճանաչողության առաքինությունը մեր մեջ, ինչպես մեր աստվածատես և աստվածազգյաց հայրերի մեջ, մեզ ավելի զգալի ու շոշափելի դարձնելու համար ուզում եմ այն ներկայացնել մի գերմանացի աստվածաբան-փիլիսոփայի Մայստեր Էքհարտի բերած հետևյալ ուսանելի օրինակով.

Մեկ օր, սիրելի հավատացյալներ, Մայստեր Էքհարտը հանդիպում է մի աղքատ մարդու և ասում. «Աստված քեզ մի բարի առավոտ շնորհի, եղբա՛յր»: Եվ աղքատ մարդը պատասխանում է. «Տե՛ր, այս մաղթանքը քեզ պահիր, որովհետև ես դեռևս ոչ մի վատ առավոտ չեմ ունեցել իմ կյանքում»: Փիլիսոփան զարմանում է և ասում. «Իսկ ինչպե՞ս դա կարող է պատահել»: Եվ աղքատ մարդը պատասխանում է. «Որովհետև այն բոլորը, որ Աստված ինձ իբրև պատասպանք է տալիս, ես Նրա սիրույն կրում եմ ուրախությամբ, ինձ այդպիսի մի պատվի համար անարժան եմ համարում, և այդ պատճառով էլ ես ինձ երբեք տխուր կամ տրտում չեմ զգում»:

Փիլիսոփան հարցնում է. «Առաջին անգամ դու ե՞րբ գտար Աստծուն»: Եվ աղքատ մարդը պատասխանում է. «Այն րոպեից, երբ ես հրաժարվեցի իմ բոլոր կրքերից»: «Իսկ ո՞ւր թողեցիր Աստծուն»,- հարցնում է փիլիսոփան: Եվ աղքատ մարդը պատասխանում է. «Աստծուն թողեցի մաքուր սրտերի մեջ»: Էքհարտը զարմանում և ասում է. «Դու ի՞նչ տեսակ մարդ ես, եղբա՛յր»: Եվ աղքատ մարդը պատասխանում է. «Ես թագավոր եմ»: Իսկ այն հարցին, թե որտե՞ղ ես թագավորում, աղքատը պատասխանում է. «Ես թագավորում եմ իմ մարմնի վրա, որովհետև այն, ինչ որ իմ հոգին ձգտում է ստանալ Աստծուց, իմ մարմինն ավելի արագ շտապում է, որպեսզի խանգարի այդ ձգտումը»:

Փիլիսոփան հարցնում է, թե՝ «Ո՞ւր է քո թագավորությունը, որովհետև ամեն թագավոր անպայման մեկ թագավորություն ունի»: Եվ այն ժամանակ աղքատ մարդը պատասխանում է. «Իմ թագավորությունը իմ հոգու մեջ է: Երբ ես փակում եմ իմ զգայարանների դարպասները և ամենայն լրջությամբ փնտրում Աստծուն, այն ժամանակ ես գտնում եմ Նրան իմ հոգու մեջ այնպես լուսավոր և բերկրալի, ինչպես որ Նա գոյություն ունի հավիտենական կյանքում»: Եվ փիլիսոփան հարցնում է. «Ուրեմն դու սո՞ւրբ ես, ո՞վ սրբացրեց քեզ»: Եվ աղքատը պատասխանում է. «Այդ բանն արեց լռության մեջ իմ կեցությունը, իմ անդրանցական խորհրդածությունը և իմ միավորումն Աստծո հետ: Սրանք ինձ վեր բարձրացրին դեպի երկինք, քանզի ես չկարողացա ոչ մի տեղ հանգիստ գտնել, բացի Աստծո մոտից: Այժմ ես գտել եմ Նրան և Նրանում գտել եմ նաև հավիտենական հանգիստն ու խաղաղությունը, և դրանք ժամանակագրային առումով վեր են անցնում աշխարհի բոլոր թագավորություններից»:

Շնորհը, սերը թող լինի բոլորիս հետ այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն:

# Տ. ՓԱՌԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(17 օգոստոսի 2003 թ.)

*«Եւ տեղիս այն լիցի տաճար Աստուծոյ եւ տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց եւ աթոռ քահանայապետութեանն»:*
*«Եւ այն վայրը Աստուծոյ տաճար պիտի ըլլայ եւ բոլոր հաւատացեալներու խնդրանքներուն աղօթքի տուն եւ Քահանայապետութեան Աթոռ»:*
(Ագաթանգեղոս, Հայոց Պատմություն, Տփղիս, 1909, էջ 387)

Ազգիս Վեհափառ Գարեգին Բ. Հայրապետի սրբապառ կոնդակին արձագանքելով, այս տարի կը նշենք Ս. Էջմիածնի Մայր Տաճար՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Նաւակատեաց 1700-ամեակը: Նոյնպէս Վեհափառ Հայրապետի տնօրինութեամբ, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Եպիսկոպոսները, իրենց Թեմական ներկայացուցիչներու մասնակցութեամբ եւ կամ առանձին, Ուխտի Ս. Պատարագներ կը մատուցանեն տարուան բոլոր Կիրակիներուն, որոնց ընթացքին անոնցմէ իւրաքանչիւրն իր ներբողը կը հիւսէ Ս. Էջմիածնի մասին:

Չեմ ուզեր այստեղ բնորոշումները կամ վերլուծութիւնները կատարել ըսուած խօսքերուն, պատմութիւնը պիտի արձանագրէ եւ պէտք եղած գնահատականները տայ անոնց մասին, բայց որպէս ընդհանրացում կարելի չէ չհաստատել, թէ կատարուած ներբողականներու մեծ մասը գերադրական ածականներու համադրումներ են, որոնք ճիշդ է, թէեւ կ'արտայայտեն ենթակային ապրումները եւ մօտեցումները եւ սակայն շօշափելի իրագործումի մը, կամ պատմական իրողութեան մը փաստարկութեամբ, Մայր Աթոռի լինելութեան կամ Անոր առաքելութեան հիմնաւորումը չեն հաստատեր: Տարբեր բանաձեւումով մը ըրուած, ածականները երբեք չեն կրնար սահմանել գոյականի մը ամբողջական իմաստը, անոնք չեն կրնար անոր էութեան նկարագիրը բացատրել, անոնք միմիայն կրնան գաղափար մը տալ գոյականի մը բարեմասնութեանց կամ թերութեանց մասին: Այս դիտակէտէն մեկնած, նոյնիսկ ստորոգելիները կը թերանան ամբողջական նկարագիրը ներկայացնել տուեալ իրողութեան, գաղափարին, առարկային, իրին կամ նիւթին:

Այս դիտողութիւնը կ'ընեմ ոչ անպայման թերարժեւորելու նպատակով այն յարգանքի արտայայտութիւնները, որոնք կը կատարուին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ, բայց անոր համար, որ ըսուած խօսքերը մեծ մասամբ վրիպած են իրենց նպատակէն, որ է մատնանշել դերը եւ տեղը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայ իրականութեան մէջ:

Այսքան երկար ներածականէ մը ետք, ջանամ իմ ըմբռնումն արտայայտել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի աստուածահաստատ կոչումին մասին: Բայց, նախքան այդ, կ'ուզեմ խօսիլ այս պատմութեան նախընթացին մասին:

Աստուածաշնչական ջրհեղեղի պատմութեան աւարտին, մեր Հայրենիքի Արարատեան դաշտին վրայ, Աստուած հաշտութեան Իր Ուխտը կնքեց մարդկութեան հետ, ներկայաց- ուած Նոյ Նահապետի անձով, հաշտութեան խորհրդանիշ կարգելով ծիածանի երանգաւոր համակարգը: Մինչեւ այսօր մարդկութիւնը ան[illegible] աւարտին, երբ երկնակամարին վրայ կը տեսնէ ծիածանի ներկայութիւնը, Աստուծոյ խոստումին պատճառած խանդաղատու- թիւնը կը զգայ իր հոգիին մէջ, ջրհեղեղի սպառնալիքին փարատումը, Աստուծոյ պատժիչ ուժին չքացումը, Աստուծոյ ներողամտութեան վկայութիւնը: Հաշտութեան այս Ուխտն ըն- ծայուած էր մարդկութեան Աստուծոյ կողմէ, որպէս արտայայտութիւն Անոր սիրոյն մար- դուն նկատմամբ եւ միանգամընդմիշտ Աստուծոյ սէրը մարդուն նկատմամբ դարձուցած յա- րաբերութեան նոր մակարդակ, փոխանակ երկիւղով պայմանաւորուած կապակցութեան: Այդ Ուխտին միջոցաւ մարդն ազատուած էր բնութեան կործանիչ սպառնալիքէն: Բայց մարդը, որ զերծ կը մնար զինք շրջապատող արհաւիրքներէն, կը շարունակէր փակային գերին մնալ իր կիրքերուն, իր տկարութեանց, ինքն իր անձով աշխարհը պայմանաւորելու իր ունակութեանց: Մարդուն սխալ հասկցուած այս ազատ գործելակերպն իր հոգիի ճախ- րանքին կաշկանդումն իսկ էր, որովհետեւ մարդը կը ստորադասէր իր հոգիին անսպառ կա- րելիութիւններն անցաւորի սահմանափակումներուն:

Աստուած, մղուած մարդը Տիրոջ կամքին մէջ ազատութեան առաջնորդելու Իր հոգածու- թենէն, դարերու ընթացքին ղրկեց մարգարէներ եւ ի լրումն ամենայնի՝ նոյնիսկ Իր Միածին Որդին, որ եկաւ եւ խաչին վրայ մահը յանձն առաւ, ի սէր մարդու սկզբնական վիճակին մէջ վերականգնման՝ յաչս Աստուծոյ: Աստուծոյ Որդիին մահէն ետք, Անոր Առաքեալները Բա- նին Կենաց քարոզութիւնը կատարեցին նաեւ ի Հայս, բայց մարդն անտեսեց եւ չանսաց այս կոչին եւ հեստեց Աստուծոյ կամքին:

Եւ ահաւասիկ դարեր ետք մարդ մը, որ ի սէր իր հաւատքին ի Քրիստոս յանձն առաւ տասներկու անպատմելի չարչարանքներ եւ որպէս գերագոյն պատիժ եւ տասներեքերորդ չարչարանք, արգելափակուեցաւ խոր Վիրապի մոռացութեան ու խաւարին մէջ, տասնհինգ տարիներու ամենախիստ ճգնութեամբ, ամբողջութեամբ հասնելով եւ տիրապետելով հո- գիի ազատութեան, Հայոց արքունիքին եւ ժողովուրդին հետ եւ մէջ, վաթսունհինգ օրերու պահեցողութեամբ, ծոմապահութեամբ եւ քարոզութեամբ, վերընծիւղեց «Աշխարհի լոյսն ի Հայս», որպէսզի բոլորը միասին հետամտին անհատի եսակեդրոն իղձերու կաշկանդումով, հոգիի ազատութեան՝ Աստուծոյ կամքին մէջ: Եւ երբ Արքան, արքունիքը եւ ժողովուրդը պատրաստ էին մտովի եւ հոգեպէս ըմբռնելու ոգեկան աշխարհի թելադրանքները, Մեծ Ճգնաւորի աչքերուն առջեւ պարզուեցաւ հոյակերտ տեսքը Աստուծոյ Որդիին, որ կ'իջնէր Ուխտի դաշտն Արարատեան, կրկնակի եւ Նոր Ուխտ մը կնքելու, այս անգամ արդէն զայն վերապահելով Թորգոմեան ազգի զաւակներուն, Իր պաշտամունքի վայրը հռչակելով Վա- ղարշապատ մայրաքաղաքի մէջտեղը, խփելով գետնին Իր ոսկի ուռով, ուրկէ այնտեղ դէ- պի երկինք խոյացաւ զմրնթաձեւ կառոյց մը, որ կ'աւարտէր «զարմանալի, աստուածակերտ եւ սքանչելի» հրեղէն Աթոռով մը, որուն վրայ կը հանգչէր Տէրունական Խաչը: Յետոյ է, որ

բացայայտուեցաւ Մեծ Սուրբին իմաստը իր տեսիլքին մանրամասնութեանց, ինչպէս Աթոռի եւ Տէրունական Խաչի պատկերները մեկնաբանելով որպէս մեծ քահանայապետութեան խորհրդանիշ:

Այս տեսիլքին միջոցաւ Աստուած Իր կամքը յայտնեց Արարատեան Դաշտի բնակիչներուն, կառուցելու Իր փառաբանութեան տունը եւ Իրեն ուղղուած աղօթքներու տաճարը կերտելու եւ Իր Բանին քարոզութիւնը ղեկավարելու կեդրոնը հաստատելու այն վայրին վրայ, ուր Ինք դարեր առաջ տուած էր Իր խոստումը մարդուն. չպատժել մարդը տարերային աղէտներով, որովհետեւ Իր վերաբերմունքը մարդուն նկատմամբ պայմանաւորուած էր սիրով, որուն գերագոյն արտայայտութիւնը հանդիսացաւ Իր իսկ Որդիին ինքնակամ զոհաբերութիւնը՝ աստուածային սիրոյ խորհրդանիշ եւ Նոր Ուխտի յայտարար անարգ խաչափայտին վրայ:

Աստուած հաստատեց Իր աղօթքի տունը Վաղարշապատի մէջտեղը, այն տեղը միաժամանակ յայտարարելով մշտական կայան Իր հօտը վերահսկող Քահանայապետութեան: Աստուծոյ հաստատած այս Քահանայապետարանը կոչուած էր առաջնորդելու Իր ժողովուրդը պատմութեան խաղաղ եւ նաեւ դժնդակ բոլոր պայմաններու եւ ժամանակներու ընթացքին: «Եւ տեղին այն չիցի», կը վկայէ հրամայուած, հրաշապատում այդ տեսիլքը նկարագրող մատենագիրը:

Կիրարկուած սխալ սկզբունք մը սակայն, ուր Եկեղեցւոյ դերը կը ստորադասուի պետութեան, իր մխտական հետեւանքն ունեցաւ Մայր Աթոռի պատմութեան եւ գործունէութեան վրայ: Երբ մեր պետութիւնն իր պարտականութիւնը կատարելու յանձնառութեան մէջ տկարացաւ, դարձաւ Եկեղեցիին, որպէսզի զօրավիգ ըլլայ Ան իրեն, վստահութիւն ներշնչելով ժողովուրդին պետութեան նկատմամբ: Այս էր պատճառը, սեղմ տողերու մէջ, որ հարկադրեց Մայր Աթոռը լքել աստուածահաստատ Իր կայքը եւ աստանդական կեանք մը վարել, մեր պատմական հսկայ Հայրենիքին եւ անոր յարող հայաբնակ եւ ինքնիշխան տարածքներուն վրայ:

Կրնան ոմանք տարակուսիլ եւ համաձայն չըլլալ վերեւ նշուած Եկեղեցի-պետութիւն յարաբերութեան մեկնաբանութեան՝ պնդելով, որ Եկեղեցին ինքն է, որ ուզեց անպայման խցկուիլ պետութեան կողքին, անկէ օգուտներ քաղելու նպատակով, որ սակայն երբեք չի համապատասխաներ իրողութեան: Իմ կարծիքով, Եկեղեցին հարկադրուեցաւ պետութեան կողմէ նման քայլի մը դիմել: Այլապէս Մայր Աթոռի ոչ մէկ Գահակալ պիտի ուզէր նման վիճակի մը մատնուիլ եւ լքել աստուածահաստատ իր կայքը:

Այս է պատճառը, որ Դուին (484(5)-927 թթ.), Աղթամար (927-947 թթ.), Արգինա (947-1001 թթ.), Անի (1001-1051 թթ.), Սեբաստիա (1051-1062 թթ.), Թաւբլուր (1062-1065 թթ.), Ծամնդաւ (1066-1090 թթ.), Քեսունի Կարմիր վանք (1090-1116 թթ.), Ծովք (1116-1149 թթ.), Հռոմկլա (1149-1292 թթ.) եւ Սիս (1293-1441 թթ.) բնակավայրերը կ'առնչեն իրենք զիրենք Հայոց Հայրապետութեան, Քահանայապետութեան հետ: Իմաստուն եւ հանճարեղ Հայրապետներ երբեք չեն պակսած Հայ Եկեղեցւոյ մէջ, ուր որ ալ կայք հաստատած ըլլայ անոր կեդրոնը: Հարցը Հայրապետներու ձիրքերը կամ կարողութիւնը չէ: Հարցը աստուածահաստատ սկզբունքի անտեսումն ու մոռացութիւնն է: Մենք չէինք կրնար աւելի գեղեցիկ եւ տրամաբանական պատմութիւն մը հնարել: Կեդրոնը կը հաստատուի ժողովուրդի մը

սրտին վրայ, երկրի մը պորտատեղին: Արարատեան դաշտը ոչ միայն սրբավայր, այլեւ երկրի բաբախող սիրտն իսկ է: Ագաթանգեղոս պատմութիւն յերիւրող անձ մը չէ, ան կը վկայէ Աստուծոյ ցուցմունքին, մատնանշումին մասին միայն, որ աստուածատուր ըլլալէ անկախ՝ նաեւ է իմաստուն եւ տրամաբանական:

Սրտի ցաւով պէտք է արձանագրել այսօր այն իրողութիւնը, որ վերեւ նշուած Հայրապետական կայաններէն ոեւէ մէկը, բացառութեամբ կիսաւեր եւ լքուած Աղթամարին, այսօր նոյնիսկ կանգուն չէ: Չեմ համարձակիր աւելին ըսել կամ ենթադրութիւններ կատարել: Իւրաքանչիւր բացատրութիւններ հայթայթեցէք դուք ձեզի՝ առ ի համոզում ճշմարտութեան եւ առ ի հանդարտութիւն մտաց:

Հայ ժողովուրդի եւ Հայոց Երկրի պատմութեան ամենանկուն եւ անյուսալի մէկ պահուն հոգիի բացառիկ արիութիւն եւ տեսլական կը պահանջէր նախաձեռնել Մայր Աթոռի փոխադրութիւնը դէպի իր աստուածահաստատ կայքը 1441 թուականին՝ այն հաստատ համոզումով, որ Մայր Աթոռը պիտի կարենայ իր պարտականութիւններն առաւել նախանձախնդրութեամբ եւ յաջողութեամբ ի կատար ածել իր բնահողին վրայ, քան էր պարագան Կիլիկիոյ բազմամարդ, բայց ապերասան միջավայրին մէջ:

Մայր Աթոռի պատմութիւնն անցեալ հինգ եւ աւելի դարերու ընթացքին եկաւ հաստատելու տրուած որոշումին խելամտութիւնը, հակառակ մարդկային սայթաքումներուն, որոնք յատկանշեցին Մայր Աթոռի ալ ղեկավարութիւնը ժամանակ առ ժամանակ:

Առաքել Պատմիչի խօսքը՝ «Քանզի ի վերայ Աջին եւ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կայեալ կան» (Առաքել Դաւրիժեցի, Գիրք Պատմութեանց, Լ.Ա. Խանլարյան, 1990, գլուխ ԺԷ, էջ 182, տող 15), բաղձանքի մը արտայայտութիւնը չէ միայն, այլ իրական վերաբերմունքի անպաճոյճ մեկնաբանութիւնը: Մայր Աթոռի վերադարձն իր հաստատատեղին Աստուծոյ միջամտութեամբ իրականացուած սխրանք մըն էր, որ ստացաւ իր արժանի արգասիքը, հող պատրաստելով Հայրենիքի վերականգնման: Դարեր շարունակ հայաթափուած Հայրենիքը դժուարութեամբ, դժկամութեամբ, բայց տակաւ, վերաբնակուեցաւ մեր ժողովուրդի հոծ բազմութիւններով: Մայր Աթոռը հանդիսացաւ առինքնող այն մագնիսը, որուն ձգտեցան հայութեան բեկորները հանգրուան առ հանգրուան: Աստուածատուր հրաշք մըն էր կատարուածը: Այլապէս ինչպէ՞ս կարելի է մեկնաբանել ձգողականութիւնը երկրի մը, որ պետութիւն չունէր: Այս տեսակէտէն դիտուած, ինչո՞վ կ՚արդարանայ Եկեղեցւոյ Կեդրոնին պետական նստավայրեր տեղափոխելու պատրաստակամութիւնը: Նկուն ու տկար, բայց եւ այնպէս իր առաքելական կոչմամբ եւ գիտակցութեամբ առլեցուն, Մայր Աթոռն իր կարելի լաւագոյնն ի գործ դրաւ՝ մեր ժողովուրդի ազգային ձգտումները յաջողութեամբ պսակելու գործին: Մեր պատմութեան ընթացքին, յատկապէս վերջին երեք դարերուն, Աստուած մի քանի անգամ նուիրաբերեց, ընծայեց մեր Հայրենիքը մեզի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Արարատեան դաշտավայրի մէջ իր ներկայութեամբ, Աստուծոյ պարգեւը իրականացնելու եւ արդարացնելու գործին մէջ իր անփոխարինելի դերակատարութիւնը ունեցաւ: Հայ ժողովուրդի ճգնաժամային օրերուն, երբ ղեկավարութեան յաւակնող մարդիկ Թիֆլիս կամ Բաքու նստած տնօրինութիւններ կը կատարէին երկրի եւ ժողովուրդի մասին, Մայր Աթոռն այստեղ, այս հողին վրայ, գերագոյն զոհաբերութեանց գնով կը հոգար, կը մատակարարէր եւ կը խրախուսէր բոլոր անոնց, որոնք այդ վերաբերմունքներուն կա-

րիքն ունէին: Նոյնիսկ սովետական բռնատիրութեան օրերուն, երբ փիրող համակարգին պատճառաւ վերապահութիւն եւ նոյնիսկ ոժկամութիւն կը փիրապետէր Հայրենիքի նկատմամբ, Մայր Աթոռը հանդիսացաւ շաղկապող օղակ եւ երթեւեկութեան կամուրջ հայութեան երկփեղկեալ հատուածներու միջեւ եւ խթանողը ամրապնդման կապին, որ գոյութիւն առաւ Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ: Մայր Աթոռը նոյնիսկ հեռատեսութիւնն ունեցաւ հրահրելու եւ ոգի ներշնչելու Հայրենիքի պաշտպանութեան հրասայլերի շարասիւնի ձեռքբերման եւ հայրենադարձի անյետաձգելի նախաձեռնութեան:

Մեր պատմութեան կարեւորութիւններով հագեցած այս օրերուն, դարձեալ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է, որ կը շարունակէ պատմական աստուածատուր իր առաքելութիւնը, կեդրոնաձիգ իր ներույժով հրապուրելու եւ խթան հանդիսանալու Հայրենիքի վերաշինութեան եւ ծաղկումի աշխատանքներուն: Մայր Աթոռ Ս. Էջմիածինն առաջին հանգրուանն է ներքաշելու բոլոր անոնք, որոնք իրենց ազգի բարեկեցութեան, բարօրութեան եւ բարգաւաճման մտահոգութիւնն ունին:

Աստուածընտրեալ, աստուածապարգեւ եւ աստուածակառոյց Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր գոյութեան ամբողջ ընթացքին ինքն իր մէջ մարմնաւորեց եւ հանդիսացաւ համադրման վայր հայ ժողովուրդի հոգեւոր ապրումներու եւ գոյութենական մաքառումներու աստուածահաստատ զոյգ առաքելութեանց: Հայ ժողովուրդի պատմութեան ամենայուսահատական օրերուն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հաւատքի ամրոց, սխրանքի բարձունք, ոգեշնչման փարոս, յոյսի կռուան, քաջայերութեան օրրան եւ սիրոյ աղբիւր դարձաւ մեր ժողովուրդի զաւակներուն համար՝ ամրութեան շաղկապ եւ օժանդակութեան միջոց ըլլալով աշխարհացրիւ մեր ժողովուրդի հատուածներուն միջեւ:

Օրհնեալ ըլլայ պահը եւ օրհնեալ ըլլան այն անձերը, որոնք օրհասական եւ ճգնաժամային րոպէին մեր պատմութեան մէջ, անհատական փեսիլքով եւ աստուածային թելադրութեամբ, վերականգնեցին Մայր Աթոռն իր աստուածանիշ կայքին վրայ, որպէսզի Աստուծոյ ցուցմունքին վերագործադրութեամբ իրականանան Անոր բարի փնօրինութիւնները մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Աստուածաշէն Դուն «տուն աղօթից խնդրուածոց եւ աթոռ քահանայապետութեան». Մայր Աստուածածնի Վերափոխման այս Տօնին, յանուն ներկաներուս կը դիմեմ Հովանաւոր Ս. Կոյսին՝ միջնորդական բարեխօսութեամբ զօրավիգ հանդիսանալ Քեզի, որպէսզի այս դժուար օրերուն շարունակես Քու պատմական աստուածահաճոյ եւ աստուածակամ առաքելութիւնը մեր ժողովուրդի հոգեւոր եւ մարմնաւոր կարիքները հոգալու Քու յանձնառութեանդ մէջ: Թող Տէրը, առ ի գնահատութիւն մեր Ս. Եկեղեցիին, որ գիտակցելով իր թերացումին վերահաստատեց Մայր Աթոռն իր բնավայրին վրայ եւ առ ի վարձատրութիւն մեր Մեծ Խոստովանող եւ բազմաչարչար Սուրբ Գրիգոր Հայրապետին, Իր օրհնութիւնները շռայլէ Մայր Աթոռի Հայրապետին, միաբանութեան եւ անոր աշխարհացրիւ բոլոր զաւակաց վրայ, Իր փառքին եւ մեր ժողովուրդի շինութեան համար. ամէն:

# Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՔՉՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 օգոստոսի 2003 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Փառք Տեր Ամենակալին, որ զիս, մեր թեմի հոգևոր դասը և մեր թեմի հավատացյալ ժողովուրդն արժանի ըրավ այս Ս. Պատարագին ներկա գտնվելու, որ նվիրված է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակին, և այս կարգադրությունը ընող Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ իր բարեհաճ կարգադրության համար մեր սրտագին շնորհակալությունը կհայտնենք հանուն մեր թեմի Թեմական խորհրդի, կազմակերպություններուն և հավատացյալ ժողովրդին:

Սիրելի քույրեր և եղբայրներ, մենք այստեղ, ինչպես հիշեցի 1700-ամյակի առիթով, կգտնվինք, եկած ենք անգամ մը ևս մեր ուխտը նորոգելու առաջի Աստուծո և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այս Ս. Սեղանին առջև զորանալու հոգեպես, աղոթելու, որպեսզի Տերը մեր հավատքը հաստատ և անսասան պահե, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, մեր Հայրենիքը և անոր ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության:

Արդարև, ուխտը սրբազան քայլ մըն է, և անոր առաջին օրինակները մենք Սուրբ Գրքին մեջ կտեսնենք, որոնցմե հիշենք առաջինը թերևս Նոյ Նախապետի՝ Աստուծո հետ կնքած ուխտը: Գիտեք, որ այն համապարած Ջրհեղեղը, որ տեղի ունեցավ մարդոց մեղքին պատճառավ, Նոյ Նախապետ Աստուծո հետ ուխտ մը կատարեց, և այդ ուխտը պիտի ըլլար այն, որ այլևս որևէ աղետի պատճառավ բնաջնջում տեղի պիտի չունենար: Բայց նաև Սուրբ Գրքին մեջ դարձյալ մեզի կներկայացվի, թե մարդն ի էութենե չար էր և իր չար մտածություններեն հեռու չմնաց և զործեց մեղք, և իրեն իջավ երկրորդ մեծ աղետը Սոդոմ Գոմորի:

Այն ուխտը, որ կատարվեցավ նաև Աբրահամին հետ, մեր բոլոր ազգերու Նախապետին հետ, որ ընտրվեցավ Աստուծո կողմե, և իրեն Աստված երազի մեջ խոսեցավ և ըսավ. «Աբրահամ, ես եմ քո Տեր Ամենակալ Աստվածը, մի վախնար, քեզ պիտի օրհնեմ, դուն օրհնված պիտի ըլլաս բոլոր ազգերուն մեջ և դուն պիտի առաջնորդես քու ժողովուրդդ և որպես օրհնած անձ քո ժառանգդ՝ զավակներդ, աստղերու չափ պիտի շատցնեմ: Եվ այսպես, քու միջոցավդ օրհնված պիտի ըլլան բոլոր ազգերը» (Հմմտ. Ծննդ. ԻԶ 17): Եվ այսպես, առաջին այս երազը, որ հայտնվեցավ Աբրահամին, ուխտ մըն էր դարձյալ Աստուծո և Աբրահամին միջև:

Սիրելի հավատացյալներ, մենք շատերս կկարծենք, որ Աստվածաշունչի Հին Կտակարանի բաժինը միայն հրեաներու պատմությունն է, սակայն ես կկարծեմ, որ ատիկա Աստուծո կամքին հայտնության պատմությունն էր, որովհետև Աստուծո կամքը հրեա ժողովրդի Աբրահամ նախապետի միջոցավ մեզի կհասնի և ուղեցույց կըլլա մեր հավատքին համար: Եվ Աստված, արդարև, օրհնեց Աբրահամին, Աբրահամ Քանանու երկիրը հաստատվեցավ, հետո եղավ Եգիպտոս, ծանոթացավ այդ ժամանակվա մեծ քաղաքակրթության հետ և

դարձյալ վերադարձավ Քանանու երկիրը, որ Աստված խոստացած էր իրեն և ըսած էր. «Ելիր քու տունեդ, քու ազգեդ և հորդ տունեն բաժնվե և գնա այն երկիրը, որ ցույց պիտի տամ քեզ»:

Հոն հաստատվեցավ Աբրահամ և այսպես հավատքի հայր կոչվեցավ և միաստվածության հավատացող բոլոր կրոնքներու հիմքը դրավ: Եվ միաստվածության բոլոր կրոնքները, արդարև, Աբրահամին կճանչնան որպես հավատքի հայր: Այդ կրոնքը, որ միաստվածություն կկոչենք մենք, անոր հիմը կկազմե, սկզբունքը կկազմե հավատքը: Եվ մարգարեներեն մեկը պիտի ըսեր, որ արդարը միայն իր հավատքին միջոցավ պիտի ապրի: Եվ ոչ միայն մարգարեները, այլ Քրիստոս ալ: Բազմաթիվ անգամներ Աստվածաշունչի բովանդակ Գիրքերուն մեջեն կտեսնենք հավատքի շեշտը, և Քրիստոս կըսե. «Քու հավատքդ քեզ փրկեց»: Առանց հավատքի կարելի չէ կրոնք ունենալ, առանց հավատքի կարելի չէ Աստուծո առջև ներկայանալ և առանց հավատքի կարելի չէ իբրև քրիստոնյաներ, իբրև կրոնասեր մարդիկ հաջողության հասնիլ:

Հավատքի այս սկզբունքեն հետո, սիրելի հավատացյալներ, Աբրահամի ներկայացված պարտականությունն էր՝ բոլոր մարդկությունը պաշտամունքի հրավիրել, և այդ պաշտամունքը երկու բառերի մեջ թերևս կարելի է ամփոփել, մեկը՝ Աստուծո ներկայությամբ ապրիլ, երկրորդը՝ արդարությամբ, ինչպես Աբրահամ: Բոլոր աղոթքները, մեր բոլոր պաշտամունքները, որ կկատարենք, Աստուծո ներկայությամբ ապրելու համար է, և Աստուծո ներկայությամբ ապրիլը հավատքի կենսունակության, հավատքի սկզբունքին իրագործումն է: Աբրահամ այդ հավատքի ներկայության հավատացող, հավատարիմ Աստուծո որդին էր և արդար էր միևնույն ժամանակ, որը մենք այսօր մեր բարբառով սրբություն ըլլալով կթարգմանենք:

Ես կհիշեմ իմ մորս հավատքը, որ տարիներ առաջ, երբ իմ ձեռքես բռնած որպես պզտիկ երեխա եկեղեցի կտաներ՝ առանց բառ մը հասկնալու հայերեն, առանց գիտնալու աղոթության փնտռությունը, և ամեն անգամ հինգ ժամ եկեղեցի ներկա ըլլալեն հետո, կելլեինք եկեղեցիեն դուրս, և մայրս կդառնար ինծի, կըսեր. «Տղաս, այսօր նորեն քահանան պակաս բան մը կարդաց»: Տեսեք մորս հավատքը, սիրելի հավատացյալներ, այն անձը, որ բառ մը իսկ չէր հասկնա աղոթքներեն, չի գիտեր լեզուն, չի գիտեր աղոթության փնտռությունը, բայց հինգ ժամ աղոթության ներկա գտնվելե հետո, կըսե, որ բան մը պակաս կարդացվեցավ: Աս կնշանակե, թե մայրս իր հավատքին մեջ, եկեղեցվո մեջ միայն Աստծո ներկայության մեջ կգտնվեր, Անոր հետ կխոսեր և ապրում մը ուներ՝ Աստուծո ներկայությամբ արդարորեն ապրիլ, Անոր հետ միասին աղոթել, Անոր հետ միասին եկեղեցվո մեջ ապրում մը ունենալ,- ահավասիկ կրոնքին առաջին և հիմնական սկզբունքներեն մեկը:

Մեր ուխտն այսօր կկատարենք այստեղ, և ես կաղոթեմ, որ մենք բոլորս միասին նոր ըսած բնական և նախնական հավատքով ներկա ըլլանք Աստուծո առջև արդարև, այլապես մեր հավատքը ոչ մեկ իմաստ պիտի ունենա, ոչ մեկ նշանակություն պիտի ունենա:

Բայց Պողոս առաքյալ կըսե նաև հետևյալը. «Առանց գործի հավատքը մեռյալ է»: Այս պարագային կհիշեմ ես նաև ուրիշ դեպք մը, որ պատահեցավ ասկե 80 տարիներ առաջ, 1915 թ. մեր աքսորի, եղեռնի օրերուն. Վանա ծովուն եզերքը գտնվող գյուղերեն մեկի մեջ մարդ մը կար և այդ մարդը ուներ ագարակ մը: Այդ ագարակը լավ կմշակեր և այդ ագարա-

կի բերքով է. որ կապրեր: Եղեռնը հասավ. աքսորը եկավ, և ամեն հայեր խուճապի մատնըված զինվորներու հսկողության ներքև` աքսորի կուղարկվեին: Բայց մարդը հանդարտ, խաղաղ կերպով իր գործը կկատարեր, կշարունակեր հերկել իր հողը: Իր հարազատները եկան. տղան եկավ և ըսավ. «Հա՛յր. շարժե տեղեդ. մեզի աքսորի կտանին»: Հայրն անդըրդվելի` գործը կշարունակեր: Կինը եկավ. նույնպես անդրդվելի մնաց մարդը. իր հարազատներու ձայնին ականջ չդրավ և շարունակեց իր գործը: Բայց վերջապես բոլորը եկան մարդուն քով և նրա ձեռքերը բռնելով ըսին. «Ահավասիկ մեր դռան առջև կգտնվին զինվորները, քալե, երթանք. ինչու տակավին այստեղ այսպես կկենաս: Կրնա ըլլալ, որ այդ զինվորներեն մեկուն գնդակին կամ սուրին զոհ երթաս»:

Մարդը դարձավ իր հարազատներուն և հետևյալը պատասխանեց. «Իմ սիրելի հարազատներ, այո, գիտեմ, որ աքսորի կերթանք, և գիտեմ, որ թերևս երբեք պիտի չվերադառնանք: Սակայն արորը, որ ես կնորոգեմ, այդ արորն աշխատցուցինք որոշ տարիներու ընթացքին, ատիկա փչացավ, բայց մենք արորը դարձյալ շինենք, լավ վիճակի մեջ թողնենք, որպեսզի մեր ետևեն եկողները կարենան անիկա օգտագործել և մեզի համար օրհնություն կարդան»:

Ահավասիկ, սիրելի հավատացյալներ, ես կաղոթեմ, որ մեր ուխտը երբ կկատարենք առաջի Աստուծո, մեր Ս. Էջմիածնի այս Սրբազան Սեղանին առջև, մենք ալ այդ աքսորի գացող, վտանգի մեջ գտնված հայուն նման մեր հոգին կարենանք վերակենդանացնել, և չընենք այնպիսի բաներ, որ մեզմե հետո ջրհեղեղ, ինչպես կըսե առած մը, ըլլա, որովհետև մենք կանք, պիտի երթանք, բայց մեզմե հետո ուրիշ սերունդներ պիտի գան: Ատիկա թե՛ մեր հոգևոր եղբայրներուն պարտականությունը պիտի ըլլա, թե՛ մեր ժողովուրդին և թե՛ մեր պետության: Որքան այս ուխտը կատարենք մենք Աստուծո հետ, որքան Աստուծո այդ շնորհքները ունենանք, որքան կրոնական այդ սկզբունքներուն հավատարիմ մնանք, ինչպես Աբրահամ մնաց, մենք ալ իբրև հայեր, իբրև քրիստոնյաներ, իբրև Աստուծո զավակներ, մենք ալ այդ ոգին կրնանք ցուցաբերել, եթե այդ կամքը ցուցաբերելու տրամադրությունն ունենանք և եթե կարենանք այդ կամքը փոխանցել հաջորդ սերունդներուն:

Իմ աղոթքն այս պիտի ըլլա բոլորին: Ես կաղոթեմ ձեր բոլորի առողջության համար, ձեր հաջողության համար, Մայր Աթոռի անսասանության համար, մեր պետության հաջողության համար, զարգացման համար, և այս մեր ուխտը Աստված ընդունելի ընե այսօր և հաջորդ տարիներուն, երբ որ մենք այստեղ կրկին աղոթքի և ուխտի կուգանք հավիտյանս. ամեն:

# Տ. ՇԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՎԱՃՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

(31 օգոստոսի 2003 թ.)

*«Գործակից ենք ձեր՝ եւ աղաչեմք, մի՛ ընդունայն զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ»:*
(Բ Կորնթ. Զ 1)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հոգևորական հայրեր և ժողովուրդ և նորընծա քահանաներ,

Այս խոսքերն առնված են Պողոս առաքյալի՝ կորնթացիներին ուղղված թղթեն, որ մեծ և կարևոր թելադրություն մըն է բոլոր քրիստոնյաներուն և, ի մասնավորի, հոգևորականներուն: Ան 20 դարերե ի վեր սիրտե սիրտ, հոգիե հոգի անցնելով՝ այսօր հասած է մեզի: Կխնդրենք, կըսե, տարսոնցի Պողոս առաքյալը, չըլլա, որ Աստուծո շնորհքը դուք պարապ տեղը ընդունած ըլլաք: Շնորհաբաշխ Աստված մարդ արարածը ստեղծեց Իր պատկերին նման: Իր պատկերը, անշուշտ, գծագրային բան մը չէր, հոգևոր իմաստով տվավ Իր աստվածային սերը և աստվածային բարությունը, և մարդիկ այդ շնորհքը ընդունելե հետո, թեև եղան իբրև մարդեր հավասար բնությամբ, բայց այդ մարդոց մեջ առաքինությունը տարբեր երևույթ մը եղավ. քահանայությունը բոլորովին տարբեր երևույթ մը, և առաքյալը, որ ամենեն առաջ ոխերիմ թշնամին էր քրիստոնեության և, սակայն, ամենամեծ պսակավոր առաքյալը եղավ ամբողջ աշխարհին մեջ, և ուր որ կրնային երթալ այն ատեն, ան տարավ Ավետարանին լույսը իր ընկերներու հետ, մտավ մութ քաղաքները, մութ հոգիներուն մեջ և անոնք ըրավ լույսի քաղաքներ, լույսի զավակներ:

Այսօր մենք ուրախությամբ կտոնենք մեր Ս. Լուսավորչի հիմնած այս գեղեցիկ Մայր եկեղեցիին, որ Ս. Աստվածածին կկոչվի, և այնտեղ Իջման Ս. Սեղանն է, օծման 1700-ամյակը:

Երկու տարի առաջ մեծ հանդիսավորությամբ և հոգեկան հրճվանքով և հպարտությամբ տոնեցինք աշխարհին մեջ քրիստոնեության առաջին պետական և պաշտոնական կրոնք հռչակվիլը: Այսօր այստեղ, լույսի Ս. Խորանին, սանդարամետի մեհյանի մոխիրներուն վրա կազմված և շինված է այս Մայր Տաճարը, որ 1700 տարիներե ի վեր լույս կտրե համայն հայության և եղած է Աթոռը Հայոց Հայրապետության: Թեև նյութականորեն շատ մը տեղեր տեղափոխվեցավ այս Աթոռը, բայց հիմնականին մեջ այստեղ մնաց Լուսավորչի տեսիլքով գծագրված այս սուրբ Տաճարին մեջ և դարեր շարունակ որքան հայրապետներ, որքան եպիսկոպոսներ դժվար պայմաններուն մեջ ան պահեցին հաստատուն: Եվ այսօր կարգը մերն է: Մենք ուրախ ենք, որ այսօր մեր նորանկախ Հայաստանի պետության շնորհիվ մենք մեր ազատությունը գտած ենք և ազատորեն կպաշտենք մեր կրոնքը և մեր արարողությունները:

Այսօր մեր թանկագին Վեհափառ Հայրապետին շանքերով ինքզինքին կսկսեն գործել մեր վանքերը և եկեղեցիները: Հառաջդիմության մեջ է Գևորգյան Ճեմարանը, և հոգևոր մեր եղբայրները, ըլլան անոնք եպիսկոպոս կամ վարդապետ կամ աբեղաներ և սարկավագներ, այսպես վառված են սիրովը մեր միակ և մեծ Առաքելական Աթոռին, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներով կազմակերպված և Գրիգոր Լուսավորչով վերանորոգված հայրապետական Մայր Եկեղեցիին, որ իր ճառագայթները տարածած է ամբողջ աշխարհի մեջ: Ուր որ կապրի հայ, ուր որ կա եկեղեցի մը, ըլլա մեծ կամ փոքր, հոն մեր Մայր Տաճարին օրհնված Սրբալույս Մյուռոնը և օրհնությունները կբաշխվին համայն հայության: Ինչ մեծ երջանկություն է սա. Քրիստոսի փոքրիկ հոտը այս դժվար աշխարհագրական տարածքին մեջ 20 դարեր շարունակ և տակավին մինչև աշխարհի վերջը պիտի հնչեցնե Ավետարանին ձայնը, պիտի երգե մեր սաղմոսներն ու շարականները, պիտի մատուցվի աստվածային Ս. Պատարագ՝ի մխիթարություն և ի սփոփանս մեր փառաայյալ ազգի:

Իսկ ձեզի, սիրելի նորընծա քահանա հայրեր, որ քանի մը վայրկյան առաջ աշխարհական էիք տակավին, այսօր Հայաստանյայց Եկեղեցու և Աստուծո քահանաները եղաք: Ջանացեք, որ ձեզի տրված շնորհքը ընդունայն չըլլա՝ըստ Պողոս առաքյալի խոսքին, այլ անկա զարգանա ձեր աշխատությամբ, ձեր նվիրումով, ձեր հնազանդությամբ և հարաճուն կերպով բարձրանաք նվիրապետական կարգերուն մեջ, եթե Տերը այդպես կամեցած է: Մինչ ձեր մասին լավ տեղեկություններ առինք ամենեն առաջ Վեհափառ Հայրապետին, ձեր ուսուցիչներեն, ամենքեն, և ես հանդարտ եմ սա վայրկյանին, որ իմ աջս դրի ձեր վրա, որովհետև աստվածային դատաստանին առջև ձեր հոռի գործունեության միակ պատասխանատուն ես պիտի ըլլամ: Երկու օրինակ ես պիտի տամ և պիտի վերջացնեմ, սիրելի նորընծաներ և սիրելի հավատացյալներ: Գիտե՞ք, որ Իմաստության գիրքին մեջ բան մը գրված է. «Առասան երեքկին՝ոչ վաղվաղակի խզեսցի» (Ժողովող Դ 12):

Գիտե՞ք ինչ է առասանը՝ չվանն է, կամն է: Երեքկինը երեք անգամն է, վրա-վրա է կապված: Իմաստունը կըսե, որ եթե այդ առասանները զատզատեն, շուտով կփրթին, իսկ եթե երեքական են, վրա-վրային, միության մեջ են, դժվար կփրթին: Առաջինը առասանին, սիրելիներ, մեր հայրենի պետությունն է: Երկար տարիներ, 1375 թվականեն անդին, երբ որ մեր Կիլիկյան թագավորությունը մեր ձեռքեն գնաց և մինչև 1991 թ. կանոնավոր, անկախ և մեծ երազներով սնած պետություն չունեցանք և փառք Աստուծո, որ այսօր ունինք առասանին մեկ և կարևոր չվանը, որ մեր պետությունն է: Անկե վերջը կգա մեր Հայրապետական Աթոռը: Որքան դժվարություններ, որքան նահատակություններ, ողբերգություններ կատարվեցան հոս և ուրիշ տեղեր, բայց անոնք պահեցին իրենց հավատքը, լուսավորչահիմն ավանդությունները:

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» պատգամը եղավ իրենց ամենօրյա սնունդը և աշխատության ուղին: Այդ է երկրորդ առասանը: Իսկ երրորդը՝ հայ ժողովուրդը, հայ ընտանիքը: Մեր պատմական ժողովուրդը գաղթաշխարհի մեջ պետք է միշտ հաղորդ ըլլա հայրենի պետությանը, Եկեղեցիին, և հայ ավանդապաշտ ընտանիքը՝ ընդունելով պսակի խորհուրդը, սիրով կապված ըլլա ընտանեկան հարցերուն՝պատրաստելու համար ապագա հայերը, ապագա սերունդը մեր ժողովուրդի: Այս երեքը եթե վրա-վրա ըլլան, չի փրթիր, և մենք չենք կորսնցներ այն ունեցած հարստությունները, որ ունենք այսօր:

Երկրորդ դաս մըն ալ, որ օրինակ պիտի ըլլա ձեզի, այն ալ սա է, սիրելիներ: Ժամանակին նկարիչ մը եկեղեցիի պատկերը գծեց, մեծ տաճարի մը, հոյակապ և սքանչելի եկեղե-

ցիի մը՝ իբրև պատկեր, բայց անոր տակը գրեց. «Տաճարի մը քանդումը»: Ասիկա պարադոքսալ գրություն մըն է, որովհետև ինչպե՞ս գեղեցիկ տաճար մը, հոյակապ տաճար մը կքանդվի: Բայց եթե դիտողներ ուշադիր եղան, այդ նկարին փոքրիկ մեկ անկյունը Սուրբ Հոգի Աստուծո աղավնակերպ նկարը դրված էր, որ սարդի ոստայնով շրջապատված էր: Այնքա՜ն հրաշալի է զյուտը, որ կուզե ըսել, թե Սուրբ Հոգին Աստված պետք չէ մարի մեր մեջ: Եթե տաճար մը՝ իբրև շինություն, իբրև մեծություն և հրաշալի ճարտարապետական արտահայտություն մը որքա՜ն ալ ուժեղ ըլլա և եթե անոր մեջ սարդի ոստայնը աղոտ չըլլա անոր մեջի աղոթողներն ավելի, այսպես աշխարհիկ մտածումներով կուգան և կըսեն իրենց պարտականությունները և հավատքը կպակսի, սրբությունը կպակսի այդ տաճարներուն մեջ: Այն ատեն անիկա սարդի ոստայնի մը պես կկրծվի և կփլվի: Նաև մարդ արարածն է այսպես: Մարդն Աստուծո բնակարանն է: Աստված ոչ թե այս տաճարին մեջ կբնակի, այլ մարդու սրտի մեջ կբնակի: Կրոնքը Աստուծո կյանքն է մեր ամենօրյա ապրումներուն մեջ:

Ես, սիրելի նորընծա քահանա հայրեր, ուրախ եմ ձեր այս սուրբ օծությամբ, քանզի գիտեմ, որ լավ ուսում առած եք, ամեն բան սորված եք և ասկե վերջն ալ պիտի սորվիք, վասնզի ուսումը սահման չունի, մինչև մահ կերթա: Ձեր մտքին մեջ, ձեր պարտականությանց մեջ, ձեր եկեղեցիներու մեջ երբեք չըլլա այնպիսի սարդի ոստայն մը, որ ձեր գործունեությունը խափանե և ձեր հաջողությունը նսեմ ձգե: Հետևաբար, իբրև ձեր հոգևոր հայրը, կուզեմ, որ չմոռանաք այս պատվերները: Ամենակարող Աստված, բազմազութեն Աստված ժառանգակից և մասնակից ընե զձեզ Իր հավիտենական փառքին, օգնական և պահապան ըլլա ձեզի և Իր աստվածային լուսեղեն հանդերձանքովը, որ հիմա զգեցած եք՝ իբրև քահանաներ, շնորհաբաշխ Իր ձեռքովը ավելի աճեցուցանե՝ հավատքով, հույսով, նվիրումով մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին և Տիեզերական Եկեղեցիին գործերուն մեջ հաջողություն մաղթելով ձեզի, և կաղոթեմ ձեր առողջության և հաջողության համար:

Մենք եկած ենք, սիրելի ժողովուրդ մեր, Թուրքիայեն, Կոստանդնուպոլսեն՝ Ամենայն Հայոց Սրբազնազույն մեր Հայրապետի հրահանգովը՝ Սուրբ և Անմահ Պատարագ մատուցանելու այս մեր Ս. Տաճարի շինության 1700-ամյակին համար: Աստված արժանի ըրավ, գոհություն Աստուծո: Եվ նաև կբերեմ մեր Ամենապատիվ Պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոսի սիրո օրհնությունները ձեզի, նորապսակ քահանա հայրերուդ և բոլոր հոգևորականներուդ:

Իստանպուլի ժողովուրդը մեր հրաշալիորեն կապված է իր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին այնքան հավատքով և այնքան սրտի կամոք: Երջանկահիշատակ Վազգեն Կաթողիկոսը կըսեր, թե՝ «շատ տեղեր գացած եմ, բայց Պոլսո պես հավատքով, սիրով կապված Մայր Աթոռին, Ս. Էջմիածնին, գրեթե չեմ տեսած»: Մենք չենք ստորագնահատեր, որ մյուս թեմերը, ուր որ կգտնվին աշխարհին մեջ, և բոլոր եկեղեցականները, բոլոր եպիսկոպոսները, մեր նվիրապետական բոլոր Աթոռները կապված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Եվ հավիտյան, այս Տունը որքան ատեն որ կլուսավորի այս աշխարհը, պիտի ապրի նաև Ս. Աթոռը Թադեոսի, Բարդուղիմեոսի և Ս. Գրիգոր Լուսավորչին:

Աստված երկար կյանք տա մեր սիրելի Վեհափառ Հայրապետին, մեր սիրելի եպիսկոպոսներուն և այսօր հոս գտնվող մեր սիրելի հյուրերուն: Խաղաղություն և համերաշխություն աշխարհին և փառք և պատիվ Ամենակարող Աստուծո, որ Իր զավակները այսպես լուսավորության բեմին առջևը կբերե և Իր աստվածային շնորհքներովը կզարդարե:

Տիրոջ օրհնությունը ձեր վրա այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

# ՍՈՒՐԲ ԵՊԻՓԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՊՐԱՑՈՒ ԳՈՎԵՍՏԸ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ՄԻՇՏ ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄԻ ՄԱՍԻՆ

Աստվածածնի* պայծառացած ճառագայթները, երկնքի ահավոր անհասանելի զորությունը, սքանչացումն ու երկրի բնության խորհուրդը կամեցա [մեկնել] ես՝ կատարյալ մտքի մեջ թշվառս, որ իմ սրտի ներսի խորագույն հատակներում խայտացող խորհուրդը. այս սքանչելիքների ավելի բարձր քննությունը կամեցա [անել], դժնդակ դողն ու առավել երկյուղն ինձ պաշարեցին, սիրելինե՛ր: Որովհետև սարսռելի մտքի հիշողությունն [իսկ] ինձ դող է պատճառում, և զգայարան սիրտս ավելի քիչ չի տանջվում, այլ ավելի ևս ուժեղ չարչարվում, որովհետև այս մեծ խորհրդի, բբև անհասանելի խորհրդի, հիշատակը հարկադրում է չխոսել: Որովհետև ո՞վ կարող է այսպիսի խորհուրդը պատմել, կամ ո՞ր բերանը կխոսի. «ծածկվեց» ասել [էլ] չեմ համարձակվում:

Բայց այժմ պիտի համարձակվեմ Աստվածածնի մասին խոսել, ինչպես որ կարողանամ, բայց դարձյալ երկնչում եմ՝ մեծամեծ բաներն ասելու համար արժանի լեզու չունենալով. քանի որ նրբաձայն եմ և ծանրալեզու, ինչպե՞ս պիտի մեծարեմ և Սուրբ Կույս, Տիրոջ Մայր Աստվածածին Կույս Մարիամի մասին ասեմ: Այս պատճառով մարդու լեզուն առանց դժվարության չի խոսում, քանի որ նրա նկատմամբ անկարող [է] և կաշկանդվելով վախենում է արժանիորեն չուսուցանել: Սա նաև երկնային զորքերին ուժի հանեց, որովհետև բոլոր զորքերը զարմացան՝ Հրեշտակները, Իշխանությունները, Աթոռները, Տերությունները, Քերովբեներն ու Սերովբեները, և հրեշտակների բոլոր զորքերը երկյուղով ու մեծ դողով բռնվեցին: Որովհետև երկրի վրա էին տեսնում նրան, ով երկնքում էր, և սարսում էին: Երկինքն ու Աթոռը տեսնում էին Կույսին և ահով բռնվում: Անսկզբին՝ քերովբեական Աթոռին և Կույսի արգանդում էին տեսնում և սարսում:

Ո՛վ Երանելի Արմատ, որտեղից Հեսսեի ծաղիկը բուսավ: Այդ պատճառով Եսայի մարգարեն, ծիծեռնակի նման ձայնելով, հրեղեն լեզվով ասել է. «Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղվի, այն արմատից ծաղիկ պիտի բուսնի, և Աստծո երկյուղի հոգին նրա վրա պիտի հանգչի» (Ես. ԺԱ 1-3): Որովհետև Հեսսեի արմատից էր Դավիթ արքան, Դավթի ցեղից էր նաև Սուրբ Կույսը՝ սրբերի սուրբը, մարդկանց դուստրը, որի ծնողներն [էին] Հովակիմն ու Աննան, որոնք իրենց կենդանության ժամանակ էլ Աստծուն հաճելի եղան, որոնք և այսպիսի պտուղը ծնեցին՝ Սուրբ Մարիամին՝ որպես միաժամանակ և՛ Աստծո տաճար, և՛ Մայր: Բայց Հովակիմը, Աննան և Մարիամը, երեքն էլ հայտնապես Երրորդությանն սպասավորեցին: *Հովակիմ* «Տիրոջ պատրաստություն» է թարգմանվում, որովհետև

* Աշխարհաբարի վերածումն ըստ հետևյալ հրատարակության. «Էջմիածին», 1997, Ժ, էջ 59-71: Նշենք նաև, որ այս ճառի մեկ այլ բնագիր էլ հրատարակել է Թամար Տասնապետյանը՝ ավելի վաղ տպագրելով վերջինիս ազատ վերաշարադրանքը, տես Թամար Տասնապետեան, Աստուածածնի մասին (յօդուածներու ժողովածու), Անթիլիաս, 1996, էջ 99-108, 54-69:

Նրանից Սուրբ Կույսի Տիրոջ տաճարը պատրաստվեց: Իսկ *Աննա* դարձյալ «Շնորհք» է թարգմանվում, որովհետև Հովակիմն ու Աննան աղոթքների շնորհիվ Շնորհներ ստացան և այնպիսի Սուրբ Կույսին ծնեցին, քանի որ Հովակիմը լեռան վրա էր աղոթում, իսկ Աննան՝ իր պարտեզում[1]: Ու երբ Աննան հղացավ, ծնեց Երկնքին՝ քերովբեական Աթոռ Սուրբ Կույս Մարիամին: Սա Երկինք, Աթոռ և Տաճար է համարվում, որովհետև Մարիամը ոչ միայն Տիրամայր, այլև Հույս է անվանվում, քանի որ ծնեց Տիրոջը՝ ամբողջ աշխարհի հույս Քրիստոսին:

*Մարիամ* դարձյալ «Ծովային Զմուռս[2]» է թարգմանվում, որն անմահության համար է ասվում, որովհետև անմահ մարգարտին կանխորոշված էր ծովում ծնվել, այսինքն՝ աշխարհում, քանի որ «ծով» միաժամանակ այս աշխարհն է ասվում, ուր Կույսն ալիքներին խաղաղություն է պարգևել՝ խաղաղ Նավահանգիստ Քրիստոսին ծնելով: Եվ մանավանդ որ դարձյալ պարկեշտ աղջկա՝ Մարիամի երանելի անունն [է] լուսավորված, որովհետև լուսավորվել է Աստծո Որդուց և Սուրբ Երրորդությամբ երկրի հավատացյալ ծագերը լուսավորել, քանի որ Երրորդության հարսն է պարկեշտ և Սուրբ Կույս Մարիամը՝ ամենաառաքինին, աշխարհի զարդը, որի մոտ Գաբրիելը գալով՝ ասում էր. «Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, Տերը քեզ հետ [է]» (Ղուկ. Ա 28): Գաբրիելն զգուշացրեց, և Հայրը երկնքից առհավատչյա Սուրբ Հոգին ուղարկեց: Աստծո Միածին Որդու հետ Սուրբ Կույսը նշանվեց, երկնային հարսն, որին Հայրը մաքրեց, Որդին բնակվեց, Հոգին էլ հովանի եղավ, քանի որ Տիրոջ հարսն ու առագաստն [է], և նրանից է ելնում Փեսան Քրիստոս:

Կուսական զգեստն [է] ըստ Դավիթ մարգարեի երգեցողության. «Իր վրանն արևի մեջ խփեց, Ինքն էլ փեսայի նման [է], որ իր առագաստից է ելնում» (Սաղմ. ԺԸ 6): Ո՜վ փեսայի փափագում. հույժ պարկեշտ իր աղախնուն որպես մայր պսակեց. Գաբրիելը միջոց եղավ Կույսին՝ երկինքն ու երկիրը միաժամանակ իր սքանչելիքներին մոտեցնելով, որոնք մարգարեին հայտնապես երևացին՝ հարսանյաց կարգը պատմելով: Ինչպե՞ս է երկնավոր Կույսը միաժամանակ հարս և մայր լինում, հարսանիքի համար որպես ընծա Սուրբ Հոգին ստանում, իսկ որպես *վարձանք*[3] միաժամանակ երկինքն ու դրախտը: Այնուհետև կամենում էր Կույսը տեսնել, որին տենչում էր և ասում. «Ո՞ւր է այն փեսան, որի գեղեցկությունն եմ տենչում: Ո՞ւր է այն գեղեցկությունը: Ո՞ւր է այն անեղ Լույսը, որը փափագելով փնտրում եմ: Ո՞ւր է այն արեգակը, որի ճաճանչն էի հայցում: Ո՞ւր է սերովբեների քնարը: Ո՞ւր է քերովբեների անքուն աչք Քրիստոս: Ո՞ւր է հրեշտակների երկրպագելին, որին Գաբրիելը մարգարեացավ: Ո՞ւր է Հոր մեն-միակ Միածին Որդին, որին Կույսը միաժամանակ սիրով գուրգուրում էր և հայցելով ողջունում»: Որի մոտ Գաբրիելը գալով՝ ասում էր.

---

[1] Աննայի հղության այս պարագաների մասին պատմվում է հետևյալ պարականոնում. «Պատմութիւն յղութեան և ծննդեան սուրբ Աստուածածնին յՅովակիմայ եւ յԱննայէ, աւետեաց հրեշտակապետին», տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2690, թ. 160ա-162բ, տե՛ս նաև «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1898, էջ 264-265:

[2] *Մարիամ* անվան մյուս ստուգաբանությունների մասին տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 249 [ծան. թրգմ.]:

[3] *Վարձանք* -- Հարսանիքին փեսայի կողմից հարսին տրվող նվեր [ծան. թրգմ.]:

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, Տերը քեզ հետ [է]:
Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, անապատ ուրախությամբ, Սու՛րբ Կույս:
Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, լուսապայծառ Լույս՝ արեգակի պես պայծառացած անշեջ ճառագայթ:

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, բազում առաքինություններով զարդարված:
Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, այնտեղ արեգակից էլ պայծառ լույս:
Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, իմանալի խայծի կեր, քանի որ Աստվածությունը քո մեջ էր կարթ գցում:

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, իմանալի փառքի տապանակ:
Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, երկնային մանանան ունեցող ոսկե սափոր:
Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, որ մշտնջենաբուխ աղբյուրի քաղցրությամբ չծարավածիս հագեցրիր:

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, երկնային մարգարիտ Քրիստոսին ունեցող իմանալի ծով:

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, ամենքի համար անպարագրելի Քրիստոսին քո մեջ կրող պայծառ երկինք:

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, Աստվածության քերովբեանման փայլուն Աթոռ:
Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, երկնքի ու երկրի անպարագրելի Քրիստոսին ունեցող պայծառ երկինք:

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, որ երկինքը պատեցիր և անպարագրելի Աստծուն քո մեջ կրեցիր, բայց չնեղվեցիր:

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, պյունատեսիլ ամպ՝ Աստծուն կրող, ով այս անապատ աշխարհում մեզ դեպի կյանք առաջնորդեց:

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, Աստվածության լուսափայլ հրի անկիզելի ընդունարան:

Ի՞նչ ասեմ և կամ ի՞նչ խոսեմ, ինչպե՞ս ամենարժատ փառքին նրանի տամ, քանի որ Աստծո սահմանածի համաձայն՝ Աստված է բոլորից վեր, քանի որ սերովբեներից, քերովբեներից ու հրեշտակների բոլոր զորքերից ավելի գեղեցիկ լինելով՝ [ավելի վեր] դասվեց, որին մարդկային լեզուն չի կարող բավական լինել գովելու համար, թվում է, թե ոչ էլ հրեշտակների, քանի որ նրանք էլ օրհնություն, երգեր, պատիվներ և փառք են մատուցում, նաև այնպես ըստ արժանավորության չկարողացան ասել, որովհետև հրեշտակները ուրախանում էին, որպես թե միայն իրենք Աստծուն կունենան, որոնցից ամենասուրբ Կույսն ավելի վեր լինելով՝ Աստծուն, որ երկնքում կրեց և երկրի վրա ծնեց, որպեսզի այդպես հրեշտակների զորքերին դեպի երկիր ձգի՝ մարդկանց մեջ, քանի որ սա երկնքի և երկրի միջնորդը լինելով՝ մեկտեղեց նրանց:

Ո՛վ նրանելի Կույսդ, մաքուր աղավնի, երկնավոր հա՛րս Մարիամ, որ նաև Երկինք, Տաճար և Աստվածության Աթոռ [եղար], որ արեգակի ճառագայթ Քրիստոսին երկնքից երկիր ծագեցրիր, երկնավոր ա՛մպ, որի մեջ Սուրբ Հոգու որոտումը ծածկված էր, [դու, որ]

աշխարհին լսելի դարձրիր. Սուրբ Հոգու անձրևումը հավատի պտղաբերության համար ամբողջ աշխարհին ցողեցիր:

Ուրախացի՛ր, բերկրյա՛լդ, երկնքի դու՛ռ, որի մասին մարգարեն աղաղակել է՝ ասելով. «Ահա փակված դուռը. ոչ ոք, ոչ ոք նրանով չի մտնի և ոչ ոք չի ելնի, բացի Իսրայելի Տեր Աստծուց» (հմմտ. Եզեկ. ԽԴ 2): Եվ առաջնորդի դուռը փակված կլինի, որովհետև Ինքն առաջնորդ կլինի, և բոլոր հեթանոսները նրան կհուսան: Այս պատճառով դրվեց. և Երգ Երգոցում հայտնապես և հավաստի անունն է իմաստունն ասում՝ աղաղակելով. «Փակված պարտեզ և կնքված աղբյուր [ես]» (Երգ. Դ 12), քանի որ սուրբ և պարկեշտ աղջիկ Մարիամը կուսության մեջ փակված և կնքված մնաց:

Ո՜վ լուսավոր ամպ, որ մշտնջենավոր Բանն Աստծուն [ունես]: Այդ պատճառով Եսային մեծ ձայնով ասել էր. «Ահա Տերը թեթև ամպի վրա նստած Եգիպտոս է գալու» (Ես. ԺԹ 1):

Անկոփ՛ լեռ, որ ապառաժ վեմ Քրիստոսին ունես: Նրա մասին իմաստուն Դանիելն ասել է. «Քարը հատվեց առանց ձեռքի» (Դան. Բ 34), այսինքն՝ Կույս Մարիամն առանց ամուսնու հաստատուն վեմ Քրիստոսին ծնեց:

Անվայրափա՛կ տաճար, որ երկնային վեմ Քրիստոսին ունես:

Որոտանմա՛ն ամպ, որ Փայլակը որովայնիդ մեջ ես կրում: Եվ իմ այս խոսքին աստվածեղեն Գիրն է վկայում՝ ասելով. «Քո որովայնը ցորենի շեղջ [է]՝ եզերված շուշաններով» (Երգ. Է 2):

Անմշա՛կ անդաստան, որ Բանին որպես ցորենի հատ ընդունել և հասկը վեր ես աճեցրել:

Իմանալի՛ թոնիր, որ հուրն ու կենաց հացն ունես:

Փրկչի Սուրբ Մայր, որ Բանն Աստծուն քեզնից մարմնացած ծնեցիր, որի մասին Եսային ասել է. «Ահա կույսը պիտի հղանա և Որդի ծնի, և նրա անունն Էմմանուել պիտի դնեն» (Ես. Է 14), այսինքն՝ Աստված մեզ հետ [է]:

Ո՜վ անարատ Կույս, Տիրոջ Սուրբ Մայր:

Ո՜վ երջանիկ հարս անբաժանելի Սուրբ Երրորդության:

«Կանանց մեջ երանելի ես դու», որ երկրի վրա ինչպես մանուկ ծնեցիր հավիտյաններից էլ առաջ [ծնված] Աստծուն:

«Կանանց մեջ երանելի ես դու», որ բոլորի Ստեղծչի և Նախահավիտյան Աստծո Բանի համար երկրի վրա Մայր [եղար]:

«Կանանց մեջ երանելի ես դու», որի ստինքներից կերակրվեց Նա, Ով կերակրում է բոլորին:

«Կանանց մեջ երանելի ես դու», որ այժմ ծնեցիր այն ժամանակ դրախտում Ադամին հողից Ստեղծողին:

Երանելի ես, Աստվածածի՛ն Սուրբ Կույս Մարիամ, քանի որ Աստվածածին ես, որ մարմնացած Բանն Աստծուն քեզնից ծնեցիր:

Աստվածածին ես, որ Աստծո մեն-միակ, Միածին Որդուն ծնեցիր:

Աստվածածին ես, որ Բանն Աստծուն ծառայի կերպարանքով հղացար:

Աստվածածին ես, որովհետև մարմնացյալ Բանն Աստծուն ընդունելով ծնեցիր, ոչ թե ժամանակավոր Աստծուն, այլ հավիտենականին, որ քեզնից ու բոլորից էլ առաջ էր:

Անապի՛ ոչխար, որ Քրիստոս գառին ծնեցիր:

Ամուսնական լծի անփո՛րձ երինջ, որ ճշմարիտ որթին՝ Քրիստոսին ծնեցիր:

Հավատի իմանալի՛ սեղան, որ Կենաց հացն աշխարհին պարգևեցիր:

Ի՞նչ ասեմ կամ ի՞նչ խոսեմ, ինչպե՞ս սրա ամենարժանի փառքին երանի տամ, որովհետև սրա՛ այս կույսի մասին Աստված մարգարեի միջոցով ասում է. «Քեզնից ինձ համար Իսրայելի իշխան պիտի ելնի. և Նրա Ծագումը հավիտենական օրերի սկզբից պիտի լինի. Նրա մնացած եղբայրները էլ Իսրայելի որդիների մոտ պիտի վերադառնան: Եվ պիտի մնա ու տեսնի և իր հոտը Տիրոջ զորությամբ հովվի» (Միք. Ե 2-4, Մատթ. Բ 6):

Ո՛վ Սուրբ Կույս, հավիտենական լույսի անապական Մա՛յր լույսի, որ երկնքում նաև հրեշտակների զորքերին լուսավորեց,

Այն լույսի, որ անապատում սերովբեներին լուսավորեց,

Այն լույսի, որ արեգակի ճառագայթների պայծառ ջահերով լուսավորեց,

Լույս, որ տիեզերքը Սուրբ Երրորդությամբ լուսավորեց,

Լույս, որ ասաց. «Ես որպես լույս եկա աշխարհ» (Հովհ. ԺԲ 46),

Այն լույսը, որ բարձրացավ և լուսավորեց երկինքն ու մեր այս ամբողջ երկիրը:

Ո՛վ ամենասուրբ Կույս, որ հրեշտակների զորքերին հեռացրեց, քանի որ երկնքում նորանշան սքանչելիքներ [կան], որովհետև «կինն արեգակն իր վրա է գցել» (Հայտ. ԺԲ 1):

Զարմանալի սքանչելիքներ [կան] երկնքում. կինը նաև լույսն է գիրկն առած բերում,

Զարմանալի սքանչելիքներ [կան] երկնքում. կնոջ Որդի և հավիտենականների Հայր կա,

Զարմանալի սքանչելիքներ [կան] երկնքում. Կույսի առագաստ, որպես Փեսա Քրիստոս Աստծուն և Աստծո Որդուն ունի,

Զարմանալի սքանչելիքներ [կան] երկնքում. Կույսի մանուկ, հրեշտակների համար ծնված Տեր.

Ո՛վ ամենասուրբ Կույս, Փրկչի Մա՛յր, որ անսկզբնական Քրիստոսին ծնեցիր, Հորն աթոռակից Որդուն, Սուրբ Հոգու համագոյին, որ հավիտյաններից էլ առաջ Հոր և Սուրբ Հոգու հետ [էր], և որ երկինքը խոսքով խոնարհեցրեց,

Ո՛վ ամենասուրբ Կույս, որ Աստվածության հուրը, ինչպես իմանալի մորենի, անկիզաբար ունես,

Իմանալի՛ թոնիր, որ հուրն ու կենաց տաք հացը որպես կերակուր աշխարհին շնորհեցիր,

«Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ մարմինը, որ ձեզ և շատերի համար է բաշխվում՝ մեղքերի քավության և թողության համար» (Մատթ. ԻԶ 28):

Ո՛վ սիրելիներ, կուսական այս սեղանն ամենալավ կերակուրներով առատ է ի վայելումն տիեզերքի, ով երկնքում և երկրի վրա փայլող լուսավոր ճրագին՝ Քրիստոսին կրեց, որի մասին Զաքարիա մարգարեն ասել է. «Ահա աշտանակը և ջահը՝ նրա վրա» (Զաք. Դ 2): Դրա վրա նաև Դավիթն է օրհներգող բերանով գոչում. «Քո խոսքը ճրագ [է] իմ ոտքերի համար և իմ շավիղներին լույս է տալիս» (Սաղմ. ԾԺԸ 105):

Ո՜վ կուսական աշտանակ, որ արեգակից էլ առավել պայծառ անանցանելի լույսն ունես,

Ո՜վ կուսական աշտանակ, որ անտանելի հրի բոցը տիեզերքի լուսավորության համար տարար,

Ո՜վ լուսեղեն աշտանակ, որ խավարը հալածեցիր և լույսը շողացրիր,

Ո՜վ կուսական աշտանակ, որ հրեշտակներին էլ մինչև հավիտյան լույս շնորհեցիր,

Ո՜վ կուսական աշտանակ, որ հուրն ու ձեթը միասին լուսավորելու համար ես բերում,

Ո՜վ կուսական աշտանակ, որ եռալույս աննվազելի հուրն Աթոռի համագո բարձրությունից վերցնելով՝ տիեզերքի լուսավորության համար շողացրիր:

Ո՜վ կուսական աշտանակ, որի մասին մարգարեի միջոցով Աստված ասել է. «Այնտեղ պիտի Դավթի համար եղջյուր ելցնեմ, Իմ Օծյալի համար ճրագ պիտի պատրաստեմ» (Սաղմ. ՃԼԱ 17):

Ո՜վ արքունական թագ, որ մարգարտատեսիլ և թանկարժեք աչք Քրիստոսին ունես,

Ո՜վ արքունական ծիրանիդ, որ երկնքի և երկրի թագավոր Քրիստոսին Տնօրինական մարմնի ծիրանին հագցրիր, և անարատ քրիստոնյաների հավատքը ճառագում է:

Անհասանելի՜ Գիրք, որ Որդուն և Հոր Բանին աշխարհին հայտնեցիր:

«Կանանց մեջ երանելի ես դու», որ Քեզնից մարմնացած Բանն Աստծուն ծնեցիր.

Բանին՝ Հոր Որդուն,

Բան՝ նախահավիտյանների Աստված,

Բանին՝ անսկզբին և մշտնջենավորին,

Բանին՝ Հորից և Սուրբ Հոգուց անբաժանելուն և [նրանց] նմանին,

Բան, որ Հոր և Սուրբ Հոգու հետ երկրպագվում և փառավորվում է:

Բանին՝ Հոր աթոռակցին,

Բանին՝ քերովբեների վրա նստածին,

Բանին, ում չորեքկերպյան կենդանիները փառաբանում են՝ ասելով. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Զորությունների՜ Տեր, երկինքն ու երկիրը Քո փառքով են լի» (Ես. Զ 3):

Բան, որ հրեշտակներին ստեղծեց,

Բան, որ Իշխանությունն ու Պետություններն ստեղծեց:

Բան, որ երկինքը ձգեց և մեր այս երկիրը հաստատեց,

Բանին՝ Ճշմարիտ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին, մեր Տիրոջը, որին, ամենասու՛րբ Կույս, ծնեցիր, ծնելուց հետո էլ կույս մնացիր:

Ո՜վ ամենասուրբ Կույս, որ մարգարտին ծնեցիր ու թագավորական պսակը հյուսեցիր:

Ո՜վ երջանիկ Կույս, որ պարտեզի բազում ծաղիկներից աշխարհն անուշահոտությամբ լցրեցիր:

Անապի Շուշան, Սո՛ւրբ Կույս, որ անթառամ վարդին՝ Քրիստոսին ծնեցիր,

Ճշմարի՛տ Այգի՝ բազմաբեր և անկթելի կուսությամբ, որ խնամված լինելով չմշակվեցիր և հասած ողկույզ Քրիստոսին ողկուզաբերեցիր,

Ինչպե՞ս Նրան ծնեցիր, դե՛, մեզ հասու դարձրու, ո՜վ Սուրբ Կույս,

Ինչպե՞ս Հոր նախահավիտյան Բանին որովայնում ընդունելով՝ երկրի վրա Աստծո Մայրը եղար:

Իբրև Կույս՝ իմ մեջ բնակություն հաստատած Բանն Աստծո համար անարատ եղա. ա-
մուսնությանն անծերծ՝ Էմմանուելին անապական արգանդում[ս] կրեցի՝ քերովբեական
աթոռներին նմանվեցի: Եվ ինձնից Բանն Հոր մարմին եղավ, անսկիզբ և անտեսանելի
Աստված տեսանելի կերպով և տնօրինաբար ինձնից մարդացավ, ամուսին չճանաչելով՝
նախահավիտենական Աստված Հիսուս Քրիստոսին ծնեցի: Իսկ այժմ ծնելուցս հետո
Կույս եմ, նախկինից է՛լ ավելի մաքուր, [բայց] ոչ ինչպե՛ս ամեն կին, քանի որ իմն ու նրանց
ը նման չեն, որովհետև այս բաները՝ ծնելու իմ կերպը մարդու բնությունը չիմացավ,
միայն իմ մեջ բնակված Աստծո Աստվածորդի Քրիստոս:

Ո՜վ Սուրբ Կույս, եկեղեցու՝ հայտնված մեծ խորհրդի սոսկալի սեղան, այս Կույսին քա-
հանա եմ կոչում, միաժամանակ նաև՝ սեղան, որ երկնային հաց Քրիստոսին իր մեջ կրե-
լով՝ մեղքերի թողության համար տվեց մեզ:

Ո՜վ անապական որովայն, որ երկնքի ծիրն ունես և անպարագրելի Աստծուն քո մեջ
ընդունելով կրեցիր:

Ո՜վ երկնքից էլ ավելի լայն որովայն, որ Աստծուն [կրելով] չնեղվեցիր:

Ո՜վ որովայն, յոթնաշրջանակ երկինք, նրանից ավելի մեծին հանդիպեցիր,

Ո՜վ յոթ երկինքներից ավելի բարձր ու լայնդ որովայն,

Ո՜վ որովայն, ութերո՛րդ երկինք, որ յոթ հաստատություններից ավելի վերդ,

Ո՜վ յոթնալույս շնո՛րհ որովայն, որ անանցանելի լույս մեր Տեր Հիսուս Քրիստոսին ու-
նես:

Ի՞նչ ասեմ և կամ ի՞նչ խոսեմ այս պարկեշտ ու սուրբ Կույսի մասին, բաղձանքս ինձ
մղում է այս Աստվածածնի մասին ասելու, բայց երկյուղն է պատում ինձ՝ ավարտին հասց-
նելու համար. միտքս կանչում է ինձ, բայց այս երկյուղը հեռացնում է. մեկն ինձ ձգում է,
իսկ մյուսը՝ հետ դարձնում: Եվ քանի որ երկուսից էլ պաշարված եմ, ինձ համար ավելի
պատեհ կլինի այս մեծանուն Կույսի մասին խոսելը: Նրան Երկինք և Աթոռ եմ ասում, միա-
ժամանակ նաև՝ Խաչ, որովհետև իր ձեռքերը տարածելով՝ Տիրոջը գրկեց:

Ո՜վ քերովբեական աթոռներ և խաչաձև երկինք, որի համար Գրքի միջոցով երկինք եմ
մեկնվում և սրան հրեշտակներից երկրպագվելիս տեսնում:

Ուստի նախ Գաբրիելն էր ողջունում Կույսին՝ ասելով.

«Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, Տերը քեզ հետ [է]» (Ղուկ. Ա 28):

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, պայծա՛ռ երկինք.

Ուրախացի՛ր, բերկրյա՛լ, որ փայլատակող արեգակ Քրիստոսին ունես՝ պայծառ ջահե-
րով ու ճառագայթներով:

Մեծանուն Սուրբ Կույսը բազմաչյա սերովբե եղավ՝ անհասանելի տեսության անիմա-
նալի մի ծածկույթ: Տնօրինական մարմնի շնորհիվ սերովբեներից և քերովբեներից գերա-
զանց դասվեց, քանի որ նրանք հեռանում են՝ չկարողանալով նայել Աստվածության իմա-
նալի հրին:

Իսկ սա պարզ աչքերով է նայել անհասանելի և աներևույթ աչք Քրիստոսին, որին սիրով
տենչում էր և Որդուն համբուրում: Հրեշտակների զորքերն իբր պատվանդան Փրկչի ոտ-
քերի տակ էին ընկնում, որովհետև տեսնել և դիպչել չէին համարձակվում:

Մեզ անհասանելի խորհրդի զարմանքը բերող ո՜վ Սո՛ւրբ Կույս, որ երիցս բաղձալի հավատը տիեզերքին քարոզեցիր: Այս Կույսը հրեշտակներից ավելի վեր եղավ և Քրիստոս թագավորին սերովբեներից ու քերովբեներից ավելի հաճելի եղավ, Աստծուց որպես արժանավոր Մայր և Աղախին պատիվ ստացավ:

Անապական Սո՛ւրբ Մայր, որ քեզնից առաջ [ծնված] Քրիստոսին ծնեցիր, որ ասել է. «Ես Աբրահամի լինելուց առաջ եմ» (Հովհ. Ը 58): Ով քարայրը փառավորեց և մսուրը մեծարեց, քանի որ Կույսը, Մայրը և այրը, երկնքի ծիր անպարագրելի Աստծուն ունենալով, իրենց մեջ երեք բան էին բերում՝ ճշմարտապես Երրորդությանը սպասավորելով: Երբ Կույսն անապականաբար երկնքի և երկրի Տիրոջը մսուրի մեջ ծնեց, այրի մեջ դրեց, այնժամ հրեշտակների զորքերն էլ, Կույսին շրջապատելով, գոչում էին՝ ասելով. «Փա՜ռք Աստծուն բարձունքներում, երկրի վրա խաղաղությո՜ւն ու մարդկանց մեջ հաճությո՜ւն» (Ղուկ. Բ 14): Ուստի բացօթյա հովիվներն էլ հրեշտակներից Փրկչի մասին այսպիսի փառաբանություններ լսեցին և շտապ գնացին, երկրպագեցին Լույսին. այնտեղ զարմանալի հրաշք տեսան, Տիրոջ աղախնուն, Նրա Մորն ու երկրային Կույսին, երկնային Հարսին: Որովհետև սա այրի մեջ որպես Հարս, Առագաստ և Մայր երևաց, երբ որ լույս Քրիստոս ըստ Եսայու մարգարեական խոսքի ծնվեց. «Մեզ համար Մանուկ ծնվեց, ու Որդի մեզ տրվեց, որի իշխանությունն Իր ուսերի վրա [է], մեծ խորհրդի Հրեշտակ, հզոր Աստված, խաղաղության Իշխան, հանդերձյալ աշխարհի Հայր պիտի կոչվի» (Ես. Թ 6):

Իսկ ապա դրանից հետո ասում է. «Արևելքից մոգեր, լուսավոր աստղից առաջնորդվելով, ծնվածին երկրպագելու համար Բեթղեհեմ եկան»: Ուստի և Երուսաղեմ քաղաք հասնելով՝ վրդովվեցին, քանի որ աստղը նրանցից ծածկվել էր: Իսկ ինչո՞ւ, որովհետև նրանց՝ չհավատացող քահանաներին հարցնելու ժամանակ խորհուրդը բոլորին էլ հայտնի է լինում: Ուստի և բոլորի տեսնելուց հետո աստղը կրկին հայտնվեց մոգերին՝ մինչև եկավ կանգնեց մանկան վրա այրի մեջ, մանավանդ երկնքում, քանի որ ուր Քրիստոս է, այնտեղ է երկինքը, որովհետև այն այրը երկրի վրա որպես երկինք երևաց: Իսկ նրանք աստղը, մանավանդ Քրիստոսին տեսնելով, սաստիկ ցնծացին: Եվ խոնարհվելով երկրպագեցին [մանկանը] և ոսկի, կնդրուկ և զմուռս հանելով մատուցեցին. ոսկին՝ որպես թագավորին, կնդրուկը՝ որպես Աստծուն, զմուռսն էլ՝ որպես անմահին, մանավանդ որ ինչպես թաղումն ընդունողի՝ բոլորի Արարիչ և Ստեղծող Քրիստոսին ընծայեցին, որին ծնեց երկնային Հարս Մարիամը՝ Երկինքը և Աստվածության Աթոռը և անպատմելի Տաճարը՝ զարդը դրախտի: Հրեշտակները Եվային մեղադրում էին, բայց այժմ փառավորում էին Մարիամին,

Նրան, ով կանանց տկարությունը համակ փառավորեց,

Նրան, ով կործանված Եվային կանգնեցրեց, դրախտն ավազակի միջոցով բացեց, Ադամին [էլ] կրկին [այնտեղ] դրեց,

Քո շնորհիվ պատնեշի միջնորմը քանդվեց, և թշնամությունը ջնջվեց,

Ո՜վ Սուրբ Կույս Աստվածածին, քո շնորհիվ երկնավոր խաղաղություն Հիսուս Քրիստոս տիեզերքին շնորհվեց,

Քո շնորհիվ մարդիկ հրեշտակներ եղան,

Քո շնորհիվ սիրելիներն ու ծառաներն Աստծո որդիներ կոչվեցին,

Քո շնորհիվ մարդիկ հրեշտակներին ծառայակից լինելու արժանացան.

Քո շնորհիվ երկնավոր գիտությունն ու փառաբանությունը երկրից երկինք են առաքվում.

Քո շնորհիվ մարդիկ երկնքում Բարձրյալի մոտ համարձակություն ստացան.

Քո շնորհիվ ամբողջ երկրով մեկ Խաչը ծագեց, որի վրա քո Որդին խաչվեց.

Քո շնորհիվ մահը ոտնակոխ է լինում, իսկ դժոխքը՝ հայածական.

Քո շնորհիվ կուռքերը կործանվեցին, և երկնավոր գիտությունը հայտնվեց.

Քո շնորհիվ Աստծո Միածին Որդուն ճանաչեցինք, որին, ամենասուրբ Կույս, ծնեցիր՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որին բոլոր հրեշտակները օրհնում են, նրանց հետ՝ նաև մարդկանց տարբեր ազգեր երկրպագում են՝ ասելով. «Անսկի՛զբ Հայր, անսկի՛զբ Որդի, անսկի՛զբ Սուրբ Հոգի, անբաժանելի՛ համագո [Սուրբ] Երրորդություն», հավիտյանս Քեզ փառք:

*Աշխարհաբարի վերածեց՝*
*ՏԻԳՐԱՆ ՍՐԿ. ԲԱՂՈՒՄՅԱՆԸ*

*ՇՆՈՐՀՔ Ծ. ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ*

# ՔԱՀԱՆԱՅ ՊԱՏԱՐԱԳԻՉԻ ՊԱՇՏՕՆԻՆ ՄԷՋ

Մեր Եկեղեցւոյ եւ բոլոր Առաքելական Եկեղեցիներու հիմնական ու կարեւորագոյն պաշտամունքը Սուրբ Պատարագի Խորհուրդն է: Այս իսկ պատճառաւ յաճախ եւ ամէն առիթով սոյն Խորհուրդի արարողութիւնն է, որ կը կատարուի: Ս. Պատարագը ըլլալով հանդերձ ամենակարեւոր նիւթը մեր հաւատքին, դժբախտաբար շատ քիչ ուսումնասիրութեան առարկայ եղած է ներկայ շրջանին մեր Եկեղեցւոյ կեանքին մէջ, ըլլայ եկեղեցական կամ պարզ աշխարհական դասէն: Բարեբախտաբար անցեալին կատարուած ուսումնասիրութիւններէն ու սերտողութիւններէն ճոխ մատենագրութիւն մը ժառանգած ենք: Մեր Ս. Հայրերը յաճախակի յորդորներով ու դաստիարակիչ խրատներով, նոյնիսկ խիստ ազդարարութիւններով զգուշացուցած են, որպէսզի հաւատացեալներ լուրջ պատրաստութեամբ մերձենան Ս. Սեղանին, մանաւանդ պատարագիչ հայրերը՝ ըլլան անոնք քահանայ, վարդապետ կամ եպիսկոպոս, որոնք ձեռնադրուած են Ս. Պատարագ մատուցանելու, եւ որոնք Աստուծոյ առջեւ ամենքն ալ քահանայ են: Այդ իսկ պատճառաւ եպիսկոպոսն անգամ Ընծաներու վերաբերումէն առաջ իր վրայէն կը հանէ եպիսկոպոսական հանդերձանքը - կը քահանայանայ - եւ կը շարունակէ իբր պարզ քահանայ: Ուստի այս խիստ կարեւոր ու հիմնական նիւթին մասին սերտելու մեզի տրուած պատեհութիւնը, աստուածահաճոյ ձեռնարկ մը ըլլալէ զատ, նաեւ կը յուսանք օգտակար ըլլայ յիշեցնելու համար քահանային դիրքն ու դերը պատարագիչի պաշտօնին մէջ. միշտ ի մտի ունենալով, որ անոր վերաբերմունքն ու մէն մի շարժումը պիտի նպաստէ Աստուծոյ սէրը արծարծելու հաւատացեալներուն սրտին մէջ: Քահանան իբրեւ Աստուծոյ պաշտօնեայ, իր խօսքով ու ընթացքով հաւատացեալներուն կը փոխանցէ Աստուծոյ պատգամները, վասն զի Տիրոջ պատգամաբերն է. «Վասն որոյ պատգամաւորիմ կապանօքս, զի նովին համարձակեցայց որպէս եւ պարտ իցէ ինձ խօսել» (Եփեսացիս Զ. 20): Հետեւաբար, կտրուկ կերպով պէտք է ըսել՝ բաւական է, որ քահանան գիտակցի, թէ որքան սուրբ եւ սարսափազդու եւ պատասխանատու պաշտօնի մը մէջ կը գտնուի, երբ կանգնած է Ս. Սեղանին դիմաց: Այդ գիտացկութիւնն է, որ պիտի առաջնորդէ զինք լուրջ պատրաստութեան նախքան Ս. Սեղան բարձրանալը, խոնարհութեամբ եւ երկիւղածութեամբ եւ աղօթալից հոգիով:

***ԱՌԱՋԻՆ*** հերթին յիշենք, որ մեր Եկեղեցւոյ աւանդութեան համաձայն, զանցառութիւն եւ անհոգութիւն կը նկատուի, երբ պատարագիչն առանց առողջական կամ լուրջ պատճառի ծոմը չի պահեր նախքան Ս. Պատարագը: Պէտք չէ նախընտրել կորստական կերակուրը ճշմարիտ եւ կենարար ՀԱՑԸ ուտելէ առաջ. «ԶԻ ՄԱՐՄԻՆ ԻՄ ՃՇՄԱՐԻՏ ԿԵՐԱԿՈՒՐ Է, ԵՒ ԱՐԻՒՆ ԻՄ ՃՇՄԱՐԻՏ ԸՄՊԵԼԻ» (Յովհ. Զ. 56): Մեր նախնեաց յարգանքն ու համոզումը այնքան խոր էր Ս. Հաղորդութեան նկատմամբ, որ պահքն ու ծոմը անհրաժեշտ սեպելէ զատ՝ յետ Հաղորդութեան իսկ դեղ չէին ընդունիր այն օրը, նոյնիսկ անհանգստութեան պարագային՝ նկատի ունենալով, որ ընդունած էին բժիշկներու Բժիշկը - ՄԵԾ ՔԱՆ ԶՍՈՂՈՄՈՆ Է ԱՍՏ: Նաեւ եթէ նոյն օրը ձուկ ուտէին, պնակին աւելցու-

կը, ոսկոր եւ այլն. կատուին կամ շունին չէին տար. քանի որ նոյն բերանը ընդունած էր Քրիստոսի ՄԱՐՄԻՆՆ ու ԱՐԻՒՆԸ: Փոքրիկներուն խստիւ կը պատուիրէին նաեւ հաղորդուելէ յետոյ գետին չթքնել եւ կամ մեծերուն ձեռքը չհամբուրել, այլ հաղորդուելէ առաջ համբուրել եւ թողութիւն խնդրել: Անշուշտ մինչեւ այսօր համոզումն այն է. որ հաւատացեալը հոգեկան հաշտ եւ անխռով վիճակի մէջ ըլլայ՝ հսկելով իր լեզուն եւ միտքը: Այս բարի սովորութիւնները կը հաստատեն հաւատացեալներու հաստատ ըմբռնումը, թէ Աստուծոյ հետ միացած են անոնք Ս. Հաղորդութեան ճաշակումով: Կենթադրենք, թէ սրբակեաց եւ բարեպաշտ քահանաներու խրատականներով այս բարի սովորութիւնները տարածուած էին ժողովուրդին մէջ, ու նաեւ պատարագիչ հայրեր որքան զգուշաւոր կեանք կը վարէին:

***ԵՐԿՐՈՐԴ*** կէտը պատարագիչին պատրաստութեան հարցն է: Սովորութիւն էր եկեղեցիներու կողքին յատուկ քահանայից սենեակ յատկացնել, որպէսզի այնտեղ գիշերէ յաջորդ օրուայ պատարագիչ քահանան՝ դիւրութիւն ընծայելու համար իր հոգեւոր պատրաստութեան: Ընդունուած էր, որ պատարագիչը պիտի հեռանայ աշխարհիկ կամ ընկերային, նոյնիսկ ընտանեկան միջավայրէ, որպէսզի կարենայ ինքզինք նուիրել հոգեւոր ընթերցումի եւ աղօթքի, խոնարհութեամբ եւ զղջումով խոստովանելու նախքան Աստուծոյ ներկայութեան մօտենալը: Այս համոզումը Սուրբ Գրական հիմք ունի: Առաջին օրինակը կը տեսնենք Ելից Գիրքին գլ. ԺԹ. 15-ին մէջ, երբ Մովսէս պատգամ կը ստանայ Տիրոջմէ՝ երեք օր Իսրայէլի ժողովուրդը պատրաստելու, նախքան Աստուծոյ հետ հանդիպում ունենալը, իրենց լաթերը լուալու եւ երրորդ օրը պատրաստ ըլլալու, եւ կը պատուիրէ՝ «ձեր կիներուն մի մերձենաք»: Ուրիշ օրինակ մը Դաւիթի կեանքէն. երբ ան սոված էր, նաեւ իր ընկերակիցները, եւ Աքիմելէք քահանայէն հաց կը խնդրէր, քահանան կը պատասխանէ՝ ըսելով, թէ իր մօտ սովորական հաց չունի. այլ միայն սրբութեան հացը, եւ այդ կրնայ տալ միայն, եթէ երիտասարդները կիներէ հեռու մնացած են (Հմմտ. Ա. Թագ. ԻԱ. 4): Այս աւանդութիւնը ներկայիս կարելի է ըմբռնել որպէս կարճ մեկուսացում – ռիթրիթ - մը եւ կամ միանձն հոգեւորականի դրութեան մէջ մտնելու փորձ մը: Այս մասին Յովհաննէս Երզնկացիի Խրատներուն մէջ կը կարդանք հետեւեալը. «Քրիստոնեան պէտք է գէթ ամէն 40 օր անգամ մը հաղորդուի. Հաղորդութիւն առնելէ առաջ երեք օր եւ առնելէ ետք դարձեալ երեք օր ամուսնական անկողինէն հեռու պէտք է մնայ եւ մաքուր ապրի: Առանց խոստովանանքի պէտք չէ հաղորդուի»: Քահանաներուն եւս նոյն խրատը կու տայ, կանոններէն մէջբերելով՝ կըսէ. «Քահանան պէտք է երեք օր հեռու մնայ ամուսնական անկողինէն, աղօթքով մաքրէ ինքզինք եւ ապա մօտենայ Ս. Խորհուրդին: Պատարագէն ետք եւս երեք օր մաքուր մնայ. այս է Աստուծոյ հաճելին»:

***ԵՐՐՈՐԴ*** կէտին անցնելով յիշենք, որ քահանան հողանիւթեայ մարդ է, մահկանացու եւ ոչ թէ հոգեղէն հրեշտակ: Ստացած է քահանայութեան մեծ պատիւը, սակայն կը պայքարի յաղթահարելու մարդկային տկարութիւններու դէմ: Ան ունի անձնական եւ ընտանեկան առօրեայ հոգեր, ծխական ու ընկերային կնճռոտ հարցեր զինք կրնան բեռնաւորել, հետեւաբար մտազբաղ հոգեվիճակը կրնայ պատճառ դառնալ իր կեդրոնացումը կորսնցնելու: Կան նաեւ ուրիշ փորձութիւններ, որոնք միշտ իր շուրջը կը գտնուին, սարկաւագ, տիրացու, մոմակալ եւ այլն շատ դիւրաւ կրնան ցրուել մարդուս միտքը եւ ուշադրու-

թիւնը հեռացնել Անկէ, որ Քրիստոս Արքան է՝ բազմած Ս. Սեղանին վրայ, եւ Որու երկնային զօրութիւնք աներեւոյթք կերգեն՝ ըսելով «Սուրբ, Սուրբ, Սուրբ»: Որքան ցաւալի կրնայ ըլլալ, երբ քահանան կամ Ս. Սեղանի սպասաւորներն իրենց ուշադրութիւնը վրիպեցնեն Աստուածային այս ահաւոր ներկայութենէն, Որուն դէմ յանդիման կը գտնուին: Պարտ է ուրեմն, որ քահանան, ինչպէս նաեւ Ս. Սեղանին շուրջ գտնուողներն աչալուրջ հսկեն իրենց միտքը, որպէսզի կեդրոնացումը չսասանի ու չհեռանայ աստուածընկալ Ս. Սեղանէն: Այս պատճառաւ է, որ սարկաւագը կը զգուշացնէ՝ ձայնելով. «Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք եւ նայեցարուք զգուշութեամբ... ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր Աստուածային երկիւղիւ»: Որքան արհամարհանք պիտի զգայինք մենք, եթէ երբեւիցէ մեր շուրջիններն անտեսէին մեր ներկայութիւնը, կամ որքան զգուշաւոր կը գտնուինք մեծարելու եւ յարգելու մեզ պէս մեղանչական մահկանացուները, որոնք աստիճանով մեզմէ բարձր պաշտօնի վրայ են: Մինչդեռ Տիեզերքի Տէրը եւ Արարիչը կը վրիպի մեր կեդրոնացումէն, նոյնիսկ կանտեսուի մեր նուաստութենէն:

Խոնարհութեամբ անդրադառնանք եւ շնորհապարտ ըլլանք, որ Տէրը համբերատար է, ողորմած եւ բազմագութ եւ իբր զգաստութեան հրաւէր Ս. Գրոց միջոցաւ կը խօսի մեզի. «Որդի փառաւոր առնէ զհայր, եւ ծառայ երկնչի ի տեառնէ իւրմէ. իսկ արդ՝ եթէ հայր եմ ես, ո՞ւր է փառքն իմ. եւ եթէ Տէր եմ, ո՞ւր է պատիւն իմ, ասէ Տէր ամենակալ ձեզ քահանայիցդ» (Մաղաք. Ա. 6): Իսկ Քրիստոս ինք կարծէք դժգոհելով կըսէ. «Զի՞ կոչէք զիս Տէր, Տէր, եւ զոր ասեմն ոչ առնէք» (Ղուկ. Զ. 46): Բազում առիթներով մեր Եկեղեցւոյ հայրերը յորդոր կուղղեն, որպէսզի մեր գիտակցութիւնն արթուն մնայ եւ կեդրոնացած դէպի Խորան. այս առթիւ մէջբերում մը միայն ընենք Բարսեղ Ճնորհալիի, Ծոն կոչեցեալ, Մեկնութիւն Մարկոսի Բ. հատորէն, որ կըսէ. «Մարմին Քրիստոսի է. զգոյշ լեր որ սպասաւորդ ես, գուցէ բարկացուցանիցես զՏէրն. յԱստուծոյ երկիր եւ մի ի մարդկանէ»:

***ՉՈՐՐՈՐԴ***. Պահ մը ենթադրենք, պատիւն ունեցած ենք հրաւիրուելու եւ սեղանակից դառնալու մեծահարուստ ընտանիքի մը, ուր պիտի հանդիպինք պետական կամ բարձրաստիճան եկեղեցական եւ այլ հռչակաւոր պատկառելի կամ հեղինակաւոր անհատներու: Առաջին հերթին նկատելի պիտի ըլլայ, որ ամէն ոք պիտի մնայ քաղաքավարութեան սահմաններուն մէջ՝ ուշադիր ըլլալով շարժ ու ձեւի վայելչութեան եւ կենցաղագիտութեան կանոններուն: Որքան տգեղ ու տմարդի պիտի սեպուի, նոյնիսկ դատապարտելի եւ վիրաւորական՝ հանդէպ հիւրընկալը, եթէ ներկաներէն մէկը կոպիտ կամ ձախաւեր արտայայտութիւն մը կամ շարժում մը ընէ: Ինչքան աւելի ուշադիր պէտք է ըլլանք, երբ առանձնաշնորհումը ստացած ենք քահանայագործելու Աստուածային Ս. Սեղանին, Անոր, որ պատճառն ու հեղինակն է կարգ ու կանոնի, վայելչութեան, արուեստի եւ գեղեցկութեան ու կը փառաբանուի Սերովբէներու եւ Քերովբէներու կողմէ, նաեւ երկրպագելի է երկրաւորներէն եւ երկնաւորներէն: Ինչպիսի՞ չափով կարող ենք չափել մեզի՝ քահանաներուս շնորհուած այս պարգեւը. հազիւ կարող ենք կարկամելով ու երկրպագելով ըսել. «Զոր օրհնութիւն կամ զոր գոհութիւն ի վերայ Հացիս եւ Բաժակիս ասասցուք. այլ Յիսուս զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբ եւ Ամենասուրբ Հոգւովդ, այժմ եւ միշտ...»: Պիտի ուզէի նաեւ մի քանի նախադասութիւններ յառաջ բերել մեր Մանդակունի Հայրապետէն, որ ընդհանրապէս ազդու եւ խիստ ոճով կը խրատէ ու կը սաստէ՝ ի սէր մեր հոգեւոր արթնութեան: Ահա

իր խօսքերը. «Վասն որոյ եւ դուք քահանայք եւ սպասաւորք՝ մատակարարք Սուրբ խորհրդոյն, ահիւ մատերուք, երկիւղիւ պահեցէք, սրբութեամբ սպասաւորեցէք եւ զգուշութեամբ մատակարարեցէք. զանձ ունիք արքունի. մեծաւ երկիւղիւ զգուշացարուք... տես թէ յո՞ր սեղան անօրէնութեամբ մերձենաս. յորմէ վերին զօրութիւնքն սոսկան եւ սարսեն. եւ դու պիղծ շրթամբք յանդգնեալ մատչիս... ո՞չ իմանաս թէ յորժամ խորհուրդն սուրբ. ի սուրբ սեղանն եղանիցէ. յայնժամ երկինք բանին ի վերուստ եւ Քրիստոս իջեալ անդր հասանիցէ, եւ զօրք հրեշտակաց յերկնից յերկիր ծառայիցին, եւ շուրջ զսեղանովն բոլորին ուր ահագին խորհուրդն է տէրունական... Այլ մի իբրեւ ի լոկ հաց հայեսցիս եւ մի իբրեւ զգինի համարիցիս եւ տեսանիցիս. զի ոչ տեսանելի է ահաւորութիւն Սուրբ խորհրդոյն, այլ իմանալի զօրութիւնս... Եւ մեք ճշմարիտ հաւատով զՔրիստոս իմանամք ի վերայ սեղանոյն, ի նա մերձենամք. զնա տեսանեմք. զնա շօշափեմք. զնա համբուրեմք, զնա առնումք ի ներքս եւ ընդունիմք, եւ լինիմք մարմին եւ անդամք եւ որդիք Աստուծոյ»:

Վերադառնալով վերի օրինակին, զոր յիշեցինք քիչ առաջ, կրկին նկատի առնենք այնպիսի պարագայ մը, երբ մենք ենք, որ պիտի հիւրասիրենք պատկառելի եւ բարձրաստիճան անձնաւորութիւն մը. որքան մեծ պատիւ եւ առանձնաշնորհում պիտի նկատենք ու պարծանքով պատմենք մեր ընկերներուն, թէ մեր յարկին տակ ընդունեցինք երեւելի ու մեծահամբաւ հիւր մը: Իսկ նման ընդունելութեան մը համար ինչպիսի արժանավայել հիւրասիրութեամբ պատուեցինք ու մեծարեցինք այդ արտակարգ հիւրը: Իհարկէ որ՝ ոչ մէկ ջանք պիտի չխնայէինք բծախնդրութեամբ մաքրութիւն ապահովելու ընդհանուր առմամբ. մանաւանդ սեղանին, ծածկոցներուն, զանազան գործածելի առարկաներուն, մանրամասնօրէն, որպէսզի չնչին պակասութիւն մ'իսկ նշմարելի չըլլայ: Այժմ համեմատենք արքայական Ս. Սեղանը, ուր Քրիստոս Արքան կը յօժարի բազմիլ՝ մեր մէջ բաշխուելու համար: Այս կապակցութեամբ Ս. Գրիգոր Նարեկացին նկարագրութիւն մը ունի իրեն յատուկ խորիմաստ ոճով՝ ցոյց տալու համար Աստուածորդւոյն մարդասիրութեամբ զոհաբերումը Սուրբ Սեղաններուն վրայ: Այս հատուածը կը կարդանք (Բան ԽԷ. 3). «Զգուարակդ պարարակի Եզին Երկնայնոյ, որ է Միածին Որդիդ քո օրհնեալ իսկապէս, մարդասիրութեամբ, կարօտելոյս բարեաց նուիրեա՛, որ մատուցեալ միշտ եւ անպակաս մնայ ի լրութեան, յարակայ զենեալ ի սպանդարանի, անթիւ Սեղանոց անսպառութեամբ, բոլոր յամենեսին եւ բնաւ յամենայնում, Էութեամբ յերկինս եւ իսկութեամբ ի ստորինս, աննուազ մարդկութեամբ եւ անթերի աստուածութեամբ, փշրեալ եւ բաշխի ի մասունս անհատս, զի համայն հաւաքեսցէ առ ի նոյն մարմին իւրումն Գլխոյ. Քեզ փառք ընդ Նմին, Հայր ողորմութեան, յաւիտեանս, ամէն»:

Ահա թէ ինչպիսի պատկառելի, բարձրաստիճան, նմանը գոյութիւն չունեցող եզակի հիւր մը մեր մէջ կը յայտնուի, նոյն ինքն Աստուած Սուրբ Սեղան կը բազմի, եւ մաքուր հոգիներու տեսանելի կըլլայ. «Ծածկեալ խորհուրդն մեծ յայտնի, Աստուած ի սմա մեզ տեսանի: Սա է Քրիստոս Բանն Աստուած, որ ընդ աջմէ Հօրն բազմի, եւ աստ ի մեզ պատարագի, բառնայ զմեղս աշխարհի» (Ժամագիրք, Մայր Հաւատոյ): Մաքրութեան մասին յատուկ կերպով կը շեշտէ նաեւ Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետը՝ պատուիրելով քահանաներուն՝ միշտ մաքուր ու փայլուն պահել զգեստն ու եկեղեցական սպասը, Ս. Սեղանի ծածկոյթը, որպէսզի ժողովուրդը հրճուի՝ տեսնելով գեղեցիկ կարգաւորութիւնը: Եթէ միշտ ի

մտի ունենանք թէ՛ մեր պաշտօնը եւ թէ՛ մեր Փրկչին ներկայութիւնը Ս. Սեղանին վրայ, անշուշտ այն ատեն մաքրութեան եւ այլ կարգաւորութեան աչալուրջ պիտի ըլլանք: Այս մասին օգտակար կը համարենք յիշել մեր հայրերու մատենագրութենէն Եղիշէի խօսքը, որ կըսէ. «Մի օր հացացաւ ի վերնատանն, եւ հանապազ հացանայ յեկեղեցիս ի վերայ Ս. Սեղանոյն»: Նաեւ Յարսեղ Շնորհալի իր «Մեկնութիւն Մարկոսի Աւետարանին» մէջ սապէս կ՚ըսէ. «Զմտաւ ած թէ յո՞րմէ սեղանոյ վայելես, զոր հրեշտակդ տեսանեն եւ զարհուրին... զի մեք ի տեղի սպասաւորաց եմք, նոյն սեղան է, եւ նոյն վերնատուն, յորում յայնժամ էին անդ»: Այս բոլորը մեզ արթուն պահելու համար է, որպէսզի Ս. Սեղանի մաքրութեան եւ կարգաւորութեան կարեւորութիւնն ու նշանակութիւնը չմոռնանք: Մեր եկեղեցականներէն միօ տարիներ առաջ. երբ այցելած էր զանազան եկեղեցիներ եւ պատարագած, ցաւով կարտայայտուէր, թէ եկեղեցւոյ խորանները մաքուր չէին պահուած: Աւելորդ կը սեպուի արդեօ՞ք, մաքրութեան մասին խօսելու առթիւ, յիշենք բոլորիս ծանօթ ասացուածքը անգլերէն լեզուին մէջ. «Մաքրասիրութիւնը զուգահեռ է աստուածպաշտութեան», իսկ արաբերէնի մէջ եղած ասացուածքը կըսէ. «Մաքրութիւնը հաւատքէն կը ծնի, իսկ կեղտոտութիւնը՝ Սատանայէն»:

***ՀԻՆԳԵՐՈՐԴ***. Մեր Եկեղեցին Պատարագի ընթացքին պատեհութիւն մը կու տայ պատարագիչին, որպէսզի առանձնանայ եւ մտերմիկ մեկուսի պահ մը ունենայ իր Փրկչին հետ, նախքան Ս. Հաղորդութեամբ Անոր հետ միանալը: Այս կ՚ըլլայ, երբ վարագոյրը կը քաշուի: Կարգ մը տեղեր սովորութիւն է, որ սարկաւագներ եւ սպասարկողներ եւս վարագոյրի դուրսի կողմը ելլելով՝ երգեն «Տէր Ողորմեա»-ն ծնրադիր եւ քահանան թողուն առանձին իր Փրկչին հետ, երբ ան ազատ-համարձակ իր սիրտը պիտի բանայ Աստուծոյ: Որքան լաւ պիտի ըլլայ, եթէ ամբողջ Պատարագի ընթացքին քահանան մտովի վարագոյր մը քաշէր իր շուրջը, որպէսզի ապակեդրոնացում չունենար իր շուրջիններէն՝ համարելով, թէ առանձին է Քրիստոսի հետ իր հանդիպումը, քանի որ իւրաքանչիւր Պատարագ նոր հանդիպում մըն է Յիսուսի հետ: Այսպէս առանձնացած զգալով մտամփոփ ու կեդրոնացած պատարագելով, քահանան մեծ բարիք կը շահի, ու վստահաբար թէ՛ իր շուրջը գտնուողները եւ թէ՛ հաւատացեալ ժողովուրդը պիտի ազդուին ու ներշնչուին բարեպաշտութեամբ: Շատ օգտակար պիտի ըլլայ, եթէ պատարագիչ քահանան ինքզինքին յիշեցնէ, թէ Խորանը, Բեմը եւ ինք օծուած ու սրբագործուած են Քրիստոսի անունով եւ միմիայն Անոր ծառայութեան պաշտօնին նուիրուած: Այս գիտակցութիւնն ահա ուղեցոյց պիտի ըլլայ կեցուածքի, վերաբերմունքի եւ շարժ ու ձեւի պատշաճութեան, մինչեւ անգամ աղօթասացութեան, երգելու, եղանակելու կամ ելեւէջներով ձայներու մէջ. աղօթքի հոգիով կատարելու իր սուրբ պաշտօնը: Այլապէս վտանգն այն է, որ քահանան կրնայ իր վրայ հրաւիրել հաւատացեալներուն ուշադրութիւնը: Այս փորձութեան պատճառն այն է, որ մենք կ՚երգենք Պատարագը, ինչ որ մշակոյթի եւ ժամանակի հոլովոյթի արդիւնքն է. իսկ եթէ հանդիսաւոր լրջութեամբ եւ զուսպ եղանակաւորումով արտասանենք, Սուրբ Պատարագի Խորհուրդը բնաւ տուժած չըլլար: Երգեցողութիւն կամ համերգ լսելու կամ կատարելու համար չէ, որ ժողովուրդը եկեղեցի պիտի գայ, այլ մասնակցելու Ս. Խորհուրդի պաշտամունքին: Ուրեմն այնքան արդիւնաւէտ պիտի ըլլայ այն քահանան, որ ճիգ կ՚ընէ, որ այնպէս մը պատարագէ, որ իր Պատարագը պերճախօս քարոզի մը համազօր ըլլայ: Այն ատեն է, որ

հաւատացեալներուն պիտի զգալի դարձնէ Քրիստոսի ներկայութիւնը: Դարձեալ պէտք է կրկնել, թէ այս դերին մէջ յաջողելու միակ պայմանն այն է, որ քահանայի գիտակցութեան մէջ տիրապետէ այն արթուն վիճակը, թէ ինք դէմ յանդիման կը գտնուի Սուրբ, Հզօր եւ Անմահ Աստուծոյ, որ խաչեցաւ վասն մեր, եւ այժմ քողարկուած է Հացին եւ Գինիին ներքեւ:

***ՎԵՑԵՐՈՐԴ.*** Որպէսզի քահանան կարենայ ըստ արժանւոյն մատուցանել Ս. Պատարագը, անհրաժեշտ է, որ լաւ ըմբռնէ խորհրդատետրին աղօթքները, որոնց իմաստը շատ խոր է, եւ որոնք կ՚առաջնորդեն պատարագիչին միտքն ու հոգին դէպի Քրիստոսի զոհաբերող խաչելութեան խորհուրդին էութեանը մէջ: Խորհրդատետրի աղօթքներուն մէկ մասը անձնական են, «վասն մատուցանողին արժանաւոր լինելոյ» (Անձեւացի): Սակայն կարելի՞ է, որ հաղորդակցութիւն կամ ապրում ունենայ, եթէ անծանօթ լեզուով սխալ կարդայ այդ աղօթքները: Ուստի անհրաժեշտ է, որ աղօթքներուն մէն մի բառը հասկնալի ըլլայ պատարագիչին, որպէսզի կարենայ այդ աղօթքները սեպհականացնել եւ անձնական վերածել, այլապէս բնաւ աղօթած պիտի չըլլայ այդ քահանան, եթէ միայն իրեն համար իմաստ չունեցող բառեր պիտի արտասանէ: Այս հարցին որչափ ծանրակշիռ ըլլալը կարելի է իմանալ, երբ անդրադառնանք, թէ քահանայագործութեան գլխաւոր պաշտօնը, որուն համար ձեռնադրուած է, Գողգոթայի անհատ եւ յաւիտենական արժէք ունեցող զոհագործման Ս. Խորհուրդը մատուցանել է: Ուրիշ որեւէ պարտականութիւն երկրորդական կը համարուի Ս. Պատարագի պարտականութեան համեմատած, որովհետեւ Յիսուսի կատարած մեծագոյն հրաշագործութիւնը եւ սքանչելիքներուն գերազանցն է Սուրբ Հաղորդութեան խորհուրդը, որով Իր նիւթական և հոգեկան ներկայութիւնը մեր մէջ մնաց այս եզակի արարքով: Ինչպէս Յովհան Մանդակունի կըսէ. «... Հայեաց ի քեզ եւ տես, ո՞ւր կաս, զո՞վ տեսանես, զո՞վ համբուրես եւ ի ներքս ընդունիս. ընդ երկնային զօրութիւնս կաս, ընդ հրեշտակս օրհնես, ընդ սերովբէսն բարեբանես, զՔրիստոս տեսանես, զՔրիստոս համբուրես, զՔրիստոս առնուս եւ ճաշակես»: Երբ քահանայ մը այսպիսի հասկացողութեամբ եւ համոզումով կը մատուցանէ Ս. Խորհուրդը, նաեւ անոր համաձայն կը պատրաստուի եւ կը յառաջդիմէ սրբութեան ճանապարհի մէջ, որովհետեւ Ս. Պատարագի պատրաստութեամբ ապրող քահանան՝ սրբութեամբ ապրող քահանայ մըն է: Իսկ սրբակեաց քահանայի մը համար իր ամբողջ կեանքը Ս. Պատարագի պատրաստութիւն մըն է: Աստուած հաղորդակից է իրեն, եւ ինք ալ ինքզինք Աստուծոյ կը նուիրէ իւրաքանչիւր Պատարագով: Հին Ուխտի ժամանակ Եսայի Մարգարէի բերնով Տէրը կը զգուշացնէ. «Ի պիղծս մի մերձենաք, մեկնեցարուք որ բարձրեալ բերէք զսպաս Տեառն» (Եսայի, Ծ. 11): Իսկ այժմ ի՞նչ աստիճան մաքրութիւն եւ սրբութիւն կը պահանջէ Աստուած մեզմէ աստուածային այս սուրբ պաշտօնի սպասաւորներէս: Անձեւացին եւ Ննորհալին գրեթէ իրարու ձայնակից են. «... ասաց ի Վերնատունն, «ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆ ԻՄ» որ եղեւ իսկ ճշմարտապէս որպէս երկինք եւ երկիր, այս եւ հացն մարմին նմին» (Ննորհալի): «Զի նոյն ձեռք է որ զԱդամն գոյացոյց, թէեւ անմարմին յայնժամ որ այժմս մարմնով, նոյն ամենակար եւ ամենակեցոյց ձեռք, որ զհողն մարդ հոգեւոր եւ բանական փոխադրեաց, զհացն առնելով մարմին աստուածային փոխարկեաց» (Անձեւացի): Արդարեւ՝ խորհուրդ խորին:

Քահանայական այս սուրբ կարգը, եօթ խորհուրդներէն մին, որ ձեռնադրութեամբ կը տրուի մեզ նման մահկանացուներուս, Աստուծոյ բացառիկ շնորհն է: Այս կարգը ստանալով՝ ենթական պատեհութիւնը կ'ունենայ տիրանալու հոգեւոր հարստութիւններու, որոնցմէ մեծագոյնը Քրիստոսի մտերմութիւնն է, նման Առաքեալներուն, որոնք միշտ Տիրոջ կողքին քալեցին՝ զգալով իւրայատուկ երջանկութիւնը: Քրիստոսով եւ Անոր մէջ գտան ամբողջական իրենց բաւարարութիւնը, նաեւ Աստուածատուր պարգեւն ու պատիւը, ըլլալու Տիրոջ պատգամաբերը՝ կարենալ ծանօթացնելու համար Տէր Յիսուսը շատերու:

Քահանայական կոչումին հաւատարիմ ու նուիրուած Քրիստոսի սպասաւորն աստիճանաբար, աշակերտութենէ կը դառնայ Քրիստոսի բարեկամը. «ԴՈՒՔ ԲԱՐԵԿԱՄՔ ԷՔ ԻՄ» (Յով. ԺԵ. 14): Հուսկ սիրոյ կապ մը կը հաստատուի աստուածային բարեկամին հետ. «Ի ՍՊԱՌ ՍԻՐԵԱՑ ԶՆՈՍԱ» (Յով. ԺԳ. 1): Յիսուսի բարեկամական սէրը հաստատ է ու հաւատարիմ, բաւ է, որ մենք չդավաճանենք Իր անսահման սէրն ու մնանք Իրեն հաւատարիմ, եթէ միայն լրջօրէն նկատի առնենք Յիսուսի զոհաբերութիւնն ի սէր մեզի իւրաքանչիւրիս, որ միշտ հակամէտ ենք մեղանչելու: Ի տես Յիսուսի այս մեծ սիրոյն մարդկային սիրտն ու կեանքը կը յեղաշրջուի, որքան առաւել եւս քահանան, որ յատուկ կոչումով հրաւէր ունի Յիսուսի մօտ ապրելու: Այսպիսի սիրոյ ապրումներով գրաւուած հոգիներն են, որ Անոր սուրբ սէրէն զարնուելով՝ երգեցին. «Սէր անուն Յիսուս սիրով քով ճմլեայ, սիրտ իմ քարեղէն»: Դարձան հերոսները Սուրբ Եկեղեցիին. յանձն առին ֆիզիքական կամ բարոյական հալածանք եւ խաչելութիւն, դարձան անվեհեր՝ դահիճներու դիմաց: Իւրաքանչիւր անգամ, որ Ս. Սեղանին առջեւ քահանան կը հանդիպի Յիսուսի, որ իր հոգւոյն հոգեւոր փրկութեան համար սիրով զոհուած է, իրմէ սպասուած մեծագոյն բանն այն է, որ նորոգէ իր Փրկչին հանդէպ իր սէրն ու նուիրումը, Պետրոս առաքեալի նման, բազում անգամներ: Անձնեւացին կ'ըսէ. «Առանց խոստովանութեան մեղք ոչ քաւի եւ առանց ապաշխարութեան՝ հաղորդութեան արժանի ոք ոչ լինի»: Իսկ Նարեկացին կ'ըսէ. «Այլ բարերարն եւ մարդասէրն Աստուած ըստ անչափ սիրոյն զօր ունի առ ազգս մարդկան, կամելով զսոսա միացուցանել յինքն, ետ սոցա պատճառ սրբութեան զխոստովանութիւնն եւ զապաշխարութիւնն»:

Գիտակից քահանան պիտի անդրադառնայ եւ գիտակցի, որ Քրիստոսի գործն է, որ կը շարունակէ երկրի վրայ: Իբր Անոր դեսպանը, ներկայացուցիչը, գործակիցն ու բարեկամը՝ Լատին ասացուածքը կ'ըսէ, թէ քահանան կը գործէ ԻՆ ՊԵՐՍՕՆԱ ՔՐԻՍՏԻ (in persona Christe) կամ ԱԼԹԷՐ ՔՐԻՍՏՈՒՍ (alter Christus): Հաւատարիմ քահանան պիտի տենչայ նմանիլ իր Վարդապետին այնպէս, ինչպէս աշակերտը կը ցանկայ նմանիլ իր ուսուցիչին, եւ միշտ Անոր հետ ըլլալու իր իղձը պիտի յագեցնէ Ս. Պատարագի խորհուրդին միջոցաւ հաղորդակցելով - ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՄԲ: Ուստի այս ոգին է, որ պիտի մղէ քահանան յաճախ եւ անձանձրոյթ, կրկին ու կրկին, Սուրբ Պատարագի բաղձալի ժամը՝ իրագործելու համար իր սրտին տենչանքը. «Տենչալեօք տենչացայ, տուր ինձ յագենալ, Տէր Յիսուս Քրիստոս»: Քահանան իր կատարելութիւնը կը գտնէ զԱստուած փառաւորելով՝ սկսելով այս աշխարհէն եւ որ կը շարունակէ երկինքի մէջ, սուրբերուն հետ միասին: Ինչքա՜ն մեծ պիտի ըլլայ քահանային հրճուանքը, երբ երկինքի մէջ նկատէ, որ երկրի վրայ իր ամենայարգի ժամերը Յիսուսի հետ յատկացուած ժամերն էին՝ զինք պաշտելու, աղօթե-

լու, լսելու իտրայատուկ ժամերը: Կրնանք ըսել, թէ այն քահանան, որ Յիսուսի մտերմու-
թեան մէջ աղօթքի նուիրուած է, Աստուծոյ սրտին համաձայն մարդ է, անոր ամբողջ
կեանքը գրաւուած է Սուրբ Պատարագի մեծ խորհուրդին պատրաստութեամբ:

Այս համեստ աշխատասիրութեամբ մեր խորհրդածութիւնները վերջացնելէ առաջ, ա-
նելորդ չենք նկատեր մի քանի խօսք աւելցնել Սուրբ Հաղորդութեան մասին քահանային
վերաբերմունքը Սուրբ Պատարագէն դուրս:

Քահանան նախ պիտի գիտակցի, որ մեծ առանձնաշնորհում մըն է իրեն վստահուած,
երբ Սուրբ Խորհուրդը կը տանի հիւանդի սնարին մօտ եւ կամ անոնց, որոնք անկարող են
գալու առ ոտս Ս. Խորանին: Աւանդական բարեպաշտ սովորութիւն էր, որ մոմակալ պա-
տանի մը անպայման ընկերանար քահանային, երբ ան Ճաշակ կամ Վերջին Թոշակ պի-
տի մատակարարեր հիւանդի մը: Մինչ քահանան սաղմոս մրմնջալով եւ առանց որեւէ
խօսակցութեան բռնուելով կը շարունակէր ճամբան, անցորդները փողոցին մէջ կը գի-
տակցէին, թէ Ս. Հաղորդութիւնն է, որ կը փոխադրուի եւ յարգանքով կը խոնարհէին: Այժմ
պայմաններու փոփոխութեան պատճառաւ կը թելադրուի, որ Մասնատուփը եկեղեցիէն
առնուի եւ մատակարարելէ յետոյ նոյն՝ եկեղեցի բերուի Սրբութիւնը: Բոլորովին անպատ-
շաճ պիտի ըլլար եւ յարգանքի մէջ թերացած, եթէ քահանայ մը միամտութիւնն ունենայ
միշտ տրամադրելի ըլլալու մտօք, իր վրան կրէ Մասնատուփը Ս. Հաղորդութեամբ, ուր որ
երթայ-գայ եւ այցելութիւններ կատարէ: Եթէ մեր Հայրապետներուն վկայութեամբ եւ ա-
նոնց դաւանութեան հաւատարիմ հետեւորդներն ենք, պիտի յիշենք, թէ Ս. Հաղորդութիւնն
ուրիշ բան չէ, եթէ ոչ ներկայութիւնը Քրիստոսի մեր Աստուծոյն, որ կը բազմի Սուրբ Սե-
ղանին վրայ եւ կը վկայէ ուխտադրութիւնն ամուսնացող ամոլին, զոր կը յիշեցնէ քահա-
նան՝ ըսելով. «Աստուած որ աներեւոյթ կերպով բազմած է Սուրբ Սեղանին վրայ, թող վկայ
ըլլայ ձեր այս խոստումին»: Դարձեալ քահանաներուս ուղղուած խրատականին մէջ Հայ-
րապետը կ՚ըսէ. «... Դուք քահանայք եւ սպասաւորք, մատակարարք Ս. Խորհրդոյն, ահիւ
մատերուք, երկիւղիւ պահեցէք, սրբութեամբ սպասաւորեցէք եւ զգուշութեամբ մատակա-
րարեցէք. զանձ ունիք արքունի, մեծաւ երկիւղիւ զգուշացարուք. . . մի իբրեւ ի լոկ հաց հա-
յեցիս եւ մի իբրեւ զգինի համարիցիս. . . եւ մեք ճշմարիտ հաւատով զՔրիստոս իմանամք
ի վերայ սեղանոյն, ի նա մերձենամք, զնա տեսանեմք, զնա շօշափեմք, զնա համբուրեմք,
զնա առնումք ի ներքս եւ ընդունիմք, եւ լինիմք մարմին եւ անդամք եւ որդիք Աստուծոյ»:
Գոհանամք զքէն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ Քո՝ բաշխելով զմար-
մինդ եւ զարիւնդ ի փրկութիւն աշխարհի. եւ կենաց անձանց մերոց:

Հացս այս մարմին է Քրիստոսի. Բաժակս արիւն նորոյ ուխտի.

Ծածկեալ խորհուրդն մեծ յայտնի. Աստուած ի սմա մեզ տեսանի. ԱՄԷՆ:

*ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ*

# ԱՂԱՆԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԴՐԱՆՑ «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Խորհրդային իշխանության փլուզումից հետո հայ ժողովրդի ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ հոգևոր կյանքում մեծ փոփոխություններ կատարվեցին: Աթեիստական համակարգից հետո մարդիկ սկսեցին տարերայնորեն վերագտնել կորցրած հոգևոր արժեքները. և քանի որ Եկեղեցին խորհրդային աթեիստ համակարգի պարտադրած կապանքների պատճառով անպատրաստ վիճակում էր, ապա տարբեր աղանդներ, օգտվելով իրավիճակից, ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից, տարբեր բարեգործական և ոչ բարեգործական կազմակերպությունների անվան տակ, իրենց փորձառու և լավ պատրաստված «քարոզիչներով» ներխուժեցին մեր երկիր: Ի տարբերություն ավանդական մշակութաստեղծ կրոնների՝ այս շարժումները հայտնի են որպես քայքայիչ, տոտալիտար պաշտամունքներ կամ աղանդներ, որոնց գործունեությունն ու նպատակները հեռուն են գնում և որոնք ղեկավարվում են արտաքին գաղտնի հատուկ ծառայությունների կողմից:

Որո՞նք են օտարածին կրոնական համայնքների հիմնական և ենթատեքստային նպատակները:

Եթե ոչ անմիջականորեն, ապա միջնորդավորված ձևով այն օտարերկրյա հատուկ ծառայությունների գործունեության յուրահատուկ տեսակ է իր գործունեության զույգ արտահայտություններով.

1. Բավականաչափ տեսանելի, քանզի այս համարակության մեջ «նրանց ներկայությամբ կարևոր շատ գործընթացներ իրենց պետության համար վերահսկելի են դառնում»[1]:

2. Առավել քողարկված՝ քայքայում են իրենց հետաքրքրություններին հակասող մի շարք գաղափարական հիմքեր՝ ներարկելով նոր գաղափարներ՝ անմիջականորեն (կրոնական ենթատեքստով) և օգտագործելով ենթագիտակցական ազդեցությունը (օրինակ, Եհովայի վկաներ զորակոչիկները, որոնք հրաժարվում են զինվորական ծառայությունից: Քեռքը «զենք» չվերցնելն ուղղված է պետական և ազգային անվտանգության դեմ, ի վերջո՝ տեսակի պահպանման, ինքնապահպանման դեմ):

Ենթագիտակցական ազդեցության մասին խոսելիս չենք կարող այն չամփոփել «հոգեբանական պատերազմ» հասկացության մեջ: Մարդիկ այն վարում են դեռևս վաղ ժամանակներից, սակայն երբեք չեն «ցուցադրում»: Հայտնի է, որ հոգեբանական պատերազմ-

---

[1] Մ. Հայրապետյան. 21 հարց ու պատասխան. այսօրվա և վաղվա. Երևան. 1999. էջ 9:

ների մանիպուլյատորները զգուշորեն գործածում են մարդկային հույզերի և գիտակցության վրա ազդեցության արդյունավետ միջոցները:

«Հոգեբանական պատերազմը» մարդկանց վրա ազդեցության տարբեր ձևերի, մեթոդների, միջոցների ընդհանրությունն է, որոնց հոգեբանական բնութագրերը (հայացքներ, կարծիքներ, արժեքային կողմնորոշումներ, տրամադրություններ, դիրքորոշումներ, վարքի ստերեոտիպեր), նաև խմբային նորմերը, զանգվածային տրամադրությունները՝ հասարակական գիտակցությունն ամբողջությամբ, իրենց ցանկալի ուղղությամբ փոխելու նպատակով: Խաղաղ պայմաններում լուծում են քարոզչական և գաղափարական խնդիրներ՝ կառավարության պատվերով և ազգային անվտանգության հետաքրքրություններից ելնելով:

«Առհասարակ ցանկացած երկրի քաղաքացիական բնակչությունն ավելի քիչ է գաղափարականացված, քան զինծառայողները, և ավելի քիչ է հոգեբանական ազդեցության ենթարկվում ռազմա-քաղաքական ղեկավարության կողմից (գաղափարական նկատառումներով): Այս և մի շարք այլ պատճառներով, այն ավելի ընկալունակ է հակառակորդի քարոզչությանը: Հոգեբանական պատերազմ քաղաքացիների, բնակչության նկատմամբ վարում են՝ նրա գիտակցության մեջ ներարկելու գաղափարներ, հայացքներ, պատկերացումներ, որոնք թուլացնում են մարդկանց պատրաստվածությունն ակտիվ մասնակցելու «պատերազմին»՝ բարոյա-քաղաքական միասնությունը խախտելու համար»[2]:

Հոգեբանական պատերազմի ներազդեցության ձևերը բազմազան են: Զարգացմանը զուգընթաց կատարելագործվում են նաև հոգեբանական ներազդեցության մեխանիզմները, որոնք կիրառվում են աղանդավորական խմբերում: Որպես ներազդեցության միջոց օգտագործում են նաև հոգեմետ միջոցներ, որը հոգեբանական մեկուսացում է ենթադրում անձի հարազատ միջավայրից: Օգտագործում են գիտակցության և ենթագիտակցության գաղափարական և հոգեբանական կառուցվածքների փոփոխության նպատակներով, հուզական վիճակների փոփոխությամբ, վարքի որոշակի ձևերի խթանման համար:

Այսպիսով, գիտենալով գլխավոր նպատակները, փորձենք առանձնացնել աղանդավորական գործունեության խնդիրները.

1. Հրահրել քաղաքական, ազգային, կրոնական թշնամություն բնակչության տարբեր խմբերի միջև.

2. Հրահրել հակասություններ բնակչության առանձին խմբերի, կառավարության և եկեղեցու նկատմամբ.

3. Հասնել բարոյական հավանությանը և ռեալ օգնությանն իրենց կողմից ներգրավված անձանցից՝ ցանկացած գործունեության համար.

4. Բացասական տրամադրվածություն ստեղծել «այն բոլորի» նկատմամբ, ովքեր «իրենցից» չեն.

5. Քննական մտածողության վերացում և կույր հավատի սերմանում միայն իրենց գաղափարներին, լիդերին.

[2] В. Крысько. Секреты психологической войны (цели, задачи, методы, формы, опыт). Минск, 1999, стр. 70.

6. Օտարում - օտարացնել մարդկանց իրենց իսկ հասարակությունից, միջավայրից, մանիպուլյացիաներով կառավարել նրանց գիտակցությունը և ենթագիտակցությունը և օգտագործել իրենց նպատակների համար:

Փորձենք առանձնացնել անձի ներգրավման որոշ հոգեբանական պատճառներ, որոնք թաքնված են «արտաքին պատճառների» տակ: Մինչ այդ տեսնենք, թե ինչ է իրենից ներկայացնում աղանդը որպես հոգեբանական կառույց, և ինչ ազդեցություն են թողնում խմբային մեխանիզմները, «աշխատանքի սկզբունքները» և լծակները մարդկանց վրա:

Աղանդներն իրենցից ներկայացնում են արհեստական զանգվածներ, որտեղ անհրաժեշտ է արտաքին ստիպողականություն՝ ստեղծված աղանդավորական կազմակերպությունն ամուր ու արտաքին ազդեցություններից զերծ պահելու համար:

Աղանդները միակողմանի, «փակ» կառույց են: Որպես կանոն, ոչ ոքի ընտրության հնարավորություն չեն տալիս: Դուրս գալու փորձերը սովորաբար հետապնդվում և խստորեն պատժվում են, կամ էլ այն հատուկ պայմանների հետ է կապված: Պատճառներից գլխավորը նման կարգերի կառույցների խորհրդանիշերի գաղտնի պահպանելն է: Ընդհանուր խորհրդանիշերը հոգևոր աշխարհի ընդհանրության համար կարևոր գործոններ են, և աղանդները կազմավորվում են դրանցով: Տվյալ միությունը, կառույցը չխախտելու, չփլուզելու համար սիմվոլները գաղտնի են, համակարգը՝ փակ:

Աղանդավորական կառույցի համար անհրաժեշտ է իր անդամի հավատարմությունը: «Ներշնչման ազդեցությամբ զանգվածն ընդունակ է մեծ ինքնազոհության, անշահախնդրության, գաղափարին նվիրվածության»[3]: Աղանդավորական կառույցն ունի զանգվածի հոգեբանական օրինաչափությունները և օգտագործում է անձի մի շարք հոգեբանական մեխանիզմներ՝ կառույցը պահպանելու, մարդկանց ներգրավելու համար: Կարևոր մեխանիզմներից են զանգվածային ներշնչումը, հիպնոտիկ վիճակի ստեղծումը, առաջնորդի «հեղինակությունը», «անբիծությունը», զգացմունքային, հուզական վարակիչ մթնոլորտը, համապատասխան խորհրդանիշերը:

Կառույցում անձն ունի յուրահատուկ կապեր առաջնորդի և այլ անդամների՝ «մյուսների» հետ: «Նույնականացնելով իրեն առաջնորդի հետ՝ սուբյեկտը միաժամանակ հականդրում է իրեն բոլոր նրանց, ովքեր ունեն այլ նույնականացում: Գաղափարական հորը վերագրելով դրական հատկանիշներ՝ անհատը անգիտակցական մակարդակում բացասականացնում է նրանց, ովքեր մտածում են նրա մասին այլ կերպ՝ բացառելով անգամ որևէ այլախոհություն, ճշմարտության հնարավորություն»[4]:

Խմբին բնորոշող առանձնահատկություններն են.

1. «Փակ» կառուցվածք (խումբ՝ իր հատկանիշներով. հիերարխիա, կազմակերպվածություն, տարածք և այլն).

2. Ուսմունքներ (ծիսական խոնարհում, իրենց ուսմունքի բարձրագույն ճշմարտություն).

3. Լիդեր (խարիզմատիկ առաջնորդ, որն անթերի է).

4. Հոգեբանական ներազդեցություն (անդամներ ներգրավելու և անդամակցությունը պահպանելու տակտիկա և ռազմավարություն).

---

[3] З. Фрейд, Психоаналитические этюды, Минск, 1998, стр. 426.

[4] А. И. Белкин. Индивидуальность и социализация /Гормоны и мозг/, М., 1979, стр. 16.

5. Անընդհատ «մարդաորս» («սուրբ գործ», «աշխատանք»):

Աշխատանքի սկզբունքներն են.

- Անձի հետ շփման մատչելիություն, «մտահոգվածություն» դեպի առանձին անհատը, նրա խնդիրները.

- «Նշանակալիության» բարձրացում, գնահատում (մինչ նրա հետ հանդիպելը ոչ ոք ըստ արժանվույն չէր գնահատել).

- Կարեկցում.

- Մխիթարում.

- «Նոր նյանքի հույս» և այլն:

Այդ ամենը կատարվում է հոգեբանական նուրբ աշխատանքով՝ անձի ճգնաժամային հոգեվիճակի օգտագործմամբ. օտարման (ընտանիքից, ընկերներից, հասարակությունից) իրավիճակի ստեղծում և խորացում, զգացմունքային, վերելքների և անկումների գրգռում, ֆիզիկական, ֆինանսական և հոգեբանական կախվածության ստեղծում, և այս ամենից հետո «տոտալիտար աշխարհայացքի», «մենք-նրանք» հստակ ձևավորում՝ բարու և չարի տարաբաժանմամբ:

Ինչո՞ւ են մարդիկ ներգրավվում և ինչպե՞ս: Նախ անդամների մեջ ընդգրկվելու կարևորագույն և առաջնային մոտիվը անձի դրդապատճառներն են. այն է՝ նյութական և բարոյական շահը. բարոյական և նյութական պահանջմունքների բավարարումը: Այս պահանջմունքների ուսումնասիրության վրա էլ աղանդները հիմնում են մարդկանց ընդգրկելու, ներգրավելու իրենց լծակները:

Ցանկացած այդպիսի կրոնական համայնք, որն ստեղծվել է ինչ-որ մարդկանց կողմից, ինչ-որ նպատակներով, անպատճառ ունի ֆինանսավորում, և մարդկանց ներգրավելու ձևերից մեկը նյութական կողմն է: Այսինքն՝ այստեղ կարող են հաշվարկել նյութապես անապահով խավի համար նրանց զգոնության սթափության ցածր աստիճանը օտար գաղափարների նկատմամբ, մեր հասարակության պարագայում խոցելիության գլխավոր գործոն-կենսապայման հանդիսացող «աշխատանքի» բացակայությունը և դրա հետ կապված խնդիրները, որոնք ներառում են տարիքային բոլոր խմբերը: Կրթվածության տարբեր աստիճանները անկախ սեռից: Սոցիալական բազմազան խնդիրները դժվարացնում են մարդկանց և՛ կենսական, և՛ բարոյական պահանջմունքների բավարարումը, որն անչափ կարևոր է մարդ էակի համար: Անձի համար կարևորագույն պայման է սոցիալական կապերում ընդգրկված լինելը, էմոցիոնալ շփումներն այլ մարդկանց հետ, հասարակական հարաբերություններին գործուն մասնակցությունը, ինքնառեալիզացումը՝ գործունեության, աշխատանքի մեջ, ինքնաբավարարվածությունը, մտերիմների հետ շփումներից, փոխհարաբերություններից առաջացող ինքնահարգանքը, համապատասխան ինքնագնահատականը, տարիքային ճգնաժամերից բնականոն անցումը, կյանքի իմաստի փնտրտուքները և վերարժեվորումը: Հակառակ դեպքում անձը խոցելի է, և առաջացած դատարկությունը, միայնությունը մեծ «խոռոչ» են, «բաց» են, որտեղ լցվում են աղանդավորական գաղափարները:

«Մերձեցումը խմբի հետ ժամանակակից Արևմտյան հասարակության համար անձնական մենությունից խուսափելու գերակշիռ միջոց է: Այդ մերձեցումը, որի մեջ մարդը, որ-

պես անհատականություն, զգալի չափով կորցնում է իրեն, ունի նպատակ՝ չտարանջատվել, միաձուլվել բոլորի հետ: Այդպիսի համարվողականությունը խթանելու համար կիրառվում են սպառնալիքը և բռնությունը, ներշնչումը և քարոզչությունը»[5]:

Անձը բարոյական շահի տեսանկյունից մեծ շահագրգռվածություն ունի գտնվել նման զանգվածում, որտեղ որպես անձ փորձում է զգալ իր «գոյությունը»՝ անկախ կենցաղից, որտեղ կա գաղափար, որը վերաիմաստավորում է իր գոյությունը նորովի, վերարժեքավորում է «իր ունեցածը» և անպատճառ ինքնահաստատման ասպարեզի հնարավորություն և ուղղություն ընձեռում:

Այսինքն՝ այս ամենը խոսում է այն մասին, որ անձի համար բարձրակարգ պահանջմունքների բավարարման ցանկությունը, պահանջն ավելին է, քան սովորաբար պատկերացնում ենք:

Յուրաքանչյուր տարիքի և սեռի համար միշտ կարևոր է անձի գոյությունը և սեփական կարևորության հաստատումն իր համար, իսկ դա կատարվում է շնորհիվ հասարակության, միկրոմիջավայրի սոցիալական հարաբերությունների: Պայմանավորված կրթության աստիճանով և մտավոր կարողություններով յուրաքանչյուր անհատ բավարարում է իր հուզական, հոգևոր, ինտելեկտուալ պահանջմունքներն ինչպես կարող է և որտեղ կարող է:

Մեր երկրում աղանդները դեռ տարածում են գտնում և դեռ կգտնեն, քանի որ առկա են բոլոր ախտածին պայմանները, նպաստավոր պայմանները՝ դրանց մեծաքանակ դառնալու: Շնորհիվ համապատասխան ազդեցության միջոցների, «քարոզիչների» ակտիվ ջանքերի՝ օրըստօրե համալրվում են նրանց շարքերը մարդկանցով, որոնք հոգեբանական օգնության կարիք ունեն և ներգրավվում են հոգեբանական խնդիրները լուծելու գայթակղվածությամբ:

Այս դեպքում վտանգի տակ է դրվում ոչ միայն առանձին անձի իրական «մեկուսացումը», «օտարումը» և ինքնակառավարումը, այլև սկսվում է գաղափարական «անգիտակցական դավանանությունը», հասարակության թուլացումը, ազգային ինքնագիտակցության փոփոխությունը, ազգային ինքնահարգանքի բացակայությունը և, իհարկե, դավանանքային մի շարք հարցեր, որոնք նույնպես այս կամ այն կերպ առնչվում են «պետականության» հետ:

[5] Է. Ֆրոմ, Սիրելու արվեստը, Երևան, 1996, էջ 22:

# ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ՆԱՐԵԿԸ

*Գրիգոր Նարեկացու Մատյան Ողբերգության աղոթամատյանի գրության 1000-ամյակին*

*ՁԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆԻ*

## ՆԱՐԵԿ ՆԱՐԵԿԱՑԻ

*Հազարամեակին*

Հազար տարին ոչինչ է.
Հազար դարը գուցէ քիչ,
- Բայց ի՞նչ կ՚ըսեմ - հազար դարը որո՞ւ ինչ.
Աշխարհի որ կայ՝ իմ ազգս ալ կայ - Նարեկն ալ.
Նարեկացին յաւերժութեան հովերուն է Նարեկ բացեր կուրծքին հետ:

Ան լոկ գանձ չէ եզական,
Այլ գանձատուն անզուգական - փարօրինակ, իրական,
Որ բերդի պէս ամրափակ չէ, այլ գրկաբաց ամէնուն.
Թէպէտ ամբողջ բառագանձն է՝ ուղն ու ծուծը հայութեան,
Որ պահուած է բառի-բանի որպէս մասունք անշօշափ,
Բայց փռուած է ողջ աշխարհի աչքին առջեւ շղմորուն
Եւ փրուած է շռայլօրէն բոլոր սիրող ձեռքերուն.
Ո՛վ որ կ'ուզէ - պահակ չկայ - կրնայ առնիլ գրկաչափ...

Ան վեղարով գլուխ մը չէ իմաստուն,
Այլ փաճար մ'է - սրբատուն՝
Վեղարաձեւ գմբէթ դրած իր գլխուն,
Ուրուն ներքեւ ափեն-ափեն կու գայ նստիլ Ինք Յիսուս՝
Դափնենարօտ հետեւորդին, առաքելոց յետնորդին
Քաղցրաբարբառ խօսքն ու ձայնը լսելու,
Որուն այնքան կարօտ մնաց Իր երկրաւոր օրերուն:

Ան ողբ մը չէ, ոչ ալ երգ,
Ան բառ մըն է, որ կը փրթի հազար անգամ, բիւր անգամ
Յուսափրոփ սրտի ծայրէն կաթիլի պէս արիւնի:
Ան խօսք մըն է, որ կը ծորի մեղրախորիսխ լեզուէն,
Որպէս միւռոն կ'օծէ կրկին ճակատը մեր խոնարհած:
Նուագ է ան յուզախռով, որ կը հնչէ, երբ կը շնչէ երգեհոնը թոքերուն -
Խաղաղութիւն կը սփռուի լոյսին բացուած սիրացնցող աչքերէն:

Ան մատեան չէ, այլ խորան է փրկութեան,
Որուն առջեւ կ՚երկրպագնն փասը դարեր երկիւղած,
Եւ շարաններ սերունդներու լացակումած աղաչաւոր անձկայրեաց,
Որոնք կու գան ապաշխարել, երես քսել, արցունք թափել - համբուրել
Ոչ թէ քարը, ոչ թէ գիրքը, այլ կարծես թէ այնտեղ պահուած աջը սուրբ:

Ան եղէգէ պարզ գրիչով գրող չէ,
Այլ փետուրով փիւնիկի՝
Դեռ սկիզբէն անմահութեան ընծայուած,
Որ չի գրեր, այլ կը շարէ, կը շողայլէ փող ու փառ,
Որ չի կառչիր մագաղաթին, այլ կը թռչի ու կը ճախրէ անձնուրաց՝
Իբրեւ պայմանն իր քերթողի էութեան,
Ու երկինքի պատտառին
Կը վրձինէ տեսարանը Յայտնութեան,
Մէջտեղը ինք՝ գծտնամած:

2 Մայիս 2003 թ.

*ՎՐԵԺ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

# ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՇԽԱՐՀԱԶԳԱՑՈՂՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ

Գրիգոր Նարեկացու հոգին մկրտվեց դարաշրջանի կրոնական գաղափարաբանության ավազանում: Երկիրը թեև ապրում էր խաղաղ ու բարգավաճ կյանքով, սակայն մարդկանց մտքերն ալեկոծվում էին աշխարհի վախճանի մասին Հովհաննու Հայտնության մեջ արված կանխագուշակության ազդեցությամբ: Մարդկությունն սպասում էր ճակատագրական 1000 թվականին, երբ ենթադրվում էր, որ Քրիստոս նորից աշխարհ էր գալու, որպեսզի հատուցի «յուրաքանչյուրին ըստ իր գործերի»[1]: Նման աշխարհազգացողությունը չէր կարող իր կնիքը չթողնել նաև Գրիգոր Նարեկացու ստեղծագործության վրա:

«Մատյան ողբերգության» պոեմում Նարեկա Սուրբը համայն մարդկության անունից դիմում է Աստծուն, աղերսում փրկել բոլորին ահեղ դատաստանից: Բանաստեղծն, անշուշտ, ելնում էր բոլոր քրիստոնյա ժողովուրդների հետ հայ ժողովրդի հոգեկցության փաստից: «Համբարձման» տաղում Նարեկացին դիմում է Քրիստոսին «տրտմած փոքրիկ հոտի», իմա՝ հայ ժողովրդի անունից, խնդրում «ընդ մեզ լինել զաւուրս կենաց մինչև ի կատարած երկրին» և ազատել «այս տրտում հովտից»:

Ցահեղ քում գալստեանդ աւուր
Առ Հայր վերացո զմեզ լրմամբ սիրոյ[2]:

«Մատյան ողբերգության» գործում Նարեկացին զուգահեռ է անցկացնում իր ժամանակի և «ջրհեղեղի ամենակործան դարի» միջև, խնդրում փրկություն պարգևել, ինչպես ժամանակին արել է Նոյի և նրա տապանին ապավինածների համար[3]: Բանաստեղծի զորացած հոգին համակվում է փրկության հույսով, ըմբոշխնում երկնային երանավետ կյանքի թովչանքը:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունն իր ալեհույզ դարաշրջանի աննախադեպ հայելին է, ժամանակակիցների աշխարհընկալման հավաստի վկայությունը: Նրա հանճարը մտավ իր ուղեծիրը հանձին «Մատյան ողբերգության» պոեմի, որով նա նպատակ ուներ ժողովրդի բոլոր խավերին հասու դարձնել սուրբգրային ճշմարտություններին, գի-

[1] Տե՛ս Հայտնութիւն Յովհաննու, Ի 7-16:

[2] Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխ. Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 106-107:

[3] Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխ. Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985, Բան ԾԱ, տողեր 37-47:

նել նրանց անեղծանելի հավատով ու հույսով: Հեղինակը նշում է, որ իր այդ գործում դրել է «աստվածաշնչական պատգամներ»[4]:

Հարկավ, նրա Մատյանը «քնարերգական աստվածաբանություն» է[5]: Սակայն Նարեկացին չի սուզվում սուրբգրային մտքերի խորխորատները, այլ ջանում է պարզ ու մատչելի ձևով դրանք հասցնել ժողովրդին: Դրա համար նա պետք է ճանաչեր ժողովրդին, նրա բարքերը, գբաղմունքը, նիստուկացը, նախասիրությունները: Պոեմում Նարեկացին բազմիցս խոսուն օրինակներ է բերում կյանքի բոլոր բնագավառներից՝ իր այլաբանական խոհերին ու դիտումներին կենդանի գույներ հաղորդելու համար: Բանաստեղծն իրեն կտրված չի համարում երկրային կյանքից՝ գրելով.

Զանձինս տարածանեմ զվշտակրութիւն,
Որ ո՛չ բնաւին մեռեալ աշխարհի...[6]:

977 թ. հեղինակած «Երգ երգոցի մեկնության» մեջ Նարեկացին բազմիցս դիմում է իրական կյանքին, բնության հրապույրներին: Այսպես, նա գինին համարում է քերկրառիթ ըմպելիք, որով մոռացության է տրվում տրտմությունը[7], հիշում է գարնանը ծաղկած այգիները՝ լի «պէսպէս գունովք և պտղովք և հոտովք»[8], նաև՝ այգեկութը, ցորենի աղալը, բրուտի ճախարակը[9] և այլն: Գովասանքով է գրում կանացի սիրո մասին՝ նշելով, որ «հզօր է իբրև զմահ սէր»[10], բարձրացնում է կնոջը, հավաստում, որ «պատկառելի է կանանց ազգ առաւել քան զարանց»[11], ներբողում է Ս. Աստվածածնին[12]: Կյանքից վերցրած պատկերներ կան նաև 983 թ. հետո նրա հեղինակած Ապարանից խաչի պատմության մեջ, Հակոբ Մծբնա եպիսկոպոսին նվիրված ներբողում[13], «Գանձ ի սուրբ խաչն աստուածընկալ» գրվածքում[14] և այլ գործերում:

Գրիգոր Նարեկացու ապրած դարաշրջանն համակած հոգևոր երկունքով ծնվեցին վերածնություն շնչող հոգևոր-մշակութային և բարոյական նորանշան երևույթները: Դրանք աշխարհականացող մտքի, հոգևոր վերազարթոնքի դրսևորումներ էին, որոնք, ավա՜ղ, մնացին սաղմնային վիճակում, անծանոթ ու դժնաբարք հորդաների՝ սելջուկ-թյուրքական ցեղերի ավերասփյուռ հարձակումների պատճառով: Նրանք չորացրին նոր-նոր բողբոջներ արձակող հայոց վերածնության արգասաբեր դաշտի ծաղիկները՝ Նարեկացու հայրե-

---

[4] Տես Մատեան ողբերգութեան, Բան Բ, տ. 73:
[5] Ա. Չօպանեան, Դէմքեր, Փարիզ, 1924, էջ 5:
[6] Մատեան ողբերգութեան, Բան ԻԶ, տ. 10-11:
[7] Տես Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 289:
[8] Նույն տեղում, էջ 293:
[9] Տես նույն տեղում, էջ 326, 339, 362 և այլն:
[10] Նույն տեղում, էջ 356:
[11] Նույն տեղում, էջ 283:
[12] T. Dasnabedian, Le pane'gyrique de la Sainte Me're de Dieu de Grigor Narekaci, Ante'lias, 1995, p. 43-51.
[13] Տես Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 380, 404, 409, 441-442, 450-454:
[14] Տես նույն տեղում, էջ 441-442, 462, 514, 523-524:

նի Վասպուրականում, Տարոն-Տուրուբերանում և Հայկական լեռնաշխարհի մյուս նահանգներում: Այդուհանդերձ, ստեղծված հոգևոր և նյութական արժեքների զգալի մասը պահպանվեց, նույնիսկ ստեղծվեցին մշակութային գոհարներ՝ հայոց նոր անկախության արծվաբույն Կիլիկիայի բարձունքներում, նաև հայ բնաշխարհի հյուսիս-արևելյան մասում՝ Զաքարյան փառապանծ տան կերտած պետականության հովանու ներքո[15]:

Նարեկացու տաղերում նշմարվում է մարդու և բնության պաշտամունքը: Հեղինակը մարդուն դիտում է որպես հոգու և մարմնի ներդաշնակություն, բնության մի մասնիկը: «Մեր Նարեկացու հայացքով,- գրում է Մ. Աբեղյանը,- բանաստեղծն էլ նույնն է անում, ինչ որ բնությունը: Նա երգելով բնությունը՝ նվագում է աստվածային քնարի վրա: Արհամարհված և անտես արված, նույնիսկ մեղսական համարված բնությունն, ուրեմն, կենդանանում, ստանում է իր իրավունքը: Բնություն երգելն արդեն համարվում է մի աստվածային փառաբանության գործ կատարել, որովհետև բնությունն ինքը փառաբանում է Աստծուն...»[16]:

Նարեկացին իր տաղերն ամենայն հավանականությամբ գրել է երիտասարդ տարիքում՝ համակված լինելով կենսական լիցքերով և ջանալով փշրել ճակատագրի կապանքները: Տաղերում իրեն զգալ է տալիս պարմանի սրտի հուրն ու մորմոքը, որից ազատվելու համար Նարեկացին հավատքի ու հույսի թևերով ջանում է վեր սլանալ մեղսածուփ իրականությունից[17]: «Մատյան ողբերգության» գործում նա ամենողորմ Աստծուց խնդրում է կենսունակություն պարգևել ոչ միայն իր հոգուն, այլև մարմնին[18]: Այդպիսով նա ջանում է հասնել հոգու և մարմնի ներդաշնակության՝ հուսալով, որ այդ կերպ կարող է փշրել իր հոգին ու մարմինը տանջող տվայտանքի շղթաները: Բանաստեղծը համոզված է, որ իր Մատյանը մեղսաքավիչ սպեղանի էր լինելու թե՛ հոգու և թե՛ մարմնի համար[19]: Նարեկացու գործերում նրա իդեալ Քրիստոսն օժտված է մարդկային վսեմ ու գեղեցիկ գծերով: Ի դեմս Տիրոջ, աստվածացվում է մարդը:

Գրիգոր Նարեկացու տաղերում նկատվում են հայոց հոգևոր վերածնության արշալույսի ցոլքերը, իրեն զգալ է տալիս նաև բնության ու տիեզերքի հետ մարդու միասնության գաղափարը: Նրա քնարաշունչ խոսքը պարուրվում է բնության դյութիչ տեսարաններով:

---

15 Հայկական վերածնությունն ընդունում են ուսումնասիրողների մեծ մասը: Մ. Աբեղյանն այն համարում է ինքնուրույն և ազգային մշակույթի ու գրականության շարունակական զարգացման դրսևորում (տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 20): Հայկական վերածնությունն ընդունում են նաև ուրիշ հետազոտողներ (տե՛ս Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 88, 111, 140 և այլն, Վ. Չալոյան, Հայկական Ռենեսանս, Երևան, 1964, Հր. Թամրազյան, Հայ քննադատական մտքի պատմություն VI-XV դարեր, Բ գիրք, Երևան, 1985, էջ 25-49, Վ. Նալբանդյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1990, էջ 58, 203, Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 6-8: Նշված հեղինակները Գրիգոր Նարեկացուն դիտում են որպես Հայկական Վերածնության նախակարապետ: Հայկական Վերածնությունը խարսխված էր բնատնտեսական հարաբերությունների հենքի վրա, ուստի բոլորովին տարբեր էր Եվրոպական Վերածնությունից, որի հասարակական-տնտեսական հիմնաշենքն էր կազմում հետզհետե ընդլայնվող վաղ բուրժուական կացույթը:

16 Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 584:

17 Տե՛ս Համբարձման տաղում (Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, էջ 107):

18 Տե՛ս Մատեան ողբերգութեան, Բան ԽԳ, տ. Ա:

19 Տե՛ս նույն տեղում, Բան Գ, տ. Ե:

Մարդու և բնության միասնությունը հատկապես զգալի է «Ծննդեան» տաղում, ուր տրված են բնության վեհատեսիլ պատկերներ, նրա թովչանքն ու շարժումը:

Լուսինն ի լոյս ի լրումն եկեալ,
Ճոխ ճեմելով՝ գիշերավարն
Ըզկնի ճեմէր բարկ աստեղօք
առաւօտուն ցօղիկն իջեալ,
ի նոր Սիոն զծայրսն տուեալ,
քաղցր արևուն արուսեկին
զարունաբեր, զարունահրաշ
գեղ գովելի երփնազարդեալ...[20]:

Նարեկացու մոտ կինն ինքը բնությունն է: «Մեղեդի Աստուածածնի» տաղում գովերգվող Կույսը նմանեցվում է «բողբոջուն նոճիի, եղեգնյա տունկի», ունի դալար մատներ, նուրբ ու կամար հոնքեր, արևանման աչքեր[21]: Իսկ «Մեղեդի ծննդյան» տաղում գեղաճեմ կույսն օժտված է «փայլակնաձև, արեգական նման» աչքերով, նռնանման այտերով, որոնք հիշեցնում են կարկաչուն սիրով լցված ծաղիկների: Նրա թևերը նուրբ են, շուրթերը՝ հանց բացված վարդեր, զարդարուն են ծամերը, իսկ այտերը բոլորված են գեղեցիկ վարսերով, ծոցը կարմիր վարդով լցյալ, հագին որդան կարմիրով ներկված բեհեզյա ոսկեշող պատմուճան, մեջքին՝ շափյուղյա ակներով ընդելուզված արծաթափայլ գոտի և այլն[22]: Բնությունը, երկրային կյանքն ու նրա վայելքները գովերգվում են նաև «Մեղեդի Յարութեան» տաղում[23]: Նույն մոտիվներն են հնչում «Վարդավառին», «Յարութեան», «Յայտնութեան» և ուրիշ տաղերում:

Գրիգոր Նարեկացին հայ մտաշխարհում առաջինն էր, որ խիզախեց երգել աշխատանքը: Հարության տաղում այլաբանորեն պատկերվում է Մասիս սարից իջնող սայլը: Բայց ահա այն չի շարժվում: Սայլն առաջ է մղում «Ճկուն ու հաստաբազուկ, լայնաթիկունք, խարտիշագեղ և ահեղագոչ» նորտը[24], որն անձնավորում է աշխատավոր գեղջուկին: «Մեղեդի Յարութեան» տաղում այլաբանորեն պատկերվում է հարսանիքը, որը տեղի է ունենում հնձան «կոխելու», գինի պատրաստելու ժամանակ՝ աշնանը, երբ մատուցում են հաց ու գինի, ոչխար է մորթվում[25]:

Տաղերի հերոսներն անձնավորում են կյանքի աշխարհականացման պահերը: Նարեկացուն վերագրվող «Տաղ եկեղեցւոյ և ի տաճարն սուրբ» բանաստեղծության մեջ[26] գովերգվող Սողոմոն թագավորի գեղակառույց տաճարը հիշեցնում է Աղթամարում X դ.

---

20 Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, էջ 115-116:
21 Նույն տեղում, էջ 123-124:
22 Տես նույն տեղում, էջ 124-125:
23 Տես նույն տեղում, էջ 115-116:
24 Տես նույն տեղում, էջ 59-64:
25 Տես նույն տեղում, էջ 115-116:
26 Տես նույն տեղում, էջ 235-236:

սկզբին Գագիկ Արծրունի թագավորի կառուցած Ս. Խաչ վանքը: Հասկանալի է, այս տաղի հիմքում ընկած են իրական կյանքի երևույթները, որոնց մոտիվից հաղորդակցվել է հեղինակը, անսալով իր կենսատոչոր սրտի ձայներին:

Նարեկացին գրում է, որ թեև հանճարով իրեն հզորացրել է Քրիստոս, սակայն ինքն իր երկրասեր վարքով վատնել է Տիրոջ շնորհները[27]: Քրիստոնեության ոգուն խորթ աշխարհային գայթակղությունները տեղ էին գտել նաև Վարագա վանքի միջավայրում: Դա չվրիպեց Հայ Եկեղեցու առաջնորդ Խաչիկ կաթողիկոսի աչքից: Վերջինս նույնիսկ բանադրեց Նարեկավանքի դպրոցի ուսուցչապետ Անանիա Նարեկացուն, որն ստիպված գրեց իր «Գիր խոստովանութեանը»[28], որտեղ կաթողիկոսին հավաստում է, որ զուր են իրեն մեղադրում թոնդրակեցիների հետ գաղափարամերձության մեջ: Նման մեղադրանքից խուսափելու նպատակով Գրիգոր Նարեկացին 990-ական թթ. սկզբներին գրեց Մոկաց Կճավա վանքի վանահորն ուղղված Թուղթը, որի շնորհիվ հստակվում է նրա անզիջում դիրքորոշումն աղանդավորների հանդեպ: Նարեկացին գիտեր, որ աղանդավորները ջանում են խարխլել Հայ առաքելադրոշմ Եկեղեցու կառույցի հիմնավոր հիմքերը: Քննափետելով թոնդրակեցիներին, նա առաջին հերթին ջանում էր պաշտպանել Հայոց Եկեղեցին նրանց հարձակումներից, իհարկե՝ նաև ցրել աղանդավորների հանդեպ իր մերձակցության վերաբերյալ տարապարտ մեղադրանքները:

Հայտնի է, որ թոնդրակեցիները Քրիստոսին Աստված չէին համարում, ուստի Նարեկացին Կճավա ուխտի վանահորն ուղղված թղթում նշում է, որ այն գրելուն դրդել է «Սէրն Քրիստոսի»[29]: Նարեկացու բնորոշմամբ՝ թոնդրակյան աղանդավորներն «են շարք շանց, և գումարք գողոց, և գունդք գայլոց և դասք դիւաց, և ազինք աւազակաց և կոյտք կերչաց, և բոյլք բարբարոսաց, և խումբք խաչահանուաց, և ժողովք չարեաց, և արք արեանց, և երամք թունաւոր աւձից, և վտառք մարդադէմ գազանաց, և կաճառք կախարդասարաս աղանդաւորաց, և ոչ միայն եկեղեցականաց, այլև հեթանոսաց են անգոսնելիք»[30] (հեթանոսների տակ նկատի ունի իսլամը դավանողներին):

Թոնդրակեցիները մերժում էին Եկեղեցին, նրա աստվածաշնորհ խորհուրդները, նվիրապետական համակարգը[31]: Այդ առնչությամբ Նարեկացին գրում է. «Բազում ինչ աստուածային և առաքելական ամենայն ինչ ուրացեալ է ի նոցանէ, և խափանեալ յաստուածային կարգաց»[32]: Նա նաև համոզված է, որ թոնդրակեցիների «զինքնաձեռն քամահանաց քահանայութիւնը» հիշեցնում է սատանայի[33]:

---

27 Տես Մատեան ողբերգութեան, Բան Ե, տ. 16, 56-57:

28 Տես Անանիա Նարեկացի, Գիր խոստովանութեան («Արարատ», 1892, էջ 96-104): Ան. Նարեկացու մասին տես՝ Հ. Հ. Թամրազյան, Անանիա Նարեկացի, կյանքը և մատենագրությունը, Երևան, 1986:

29 Տես Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 502:

30 Նույն տեղում, էջ 500:

31 Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 153 և այլն:

32 Գիրք թղթոց, էջ 499:

33 Նույն տեղում:

Նույն թղթում Նարեկացին գրում է, որ թոնդրակեցիները մերժում են խաչը, որը մարդացյալ Աստվածն ուսամբարձ «կրեաց իբր զփառս ինքեան»[34]: Նույնն է հավաստում նաև Արիստակես Լաստիվերտցին՝ գրելով, որ թոնդրակեցիները «զփրկութեան մերոյ զնշանն... խորտակէին անամօթաբար»[35]: Նարեկացուց մոտ երկուսուկես դար առաջ Հայոց Եկեղեցու խորահմուտ բարենորոգիչ Հովհան Օձնեցի կաթողիկոսն իր «Ընդդէմ պաւղիկեանց» գործում շեշտում է, որ ով «պատուէ զխաչն Քրիստոսի... զնոյն ինքն պատուեալ լինի զՔրիստոս»[36]: Նշանավոր վարդապետ Պողոս Տարոնեցու կարծիքով՝ «որտեղ խաչն է, այնտեղ խաչի վրա բարձրացվածն է»[37]: Խաչի պաշտամունքն ազդանշում էր Հայոց Եկեղեցու դավանական ինքնուրույնությունը, ի հեճուկս Բյուզանդիայի պատկերապաշտ Եկեղեցու: «Մատյան ողբերգության» մեջ Նարեկացին ասում է, որ դևերը պրկվում են խաչի նշանով, և որ մեղքերից հնարավոր է ազատվել Տիրոջ Խաչափայտով[38]: Դիմելով «արդարության Արեգակ» Քրիստոսին, Նարեկացին գրում է.

Խաչիդ տեառնագրութիւն ընդ շունչս
եւ ընդ մարմինս համասփիռ տարածեսցի[39]:

Նա Տիրոջից խնդրում է խաչով ամրապնդել իրեն՝ հոգեմաշ անուրջների դեմ[40]:

Նարեկացին ունի Խաչվերացին նվիրված տաղ: Տերունական խաչը հիշվում է նաև «Յարութեան» և այլ տաղերում: Նարեկացին գրեց նաև Ապարանից խաչի պատմությունը:

Նարեկա Սուրբը նախանձախնդիր էր Հայոց Եկեղեցու և նրա դավանանքի հանդեպ: «Դաւանեմք,- գրում է նա,- ի հաւատ ուղիղ և անխոտորնակ անքծութեան՝ համբուրիլ շըրթանց ողջունեալ զկառուցեալս խորան յանշնչական արձանաց՝ աստուածային բնակութեան եկեղեցւոյս շինուածոյ, որ գերազանց գտաւ եւ երկնի ամենազարդ քարձրութեամբ, որ ի նոցին իսկ յառաջելականացն դասուց հիմնեցաւ»[41]: Նարեկացու բնորոշմամբ՝ Եկեղեցին է «դշխոյ պաշտելի... տալ կեանս և մահու իշխէ... յարկ չքնաղ և աստուածընկալ, ազատ է միանգամայն յամենուստ ծառայութենէ»[42]:

Նարեկացին գտնում է, որ «Սիրո հոդերով ի մի շաղկապված Եկեղեցու միությունը» կատարյալ ու ամբողջական է դարձնում նրան, քանզի առանց բոլոր մասերի սերտ միության, մի «ընդհանուր լծի ներքո» մեծի ու փոքրի դաշնության, վնասված կլինի Քրիստոսի անվամբ հավաքվածների կառույցի անարատությունը, այնպես, ինչպես որ եթե մարմնի

---

34 Նույն տեղում:

35 Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխ. Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 128:

36 Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 45:

37 Թուղթ երանելւոյն Պօղոսի Տարօնացւոյ յաղթող ախոյեան վարդապետի ընդդէմ Թէոփիստեայ հոռոմ փիլիսոփային, Կ. Պոլիս, 1752, էջ 250:

38 Տե՛ս Մատեան ողբերգութեան, Բան ԴԱ, տ. 15-22, ԴԴ, տ. 32-33:

39 Նույն տեղում, Բան ՁԴ, տ. 35-36:

40 Տե՛ս նույն տեղում, Բան ԴԱ, տ. 23-24:

41 Նույն տեղում, Բան ՀԵ, տ. 105-109:

42 Նույն տեղում, Բան ՀԵ, տ. 139-140, 222-223:

փոքրիկ անդամներից մեկը կտրվի կամ պակասի, կրճատվելու է մարմնի կազմվածքը՝ ենթարկվելով «անկարգ փոփոխության»[43]:

Գրիգոր Նարեկացին ջատագով է համաքրիստոնեական միության. Ուղղափառ և Արևմտյան Եկեղեցիների հետ Հայ Առաքելական Եկեղեցու հաղորդակցության, ինչպես նաև հավատարմությանը նախնավանդ հավատքին ու Քրիստոնեության արմատներին: Ասվածին հակառակ ու հիմնազուրկ է այն ենթադրությունը, որ իբր թե Գրիգոր Նարեկացին «գործեաց հաւանեցուցանել զազգն ի միաբանութիւն ընդ Եկեղեցւոյն Յունաց և այլոց ազգաց քաղկեդոնականաց»[44]. Մինչդեռ մարդկության անունից Աստծուն աղերսանքներ վերառաքող Նարեկացին հանդես է գալիս որպես քրիստոնեական համերաշխության ջահակիր:

Նարեկացին գրում է, որ Եկեղեցու շնորհիվ «խորթաբարոյիցն հերձուածողաց մոլեգնաճառ բերանք կարկին»[45]: Նշելի է նաև այն փաստը, որ Մատյանի ՀԵ գլխի որոշ հատվածներ մի քանի ձեռագրերում ունեն «Ընդդէմ պիղծ աղանդաւորացն անիծեալն Թոնդրակեցեաց՝ նոր Մանիքեցւոց» տարընթերցվածը[46]: Ըստ երևույթին թոնդրակեցիների դեմ են ուղղված նաև «Մատյան ողբերգության» ՂԲ և ՂԳ գլուխները[47]: Հավանաբար Գրիգոր Նարեկացին շփվել է, գուցեև բանակռիվներ մղել աղանդավորների դեմ: Մատյանում նա հիշում է հերձվածողների նկատմամբ իր հակառակությունը, վեճերը[48], նշում, որ բանսարկուն «աղանդահնար պատրանքներով» ջանացել է մոլորեցնել իրեն[49]:

«Մատեան ողբերգութեան» պոեմը հեղինակի արտահայտությամբ՝ ի խորոց սրտի խոստովանանք է առ Աստված: Ժամանակի ըմբռնմամբ անքավելի մեղքեր չկան, բայց թողություն ստանալու համար դրանք պետք է խոստովանել, զղջալ կատարածի համար: «Նախ դու խոստովանի՛ր քո անօրենությունները, որ արդարացվես»,- ասվում է Ս. Գրքում[50]: Խոստովանանքը (ապաշխարանքը) միտում է առողջացնել մարդու հոգին, վերածնել նրան, որպեսզի արժանանա հավիտենական կյանքին, ուստի Քրիստոսն իր առաքելության ժամանակ նախ քարոզում էր ապաշխարել[51]: Խոստովանանքը, ապաշխարությունը քրիստոնյայի մշտական ուղեկիցն է:

---

[43] Տես նույն տեղում, Բան ԽԶ. տ. 45-53:

[44] Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 852: Ըստ երևույթին նման ենթադրության համար հիմք է ծառայել XVII դ. իտալացի միսիոներ Կղեմես Գալանոսի երկը, ուր նշվում է, թե իբր Գրիգոր Նարեկացին «կամօք և գործով միաբան եկաց սուրբ կաթողիկէ եկեղեցւոյն», և որ իբր նա համախոհ էր քաղկեդոնամետ Վահան (Վահանիկ) կաթողիկոսին «և հնազանդ եկեղեցւոյն Հռովմայ» (Կղեմէս վարդապետ, Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի Ս. Եկեղեցւոյն Հռովմայ, հ. Ա., Հռոմ, 1650, էջ 211): Նույն կարծիքին է նաև Ֆ. Թուրնեբիզը (տես F. Tournebize, Histoire politique et religiuse de l' Armenic, Paris, 1900, p. 153).

[45] Մատեան ողբերգութեան, Բան ՀԵ, տ. 244-245:

[46] Տես Մատեան ողբերգութեան, Տարընթերցվածներ, էջ 888:

[47] Այս մասին տես Հ. Գ. Ավետիքեան, Նարեկ աղօթից, համառօտ և զգուշաւոր լուծմամբք, Վենետիկ, 1847, էջ 481, ծ. 1:

[48] Տես Մատեան ողբերգութեան, Բան, ԼԱ, տ. 67:

[49] Տես նույն տեղում, Բան ԼԷ. տ. 40-41:

[50] Եսայի, ԽԳ 26:

[51] Տես Մատթ., Դ., 17:

Հավանաբար Գրիգոր Նարեկացին «Մատյան ողբերգության» պոեմը շարադրել է իր վանական կյանքի ողջ ընթացքում[52], բայց գրածները «ստացել», «կարգել», «կուտակել» է՝ «հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագս դրութեան այսմ սոփերի արգասաւորի... գործակցութեամբ եղբաւր իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ»[53]: Ուրեմն Մատյանի տարբեր գլուխները դասդասել, ամբողջացրել են մեկ գրքի մեջ հեղինակն ու իր եղբայրը: Հասկանալի է, երկն արդեն շարադրված է եղել Գրիգոր Նարեկացու կողմից, իսկ եղբոր օժանդակությունը եղել է միայն զուտ օժանդակ (կազմողական) բնույթի:

Գրիգոր Նարեկացին իր խոստովանանքն անում է համայն մարդկության անխտիր բոլոր խավերի անունից[54], իբրև «ծածուկ խորհուրդների բարձրաձայն խոստովանություն»[55]: Նա իրեն համարում է «համայն աշխարհի պատգամավոր»[56], Աստծուց խնդրում, որպեսզի իր Մատյանը հանգրվանի Նրա մոտ և քարոզվի աշխարհի ժողովուրդներին[57]: Ուստի նրա Մատյանում չեք գտնի «հայ» անունը, թեև նրա ամեն մի տողը հայաշունչ է, հայաբույր:

Գրիգոր Նարեկացին համոզված է, որ առանց մեղքերի խոստովանության չկա քավություն[58]: Հոգու փրկությունը նա լծորդում է ազատության և լուսավորության հետ[59], որը նա հույս ունի գտնել երկնային կյանքում, ուստի Քրիստոսից խնդրում է օգնել իրեն՝ երկրավոր կյանքից վեր բարձրանալու երկնային հորիզոններ: Նարեկացու կարծիքով՝ իսկական ազատությունը մեղքերից ազատվելն է[60]: Բայց մեղքերը հածում են մարդկային էության մեջ, ուստի դրանք կարող են մաքրվել միայն Քրիստոսի գալստյամբ: «Քառասնօրեայ գալստեան Տեառն» տաղում Նարեկացին դիմում է Քրիստոսին՝ «սրբեա զմեզ ի մեղաց, կենդանարար Քո գալստեամբդ»[61]: «Գալստեան Հոգւոյն» ստեղծագործության մեջ հեղինակը Բարձրյալից խնդրում է.

Բարեգործեա՛ յիս ի բազմամեղս...
Եւ զիս վերանորոգեա՛ ի փառս[62]:

---

[52] Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ Նարեկացին «Մատյան ողբերգության» երկի շարադրանքն ավարտել է 1002 թ. (տե՛ս Մ. Մկրյան, նշվ. աշխ., էջ 127, Վ. Նալբանդյան, նշվ. աշխ.., էջ 86: տե՛ս նաև Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, էջ 1122, ծան. 4)՝ առանց նշելու շարադրանքն սկսելու տարեթիվը: Մ. Աբեղյանը, նրա հետևողությամբ Պ. Խաչատրյանը, հենվելով Մատյանի հեղինակային հիշատակարանի վրա, երկը գրելու ժամանակը դնում են 1000 (կամ 1001) – 1003 թթ. (տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, Գ, էջ 582, 583, Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 112-117):

[53] Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան, Յիշատակարան, էջ 642:

[54] Տե՛ս նույն տեղում, Բան Գ, տ. 77, 82:

[55] Նույն տեղում, Բան ԼԴ, տ. 121:

[56] Նույն տեղում, Բան ԻԸ, տ. 53:

[57] Նույն տեղում, Բան ՁԸ, տ. 30-32:

[58] Տե՛ս նույն տեղում, Բան Ծ, տ. 4-5:

[59] Տե՛ս նույն տեղում, Բան ԾԱ, տ. 48:

[60] Տե՛ս նույն տեղում, Բան ԻԹ, տ. 11:

[61] Գրիգոր Նարեկացի. Տաղեր և գանձեր, էջ 77:

[62] Նույն տեղում, էջ 112:

Գրիգոր Նարեկացու աշխարհազգացողության
Այսպիսով մեղքը վճռորոշ տեղ ունի Գրիգոր Նարեկացու աշխարհազգացողության ճյուղավո-
մեջ: «Մատյան ողբերգության» երկում նա հիշում է թվով հիսուն մեղքեր՝ իրենց ճյուղավո-
րումներով[63]: Բանաստեղծը մեղքի մարմնացում է համարում նախանձադավ Բելիարին՝
ոստանային[64], մարդու հավիտենական այդ ախոյանին, ամենայն չարյաց պատճառին, ո-
րը մարդուն մշտապես դրդում է մեղսածին արարքների՝ ջանալով տանել իր մոտ՝ դժոխք:
Նարեկացին թեև սարսում է դժոխքի ահազարհուր կյանքից, սակայն իրեն արժանի է հա-
մարում դրան՝ գրելով.

Ցարժանի կրեմ եղկելիս զանզովանալի զկիզումն[65]:

Մեղքերը, բնականաբար, երկրային կյանքում են և բազմատեսակ՝ չարություն, անօրե-
նություն, փախուստը ճշմարտությունից և պարտությունը, ամբարշտությունը, զազիր գործե-
րի նկատմամբ սերը, Աստծուն ատելի տենչերն, անաստվածությունը, թուլությունը, ժլա-
տությունը, սանձարձակությունը, խեղկատակությունը, անտեղի քաջությունը, երկչոտութ-
յունը, լկտիությունը, գժտությունը, խոստումնադրժությունը, ուխտազանցությունը, փառա-
մոլությունը, ագահությունը, եսասիրությունը, գործակցությունը բանսարկուին (սատա-
նային), ժառանգության վատնումը, նորամուտ մտքերը, անկայուն կամքը, անսանձական
կրքերը և այլն[66]:

Նարեկացին այդպիսով խստաքնին ձևով պատկերում է իր հեղհեղուկ դարաշրջանի
բարքերը. հասկանալի է՝ սեփական աշխարհազգացողության ծիրում, որի մեջ ներմարվում
են նաև հոգևոր վերածնության արշալույսի ցոլքերը: Նա կամենում է վեր բարձրանալ
մեղսամած իրականությունից, հրաժարվել ախտածին արարքներից, վերածնվել, աստվա-
ծանալ, նույնիսկ թագավորել Քրիստոսի հետ[67] և վերականգնել կորուսյալ դրախտը: Եկե-
ղեցին Աստծուն համարում է անհասանելի, ուստի Նարեկացու այդ միտումը հարկ է, որ
դժգոհություն հարուցեր հոգևոր հայրերի մոտ, որոնք նրան մեղադրեցին աղանդամետ
մտքերի համար՝ թերևս նաև այդ հետնախորքի վրա: Սակայն, ինչպես տեսանք, Նարեկա-
ցին ոչ միայն չի ժխտում Եկեղեցին, այլև այն համարում է հույսի և փրկության խարիսխ:

Նարեկացին իր չարչարաբեկ ու վշտակիր հոգին արժանի է համարում մարտիրոսի
փառապսակին: Միջնադարյան մտահայեցողությամբ լիովին մեղսազերծվում էր միայն
մարտիրոսացած նահատակը՝ անմիջապես ընկնելով դրախտ: Գրիգոր Նարեկացին
Աստծուց խնդրում է իրեն ընդունել մարտիրոսների դասը, որոնք արիաբար մարտնչելով
«մարմնի բռնության դեմ»՝ ի զորու եղան հաղթել «անմարմին բելիարին»[68]:

---

[63] Տե՛ս Մատեան ողբերգութեան, Բան Զ, տ. 36 և հտ.:

[64] Տե՛ս Նույն տեղում, Բան ԿԷ, տ. 3-5:

[65] Նույն տեղում, Բան ԺԹ, տ. 65 և հտ.:

[66] Տե՛ս Նույն տեղում, Բան ԽԵ, տ. 39-70: Անշուշտ, մեղքերի թվարկումը նաև նպատակ էր հետապնդում սե-
րունդներին հեռու պահել քաղոյազանց արարքներից, դարձնել օրինահարգ, բարեպաշտ ու առաքինի, հեռու
պահել ստորահաճ, աղտեղի արարքներից, որպեսզի չխաթարվեն հինավուրց ու բարի ավանդույթները: Նա
նաև ջանում է սնուցել մտքի և հոգու կորով:

[67] Մատեան ողբերգութեան, Բան ՀԳ, տ. 66:

[68] Տե՛ս Նույն տեղում, Բան ՁԱ, տ. 45-47:

Նարեկացին հոգու փրկագործությունը տեսնում է միայն Աստծու միջոցով, որի գաղափարով նա «հիպնոսացած է»[69]:

«Մատյան ողբերգության» պոեմն առ Աստված վերառաքված աղոթահառաչ աղերսանքների ամբողջություն է: Հեղինակի համար Բարձրյալն է վերերկրային, վերպատմական էություն[70], որն անսկիզբ է, անվախճան, ժամանակից դուրս[71], իշխում է անսահմանությանը[72], Տերն է և Արարիչը տիեզերքի[73]: Համբարձմանը նվիրված տաղերից մեկում Նարեկացին գրում է, որ «Էինը» (Աստված) ինքնաստեղծ է, արարիչ՝ «անգոյությունից և անժամանակից. հավիտյան. անիմանալի և անվախճան»[74]: Աստծու գոյությունն ավելի է բարձրացնում հայրենիքի փառքը[75]: Աստված է մարդուն պարգևում ազատության շնորհագիր[76]:

Նարեկացին Աստծուն մարդկայնացնում է՝ օժտելով մարդկային լավագույն հատկանիշներով: Այդ կերպ նա աստվածացնում է մարդուն, որպեսզի ավելի լավ պաշտպանի նրա իրավունքներն Աստծու առջև, Որին աղերսում է գթալ իր նմանին: Դիմելով մարդուն, Նարեկացին գրում է, որ «ըստ ձևոյ հրեշտակի կառուցար», որպեսզի երկնաքարձ թևերով սլանաս վեր և դիտես «յաշխարհն հայրենական», բանականության պատվով ճոխացար և Աստված կոչվեցիր գործելուդ, արարելուդ համար՝ «իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ Աջոյն Աստուծոյ»[77]:

Նարեկացին իր հոգին համարում է «Աստծու հարազատ պատկերը»[78], կամենում է մարդուն կատարյալ տեսնել, ինչպիսին է նրան արարող Աստված: Անշուշտ, առաջնորդվելով ավետարանական ճշմարտությամբ[79], Նարեկացին նույնիսկ համոզված է, որ տեսել է Աստծուն[80], և պատվաստվելով Նրա մեջ՝ վերստին ստեղծվելու է «ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց»[81]: «Յարութիւն Ղազարու» տաղում նա նշում է, որ Աստված ունի «մարդկային պատկեր» և մարդուն օժտում է Իր «հողղաքուխ էությամբ»[82]: Բանաստեղծը համոզված է, որ Աստծուն նման լինելով՝ ինքն արժանանալու է երկնային կյանքի[83]:

---

[69] Ա. Չոպանեան, Դէմքեր, էջ 9:

[70] Տես Մատեան ողբերգութեան, Բան ԻԳ, տ. 1-8:

[71] Տես նույն տեղում, Բան ԽԴ, տ. 17-21:

[72] Տես նույն տեղում, Բան ԾԳ, տ. 6:

[73] Տես նույն տեղում, Բան ԻԹ, տ. 40-41:

[74] Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, էջ 108:

[75] Տես Մատեան ողբերգութեան, Բան ԼԵ, տ. 34:

[76] Նույն տեղում, Բան Ղ, տ. 29:

[77] Նույն տեղում, Բան ԽՁ, տ. 12-27:

[78] Նույն տեղում, Բան ԽՁ, տ. 55:

[79] Քրիստոս պատգամում է՝ «Կատարյալ եղեք, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ., Ե. 48):

[80] Տես Մատեան ողբերգութեան, Բան ԻԷ, տ. 86:

[81] Նույն տեղում, Բան ԻԷ, տ. 149-152:

[82] Տես Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, էջ 89:

[83] Տես նույն տեղում, էջ 108:

Գրիգոր Նարեկացու համոզմամբ՝ երկրային վաղանցուկ կյանքում իշխող թագավոր-ները. կայսրերը ոչնչություն են երկնային արքայի՝ Քրիստոսի համեմատությամբ, և որ, Տերը նաև համայն աշխարհի պետությունների, կայսրությունների միակ թագավորն է[84]: Իսկ այս աշխարհի թագավորները «զմահացուցանելն միշտ արտեստաւորեն, քան զկենա-գործելն»[85]: Իշխանը «տիրադաւ» է, զորավարը՝ «զրկող», դատավորը՝ աչառու[86] և այլն: Ուստի բանաստեղծն ապավինում է Աստծուն, խնդրում խնամակալ լինել իրեն՝ «գնդիւք վերնայնոցն... պետութեամբք, իշխանութեամբք, զաւրաւորացն անյաղթականաց...»[87]:

Աստված է միակ փրկությունը, «անճառ մեծութիւն, անբովանդակելի բնութիւն, անքըն-նելի իսկութիւն», հզոր իր զորությամբ. կայտող իր բարերարությամբ, ամենարվեստ բժըշ-կությամբ, ապավինածներին հույս, խավարածներին լույս պարգևող, մեղանչողների մեղ-աքավիչ, բազկի զորացնող, սրտի սանձակալ. «երկրպագեալ տէրութիւն», «ճշմարտու-թեան ճանապարհ»[88] և այլն: Միայն Աստված է բարոյապես կոփում, արիացնում մարդ-կանց հոգիները[89]: Նա ուղեկցում է մեզ յուրաքանչյուր քայլափոխի: Միայն Աստված է «ի-րավակշիռ և ճշմարտադատ բարերարը»[90], ուստի մարդը կարող է փրկվել միայն երկնա-յին օրենքով՝ հավատով: Եվ ով օրենք է սահմանում, արժանանալու է օրհնության[91]: Աստ-ծու և արդարության լույսը ծանուցում է նոր օրենքի ճշմարտությունը[92]: Աստված վեր է ա-մեն մի օրենքից[93] և հաղթողն է երկրային օրենքով հզոր կարծվածին[94]: Նարեկացին թեև իրեն համարում է օրենքի գիտակ[95], սակայն գտնում է, որ եղել է օրինազանց, շեղվել «հաստատական օրինադրությունից»[96]:

Որպես մարդ, Նարեկացին իրեն ժառանգորդ է համարում նախածնի մարմնական մե-ղանչումների, որոնք բզկտում են նրա զգայուն հոգին, խորագնաց միտքը: Նա իր հոգին նմանեցնում է փշրված ու խորտակվող նավի, իր կյանքը՝ ալեծուփ ծովի, որի գոռ ալիքնե-րը տարուբերում են իր հոգու նավն այս մեղսածուփ աշխարհում. նավի ջրասույզ լինելը համարում է «հոգեւորական խորտակումն»[97]: Սակայն բարեգութ Տիրոջ օգնությամբ հոյ-սի առասանն իր ձեռքում բռնած՝ նա դուրս է գալիս ծովի անդնդախոր հատակից անքույթ ու ապահով վայր[98], այնտեղ գտնելով հոգու հավիտենական հանգրվանը:

---

84 Տես նույն տեղում, Բան ՂԲ, տ. 39:
85 Նույն տեղում, Բան ԾԱ, տ. 15-16:
86 Տես նույն տեղում, Բան ԾԶ, տ. 52-54:
87 Նույն տեղում, Բան ՂԱ, տ. 93-94:
88 Տես նույն տեղում, Բան ԼԲ, տ. 44-71:
89 Տես նույն տեղում, Բան ԻԹ, տ. 110:
90 Նույն տեղում, Բան Ծ, տ. 97:
91 Տես նույն տեղում, Բան ԿԴ, տ. 32:
92 Տես նույն տեղում, Բան ԺԳ, տ. 39:
93 Տես նույն տեղում, Բան ԾԳ, տ. 119-120:
94 Տես Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, էջ 104:
95 Մատեան ողբերգութեան, Բան ԾԹ, տ. 42:
96 Տես նույն տեղում, Բան ԻԴ, տ. 21:
97 Տես նույն տեղում, Բան, ԻԴ, տ. 21:
98 Տես նույն տեղում, Բան, ԻԵ, տ. 60-61:

Բայց երկնային երանավետությանն արժանանալու համար երկրային կյանքը պետք է դառնար մեղքերի քավարան: Աշխարհը ներհայեցողաբար ընկալող բանաստեղծն ու մարդագետը սեփական մտքի լույսով ստեղծում է երկրային կյանքի իրական պատկերը: Թեև նա հաճախ լիահույս չէ, որ արժանանալու է ամենողորմ Աստծու շնորհներին և ապագայի նկատմամբ համակվում է կասկածով[99], այդուհանդերձ փրկության հույսը չի լքում բանաստեղծին: Նա ի վերջո չի դառնում բյուրհազարամյա քավության զոհ, չի դատապարտվում ամուլ ու վաղանցուկ գոյության և արժանանում է երկնային կյանքին:

Փաստորեն հաղթում է Նարեկացու վսեմ լավատեսությունը, որը բխում էր նրա կենսասիրությունից: Նարեկացին պայքարում է հանուն կյանքի, որպեսզի այն դարձնի հավերժական ու գեղեցիկ: Այդ անհավասար հոգևոր մաքառման մեջ նա շահեց հաղթանակ ոչ միայն իր, այլև հանուր մարդկության համար, և դրսևորեց իր մարդասիրությունն ու անսահման հոգածությունն իր նմանների հանդեպ: Հենց դա են նկատի ունեցել Նարեկացու կարգակիցները, երբ նրան խնդրել են գրել «Մատյան ողբերգությանը»՝ համոզված լինելով, որ նրա սրբազնասուրբ հոգու ճիչը հասնելու է Աստծուն, որը չի մերժում սրբերի խնդրանքը:

Նարեկացու բազմախորհուրդ և իմաստահեղ Մատյանը փոթորկեց բազմաբյուր հոգիների, նրանց մկրտելով աստվածային կենարար լույսի ավազանում: Ուստի ժողովուրդն այն դիտեց իբրև բոլոր ցավերը դարմանող բժշկարան, մարմնական առողջություն, հոգու և մարմնի ներդաշնակություն, հույս ու հավատ պարգևող Աղոթագիրք:

Գրիգոր Նարեկացին իր դարի հարազատ զավակն էր: Նրա հանճարը կռփվեց ժամանակի քուրայում և դրվեց դարաշրջանի զոհասեղանին: Սակայն նրա բարձրաթռիչ հոգու ճախրանքը ծնեց քերթողաշունչ գործեր՝ Հայոց աշխարհում սփռելով իր հանճարի սրբասուրբ մասունքները, որոնց շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք բերեց հոգևոր ու բարոյական զորություն, երկնաբաշխ շնորհներ, գեղեցիկի պաշտամունք, քաղաքակրթական ավյուն:

Գրիգոր Նարեկացին կարողացավ վեր բարձրանալ ժամանակի կանոնականացված մտահայեցողությունից ու պատկերացումներից և վեր հանել իրական կյանքն իր հարափոփոխ ելևէջներով, վաղ վերածննդային շողերով: Այդ ըմբոստահույզ ու իմաստախոս հանճարը կարողացավ բարձրացնել, աստվածացնել մարդուն և զինել նրան անմար հույսով: Նրա Մատյանը Հայոց Եկեղեցու և նրա հոտի համար դարձավ գործուն ու սրբաշունչ քարոզչության անհատնելի զինարան, որը հուսավառում է մարդկանց, հագեցնում հավատացյալ հոգիներին՝ իբրև «դեղ կենաց առ հնարս ցաւոց հոգւոց և մարմնոց»[100]:

[99] Տե՛ս նույն տեղում, Բան ԾԵ, տ. 67, ԾԶ, տ. 13-54:

[100] Նույն տեղում. Բան Գ, տ. 137-138:

*ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
*Հոգեբանական գիտությունների թեկնածու*

# ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ» ՊՈԵՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

... Հազար տարի առաջ աշխարհի հոգևոր դաշտը բևեռացել էր Վանա ծովի ափին գտնվող Նարեկ գյուղի վանքի կամարների ներքո, որտեղ Գրիգոր Նարեկացին երկնում էր մարդկության պատմության մեջ աննախադեպ մի ստեղծագործություն՝ «երգում էր Աստծուն»: Նարեկացու նման հանճարը միայն կարող էր համարձակվել մարդկային բանականության, խոսքի միջոցով որակել, բնութագրել Անսկիզբն ու Անվախճանը, Անսահմանությունը, միակ կատարելությունը տիեզերքում[1].

Տե՛ր պարգևատու, ինքնաբուն բարի,
Ամենքին իշխող հավասարապես,
Միակ Արարիչ ամեն գոյության՝ անգոյությունից,
Ո՜վ փառավորյալ, անքնին, ահեղ,
Սոսկալի, սաստիկ, ահարկու, հզոր,
Անպարփակելի, անմերձենալի,
Անըմբռնելի, անիմանալի, աննաո, անպատում,
Անտեսանելի ու անզննելի,
Անշոշափելի, անորոնելի,
Անսկիզբ-անվերջ ու անժամանակ,
Գիտություն անմեգ, տեսություն անգայթ,
Էականություն անկասկածելի,
Դու բարձր ու խոնարհ, Օրհնյալ գոյություն,
Անստվեր ծագում, բազմափայլ ճանաչ, խոստովանված լույս,
Անխարդախ ննջույկ, անվրդով հանգիստ, անխաթար կնիք
Կան դեռ ավելի վայելուչ խոսքեր
Աստվածությունդ փառաբանելու.
Օրհնյալ, ներբողյալ, գովյալ, քարոզյալ,
Ավետարանված, հնչված, հռչակված,
Պատմված, աղաչված կամքով անպատիր:
Եվ դեռ ինչե՞ր կան Քո կողմից մեր մեջ

[1] Այս և բոլոր հետագա մեջբերումները՝ Գրիգոր Նարեկացի, Մատյան Ողբերգության, թրգմ. Վ. Գևորգյան, Երևան,-2002 թ.:

Կայլակող անլուռ՝ անուշ հոսանքով,
Որ պիտի ասվեն ու լուսաբանվեն հաջորդ մասերում:

(Բան Բ, էջ 14-15)

Բայց ինչպե՞ս կարող է չափվել Անսահմանը, ինչպե՞ս պետք է հարաբերվել Բացարձակ Էության հետ, եթե բառերն ի զորու չեն իրենց գերադրական աստիճաններով իսկ մեծարելու Արարչին...: Ինչպե՞ս կարող է մահկանացու մարդը՝ անգամ վանական, հանդգնել հարաբերվել կատարելության հետ, երբ նյութական մարմինը նրա մեջ մշտապես մեղավոր հույզեր է ծնում:

Նարեկացին, որպես մարդ-մահկանացու, միակ ելքը տեսնում է մարդկային իր անկատարությունն ու մեղավորությունը ներկայացնելու մեջ՝ փորձելով նաև այդ հարաբերությամբ առավելագույնս ընդգծել Աստծո կատարելությունը:

Այնուամենայնիվ, ո՞րն է նման ինքնաձաղկման, ինքնազոհաբերության նպատակը. ահա խնդիր, որի մեկնությունը փորձել են տալ շատ ու շատ գրականագետներ, գրաքննադատներ, փիլիսոփաներ և այլ ուսումնասիրողներ (Ղ. Ալիշան, Մ. Աբեղյան, Դ. Դեմիրճյան, Մ. Մկրյան, Հ. Թամրազյան, Վ. Առաքելյան, Վ. Գևորգյան, Վ. Նալբանդյան, Հ. Գասպարյան, Հ. Գաբրիելյան, Հ. Մխիթարյան, Վ. Չալոյան և շատ ուրիշներ), որոնք հսկայական աշխատանք են կատարել Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունն արժեվորելու և որպես մեծագույն մտածող հանրությանը նրան ներկայացնելու ուղղությամբ:

Գնահատելով «Մատյան ողբերգության» պոեմը որպես հանճարեղ ստեղծագործություն, ընդգծվել է նրանում խոսքի արտահայտչամիջոցների ու ձևերի անսպառությունը, ճոխ բառապաշարը, բնության երևույթների ու մարդկային կյանքի իրողությունների ճշմարտացի նկարագրությունը, մարդկային հույզերն ու ապրումները ներկայացնելու Նարեկացու տաղանդը: Ընդգծվել է պոեմում բանաստեղծական խոսքի, ռիթմի ու երաժշտականության զգացողության անգերազանցելի վարպետությունը, տաղաչափական հարուստ ձևերը, բաղաձայնների ու ձայնավորների հանգերգությունները, սքանչելի բնածայնությունները և այլն և այլն: Հայ և օտարազգի շատ ուսումնասիրողների կողմից պոեմն արժեվորվել է նաև որպես խոհական-փիլիսոփայական ստեղծագործություն (հոգու և մարմնի հարաբերության, հավատի, հույսի և սիրո, ինքնադատության՝ որպես մեղքերից ազատվելու, և այլ խնդիրների տեսանկյունից), իսկ Նարեկացին ներկայացվել է որպես Արևելքի վաղ վերածննդի նախակարապետ (Մ. Աբեղյան, Ս. Մալխասյանց, Մ. Մկրյան, Վ. Նալբանդյան, Հ. Թամրազյան, Վ. Չալոյան, Վ. Գևորգյան, Ս. Աղաբաբյան, Հ. Մխիթարյան, Է. Մեժելայտիս և այլք):

«Մատյան ողբերգության» պոեմն ուսումնասիրող մի շարք հեղինակներ էլ, ելնելով խորհրդային ժամանակների գաղափարա-քաղաքական ազդեցություններից, նրանում տեսել են դասային-դասակարգային ճնշման և կրոնական կաղապարների դեմ ուղղված բողոք-ընդվզում: Նույնիսկ փորձեր են արվել Նարեկացու և աղանդավորական շարժումների միջև տեսնելու ուղղակի կապ: Մեր խորին համոզմամբ դա խնդրի կանխամտածված թյուրըմբռնում է: Այնինչ պոեմի լեյտմոտիվը մարդու սերն է Արարչի և իր նմանի նկատմամբ, որում դրսևորվում է նրա տիեզերական և ներտեսակային ներդաշնակության

ձգտումը՝ որպես բանական կյանքի բնականոն գոյաձև: Նարեկացին վիթխարի մեծություն է. նրա մտքի ընդգրկումն այնքան տարողունակ է, որ այնտեղից, ինչպես Տիեզերքից, մշտապես կարելի է գտնել բոլոր ժամանակներում մարդուն հուզող հիմնախնդիրների պատասխանը: Շատ լավ է բնորոշել Լ. Օզերովը. «Նրա մոտ ամեն ինչ հսկայական է, ամեն ինչ տիեզերքի ու հոգու չափով, որովհետև հոգին ընդգրկում է տիեզերքը»[2]:

«Մատյան ողբերգության» պոեմն ապագային ուղղված հզոր կանխատեսում է, մարդկային մտքի եզակի թռիչք: Եվ, այդուհանդերձ, գրական ցանկացած ստեղծագործություն նախ և առաջ արտացոլում է ժամանակի գերակայությունները: Այս իմաստով էլ պոեմի ստեղծման ժամանակը խիստ խորհրդանշական է՝ դա Աստծո Որդու երկրային կյանքի և քրիստոնեական վարդապետության 1000-ամյակն է, մի ուսմունք, որը ճշմարիտ մեկնակետ է Մարդ-Աստվածության գաղափարի ընկալման համար, ուսմունք, որով իմաստավորվեց կյանքի հարատևության ուղին.

Բայց դու, փրկությու՛ն,
Եկար հայրենի քո հարստությամբ
Եվ մեր աննվազ, երկար փայփայած
Հույսերն, ուղղված քեզ, ջավի՛չ բոլորի,
Իրագործեցիր կատարելապես:

(Բան ԾԲ, էջ 236)

Ահա և աշխարհակազմիկ այս իրադարձության 1000-ամյակի շեմին Նարեկացին փորձում է պարզել ձեռքբերումները, ի խորոց սրտի խոսել Աստծո հետ և ... ողբերգություն է ապրում՝ բացահայտելով մարդկային բեկված հոգեկան նկարագիրը:

Տեղին է հիշել պոեմի աշխարհաբար թարգմանության տաղանդաշատ հեղինակ Վ. Գևորգյանի հետևյալ միտքը. «Եթե Դանթեն վերածնության նախակարապետ հորջորջվեց այն պատճառով, որ Եվրոպայում առաջինը ստեղծագործության առարկա դարձրեց մարդուն, հիմնականում պատկերելով նրա արտաքին մարմնական տանջանքները, ապա Նարեկացին նրանից մոտ երեք դար առաջ, նրանից ավելի հեռուն գնալով՝ իր հայացքը սևեռեց մարդու ներաշխարհը»[3]:

Հատկանշական է, որ Նարեկացու Մատյանում կիրառված ենք գտնում հոգեվերլուծության մեթոդը: Նարեկա Սուրբը ենթադրել և հավատացել է, որ հոգեվերլուծությամբ կարելի է ոչ միայն հասնել անհատական հոգեկան հավասարակշռության, հոգևոր մաքրագործման, այլև այս մեթոդը կիրառողն իր հետ կարող է տանել ճշմարիտ զղջման ցանկություն ունեցող յուրաքանչյուր մարդու.

Արա՛ այս մատյանն ընթերցողներին սրտերով հստակ,
Հոգով բժշկված, հանցանքից մաքուր,
Անպարտ, ազատված մեղքի կապանքից:

---

[2] «Գրական թերթ», 13 նոյեմբերի, N 46, 1970 թ., Երևան:

[3] Վ.Գևորգյան, Մատյան ողբերգության, աշխարհաբար թարգմ., Երևան, 1979, էջ 599:

Ողբերգությունն այս սիրով, հանությամբ
Ճաշակողների սրտերում թող որ
Լույսիդ շնորհը մտած բնակվի:
Եթե պատահի, որ բարեպաշտներ
Քեզ ընծայաբեր լինեն սրանով,
Նրանց հետ, գթա՛ծ, որոնք քեզ համար
Կենդանի են միշտ, ընդունի՛ր և ինձ.
Եթե ախտաջինջ արցունքներ կաթեն
Սրա միջոցով մեկի աչքերից,
Թող որ քո կողմից, ո՜վ խնամակալ,
Անձրևեն դրանք նաև ինձ վրա:

(Բան Գ, էջ 17-18)

Նարեկացին սեփական անդորրի համար չէ, որ մտահոգ է: Նա պատրաստ է ինքնադատման՝ հանուն մարդու հոգեկան անաղարտ նկարագրի վերստեղծման, որի համար Արարչի ոգեշնչումն ու օգնությունն է հայցում.

Թող ողբերգության մատյանն այս, Բարձրյա՛լ,
Որ սկսել եմ գրել հանուն քո,
Կենաց դեղ լինի արարածների
Մարմնի ու հոգու վիշտն ու ցավերը բուժելու համար:

(Բան Գ, էջ 19)

«Նարեկը» քրիստոնեական մշակույթի դասական ստեղծագործություն է, այն մարդու մեջ մարդկայինը վերահաստատելու, նրա նկատմամբ անսահման սիրո և հավատի արտահայտություն է: Այն հայոց ոսկեղենիկ լեզվով է գրված, բայց համամարդկային, վերազգային նպատակների է միտված: Եվ պատահական չէ, որ պոեմում Նարեկացին ոչ մի տողով իսկ չի առանձնացնում հայ ժողովրդին.

Նորակերտ մատյանն այս ողբերգության,
Ուր պատկերված են, նշավակվելով,
Ամենատարբեր կրքերն ամենքի,
Իբրև ամենայն վիշտ ու ցավերի
Մասնակից, հաղորդ, մեծապես գիտակ
Ու ճշմարտացի մի պատվեր, ավանդ
Հանձնարարվում է այս երկրի վրա
Հաստատված բոլոր բանականներին,
Համայնատարած քրիստոնյաների
Տիեզերագումար ամբողջ բազմության:

(Բան Գ, էջ 16)

Այո, Նարեկացին խորապես ճանաչում է մարդուն, իմաստավորում ոչ միայն նրա գիտակցության, այլև ենթագիտակցականի դրսևորումները: Նա, իրեն վերագրելով մարդուն ներհատուկ բոլոր մեղքերն ու մոլորությունները, բացահայտում է անձի կառուցվածքում դրանց հիմքերը և դրանով իսկ նախանշում կատարելության ուղին.

Արդ, եթե մեկը չխաբի իրեն,
Չձևացնի կերպարանելով
Եվ չանհավատի կեղծավորաբար,
Ճանաչի նաև իրեն որպես մարդ,
Զգա, որ ինքը բնությամբ նույնպես
Մահկանացու է մի սովորական,
Իրեն էլ դիտի որպես երկրածին
Ու մնա պատշաճ չափ ու սահմանում,
Կիմանա, անշուշտ, որ վերոգրյալ
Պատուհասների գլխավորները
Մտացածին չեն, ավելին, դեռ ես
Ամբողջ իսկությամբ չպատկերեցի
Բազմազան, պես-պես արատները այն,
Որոնք հածում են մեր բնության մեջ,
Այլ չարիքների բյուր պտուղների
Միայն մի փոքրիկ մասը ցույց տվի,
Մնացածները թողնելով, որ դուք
Սրանց միջոցով ուսումնասիրեք,
Թեպետ ոչ լրիվ ու ամբողջությամբ:

(Բան Զ, էջ 31)

Նարեկացին չի խնայում իրեն՝ միաժամանակ չթաքցնելով, որ դա կատարում է կամովին և նպատակամետ:

Սակայն որպես հանճարեղ մտածող, Նարեկացին նաև հաստատ գիտի, որ միայն ինքնածաղկմամբ անհնարին է հոգևոր նորոգում.

Թե՛ զղջումն ուժգին, թե՛ մեղանչումը անսահման, մոլագար
Կորստաբեր են հավասարապես.
Թեպետ և դրանք օտարածին են
Ու երևույթով իրարից տարբեր,
Բայց ըստ էության զուգադրելիս
Կնկատենք, որ երկուսն էլ մարդուն
Մղում, հասցնում են նույն վհատության:

(Բան Ժ, էջ 43)

«Մատյան ողբերգության» պոեմում Նարեկացին դրսևորում է մարդկային հոգեկանի խոր իմացություն: Գիտի, որ բազում արատների հիմքերը ոչ միայն կյանքի պայմաններն են, սոցիալական միջավայրի գործոնները, այլև մարդու կենսաբանական-տեսակային էությունից բխող երևույթներ (ենթագիտակցական բարդույթների դրսևորումներ), և անսահմանորեն դժվարին ու տևական է կատարելության ուղին.

Մեզ, որ կրում ենք մեր բնության մեջ
Բնականորեն ծլարձակված բյուր,
Անթիվ-անհամար բծեր չարության,
Որոնք մարմնային օրենքներով հենց
Բողբոջում են միշտ, աճում, նորոգվում
Ամենատեսակ փշեր ընձյուղող
Մեր այս բնության անդաստանի մեջ:

(Բան ԺԷ, էջ 65-66)

Մարդկային անձնավորության կառուցվածքի, նրա որակների և դրանց դիալեկտիկական փոխներգործության մեծ ընդհանրացման հանգելով՝ Նարեկացին պատկերում է անձի ներքին հակասականությունը՝ գրելով.

Կյանքս այս աշխարհում նման է սաստիկ մրրկածուփ ծովի,
Ուր բազմակոհակ ու ալեխռով
Հորձանքների խոլ, անդուլ, անընդմեջ ընդդիմախուժմամբ՝
Տարուբերվում է, ցնցվում է հոգիս
Մարմինս շինվածքով, ինչպես նավակում:

(Բան ԻԵ, էջ 106)

Նա կանխատեսում է և ուզում հավատալ, որ մարդուն ներհատուկ կենսաբանականի և սոցիալականի, մարմնականի և հոգևորի հավերժական պայքարը բանականության զորացման շնորհիվ կծառայի աշխարհ-ծովում մարդկային խորտակված հոգևոր-տապանակի նորոգմանը.

Կլինի՞ արդյոք, որ բազմախորտակ
Տապանը մարմնիս տեսնեմ նորոգված:
Պիտի՞ նկատե՞մ ողբալի հոգուս
Փշրված նավը ողջացած նորեն:

(Բան ԻԵ, էջ 108)

Որ Գրիգոր Նարեկացին հաննարեղ կերպով դեռևս վաղ միջնադարում հստակորեն ըմբռնել է անձի ժամանակակից էմպիրիկ կառուցվածքին խիստ համահունչ պատկերա-

ցում, որում հստակորեն տարանջատվում են բանականությունը, կամքն ու զգացմունքնե-րը՝ երևում է հետևյալ տողերից.

Բուժի՛ր հրատապ տոչորումը բորբ մահախեղդ սրտիս,
Վանի՛ր դիվային ու չարահնար խռովքս հանցավոր.
Ջարի կենակցիս մթամած հոգու
Անձկությունն անհույս հալածի՛ր անհետ.
Ցրի՛ր բռնակալ մեղքիս ծխամած թանձրությունն անլույս.
Ջնջի՛ր, կործրու՛ զազիր, թխատիպ
Ախտը կրքերիս ապականարար:
Նորոգի՛ր մեծ ու հզորիդ անվան
Պաշտելի փառքի լուսապատկերը պայծառ՝ հոգուս մեջ,
Հզորացրու՛ փայլը շնորհիդ՝
Հողազանգվածիս դիմազարդելու,
Մտատեսությամբ օժտելու համար.
Սուրբ ճանաչումով պարզի՛ր մեղսամած
Այս մռայլն ու ինձ վայելչազարդի՛ր,
Որ պատկերը Քո երնա իմ մեջ,
Եվ աստվածային կենսատու անեղծ
Երկնավոր լույսով ծածկի՛ր եռադեմ էությունն անձիս:

(Բան Խ, էջ 183-184)




գծ. 1

Ահա և հանճարեղ մտատեսության վառ վկայություն, քանի որ անձի կառուցվածքի, նրա երեք կողմերի մասին ժամանակակից էմպիրիկ պատկերացմանը (տես գծ. 1) համահունչ Նարեկացու գեղարվեստական նկարագրությունը անհավատալիորեն կատարվել է ավելի քան ինը դար առաջ ...:

Նարեկացին համոզված է, որ մարդկային ենթագիտակցական բարդույթներով պայմանավորված հոգեկան խաթարումների հաղթահարման հոգեվերլուծական ուղին անհնարին է առանց ինչպես գործած մեղքերի խոստովանության, այնպես էլ ապագայի նկատմամբ հավատի և հույսի: Միևնույն ժամանակ նա տալիս է մարդկային էության երկ-

փեղկվածության դասական նկարագրությունն՝ ընդգծելով մտածողության մեջ տրամաբանականի և ենթագիտակցական դիրքորոշման հակասականությունը.

> Հանգստի ժամին նա միշտ լինում է տանջահար, հոգնած,
> Խրախճանքի մեջ՝ տխուր ու տրտում,
> Դեմքով՝ միշտ ժպտուն, բայց մտքով՝ խոցված,
> Տեսքը՝ ծիծաղկոտ, աչքը՝ ողբի մեջ,
> Արտաքուստ թեև ձևանում է շատ հանգիստ, սփոփված,
> Բայց արտասուքը լուռ վկայում է կսկիծը սրտի:

ապա՝

> Մի դեմք, երկակի արտահայտությամբ՝
> Տխուր ու ցասկոտ,
> Մեկի փոխարեն երկու կշտամբանք,
> Մեկը՝ ներկայի, մյուսը՝ ապառնու.
> Տարակուսելի երկու ապավեն,
> Մեկը՝ «թերևս», մյուսը՝ «գոնե»,
> Նույն բերանի մեջ երկակի բարբառ,
> Մեկը՝ եղկություն, մյուսը՝ խռովք.
> Երկու զգացում միևնույն սրտում,
> Մեկը՝ կեղակարծ, խաբուսիկ հույսի,
> Մյուսն՝ աներկբա, ստույգ կորստյան:

(Բան Լ, էջ 137-138)

Անկնհայտորեն, Նարեկացին որպես հոգեվերլուծության հզոր միջոց կիրառելով հայերենի հարուստ բառապաշարը՝ գեղարվեստական կատարյալ ձևի մեջ կարողանում է հնարավորինս ներկայացնել մտքի ազատ զուգորդությունները՝ թափանցելով ենթագիտակցականի խորին շերտերը: Անշուշտ, մտածողության պրոցեսում վճռորոշ դեր են կատարում ոչ միայն բառ-հասկացությունները, այլև դրանց կապակցումը դատողություններում՝ լեզվի ձևաբանական առանձնահատկությունները: Յուրաքանչյուր բառ-հասկացություն իրենով ամրագրում է իրականության հատկապես որոշակի էական կողմ կամ հատկանիշ: Եվ ինչպես որ երևույթն ունի իր բազմաթիվ էական ու երևութական դրսևորումները, այնպես էլ յուրաքանչյուր հատկանիշ շեշտվում, ամրագրվում է լեզվական որոշակի ձևում: Այս իմաստով, տվյալ լեզվի կազմում միևնույն առարկայի կամ երևույթի վերաբերյալ բնութագրական բառերի (հոմանիշների և այլն) հարստությունն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում օբյեկտը կամ երևույթը լիարժեք ներկայացնելու, այսինքն՝ լիարժեք մտածողության պրոցես իրականացնելու համար:

«Մատյան ողբերգության» պոեմը հագեցած է ինչպես բառային, այնպես էլ պատկերային հզոր շնչով, որի շնորհիվ յուրաքանչյուր ընթերցող ներառվում է այդ հոգևոր ազդեցության ոլորտը և դառնում ինքնաճանաչողության սուբյեկտ: Իրոք, պոեմը հագեցած է նման բազմաթիվ տեսարաններով, սակայն բավական է նշել թեկուզև նավաբեկության և մահվան տեսարանները (Բան ԻԵ և Բան ՀԳ): Ընդ որում դրանք երբեք էլ միայն գեղարվեստական, զուտ նկարագրական նպատակ չեն հետապնդում: Օրինակ, մահվան տեսարանում վառ, ցնցող, խորը տպավորվող և ճնշող պատկերների միջոցով Նարեկացին ըն-

գծում է մարմնականի, երկրայինի անցողիկությունը, նրա ժամանակավոր լինելը՝ դրանով անվերապահորեն շեշտելով նաև հոգևոր նախասկզբի անվախճանությունը: Որպես հանճարեղ մտածող Նարեկացին գիտակցում է, որ կատարելությունը մարդկային հոգեկանի որակական այնպիսի գոյաձև է, որն անհասանելի է առանց «չափի խզման», առանց «նյութական էությունից Բան-ի անցման»: Ահա թե այդ անխուսափելի և միաժամանակ դաժան իրողությունը գեղարվեստական ինչ պատկերներով է ներկայացվում պոեմում.

Չի ես, որ այժմ այսպես պերճախոս,
Խրոխտաձայն եմ, սիգաքայլ, հպարտ, բարձրապարանոց,
Այնժամ մեկնված՝ պիտի պառկեմ որպես
Անկենդան դիակ, անխոս, անլեզու,
Ձեռքերս կապված, խեղ անդամներով,
Շրթունքներս խուփ, աչքերս փակված,
Իբր անշարժ տախտակ, կիսայրված խանձող,
Անզգա արձան, անբարբառ պատկեր,
Անշունչ գոյություն, խղճալի տեսիլ,
Եղկելի կերպար, ողբալի տիպար,
Ողորմելի դեմք, արտասվելի տեսք, համրացած լեզու,
Խորշակահար խոտ, թոթափված ծաղիկ,
Այլակերպված գեղ, մարած մի կանթեղ:

(Բան ՀԳ, էջ 333-334)

Պոեմի բարձրակետն է Նարեկացու ապշեցուցիչ խոստովանությունը, որն առավել ևս հանդուգն է իրեն վերագրվող մեղքերի անսպառության ֆոնի վրա.

Եվ այն, ինչ ասելն իսկահավոր է,
Գրում եմ այստեղ որպես հիշատակ մեծ երախտիքիդ.
Կարող ենք նույնիսկ մենք Աստված լինել՝
Շնորհներով ու ձիրքերով ընտիր
Ու միավորվել Ստեղծողիդ հետ:

(Բան ԾԲ, էջ 235)

Ահա և անհասանելիի գիտակցումը որպես իրողություն. երկրային կողմնորոշիչներից զամված, մեղքի գիտակցությամբ տառապող հոգին թոթափում է վերջավորի կաղապարը՝ ուրվագծելով տիեզերքում իր օտարվածության հաղթահարումը: Եվ այսպես, պոեմի 95 Բան-երում Նարեկացու մտածողությունն իր դիալեկտիկական ընթացքով հանգում է տրամաբանական ավարտին. սկսվելով որպես մեղքերով ծանրացած մահկանացու մարդու խոստովանություն, շնորհիվ ենթագիտակցական բարդույթների ու բնածին մեղքերի գիտակցման, հաղթահարելով մարդկային մտածողությանը ներհատուկ կասկածի, տարակույսի ու թերահավատության զգացումները՝ նրա հոգնատանջ հոգին ստեղծում է հրաշագործ «Նարեկը», որով մարդը կարող է հաղորդակցվել Արարչի հետ, վերականգնել իր հոգեկան անեղծ նկարագիրը.

Արդ, աղոթաձայց և աղերսաձայն
Մաղթանքները այս ով որ ընթերցի,
Ով որ պաղատի տիրասիրաբար,
Ծեր թե երեխա, կույս, երիտասարդ կամ թե աղախին,
Հավասարապես, անաչառորեն
Թող որ ստանա Քեզնից, Բարեգութ,
Պարտքից սրբվելու մասն երանության,
Մաքրված նորից՝ հաստվի վերստին
Անարատությամբ, վերակերտվելով
Քո կերպարանքով անփոփոխելի:

(Բան Դ, էջ 400)

Այո, մարդն իր մեջ արտացոլում է տիեզերքի հակասականությունը, և հոգևորի հզորացումն է այն մեկնակետը, որից սկսվում է կատարելության անսահման ու անվերջանալի ուղին: Այդ ճանապարհին մեկ հազարամյակի ձեռքբերումներն աննշան ու աննկատելի են, սակայն յուրաքանչյուր հազարամյակ ծնում է իր հանճարեղ անհատներին, որոնք Աստվածընդօրինակմամբ պատրաստ են կրելու մարդկության մեղքերը՝ դրանով իսկ մոտեցնելով, հասանելի դարձնելով հավերժության գաղափարը:

Ահա այդպիսին է Գրիգոր Նարեկացին, այդ վեհ նպատակին է կոչված նրա «Մատյան ողբերգության» հանճարեղ պոեմն իր առաքելությամբ՝ երևակել մարդկային անկատարության ու արատների բնածին ու սոցիոգեն հիմքերը, հոգեվերլուծության շնորհիվ ուրվագծել մարդկության կատարելության ուղին: Սա վաղ միջնադարում մարդկային հանճարի եզակի փայլատակում է, քանի որ նույն նպատակին կոչված ինչպես անձի հոգեվերլուծական, այնպես էլ մարդասիրական տեսությունները գիտական ձևակերպմամբ հանդես են եկել Նարեկացուց ավելի քան ինը դար հետո միայն...:

Որպես եզրափակիչ խոսք, անհրաժեշտ ենք համարում նաև նշել հետևյալը. մարդաբանական և լեզվաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշակի կապ գոյություն ունի լեզվի բառակազմի, քերականության և իմացական պրոցեսների ու վարքի միջև: Այսինքն հիմքեր կան ենթադրելու, որ զգայական տպավորությունների բազմազանությունը մարդկային հոգեկանում կազմակերպվում ու կարգավորվում է լեզվական կատեգորիաների կողմից (Սեպիր-Ուորֆի վարկած): Այս տեսանկյունից Գրիգոր Նարեկացին իր հանճարեղ Մատյանով նաև հաստատում է, որ հայկական լեզվամտածողությունն ի վիճակի է արտահայտելու համամարդկային հոգեկան ամենախոր զգացմունքները, օբյեկտիվորեն իմաստավորել մարդու գոյությունը Տիեզերքում և հարաբերվել Աստծո հետ: Նարեկացին Աստծո հետ խոսել է հայերեն՝ արտահայտելով համայն մարդկության խոհերն ու զգացմունքները...:

*ՀԱԿՈԲ ՊԵՏՐՈՍՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ՆՈՐ ԳԻՐՔ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՎ ՆԱՐԵԿԻ ՄԱՍԻՆ

Հոգևոր բեկման այս բարդ օրերին հազարամյա հեռավորությունից իր արդար, կենսանորոգ ու խորախորհուրդ խոսքն է բերում մեզ անմահ Նարեկացին, ում երկնաշունչ Նարեկը դարերի հոլովույթում և այսօր մեզ՝ հայերիս համար ուղենիշ է, հավատո հանգանակ՝ ճիշտ խորհելու, ազնիվ ապրելու և իմաստնաբար գործելու՝ հեռու ամեն կարգի ապականությունից, գայթակղությունից և չարաբարո խոչուխութերից: Եթե հնարավոր չէ Աստծուն հասնել, աստվածանալ, գոնե ձգտել դրան՝ անհասանելիին, իր կեցության իմաստը տեսնել այդ ձգտման մեջ, որով էլ պայմանավորված է մարդու կատարելությունը, ներդաշնակությունը, հաստատական առաջընթացը, շարժումը՝ ընդհանրապես:

Հայոց Մեծ Սուրբը, խորաթափանց իմաստասերն ու անզուգակշիռ գեղագետն իր վրա է վերցրել սերնդակիցների ու նրանց հետագա ժառանգների ծանրածանր մեղքերը, ծնկաչոք ու պաղատագին խնդրել է ամենագութ ու արդար Աստծուն՝ ներել մեղսաշատ ազգիս զավակների մոլորությունները, տարամերժ արարքները, բուժել հոգևոր ու մարմնավոր արատները: Եվ պատահական չէ, որ ժողովուրդը սրբացրել, աստվածացրել է Ռշտունիքի Նարեկա վանքում ապաշխարող ճգնավորին ու նրա «Ողբերգության մատյանը»:

Ահա այս և այլ պարագաներ նկատի ունենալով՝ իմաստասեր Աշոտ Պետրոսյանը «Նարեկը բժշկարան» (Բերձոր, 2002 թ.) նոր գրքում «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը հանգամանորեն քննել է նախ և առաջ որպես Աղոթամատյան:

Աշխատությայն այս վերնագիրը թվում է, թե մեզ տանելու է ժողովրդի մեջ Նարեկի բուժիչ հատկությունների մասին տարածում գտած ըմբռնումների, պատկերացումների հունով: Սակայն հեղինակը, չանտեսելով անշուշտ այդ պատկերացումները, առավել լայն ու գիտական-փիլիսոփայական հիմքի վրա է քննարկում խնդիրը՝ շեշտը դնելով հոգևորի շրջանակներում բարոյահոգեբանական ներգործության վրա, որը գործնականում այնքան արդյունավետ է, որքան մեծ ու խորն է «բուժվողի» հավատը, ինքնամաքրվելու հաստատակամությունը, որքան անկեղծորեն է նա հավատում գրքի զորությանը:

Մինչև բուն քննությանն անցնելը, Ա. Պետրոսյանը ճշտում է իր հայացքը քննարկվելիք նյութի նկատմամբ և հանգում այն եզրակացության, որ կրոնի ու իմաստասիրության միջև սերտ կապ կա, որը «հնարավորություն է տալիս հոգևոր մշակույթի այդ երկու տեսակներն իմաստազննել իբրև մեկ միասնական ասպարեզ», իբրև կրոնաիմաստասիրություն, որ աստվածաբանությունն «առավել է» մնացած բոլոր գիտություններից և ներառում է իմաստասիրական և բնագիտական մտքի ամբողջ հարստությունը:

Նարեկացու երկը, իբրև ամբողջություն, համարելով հոգևոր վարդապետություն, իմաստասիրական քննախոսություն, գեղարվեստական ստեղծագործություն և Աղոթամատյան ու Բժշկարան, նա այն գնահատում է իբրև ինքնաճանաչման լավագույն գրքերից մեկը՝ փրկության ծրագիր և միջոց, նաև ձրի բժշկարան բոլոր քրիստոնյա անեղծ հավա-

տացյալների համար, անստվեր լույսի ջերմություն, որի ճառագայթները թափանցում են մարդկանց հոգիները և չեզոքացնում ամեն ախտ ու չարություն:

Իր ծավալով գիրքը մեծ չէ, բայց տարողությամբ հարուստ է ու բովանդակալից, ասելիքը՝ շատ, ու թվում է, թե հորդահոս գաղափարների, մտքերի, խոհերի ու դիտարկումների համար գրքի էջերը սեղմ կաղապարներ են դարձել: Առաջինը, որ աչքի է զարնում, հեղինակի անսահման հավատը, սերն ու նվիրվածությունն է հանճարեղ Նարեկացուն ու Նարեկյան խոհին: Պարզապես, ինչպես մեծ մտածողը, աստվածաբանն ու բանաստեղծն է ընդունել և անվերապահորեն հավատալով խոնարհվել Աստվածային համապարփակ գոյության առջև, այնպես էլ գրքի հեղինակն է առիթն օգտագործել իր անսահման երախտիքն արտահայտելու Նարեկացու մեծության հանդեպ՝ փորձել մեկնել Նարեկյան այս կամ այն խոսքը, պատկերը և տողը: Այս խոնարհ հավատը, սակայն, կույր չէ, սահմանափակ մտքի անզորություն չէ, միանգամայն գիտակցված է ու հավասարակշռված, վերլուծական, իմաստաբանական մտքի ու մոտեցման վրա խարսխված հավատ է ու համոզմունք, որ համակում է ու մեծ մասամբ հավատ ներշնչում Նարեկյան ճշմարտությունների հեղինակային ընկալման հավաստիության հանդեպ:

Գիրքը տևական պրպտումների ու տքնաջան աշխատանքի արդյունք է, որի առանձին հատվածներ ժամանակին տպագրվել են տարբեր պարբերականներում: Հեղինակը Նարեկը դիտարկում է որպես իմաստասիրական, դավանաբանական երկ, քրիստոնեական սկզբունքների արծարծման ամենակատարյալ մարմնավորում:

Ա. Պետրոսյանը Նարեկը ներկայացնում է ոչ թե որպես նեղ, կենցաղային իմաստով բժշկարան, այլ բժշկարան իր բուն էությամբ. ով շփվում, հասկանում և ամենակարևորը՝ հավատում է Նարեկի ամենազորությանը, նա բուժվում է հոգեպես, հետևաբար և՝ ֆիզիկապես ու մարմնապես: Նարեկացին ոչ միայն բանաստեղծ է, իմաստասեր, բարոյախոս, աստվածաբան ու ներհուն քրիստոնյա՝ ամենավսեմ առումով, այլև Սուրբ է, իսկական Սուրբ, որին հայությունը պաշտել է ու պաշտում է, Սուրբ, որ «իր մեջ կրել է մարդկությունը և նրան առաջնորդել դեպի աստվածություն, դեպի աստվածացում»: Ազգի, հասարակության, պետության գործերին մերձ մարդ-անհատը պետք է ազնիվ լինի, մաքուր՝ Աստծու ու ժողովրդի առաջ, բաց ճակատով ու հոգով. ամեն շեղում ու խաթարում աղավաղում է նրա աստվածատիպ պատկերը, նրա էությունը, և նա դադարում է լայն ու վեհ իմաստով մարդ կոչվելուց:

Գրքում տարբեր ենթաբաժիններով արծարծված խնդիրների թվարկումն իսկ բավական է համոզվելու համար նրա բովանդակության նշանակալիության մասին. Աստվածատուր լույսի ջերմությունը, Նարեկի ըմբռնման դժվարությունները, Նարեկը՝ իմաստության խտարան, մարդը և Աստված. անսահմանի բնորոշումները, աստվածային հատկությունը մարդու կատարելացույց, Նարեկն իբրև աղոթագիրք. մեղսագիտակցությունն իբրև ինքնագիտակցության խորացում, Գրիգոր Նարեկացու անհատականությունը, զղջում և խոստովանություն, հավատը՝ սրբության միջոց, մեղքը և հիվանդությունը, անառարկայականի առարկայացումը, խոսքաբուժություն, երաժշտաբուժություն, Նարեկի ցանկերը և այլն:

Ա. Պետրոսյանն այն կարծիքին է, որ «Մատյանը ձիգ դարերի ընթացքում էական փոփոխությունների չի ենթարկվել. մեզ է հասել այն տեսքով ու բովանդակությամբ, ինչպես երկնել է հեղինակը»:

Շատ քչերին է հաջողվել խորապես ընկալել ու յուրացնել Նարեկի իմաստությունները: Այսօր էլ օրախնդիր է Նարեկի ուսուցումն ու տարածումը, նրա ոգու ու գաղափարների յուրացումը՝ իբրև կատարելագործման, հավատքի անդավաճան աղբյուր, գեղագիտական դաստիարակության անփոխարինելի միջոց:

Ա. Պետրոսյանի կարևոր եզրահանգումներից մեկն էլ այն է, որ «Նարեկացու հետ հեշտանում է բարեպաշտորեն ապրելը», որ նա «բարեպաշտորեն ապրելու ճանապարհ է բացում», որ «Նարեկի մեջ մենք գտնում ենք մեզ» և նրա հետ խոստովանում ենք մեր մեղքերն ու բուժվում: Սա այն դեպքում սակայն, երբ ժողովրդի լայն խավերը գոնե մասամբ հաղորդակցվեն Նարեկյան պատգամներին ու աղոթքներին: Ցավ է խոստովանել, որ Նարեկի պես անստգյուտ գանձը, հազարամյա ճանապարհ անցնելով և համազգային ճանաչման արժանանալով հանդերձ, չի դարձել ամենօրյա հոգևոր ճաշակում: Եթե դա կարելի է բացատրել անցյալում մեր հայրենիքի ծանր ու անհաստատ վիճակով, ապա անհասկանալի և անթույլատրելի է նման վիճակը մեր օրերում:

Աստվածային կամքով ճակատագիրը մեզ ավանդել է Նարեկ, բայց չկա Նարեկի հետևողական, ամենօրյա տքնաջան ուսուցում ըստ պատշաճի: Նույնը Կոմիտասյան երաժշտությանն է վերաբերում: Նույնիսկ երաժշտական հաստատություններում այն իր արժանի տեղը չունի: Էլ ուր մնաց ժողովրդի հոգևոր ու բարոյական կրթությունը: Ինչպե՞ս բարեպաշտորեն կրթվել ու ապրել, երբ ամբողջ հոգևոր մշակույթը գիտակցաբար կամ անգիտորեն մղվում է դեպի նյութապաշտություն, երբ վճռական քայլեր չեն արվում՝ արմատախիլ անելու հայորդյաց հոգու ու գիտակցության մեջ դարերով կուտակված հոռի հատկություններն ու բարքերը, որպեսզի աստիճանաբար ստեղծվի հոգևոր դաշտը՝ բարեկիրթ մարդ ու երկրի քաղաքացի կերտելու համար: Նման հոգևոր դաշտ կարելի է ստեղծել միայն ու միայն Նարեկացու, Կոմիտասի և մեր մյուս մեծերի հոգևոր ժառանգությունը յուրացնելու ու տարածելու և հոգեպես կատարելագործվելու միջոցով:

Այս է Աշոտ Պետրոսյանի «Նարեկը՝ բժշկարան» արժեքավոր աշխատության գլխավոր արժանիքը:

# ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*ԷՄՄԱ ԿՈՐԽՄԱԶՅԱՆ*
*Արվեստագիտության դոկտոր*

## ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ XIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ XIV ԴԱՐԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկսած XIII դարի կեսերից մինչև XV դարի սկիզբը, այսինքն մինչև Երզնկայի գրավումը օսմանցիների կողմից, Երզնկան, Դարանաղի ու Եկեղյաց գավառները, որոշ ընդմիջումներով, կառավարվում էին հայ իշխանների կողմից, որը մեծապես նպաստում էր նրանց քաղաքական, տնտեսական և մշակութային վերելքին[1]:

Երզնկայի և Եկեղյաց գավառի առաջին հայ կառավարիչներն էին Սարգիս արքեպիսկոպոսը և նրա որդին՝ Հովհաննես իշխանը[*]: Սարգիս արքեպիսկոպոսին վերապահված էր ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ կյանքի կառավարումը: Այս շրջանում ծավալվեցին աշխույժ շինարարական աշխատանքներ, վերականգնվեցին քաղաքներն ու ավանները, եկեղեցիներն ու վանքերը: Ծաղկում էր ապրում ոչ միայն ճարտարապետությունը, այլև գրավոր մշակույթը՝ եկեղեցիներին ու վանքերին կից գործում էին դպրոցներ, գրչատներ, իսկ նահանգի հոգևոր կենտրոնում, Երզնկայի մոտ գտնվող Ավագ վանքում՝ բարձրագույն հոգևոր հաստատություն՝ ճեմարան (համալսարան): Իր նշանակությամբ այն համեմատվում էր Գլաձորի համալսարանի հետ[2]: Այս ժամանակաշրջանը Հ. Քյուրտյանը անվանում է ոչ միայն Երզնկա քաղաքի, այլև ամբողջ Եկեղյաց գավառի հոգևոր մշակույթի զարգացման ոսկեդարը[3]:

Երզնկայի Ավագ վանքը, որը անվանվում է նաև Գրիգոր Լուսավորչի մենաստան, ըստ ավանդության, 35 թ. հիմնել էր Թադեոս առաքյալը: IV դարում վանքի կառույցների մի մասը վերանորոգվել են Գրիգոր Լուսավորչի ջանքերով[4]: Այն գտնվում է Սեպուհ լեռան ստորոտին, Դարանաղի և Եկեղյաց գավառների սահմանում, մերձ Երզնկա քաղաքին: XII դարում այստեղ եղել է եպիսկոպոսական աթոռ և, բնականաբար, արդեն այդ ժամանակ գործում էր նաև հոգևոր դպրոցն ու գրչատունը[5]: Մեզ են հասել Ավագ վանքում գրված ու նկարազարդված մի շարք մատյաններ և այլ արժեքավոր ձեռագրեր, այդ թվում

---

[1] Է. Բաղդասարյան, Երզնկայի հայկական իշխանությունը XIII-XV դարերում, «Լրաբեր», 1970, N 2, էջ 36-44: Նույնի, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1967:

[*] Ըստ երևույթին Սարգիս եպիսկոպոսը սկզբնապես ամուսնացյալ քահանա է եղել:

[2] Ս. Տեր-Հակոբյան. «Լրաբեր», Էջմիածին, 1921, էջ 227:

[3] Հ. Քյուրտյան, Երիզա և Եկեղյաց գավառ, էջ 151:

[4] Գ. Հովսեփյան, Համառոտ զեկուցում հայ մանրանկարչությանը նվիրված մեր աշխատանքի մասին, «Անի», հտ. 12, Բեյրութ, 1948, էջ 618-625:

[5] Նույն տեղում:

այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են Մշո Ճառընտիրը (1202-1205 թթ.), Երզնկայի Աստվածաշունչը (1269 թ.) և այլն:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում (XIII-XIV դդ.), կապված մշակույթի որոշակի աշխուժացման հետ, նոր զարգացում է ապրում նաև արվեստը, մասնավորապես մանրանկարչությունը:

Քաղաքային կյանքի վերելքի պայմաններում ձեռագրերի պատվիրատուներն ու գրչության արվեստի հովանավորները դառնում են գերազանցապես միջին խավի ներկայացուցիչներ՝ մեծահարուստ քաղաքացիներ, վաճառականներ, ոչ բարձրաստիճան հոգևորականներ, ունևոր գյուղացիներ: Ուստի արվեստն արտացոլում էր ավելի շատ այդ միջին խավի գեղագիտական ճաշակն ու պահանջները:

Խոսելով XIII դարում այդ նոր քաղաքային կյանքի և դրան համապատասխանող արվեստի զարգացման մասին, Լ. Դուռնովոն գրում է. «Առաջացած նոր դասի շերտերը՝ քաղաքացիները, առևտրականները, պահանջ ունեին ավելի կենսունակ, ավելի աշխարհիկ արվեստի»[6]: Նրանց անհրաժեշտ էին ներկայացվող պատկերների ավելի հետաքրքրական, աշխույժ տարբերակներ: Լ. Դուռնովոյի խոսքերը թեև վերաբերում են Անիում նույն ժամանակաշրջանում զարգացող արվեստի բնութագրմանը, բայց նրանք հավասարապես համապատասխանում են տվյալ դարաշրջանում զարգացող քաղաքային արվեստին առհասարակ:

Բարձր Հայքի XIII-XIV դդ. նկարազարդ ձեռագրերը նույնպես բնորոշվում են այդ նոր հատկանիշներով՝ թեմաների ընդլայնմամբ, մանրամասների բազմազանությամբ, կերպարների նորովի, ավելի կենսունակ ձևերով ներկայացմամբ: Պատահական չէ, որ այդ ժամանակ հայկական մանրանկարչության մեջ իր արձագանքն է գտնում պալեոլոգյան արվեստը՝ իր ավելի ազատ արտահայտչամիջոցներով և նկարահղանակի ավելի ռեալիստական բնույթով: Որոշակի դեր է խաղում և կիլիկյան արվեստի ազդեցությունը:

Միջնադարյան արվեստի ոճական այդ տարբեր ուղղությունների և տեղական հարուստ ավանդույթների հիման վրա ձևավորվեց մի նոր ոճ, որը սկզբնապես ի հայտ եկավ Պատմական Հայաստանի հյուսիս-արևմտյան գրչատներում, մասնավորապես Բարձր Հայքում, իսկ հետո, այս նահանգից դեպի Ղրիմ գաղթած բնակչության մի ստվար հատվածի ազդեցությամբ, իր արտացոլումը գտավ նաև ղրիմահայ մանրանկարչության մեջ[7]:

Որոշ ձեռագրերում յուրօրինակ կերպով համադրվում են մշակման երկու տարբեր եղանակներ՝ գրաֆիկական և գեղանկարչական, խորանները, տիտղոսաթերթերը, լուսանցազարդերն ու զարդատառերը կատարվում էին միագույն /մոնոխրոմ/, գրաֆիկական եղանակով, իսկ ավետարանիչների պատկերները և սյուժետային տեսարանները՝ բազմագույն գեղանկարչության միջոցներով:

Բարձր Հայքի ձեռագրերի որոշ մասը հարդարված է միայն գրաֆիկական զարդերով: Երբեմն այդպիսի ձեռագրերն ունենում են նաև մոնոխրոմ եղանակով կատարված սյուժետային նկարներ: Այդ յուրատեսակ, գրաֆիկական ոճով կատարված մանրանկարների

---

[6] Л. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, с. 85. Того же автора, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, ст. 249.

[7] Э. Коркмазян, Армянская миниатюра Крыма, Ереван, 1978.



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4

հնագույն օրինակները հայտնի են X-XI դարերից: Սակայն եթե հին ձեռագրերում այդ նկարներն արվում էին բավական ազատ, թեև որոշ չափով պարզունակ նկարահղանակով, ժամանակի ընթացքում մշակվում է պատկերման յուրահատուկ մի ոճ, որը բնորոշվում է կայուն համակարգով: Այդ համակարգի հիմնական տարրը բուսական զարդանխն է կազմված մահիկաձև սրածայր տերևներից, եռատերևներից, արմավիկներից, զուգակցված հյուսքազարդերի ու, երբեմն, ոլորապտույտ ցողունների հետ:



Նկար 1



Նկար 2

Բուսական այդ պարզ տարրերից ձևավորվում են ավելի բարդ և բազմազան հորինվածքներ, որոնցից կազմվում են լուսանցազարդերը, տիտղոսաթերթերի ու խորանների գլխազարդերը՝ զանազան տարբերակներով (նկ. 1–2): Վերջիններս, մշակվելով ու զարգանալով, ստանում են հաստատուն, կանոնացված տեսք և կրկնվում բազմազան ձևերով: Օրնամենտալ այդ զարդերը ստանում են մեծ տարածում ինչպես մանրանկարչության մեջ, այնպես էլ ճարտարապետական դեկորում և կիրառական արվեստում[8]: Գեղարվեստական տարբեր դպրոցների հուշարձաններում այդ զարդաձևերը թեև ներկայացվում են արտահայտչական տարբեր միջոցներով, սակայն միավորվում են այն ընդհանուր ոգով, որով բնութագրվում է հայկական արվեստն առհասարակ:

[8] Н. Токарский, Очерки истории зодчества Армении. М.-Л., 1950, ст. 226.

Նկարագրված օրնամենտալ հարդարանքի պահպանված մանրանկարչական հնագույն օրինակները (X-XI դդ.) հայտնի են մեզ, ինչպես նշվեց, հյուսիս-արևմտյան Հայաստանի գրչակենտրոններում ստեղծված մատյաններից: Լայն տարածում ստացած այդ զարդերի մասին Ա. Յակոբսոնը գրում է. «...այդ տիպի օրնամենտը Մերձավոր Արևելքում XII-XIII դդ. դառնում է շատ տարածված, հատկապես Հայաստանի ճարտարապետական դեկորում: Հենց հայկական վարպետների ձեռքով այդ օրնամենտալ մոտիվը հասավ զարգացման բարձր մակարդակի, ինչում համոզում են մեզ այդ շրջանի բազմաթիվ հայկական հուշարձանները»[9]: Հեղինակը նշում է նաև, որ ռուսական արվեստում այդպիսի զարդամոտիվների ի հայտ գալը պայմանավորված էր հայկական արվեստի ազդեցությամբ[10]:

Բարձր Հայքի ձեռագրերի օրնամենտալ հարդարանքը բնորոշվում է ոչ միայն զարդաձևերի առանձնահատկություններով, այլև դրանց յուրատեսակ ոճավորվածությամբ, մի հանգամանք, որով պայմանավորվում է դրանց տեղական, ազգային նկարագիրը:

Տվյալ նահանգում ստեղծած ձեռագրերի շարքում կան օրինակներ, որոնցում կիրառված են նկարազարդման երկու եղանակներ՝ գրաֆիկական և գեղանկարչական. բոլոր օրնամենտալ զարդերը (խորաններում, անվանաթերթերում, լուսանցքներում) կատարվում էին միագույն գծապատկերներով, իսկ կերպարային, թեմատիկ նկարները՝ գեղանկարչական արվեստի միջոցներով: Այդ տիպի նկարազարդման առաջ գալը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Երզնկայի ու Կարինի XIII դ. մի քանի Ավետարաններ, հարդարված միայն գրաֆիկական զարդերով, մի քանի տասնյակ տարի անց լրացվել էին ավետարանիչների պատկերներով ու թեմատիկ նկարներով, կատարված բազմագույն, գեղանկարչական եղանակով: Երբ այդ ձեռագրերը հետագայում ընդօրինակվում էին, դրանց օրինակով նոր ստեղծված մատյանները հարդարվում էին այս երկու նկարաեղանակներով:

Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում Բարձր Հայքի ձեռագրերի պատկերային մանրանկարները: Տեղական վարպետները, ընկալելով ժամանակի գեղանկարչական արվեստի նվաճումները (կիլիկյան և պալեոլոգյան նկարչության ավանդույթները) և ելնելով միաժամանակ իրենց տեղական նախասիրություններից ու գեղագիտական ըմբռնումներից, ստեղծեցին, ինչպես նշեցինք, մանրանկարչական մի նոր ոճ, որն առավել ցայտուն է արտահայտվել Մատենադարանում պահվող XIV դարում նկարազարդված մի խումբ ձեռագրերում՝ N 7630, 7599, 7645, 2653, 4080 և այլն:

Այդ ձեռագրերն առանձնանում են նաև իրենց ներկապնակով՝ հագեցած և միաժամանակ մի փոքր խամրած գունաշարով: Նախընտրություն է տրվում կերպարների ան-փաս, հանդիսավոր կեցվածքով պատկերելու ձևին: Մեծ ուշադրություն է հատկացվում նրանց հագուստներին, մշակված լայն, գեղեցիկ, ազատ իջնող ծալքերով: Որոշակի միտում է նկատվում և՛ կերպարները, և՛ առարկաները ներկայացնել ծավալային մշակմամբ: Ճիշտ է, այն կատարվում էր ոչ թե լույս ու ստվերի, այլ գունային էֆեկտների միջոցներով, որոնք

---

[9] А. Якобсон, Художественные связи Московской Руси с Закавказьем и Ближним Востоком в 16-ом веке, "Древности Московского Кремля ", Москва, 1971, ст. 232.

[10] Там же.

քնորոշ էին միջնադարյան արվեստին: Այնուամենայնիվ, նկատվում է ավելի ռեալ կերպարներ ստեղծելու միտումը[11]:

Նման զարգացած, բարձրարվեստ նկարչությունն անշուշտ վկայում է ժամանակի հասարակության գեղագիտական բարձր պահանջների մասին: Հետաքրքիր են փիլիսոփայական և այլ բնույթի երկերում, հատկապես խրատական գրականության մեջ. արվեստի անհրաժեշտության, դրա գնահատման և նշանակության մասին տեղ գտած մտքերը: Այսպես. օրինակ, XIII դարի հանրահայտ եկեղեցական գործիչ՝ Հովհաննես Երզնկացին, իր խրատներից մեկում աշխատել է բնութագրել արվեստը. «Եւ զինչ է արուեստն, քան թէ յառաջախնամ տեսութեամբ և գիտութեամբ իմաստութեանն առնել զամենայն ինչ ի ժամանակի իւրում և ըստ պատշաճի, որպէս և ասէ իմաստունն ամենայն ի ժամանակէ և ժամանակ ամենայն իրի…»[12]: Է. Բաղդասարյանն իրավացիորեն եզրակացնում է, որ «…Երզընկացու ձևակերպումը վերաբերում է և՛ նկարչությանը, և՛ գեղեցիկ խոսքին, գեղեցիկ ստեղծագործությանը» առհասարակ[13]:

Բարձր Հայքի մանրանկարչական արվեստի XIII-XIV դարերում այդպիսի արտակարգ զարգացումն անշուշտ արտացոլումն էր նահանգի մշակույթի ընդհանուր վերելքի. որի մասին մենք կարող ենք դատել այսօր, հիմնականում, հրաշքով միայն պահպանված ձեռագրական նյութի հիման վրա:

## ՆԿԱՐՆԵՐ

Նկար 1 Մատթեոսի Ավետարանի անվանաթերթ, թ. 13ա,
Ավետարան, Մատենադարան, ձեռ. 4059
Նկար 2 Խորան, թ. 10ա, Ավետարան, Մատենադարան, ձեռ. 7630

## ԳՈՒՆԱՎՈՐ ՆԿԱՐՆԵՐ

Նկար 1 Մատթեոս ավետարանիչ, թ. 19բ, Ավետարան, Մատենադարան, ձեռ. 7630
Նկար 2 Հովհաննես ավետարանիչ, թ. 217բ, Ավետարան, Մատենադարան, ձեռ. 7599
Նկար 3 Ավետումն Զաքարիայի, թ. 154ա, Ավետարան, Մատենադարան, ձեռ. 7645
Նկար 4 Մարկոս ավետարանիչ, թ. 98բ, Ավետարան, Մատենադարան, ձեռ. 7645

---

[11] Պատկերվող կերպարների և առարկաների ծավալային մշակումը, նոր արտահայտամիջոցներով ավելի ռեալիստական կերպարներ ստեղծելու միտումը նորույթ էր միջնադարյան արվեստում: Այդ երևույթը կապված էր բյուզանդական արվեստի պալեոլոգյան ժամանակաշրջանի հետ, երբ այն ապրում էր վերելքի նոր շրջան: Սկսված մշակութային զարթոնքը ընթանում էր անտիկ արվեստի ու մշակույթի ավանդների հիմքի վրա: Այդ ավելի կենսունակ արվեստը լայն արձագանք գտավ մի շարք քրիստոնեական երկրների արվեստում, այդ թվում նաև Հայաստանում: Այդ երևույթի մասին խոսել են մի շարք մասնագետներ. Տես А. Свирин, Миниатюра древней Армении, М-Л, 1939. с.108. В. Лазарев, История византийской живописи, Москва, 1947, с. 250. Л. Дурново, Древнеармянская миниатюра, Ереван, 1952, ст. 76. Տես նաև վերևում նշված մեր աշխատանքը, էջ 52:

[12] Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 130:

[13] Նույն տեղում , էջ 131:

***Տեսակետ***

*ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐՅԱՆ*
*Արվեստագիտության թեկնածու*

# ՄԻ ԴՐՎԱԳ ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Մարաղայի իլխանության Օրտուբազար ավանում Ավագ ծաղկողի կողմից նկարազարդված Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 7650) մանրանկարների շարքում (թվով 16) Հոգեգալստյան և Վերջին դատաստանի պատկերների միջև ամբողջադիր էջով գտնվում է մի մանրանկար, որն իր պատկերագրությամբ հիշեցնում է Բարեխոսությունը: Իրականում, սակայն, այն հեռու է վերջինիս տարածված դասական տիպից: Այս սյուժեի շրջանակներում հիմնականում հայտնի ձևը, գոնե մինչև 14-րդ դար, ներառում է Հիսուս Քրիստոսի, Մարիամ Աստվածածնի, Հովհաննես Մկրտչի կերպարները:

Դրա փոխարեն այստեղ ներկայացված են միայն Փրկիչն ու Տիրամայրը: Նրանք պատկերված են դեմ դիմաց, կանգնած գրեթե հավասար բարձրությունների վրա: Փրկիչը պատվանդանի վրա է, որը թվում է, թե երկնային ու երկրային ոլորտները զատող սահմանն է, որից տարածվում են լույսի ճառագայթներ երկրի վրա: Մինչդեռ Տիրամայրը երկրի վրա է, լեռան գագաթին, որն իր հերթին խորհրդանշում է դեպի երկինք հայող երկրային բարձրագույն կետը[1]: Աստվածամոր ձախ ձեռքը խնդրարկուին հատուկ կեցվածքով ուղղված է դեպի Փրկիչը, իսկ աջով մատնացույց է անում մանրանկարի վարի մասում, լուսանցքի մոտ պատկերված խմբանկարը: Հիսուսի օրհնությամբ պարզված Աջը նույնպես ուղղված է դեպի վար: Ակնհայտ է ուրեմն, որ Տիրամոր և Փրկչի շարժումների ու հայացքների հանգուցակետը խմբանկարն է:

Նկարիչը հավանաբար ցանկացել է շեշտել, որ երկրի վրա կատարվող կարևորագույն գործողությունների ճակատագիրը տնօրինվում է Հիսուսի կողմից: Բայց պակաս կարևոր չէ նաև Աստվածամոր դերը: Այս հանգամանքը հատկապես ընդգծվում էր հետպատկերամարտյան շրջանի բյուզանդական հեղինակների, ինչպես օրինակ՝ Անդրեաս Կրետացու, Գերմանոս Պատրիարքի, Թեոդորոս Ստուդիտի, Պատրիարք Նիկիփորոսի կողմից[2]: Սակայն սա ամենևին էլ չի նշանակում, որ պատկերամարտությունից առաջ Բյուզանդիա-

[1] Այս մանրամասնի մեջ արդեն ի հայտ է գալիս XIV դարի եվրոպական արվեստին (գոթական) հատուկ մի նրբերանգ, երբ ստեղծագործողին հետաքրքրում էր «հավատացյալի հոգու սուբյեկտիվ վիճակը, երբ հոգին երկրային ոլորտից վերընթաց է ապրում դեպի երկնայինը». **А. Лосев**, Эстетика возраждении.

[2] S. Der-Nersessian, Two images of the Virgin in the Dumbarton Oaks Collection, Dumbarton Oaks papers N 14. p. 74-75.

յում Աստվածամայրը նվազ պաշտամունք ուներ: Ամենասրբուհի Կույսի պատկերը կարևոր տեղ էր զբաղեցնում եկեղեցական արվեստում[3]:

Խնդրարկուի տիպը ժամանակի ընթացքի մեջ, իհարկե, կրում է որոշ պատկերագրական փոփոխություններ: Այդ ավանդույթն իր ծաղկման շրջանն է ապրում հատկապես 12-14-րդ դարերում, Մայր Հայաստանում փոքր թագավորությունների ստեղծման շրջանում և Կիլիկյան թագավորությունում: 1329 թվականին նկարազարդված ձեռագրի խնդրարկուն հիշեցնում է Գլաձորի հայտնի նկարիչ՝ Թորոս Տարոնացու 1311 թվականին նկարազարդած ձեռագիրը: Երկուսում էլ նույն լեռնային բնանկարն է, նույն դիրքերով կանգնած Քրիստոսը և Աստվածամայրը. Տիրամայրն իր Միածին Որդուց գթություն է հայցում նրա ոտքերի մոտ ծնկաչոք նկարչի համար:



Ավագի ստեղծած նկարը սակայն շատ ավելի բազմաշերտ է ու խորիմաստ: Երկուսն էլ իրենց պատկերագրական տիպով հիշեցնում են Կահրիե Ջամիի 14-րդ դարի սկզբի եկեղեցու ներքին հարդարանքում տեղ գտած խնդրարկուի պատկերը: Ինչպես այնտեղ, այնպես էլ հայկական մանրանկարներում խնդրարկուի հորինվածքն ավելին է, քան միայն խնդրարկուն: Այն մի հիշեցում է ապրող ու գործող պատմական անձանց մասին: Ավագի ձեռագրում միայն ձախ կողմի ծնկաչոք անձնավորությունն է, որ հայտնի է. նրա գլխավերևում կա «Աղյան ստացող սուրբ Աւետարանիս» մակագրությունը: Բայց ո՞վ է նրա՝ դեպի Քրիստոսը մեկնած ձեռքերի մեջ պահված մանուկը, ո՞րն է նրա դերը. և վերջապես ո՞վ է ու ինչո՞ւ է այստեղ հայտնվել Աղյանի դիմաց ծնկաչոք դիրքով պատկերված ճերմակազգեստ անձնավորությունը: Հանուն ո՞ւմ կամ ինչի՞ է հայցում Քրիստոսի բարեգթությունը Տիրամայրը:

Մինչ այժմ այս խմբանկարը մեկնաբանվել է որպես երկու անձանց՝ պատվիրատուի ու նկարչի դիմանկարներ՝ զանց առնելով թերևս ամենակարևոր մանրամասը՝ մանուկը: Մանրանկարի դաշտից դուրս, վարի շրջանակի արտաքին մասում, կա մի մակագրություն. «զԱւագ դպիր նկարող Ս. Աւետարանիս աղաչեմ յիշել ի Տր Քս և ի մայր նորա Սբ. և Ած զձեզ յիշէ, ամէն»:

Ծաղկողների կողմից գրված նման մակագրությունները տարածված էին հայկական մանրանկարչության մեջ 13-14-րդ դարերում: Սակայն դրանք հիմք չեն հանդիսանում նույնացնելու ծաղկողին նրա վրձնած պատկերատիպերից (պերսոնաժներից) որևէ մեկի հետ:

---

[3] Op. cit, p. 73.

Նման մակագրություններ կան և 1329 թ. ընդօրինակված ձեռագրում՝ ավետարանիչների պատկերների տակ, շրջանակից դուրս: Ի վերջո, պատկերված անձնավորության դիրքը, հագուստը, թեին գցած գոտին ու մանավանդ մասամբ հերակտրած մազերը[4] թելադրում են առաջ քաշել բոլորովին այլ վարկած:

Արդ, անդրադառնանք ձեռագրի հիշատակարանին: Այստեղ ասվում է. «Բարեպաշտ ու մաքուր կուսակրոն մանկտաւագ Յովհաննէս հոգևոր հայր գոլով ստացողի Սուրբ Աւետարանիս Ասլանի»: Կարելի է ենթադրել, որ Ասլանի դիմացը նստած կուսակրոնի հագուստով անձնավորությունն իրոք Հովհաննես մանկտավագն է: Նույն անձնավորությունն Ասլանի հետ նորից հիշատակվում է 1335 թվականին ընդօրինակված (Մատ. N 2776) ժողովածուում: Այս ձեռագրում, ի շարս հակամիարարական այլևայլ կարևոր բնագրերի, զետեղված է նաև Եսայի Նչեցու Շրջաբերական թուղթը՝ հասցեագրված միարարական շարժման հայտնի հակառակորդ, Թավրիզի եպիսկոպոս Մատթեոսին ու հայ համայնքին: Կա և մեզ համար շատ կարևոր նշանակություն ունեցող մի ստեղծագործություն ընդդեմ ունիթոռականների: Այն կրում է հետևյալ վերնագիրը. «Նուաստ Յոհանիսի արարեալ երգս ոտանաւոր. ի դեկտեմբեր ամսոյն եղեալ բան խաւսեալ ընդդէմ երկաբնակացն դաւանութիւն ուղղափառ, ըստ խնդրոյ հոգևոր եղբաւր մերոյ Ասլանի և այլ քրիստոնէիցս Թաւրիժի, զոր սիրով խնդրեալ»: Ահա մի քառյակ այդ բանաստեղծությունից.

Յերես անկեալ զձեզ աղաչեմ,
Յիշման առնել զիս արժանի,
Զեղբայր Ասլան փառաց ի լի
Եւ զայլ եղբայրսդ Թաւրիժի:

Ակնհայտ է, որ տաղասաց Հովհաննես Տարբերունին խոսում է մի «Եղբայրության» մասին, որի անդամներից են «եղբայր» Ասլանը, ինքը՝ Տարբերունին, որ նույնպես արժանի է «յիշման առնել»: Գրեթե հաստատորեն կարելի է ասել, որ 1335 թ. ձեռագրում զետեղված տաղի հեղինակ, երգասաց Հովհաննես Տարբերունին նույն ինքը՝ 1329 թ. Ավետարանում հիշատակված մանկտավագ կուսակրոն Հովհաննեսն է. իսկ Ասլանը, որ 1329 թվականին հիշվում է որպես Հովհաննեսի հոգեորդի, 1335 թվականին արդեն «եղբայր» կոչումին արժանացած նույն անձնավորությունն է[5]: Սակայն ի՞նչ «եղբայրություն» է դա, որի անդամներին ակնարկում է Հովհաննես Տարբերունին, գործունեության ի՞նչ ծրագիր ու նպատակներ ուներ այն:

Մոտ 50 տարի առաջ ակադեմիկոս Լևոն Խաչիկյանն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց հայոց միջնադարյան հասարակական կյանքի ուսումնասիրման

---

[4] Այս մանրամասնի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Վարդան Դևրիկյանը, որի համար նրան հայտնում ենք մեր շնորհակալությունը: Նոր բառգիրք Հայկազեան լեզուի ի Վենետիկ. ի տպարանի սրբոյն Ղազարու, յամին 1837, էջ 93:

[5] Այսպիսով հաստատվում է Գարեգին Հովսեփյանի այն ենթադրությունը, որ 1329 թ. ձեռագրի հիշատակարանում նշված Ասլանը նույնն է 1335 թվականի ժողովածուի պատվիրատու Ասլան Դավրիժեցու հետ: Տե՛ս Գ. Հովսեփյան, Մխիթար Անեցի գրիչ և նկարիչ. «Հասկ Հայագիտական», 1946 թ., էջ 200:

համար խիստ կարևոր «Եղբայրությունների» և հատկապես Երզնկայի Եղբայրությանը վերաբերող նյութերը և կանոնադրության խնդիրը[6]: Ի թիվս այլ քաղաքների՝ Անի, Վան, Կարին, ուր գոյություն են ունեցել «եղբայրություններ», Լ. Խաչիկյանը հիշում է նաև Մարաղայի իլխանության Սուլթանիե քաղաքը, որից ոչ հեռու Օրտուբազար ավանում, ուր սովորաբար տեղակայվում էր թաթարական զորքը, գրվել է խնդրո առարկա ձեռագիրը:

Հայոց միջնադարի մեծ գիտակ, խորագետ ուսումնասիրող Լ. Խաչիկյանի այն կարծիքը, որ Երզնկայի «Եղբայրությունը» եղել է լոկ համքարություն, այսինքն՝ բացառապես մասնագիտական հիմունքներով իրար հետ կապված անդամների արհեստակցական միություն, այսօր, նոր ուսումնասիրությունների լույսի ներքո, թերևս, կարելի է վերանայել: ինչպես հայտնի է, Երզնկայի Եղբայրության կանոնադրությունը «Սահման և կանոնք միաբանութեան եղբարց, որք աստուածային սիրովն միաբանեցան յեղբայրութիւն միմեանց ի մայրաքաղաքս, որ կոչի Եզնկայ, ի թուիս ՉԻԹ»[7], որ գրվել է եկեղեցական նշանավոր գործիչ և հեղինակ Հովհաննես Պլուզ-Երզնկացու կողմից, ամենայն հավանականությամբ բավական երկար ժամանակ, համենայն դեպս մինչև 14-րդ դարի կեսերը, ուղեցույց է հանդիսացել հայկական մյուս եղբայրությունների համար:

Իր ձևի մեջ լինելով բավականին ճկուն մի գրվածք, այն կարծես թե հիմնականում ծառայել է կազմակերպչական ու բարոյական խնդիրների հստակեցմանը: Համենայն դեպս բնագիրն առիթ չի տալիս «Եղբայրությունը» անվերապահորեն բնորոշելու որպես համքարություն[8]: Որոշ ժամանակ անց Պլուզը նորից անդրադառնում է կանոնադրությանը՝ ստեղծելով հավելյալ «Կրկին կանոնք և խրատք տղայահասակ մանկանց աշխարհականաց» գործը, ուր այս անգամ արդեն շատ ավելի պարզ գրում է եղբայրությանն անդամակցելու կարգի, նորընծային շնորհվող նշանակների, դրանց խորհրդանշական իմաստի, նորընծա-երեց անդամներ հարաբերության մասին:

Հատկապես այս երկրորդ գրվածքը հաջորդումների հստակությամբ, որոշակի, կարծես վաղուց ի վեր հաստատուն դարձած բարոյական հիմնախնդիրների առկայությամբ հուշում է, որ երկու կանոնադրություններն էլ պետք է որ ազդված լինեին մեկ այլ, հավանաբար օտար մի սկզբնաղբյուրից: Սրա ապացույցն է նաև այն, որ հայ իրականության մեջ Երզնկայի «Եղբայրությունից» առաջ ավելի վաղ նման միաբանություններ որևէ տեղ փաստված չեն: Չենք հանդիպում նույնիսկ «Եղբայր» բառի գործածությանը հոգևոր իմաստով[9]: Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ պատմում է երիտասարդների մի խմբի մասին, որոնք մի քարավանով ձուկ էին տեղափոխում Անտիոք: Այս կապակ-

[6] Լ. Խաչիկյան. 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրության» մասին. ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր. 1951 թ., N 12: Նույնի Երզնկա քաղաքի «Եղբարց միութեան» կանոնադրությունը. Բանբեր Մատենադարանի, թիվ 6, 1962 թ.:

[7] Է. Բաղդասարյան. Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 221-239:

[8] Նույն կարծիքին է նաև հայ-արաբական մշակութային հարաբերությունների լրջմիտ ուսումնասիրող Սեդա Պարսումյան-Տատոյանն իր «Հայ-Արաբական մշակութային յարաբերութեանց պատմութենէն. ԺԳ դար. Յովհաննէս Պլուզ Երզնկացիի «Ի տաճկաց իմաստասիրաց»-ը եւ իմաստասիրական արձակը իսլամական աղբիւրներուն լոյսին տակ» աշխատասիրության մեջ: Բեյրութ, 1991, էջ 165:

[9] Նույնը՝ էջ 161:

ցությամբ առաջին անգամ գործածվում է «Մանկտավագ» բառը: Դժվար է ասել, թե այդ երիտասարդները եղել են որևէ «եղբայրության» անդամներ, թե պարզապես քարավանն ուղեկցող գործունյա երիտասարդներ: Նման «մանկտիական» կազմակերպություններ կային 12-րդ դարում՝ Վանում և Անիում[10]:

Այլ էր Երզնկայի պարագան, մինչ Երզնկացու «կանոնները» այնտեղ հավանաբար նախապես ստեղծվել էր մի «Եղբայրություն» և Հովհաննես Երզնկացին Գրիգոր Սանահնեցի վարդապետի խնդրանքով փորձել է կանոնակարգել նրա գործունեությունը, հաղորդել դրան քրիստոնեական-բարոյական ուղղվածություն: Այդ մասին է վկայում նաև արդեն գոյություն ունեցող եղբայրության «մանկտավագ» Հակոբի խնդրանքով գրված բանաստեղծությունը, ուր Երզնկացին հորդորում է Հակոբին՝ ապաշխարել գործած մեղքերի համար և վերադառնալ մաքրակենցաղ կյանքի:

Ուսումնասիրության առարկա մանրանկարն իր մանրամասներով զուգահեռ չունի հայ արվեստի շրջանակներում: Այս իմաստով խիստ հետաքրքիր է ու նույնիսկ անհրաժեշտ մի հայացք նետել 10-13-րդ դարերի Փոքր Ասիայի ու Արաբական խալիֆաթի երկրների հասարակական կյանքի վրա:

Արաբների 200-ամյա ներկայությունը Հայաստանում չէր կարող անհետ անցնել ո՛չ Հայաստանի պատմության, ո՛չ էլ մշակույթի համար: Գիտության և մշակույթի նկատմամբ որոշակի հետաքրքրություն ցուցաբերող արաբները անմասն չէին հին և նոր գիտական մտքի ձեռքբերումներից: Սակայն, դժբախտաբար, հայ-արաբական հարաբերությունները ո՛չ արվեստի, ո՛չ էլ գիտության ասպարեզում համակողմանի ուսումնասիրված չեն: Մի հետաքրքիր տեղեկություն, պահպանված պատմիչների մոտ և լույս աշխարհ բերված մեծանուն գիտնական Նիկողայոս Ադոնցի կողմից, խիստ կարևորում է այդ հարաբերությունները երկուստեք: Այն վերաբերում է Բյուզանդիայում ապրող հայազգի մեծ փիլիսոփա Լևոնի և Մամուն ամիրապետի նամակագրությանը[11]: Մինչ այսօր ասպարեզում եղած հայ-արաբական մշակութային հարաբերություններին վերաբերող միակ լուրջ ուսումնասիրությունը Սեդա Պարսումյան-Տատոյանի աշխատասիրությունն է՝ հրատարակված 1991 թվականին Բեյրութում[12]:

9-րդ դարի վերջերին ներքին հակամարտություններից թուլացած արաբական խալիֆաթը թևակոխում է քայքայման փուլ: Այդ ժամանակաշրջանում է, որ նրա զինյալ ուժերը հեռացան Հայաստանից: Սակայն դրանով երկու ժողովուրդների հարաբերությունները չեն ընդհատվում, մանավանդ որ Հայաստանի մեծ քաղաքներում կար արաբական որոշակի թիվ կազմող բնակչություն[13]: Նրանց մի մասը հաստատվել էր այստեղ կամավոր, մյուսը՝ ամիրաների հեռահար քաղաքական հաշվարկով բերվել ու բնակեցվել էր երկրի տնտեսական ու մտավոր կյանքի զարկերակը հանդիսացող Անի, Դվին, Կարին, Երզնկա և այլ քաղաքներում: Այդ տարրը ռազմական ուժի հեռանալուց հետո այդպես էլ չլքեց երկիրը: Այդ մասին են վկայում Անիում, Դվինում հայտնաբերված հնագիտական նյութերը.

---

[10] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Երևան, 1973, էջ 148:

[11] Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, 1948, Փարիզ, էջ 508:

[12] Ս. Պարսումյան-Տատոյան, նշվ. աշխ.:

[13] Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:

հատկապես կիրառական արվեստի գտածոները՝ երբեմն նույնիսկ արաբերեն մակագրություններով:

Պեղումներից հայտնաբերված նյութը, սակայն, հիմնականում ընդգրկում է կավագործությունն ու մետաղագործությունը, մինչդեռ 11-12-րդ դարերի արաբ աշխարհագիրների մոտ տեղեկություններ են պահպանվել բարձր զարգացման հասած արհեստների այլ ճյուղերի մասին. ոստայնանկություն, գորգագործություն, բնակարանի կահավորման մեջ օգտագործվող կտավներ: Դրանց արտադրանքի ու առևտրի հետ կապված հարցերը կարևորվում են Ալ-Իսթախրիի, Իբն Հաուքալի, Ալ-Մուքադասիի, Իբն-Ռուշտի գործերում: Նրանց գնահատականները հիշյալ արհեստների զարգացման մակարդակի ու որակի մասին, որպես օտար, անաչառ հեղինակների, օգնում են ինչ-որ չափով վերականգնելու քաղաքային կյանքի պատկերը Հայաստանում և, որ պակաս կարևոր չէ, առիթ են տալիս մտածելու հայ մշակույթից (արհեստներից) արաբների փոխառությունների մասին:

13-րդ դ. ազգային մշակույթի համընդհանուր վերելքի ու մանավանդ քաղաքային կենսանձին բնորոշ տարրերի դրսևորումներին զուգընթաց աշխարհիկ կյանքն իրական զարգացում ապրեց: Ընդհանուր մակարդակի վրա այդ գործընթացի դրսևորումներից էր միջնադարին հատուկ «եղբայրությունների» սկզբունքների ճշտումը և նորոգումը Միջին Արևելքի շրջանում գործող չափանիշներին համաձայն:

Մինչ կանոնների ստեղծումը, հավանաբար 13-րդ դարի վերջին քառորդում, գրվել է Հովհաննես Երզնկացու «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» գործը: Բնագիրն առաջին անգամ հրատարակել է ակադ. Սեն Արևշատյանը 1954 թվականին՝ նշելով, որ այն «Արաբ և պարսիկ փիլիսոփաների ասույթներից ու գործերից մի համառոտ քաղվածք է»[14]: Սեդա Պարսումյան-Տատոյանը, անդրադառնալով այդ հրատարակությանը, ուղղակիորեն նշում է բնագրի աղբյուրը, այն է՝ 8-րդ դարով թվագրվող իսմայիլական աղանդի «մաքրության եղբայրության» կամ «Իխսա էլ իխուան էլ սաֆա ուա խիլլան էլ ուաֆա» հանրագիտարանային թղթերը[15]:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, 13-րդ դարում, այդ եղբայրության ներկայացուցիչները վարում էին քարոզչական աշխույժ գործունեություն Միջին Արևելքի զանազան շրջաններում: Երզնկան, իր բազմազգ բնակչությամբ, այդ վայրերից մեկն էր: Քաղաքի բարենպաստ աշխարհագրական դիրքն առևտրական ճանապարհների խաչմերուկում, ինքնավարությունը հայ իշխանական տոհմի կառավարման ներքո, ուսումնական կենտրոնների առկայությունը, ուրեմն և մտավորական խավի ներկայությունը[16] նպաստավոր պայմաններ էին ստեղծում քարոզչական գործունեության համար: Իսմայիլական շարժման իշխանապետական կառուցվածքում քարոզչի որոշակի կարգ ունեցող խոջաների ու մոլլաների ներկայությունը Երզնկայում իսմայիլականների առկայության փաստերից մեկն է[17]:

---

[14] Ս. Արևշատյան, Հովհաննես Երզնկացու իմաստասիրական անհայտ աշխատությունը. Բանբեր Մատենադարանի, 1954 թ., N 4:

[15] Ս. Պարսումյան-Տատոյան, նշվ. աշխ., էջ 21:

[16] Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի. Ուսումնասիրություն և բնագրեր, Երևան, 1958, էջ 9-49:

[17] Ս. Պարսումյան-Տատոյան, նշվ. աշխ., էջ 45:

Արաբական եղբայրությունների պատմությունից հայտնի է մեկ այլ դրվագ ևս, որը կարող էր իր ազդեցությունն ունենալ Երզնկացու գործունեության վրա: Աբասյան խալիֆայության հաստատումով, 9-րդ դարից, իսլամական աշխարհի մեջ սկիզբ են առնում երիտասարդական (ֆըթուէական) շարժումներ: 12-րդ դարում Աբասյան Ալ-Նասեր խալիֆը գործունեություն է սկսում այս շարժումները բարենորոգելու և դրանք պաշտոնական իշխանության հովանավորության տակ դնելու ուղղությամբ: Խալիֆը թերևս նպատակ է ունեցել այս ձևով զսպել ինքնագլուխ և անզուսպ տարրերին՝ միաժամանակ ստեղծելով «տեսակ մը խառն ասպետական կարգ, որ նեցուկ հանդիսանար խալիֆէութեան»[18]:

Հավանաբար նույն նպատակն էին հետապնդում Հովհաննես Երզնկացին և իր պատվիրատուները, երբ «Կանոնք և խրատք»-ի մեջ նշում են «...տղայահասակ մանկանց աշխարհականաց, զորս եւ մեք յաստուածային արինացն և ի Սուրբ Գրոց ուղղեմք զայնպիսին ի հոգեւորն շնորհաւքն Աստուծոյ»[19]: Ժամանակն այնպիսին էր, որ Հայ Առաքելական Եկեղեցուն նվիրված իշխանական դասը և հոգևորականությունը կարիք ունեին կազմակերպված, խորը գիտելիքներով ու Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետությամբ զինված մարդկանցից կազմված մի ուժեղ հենարանի: Պետք է ենթադրել, որ այս «տղայահասակ մանկանցից» էլ, որոնց Եկեղեցին առնում էր իր հովանու տակ, հետագայում համալրվում էին «եղբայրությունները»:

Ալ-Նասերը եռանդուն գործունեություն է ծավալել ողջ Փոքր Ասիայում՝ ուղարկելով պատվիրակներ զանազան շրջաններ ու քաղաքներ: Նրանց նպատակն է եղել իրականացնել ֆըթուէական ծեսեր ու դրանով իսկ տարածել նորընծայի ձեռնադրության ծիսակարգը: Դր. Պարսումյանի «Հայ-արաբական մշակութային յարաբերութեանց պատմութենէն» գրքում հիշատակված են որոշ մանրամասներ «Եղբայրության»-ը անդամակցելու արարողության ընթացքից, որոնք մեզ համար հույժ կարևոր նշանակություն ունեն՝ ուսումնասիրության առարկա մանրանկարը հասկանալու և մեկնաբանելու տեսանկյունից: Ահա Էլ-Նասերի շրջանակից Ալ-Միմարի ֆըթուէական արարողակարգի նկարագրությունից մի հատված. «Անդամակցութեան արարողութեան ընթացքին նոր անդամը կը խմէ բաժակ մը աղի ջուր, ապա իրեն կը շնորհուի խորհրդանշական գօտին եւ տափատը, երիտասարդ անդամը եղբայրութեան կը ներկայացուի իր երէցին կամ հոգեւոր հօր կողմէ»[20]:

Դր. Պարսումյանը շեշտում է գոտու հանձնման արարողության կարևորությունը Բաղդադի ֆըթուէական կազմակերպություններում: Նույնն է Երզնկացու «Կրկին սահմանք»-ի բնագրում, ուր վերարտադրվում են գրեթե նույն խոսքերը, ինչ ֆըթուէական ծեսի ժամանակ՝ օգտագործելով նույնիսկ «զունար» արաբերեն բառը: «Եւ յորժամ զայս խրատս տայ, եւ նա յանձն առնու, ապա տայ նմա գաւտի բարակ զունար եւ այսպէս ասէ. կուտամ քեզ գաւտի ու կու կապեմ զքո մէջքդ յանուն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»[21]: Եվ այնուամենայնիվ, ինչպես նշում է Պարսումյանը, վերջնականապես պարզ չէ, թե արդյոք Երզնկացին ծանո՞թ է եղել Ալ-Նասերի կանոնադրությանը, թե ոչ. երկուսի ծրագրերն իրենց ի-

---

[18] Նույն տեղում, էջ 160:

[19] Է. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 230:

[20] Ս. Պարսումյան-Տատոյան, նշվ. աշխ., էջ 161:

[21] Է. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 238:

մասերով ու նմխատակներով մոտ են[22]: Սակայն փաստեր, որ Երզնկացին տեղյակ է եղել «Կանոնադրութեանը», բացակայում են:

Նույնն է պարագան և փըթուէական ծեսերի վերաբերյալ. թեև Պարսումյանը նկատում է, որ «Ալ-Նասէր բացայայտ կերպով աշխատած է իր հասկցած փըթուէականութիւնը տարածել Փոքր Ասիոյ զանազան քաղաքներուն մէջ. պատճառ չենք տեսներ, որ Երզընկան բացառուած ըլլար այս կարգի քարոզչական աշխատանքներէ»[23]: Բայց որևէ հիշատակություն արաբների ծավալած գործունեության մասին հայկական աղբյուրներում չունենք: Եվ ահա 1329 թվականի Ավագ ծաղկողի կողմից ծաղկազարդված մանրանկարը՝ Ալ-Միմարի նկարագրած ծեսի պատկերային վերարտադրությունն է: Այն վկայում է նկարչի՝ առնվազն ծանոթությունը Մարաղայի իլխանությունում կատարված փըթուէական ծեսին: Սա Երզնկայում ստեղծված եղբայրության գոյատևման ապացույցն է մեկ այլ հայաշատ վայրում ու նաև հայ-արաբական մշակութային հարաբերություններին վերաբերող մի պերճախոս դրվագ:

Ինչ վերաբերում է Հովհաննես Երզնկացու և Ալ-Նասերի գրվածքների իմաստային ընդհանրություններին, ապա այս խնդիրն իրոք կարոտ է «երկու սահմանադրությունների» լուրջ ուսումնասիրության և իհարկե՝ համեմատության, մի աշխատանք, որն այս պահին անհնարին է Ալ-Նասերի գործը ձեռքի տակ չունենալու պատճառով: Ի հավելումն նշենք, որ հայկական մանրանկարը եթե նույնիսկ փըթուէական շարժման գոյության վերջնական գրավական չէ Հայոց հասարակական կյանքի մեջ, ապա այն ամեն դեպքում վկայում է փըթուէական ավանդության ազդեցության շարունակականությունը 14-րդ դարում հայկական միջավայրում:

Այս փաստը որոշակի արժեք է ներկայացնում և արաբական մշակույթի համար: Մոնղոլների արշավանքներից և 1258 թ. Բաղդադի անկումից հետո արաբական գրականության մեջ հիշատակվող փըթուէականության հետ կապված ամենավաղ աղբյուրը վերաբերում է 15-րդ դարին[24]: Մեր մանրանկարի շնորհիվ ժամանակային այդ եզրագիծը մեկ հարյուրամյակով հետ է գնում:

Այժմ դառնանք Ավագ ծաղկողի վրձնած մանրանկարի մանրամասների մեկնաբանմանը: Էջի վերին մասում պատկերված են, ինչպես արդեն ասվել է, Աստվածամայրն ու Հիսուս Քրիստոսը: Հիսուսի օրհնող Աջն ուղղված է ստացող Ասլանի ձեռքերում գտնվող՝ դեպի Փրկիչը մեկնած մանկանը: Այս հանգամանքն ընդգծում է մանկան դերի կարևորությունը խմբանկարի մեջ: Նորընծայի երեցն ու ներկայացնողը՝ պատվիրատու Ասլանն է. Քրիստոսի ոտքի մոտ, պատվանդանի եզրին գտնվող անոթը՝ բռնակով ջրաման է: Պարսումյանի վկայակոչած՝ Ալ-Միմարի արարողության նկարագրության մեջ երրորդ անձի ներկայության մասին ոչինչ չկա: Հայկական մանրանկարում Ասլանի դիմաց, ծնկաչոք նստած, ճերմակազգեստ անձնավորությունը պետք է որ լինի եղբայրության բարձրաստիճան, տարեց անդամներից, հավանաբար մանկսավագը, որը շնորհում է նորընծային գոտի և տաբատ. Նրա՝ մասամբ հերակտրած մազերը, ինչպես արդեն ասվեց, խոսում

---

[22] Ս. Պարսումյան-Տատոյան, նշվ. աշխ., էջ 160:

[23] Նշվ. աշխ., էջ 160:

[24] Նշվ. աշխ., էջ 161:

են աշխարհիկ կյանքից այդ անձնավորության հրաժարված լինելու մասին. Աջ թևին գցած կարմիր գոտին պետք է շնորհվի քրիստոնեությանը զինվորագրված «մանուկին»:

Հովհաննես Երզնկացին տարբերակում է գոտիների հինգ տեսակ: Մեկ հետաքրքրական է այդ ցանկի չորրորդ կետը: «Չորրորդ գաւտի զինուորականն է, որով զինուորն պնդէ զմէջսն, յորում և իցեն ամենայն պատերազմական գործիքն»: Այնուհետև՝ «Արդ. սպիտակ հանդերձն աւրինակ է Ադամայ անմեղութեանն, մինչ ի դրախտին էր. Զնոյն անմեղութիւնն, որ նա կորոյս, գտանեն որդիք նորա յեկեղեցիս, որ է նոր դրախտ. իսկ կարմիր և սպիտակն, որ գաւտի ածեն գլխոյն և խաչին ի ճակատն կապեն՝ սպիտակն Քրիստոսի աստուածութեանն է աւրինակ, և կարմիրն մարդկութեանն մարմնոյն և արեանն, որ միաւորեաց Քրիստոս»[25]:

Եղբայրության երեց անդամի՝ Ասլանի մեջքի գոտին սպիտակ է, որ խորհրդանշում է նրա բարոյական մաքրությունը, այն գոտին, որ պետք է շնորհվի նոր անդամին, կարմիր է. ի նշան նրա՝ Քրիստոսի հավատին նորոգ զինվորագրյալի, որը դեռևս կապված է աշխարհիկ կյանքի հետ, և վերստին պետք է ապացուցի իր նվիրվածությունն ու մաքրակենցաղությունը: Իզուր չէ, որ մանկտավագի ճերմակ հագուստի, կարծես ոտքերի տակն անցնող, վարի շերտի մի նեղ հատվածն է, որ կարմիր է: Աշխարհիկ կյանքն անցյալ է, վերջացած: Իսկ ո՞րն է խմբանկարի ամենաուշագրավ մանրամասի՝ պատվանդանի կողքի ջրամանի խորհուրդը, առանց որի, թերևս, չհաջողվեր վերջնականապես մեկնաբանել այս փոքր պատկերի իմաստը. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը նշում է ջրի բարեպաշտական կիրառությունը Հայոց Եկեղեցում, երբ օրհնված ջուրը տալիս են բարեպաշտներին ըմպելու[26]:

Աղի ջուր խմելու ավանդույթը, որ նշված է Ալ-Միմարի կողմից նկարագրված արարողակարգում, Հայոց Եկեղեցին չունի: Այդ մասին չի հիշատակվում ոչ՝ «Մաշտոց» ծիսարանի կանոններում և ո՛չ Էլ նորընծայի օծմանը վերաբերող որևէ գրական սկզբնաղբյուրում: Մինչդեռ «ջրով մարմնավորվելու» մասին խոսում է Եփրեմ Ասորին, որի, և ընդհանրապես ասորական Եկեղեցու ծիսակարգի ազդեցությունը նկատելի է Հայոց Եկեղեցում[27]:

Մեր խմբանկարի դեպքում հնարավոր է, որ «մանկանը» տրվել է խմելու օրհնված ջուր, կամ, գուցե թե, այն ցանել են նրա վրա: Պատկերված անոթը ոչ այլ ինչ է, քան մետաղյա կամ հախճապակյա լայն բերանով ու բռնակով ջրաման: Բայց քանի որ հայ պատմիչները հարազատ ժողովրդի պատմությունն ընկալել են որպես «Աստվածաշնչում շարադրված Աստուծո ժողովրդի պատմության շարունակություն»[28], ուրեմն միանգամայն հնարավոր է, որ Հին Կտակարանի հետ տարվող ընդունված զուգահեռով այս պարագայում ջրի սրբագործմանը նախորդում է ընթերցվածը Եզեկիել մարգարեից. «Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ, եւ սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց... եւ տաց ձեզ սիրտ նոր և ոգի

---

[25] Է. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 234-235:

[26] Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 1957, էջ 180:

[27] Initiation chretienne, Rituels armeniens du bapteme Traduits, introduits et annotes par Charles Renoux, Paris, 1997, p. 4.

[28] **J. P Mahe**, Entre Moise et Mahomet: reflexions sur l'historiographie armenienne, dans REArm. N.S.23,1992, p. 121.

նոր նորոգեցից ի ձեզ. եւ հանից զսիրտն քարեղէնի մարմնոց ձերոց, եւ տաց ձեզ սիրտ մարմնեղէն» (Եզեկիէլ ԼԶ 25-27):

Այսպիսով կարելի է ենթադրել, որ Ասլանի ձեռքի մանուկը սրբագործվում է ջրով, մաքրվում ամենայն պղծությունից ու նորոգվում որպես քրիստոնեական հավատքին զինվորագրված մարտիկ: Բայց ինչո՞ւ է այս նորաթուխ մարտիկը պատկերված մանկան տեսքով: Ավագ Ծաղկողը, անշուշտ, ծանոթ է եղել Հովհաննես Երզնկացու «Կանոնադրություններին», մանավանդ որ նրանք երկուսն էլ համոզված հակամիաբարական գործիչներ էին: Ուրեմն Ավագ ծաղկողը, հիմնականում հետևելով նորընծայի ձեռնադրության ծեսի արաբական սխեմային՝ որպես Հայ Առաքելական Եկեղեցու նվիրյալ, վերաիմաստավորում է մանրամասները համաձայն Հայոց Եկեղեցու ծիսակարգի: Երզնկացին, ինչպես վերն ասվեց, իր կանոնները ստեղծելիս ազդեցություն է կրել արաբական գրական աղբյուրներից, բայց ընդհանրությունները դրանց հետ կարծես թե առավելապես բարոյական հարցերի, երեց-սան հարաբերությունների ու պարտավորությունների շուրջ են. եղբայրությունը «ենթարկելու օրուայ իշխանութեանց» ձգտումը «ամէն կերպով նման է Ալնասէրի փորձին երիտասարդական կազմակերպութիւնները ենթարկելու կեդրոնական կառավարութեան»[29]:

Կան Հին Կտակարանից եկող, դարերի խորքը գնացող ըմբռնումներ, որոնք հնարավոր է, որ համընդհանուր են եղել տարբեր մշակութային արեալների համար: Դրանցից են գոտի և մանուկ հասկացությունները: Գոտու մասին վերն արդեն խոսել ենք, իսկ «մանուկ» բառը, որ արաբերեն ֆաթա-ն է (այստեղից էլ փըթուէական» շարժումները)[30], նշանակում է «շատ երիտասարդ տղամարդ, կտրիճ, ժիր, սպասավոր, զինվոր, զորական քաջ»[31]:

Պլուզի մոտ գործածվում է «տղայահասակ մանուկ» կամ «մանկտի» բառը: Ավագ ծաղկողը, որ ժամանակի գիտուն մարդկանցից էր՝ աստվածաբան, նկարիչ ու գրիչ[32], պետք է որ տեղյակ լիներ «մանուկ» բառեզրի բազմիմաստ շերտերին: Նրա վրձնած խմբանկարի հանգուցակետը հանդիսացող «մանկան» պատկերն օժտված է այդ բառին հատուկ խտությամբ՝ դրանով իսկ ստանալով խորհրդանիշի ուժ: Նրա ու պատվանդանի վրա կանգնած Փրկչի միջև, ըստ նկարչի հղացքի, մյուս գործող անձանցից անկախ, կարծես առանձնահատուկ հարաբերություններ են ստեղծվում:

«Յայն ժամ մատուցան առ նա մանկտի, զի ձեռն դիցէ ի վերայ նոցա և աղօթս արասցէ: Ասէ Յիսուս. թոյլ տուք մանկտւոյդ այդ՝ եւ մի արգելուք զդոսա գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից» (Մատթեոս ԺԹ 13-14): Հովհաննես Պլուզը «մանկության» իմացքի իր բացատրությունն ունի, որը նույնքան հարազատ է մեր նկարչին. «Արդ մանկութիւնն Գ իրք է. մինն այն է, զի բարիսն, որ յԱստուծոյ առեալ է, ամուր պահէ և ոչ կորուսա-

---

[29] Ս. Պարսամյան-Տատոյան, նշվ. աշխ., էջ 164-166:

[30] Նոյնը, էջ 158:

[31] Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837, Հ. Բ, էջ 206:

[32] L. Zakarian, Un artiste anti uniteur au X/Ve siecle. «Roma-Armenia» sous la direction de C. Mutafian, Edizioni de Luca, 1999, p. 176.

ՃԷ. Բ. ի պատերազմն յոր մտեալ է արի կենալ և ոչ յաղթի. Գ այնմ իրաց, որ խոստացած է ջանք դՃԷ. որ չգրկի»[33]:

Ակնհայտ է, որ թե՛ «կանոննեի» հեղինակը, թե՛ նկարիչը հասու են այդ բառեզրի խորախորհուրդ շերտերին: Արդյոք այն անհիշելի ժամանակներից եկող «Թուխ մանուկի» հինավուրց պաշտամունքի վերաիմաստավորումն ու ներմուծումը չէ՞ քրիստոնեական գաղափարական համակարգ, ինչպես և շատ ու շատ այլ հասկացություններ, որոնք նոր գունավորումով իրենց տեղը գրավեցին այդ համակարգում:

Ազգագրագետ-բանագետ Արմեն Պետրոսյանը գտնում է, որ «Թուխ մանուկը կարող էր նույնացվել քրիստոնեական տիպիկ սրբի՝ հավատի նահատակի հետ»[34]: Բանասեր Աստուր Մնացականյանը «թուխ մանուկների» և հնագույն երիտասարդական եղբայրությունների միջև տեսնում է որոշակի կապ: Նա գրում է նաև, որ «մանուկ» բառեզրի «քաջ, կտրիճ, հերոս, ճարպիկ, առաքինի իմաստը հասել է մինչև միջնադար, որը երևում է բառի օգտագործման եղանակից. սա ակնհայտ է Ներսես Շնորհալու մի բանաստեղծության մեջ, ուր նա, խոսելով առասպելական հերոսներ Տորքի և Վարազդատի մասին, նրանց անվանում է մանուկներ[35]:

Այսպիսով, նկատելի է, որ նկարիչ Ավագն ունի ազգային հինավուրց ավանդույթի զգացողությունը, կարողանում է համատեղել այն իր ժամանակի հրատապ խնդիրների հետ ու ստեղծել համոզիչ գործեր: Իսկ ժամանակն այնպիսին էր, որ իրոք պահանջվում էր ազգային ավանդույթներին հարազատ, ինքնատիպ լուծումներ: Ինչպե՞ս կարող էր դրան արձագանքել նկարիչը, եթե ոչ՝ իր ստեղծագործությամբ: Օրակարգի վրա էր արդեն ոչ թե հավատափոխության, այլ եկեղեցիների միավորման խնդիրը[36]: Հնարավոր է, որ Երզնկայում ստեղծված «եղբայրությունն» այլևս չկար. համենայն դեպս 14-րդ դարում որևէ տեղեկություն դրա մասին չունենք: Փոխարենը Սուլթանիեի «եղբայրությունը» վարում էր եռանդուն գործունեություն: Նրա անդամներից շատերն ամենայն հավանականությամբ Հայաստանից էին: Ավագը՝ ինքը, անդրդվելի հակամիարարական, ունիթորության դեմ պայքարի պատվար, «Մեծ րաբունապետ» Եսայի Նչեցու աշակերտը, իր իսկ հիշատակարանի համաձայն, սովորել էր Գլաձորի բարձրագույն դպրոցում: Միանգամայն հավանական է, որ նա իր ուսուցչի՝ Նչեցու կողմից ուղարկվել է Սուլթանիե հակամիարարական գործունեություն ծավալելու համար, քանզի պապական նվիրակներն այդտեղ խիստ գործուն էին: Նրանք լուրջ աշխատանք էին տանում հայ ունիթոռների հետ, որոնք այդ ժամանակաշրջանում արդեն մեծ դեր էին խաղում միջեկեղեցական հարաբերություններում[37]:

---

[33] Է. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 231:

[34] Ա. Պետրոսյան, «Թուխ մանուկ» հնագույն ակունքները, «Թուխ մանուկ» նստաշրջանի նյութեր, Երևան, 2001:

[35] Ա. Մնացականյան, «Թուխ մանուկ» հուշարձանների մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1976, N 2:

[36] J. Richard, op cit p. 177.

[37] J. Richard... p. 218.

*ՎԻԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ*
*Արվեստագիտության դոկտոր*

# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՂՐԻՄՈՒՄ ՆԿԱՐԱԶԱՐԴՎԱԾ ՄԻ ՁԵՌԱԳՐԻ

## THE KAFFA LIFE'S OF THE DESERT FATHERS. A STUDY IN ARMENIAN MANUSCRIPT ILLUMINATION BY NIRA STONE LOVANII IN AEDIBUS PEETERS (1997)

Ներկայացվող աշխատությունը կազմում է Corpus scriptorium christiahorum orientalium մատենաշարի 566-րդ հատորը, իսկ առանձին մատենաշարի 94-րդ պրակը: Այն նվիրված է Կաֆայի Ս. Անտոնի մենաստանում (Ղրիմ, ներկայիս Թեոդոսիա) 1430-ին ընդօրինակված «Հարանց վարքին» (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանք, ձեռ. 285):

Ուսումնասիրողի պնդմամբ 1430-ից առաջ այս բովանդակությամբ ոչ մի ձեռագիր չունի այդքան պատկերներ և այդ առումով այն եզակի է հայ իրականության մեջ:

Տիկին Նիրա Սթոունին ձեռագրի մանրանկարները ուսումնասիրելու են մղել մի քանի խոշոր հայագետներ, միջնադարագետներ և ձեռագրագետներ, այդ թվում թեման առաջարկել է պրոֆ. Բեզալել Նարգիսը՝ հայկական ու եբրայական գրքարվեստի հայտնի գիտակ, խրախուսել և չհրապարակված նյութերով օգնել են Ս. Տեր-Ներսեսյանը, տիկին Է. Կորխմազյանը, որ Ղրիմի մանրանկարչական դպրոցի լավագույն գիտակն է, ինչպես նաև Նորայր արքեպս. Պողարյանը և տիկին Նիրայի ամուսինը՝ պրոֆ. Մայքլ Սթոունը, որի ուսումնասիրությունները հնագրության, վիմագրագիտության և ձեռագրագիտության ու բանասիրության ասպարեզներում քաջ հայտնի են:

Աշխատությունը լույս է տեսել 1997-ին:

Ներածության մեջ նշվում է, որ Ս. Անտոնի մենաստանում ընդօրինակված Եգիպտոսի անապատական հայրերին նվիրված մատյանն այս նյութը բովանդակող առաջին ձեռագիրն է, որ այսքան հարուստ պատկերազարդում ունի: Հեղինակը նման ձեռագրի ստեղծումը կապում է ԺԴ-ԺԵ դդ. Բյուզանդիայում Իսիխազմի շարժման ծավալման և վանականության (մենք կասեինք՝ անապատականության) նոր տարածման հետ: Ըստ տիկին Սթոունի, անապատական հայրերի վարքին նվիրված մի շարք ձեռագրեր կան՝ հունական, լատինական, հայկական, ասորական ու ղպտական, և միայն այս ձեռագիրն է, որ մեծապես պատկերազարդված է:

Հավանաբար ձեռագրի գոյության համար պարտական ենք Կաֆայի Ս. Անտոն մենաստանին, քանի որ այն կրում է անապատականության հիմնադիր Ս. Անտոն Եգիպտացու անունը: Հետևաբար վանքը պետք է ունենար Եգիպտոսի անապատական հայրերի վարքերը՝ ճշտված ոչ միայն հայկական, այլև հունական ձեռագրերով, ինչպես իր հիշատակարանում նշում է գրիչ և հավանաբար ծաղկող Թադեոս Ավրամենցը:

Քանի որ ձեռագիրը նվիրված է Եգիպտոսի անապատական հայրերի վարքին, ապա հեղինակը «Երուսաղեմի N 285 ձեռագիրն իր պատմական և ինտելեկտուալ (այսինքն՝ հոգևոր) կոնտեքստում» գլխում ներկայացնում է Բյուզանդիայում ԺԴ դարում Գրիգոր Պալամայի գլխավորությամբ ծավալված և Սերբիա ու Ռուսաստան թափանցած այն մեծ շարժումը, որը կոչվում էր «իսիխազմ» և որը սկիզբ էր առել Աթոս լեռան վանականներից: Այդ շարժումը մեծ ազդեցություն ունեցավ Բյուզանդիայում, այսպես կոչված, Պալեոլոգյան Վերածննդի վրա, և նրա ճգնավորական գաղափարները կարող էին թափանցել նաև հայկական միջավայր ինչպես Ղրիմում, այնպես էլ այլուր, որտեղ կային հայեր: Բայց վկաների հանդեպ սերը (վկայասիրությունը) Հայաստանում և Կիլիկիայի Հայկական թագավորությունում տարածված էր, և դրա համար ուղղակի անիմաստ էր Գրիգոր Վկայասերի, Մխիթար Գոշի, Վանական Վարդապետի, Եսայի Նչեցու, Գրիգոր Տաթևացու նման ուսուցիչներ ու վարդապետներ ունեցողների համար հանկարծ ընկնել իսիխազմի գաղափարների ազդեցության տակ: Այլ բան է պալեոլոգյան և ոչ միայն պալեոլոգյան արվեստի ազդեցությունը (ձեռագիր, իկոնա, որմնանկար և այլն): Կարելի է նույնիսկ շատ հեռու չգնալ: Մեծագույն պալեոլոգյան հույն նկարիչը՝ Թեոփանես Գրեկը, ըստ ռուսական աղբյուրների, որմնանկարներ է կատարել նաև Կաֆայում մինչև Նովգորոդի Սպաս Պրեոբրաժենիե եկեղեցու որմնանկարները[1]:

Կաֆայում Գրեկի հետքերը ռուս հետազոտողները որոնում էին տեղի հայկական եկեղեցիներում: Նովգորոդի նշված եկեղեցում մեծ թիվ են կազմել ճգնավորների պատկերները, որոնց թվում պահպանված են գլուխգործոցներ՝ Սիմեոն Ստելիտ (Սյունակյաց), Մակարիոս Եգիպտացի, որոնք նաև առկա են և մեր ձեռագրում: Գլխավոր հիշատակարանը ևս հուշում է, որ գրիչը վարքերի հայերեն բնագիրը հարստացրել է՝ օգտվելով հունարեն ձեռագրերից, որը չի բացառվում, որ լիներ պատկերազարդ (հայտնի է, որ Թեոփանեսը նաև մանրանկարներ է արել, որոնք մեզ չեն հասել, իսկ մեր ձեռագրի մանրանկարների կոլորիտը մոտ է այդ մեծ հույնի որմնանկարների գունաշարին, որը վերաբերում է նաև մի քանի տիպաժների):

Տիկին Սթոունը քաջ գիտի, որ վանական կյանքը և վկաների վարքերը Գրիգոր Նարեկացուց առաջ և հետո միշտ էլ Հայաստանում աստվածաբանական մտքի և քրիստոնեաբար ապրելու օրինակ են ծառայել: Նա ծանոթ է նաև Սաղմոսավանքի և Հովհաննավանքի ԺԲ դարի վերջի Տոնականներին, որոնցում (հատկապես Մատ. N 3373, 1185-1188 թթ. Տոնականում) պատկերվել են հենց Ս. Պողոս և Ս. Անտոն անապատականները, Գրիգոր Մեծ և Փոքր Վկայասերների գործունեությանը, Կիլիկիայում, Գլաձորի և Տաթևի վանքերի ձեռագրային արվեստին, և Ղրիմի հայկական գաղթավայրը համարում է այդ վանքերի ավանդների արմատավորող և շարունակող:

Հետազոտողը նաև նշում է, որ ներկայացվող ձեռագրի մանրանկարները խիստ տարբեր են կիլիկյան դպրոցի մանրանկարներից: Դա գալիս է այն նոր տարրերից, որոնք ընդունում է Ղրիմը Բյուզանդիայից, պահպանելով սակայն հին արևելյան գծերը, որոնցից մեկն այն է, որ մարդկային կերպարանքը քարացած է, սառած (frozen), հարթ և հեռու երկրային հատկանիշներից, անհատականացված դեմքով, պարզությամբ և այլն: Գույները, որոնք առկա են դիտարկված ձեռագրի պատկերներում, անշուշտ նույնը չեն, ինչ Ղրիմի այլ ձեռագրերում (20-րդ էջում հեղինակը նկատում է, որ Ղրիմի շատ ձեռագրեր նկարված

---

[1] Տես В. Н. Лазарев, История Византийской живописи, Москва, 1986, т. I, с. 163.

են «կիլիկյան ոճով»՝ նրա բազմազան, վառ գույներով և լի մշակված ու դրամատիկ շարժմամբ):

Իսկ ինչ վերաբերում է Ս. Պափնոտիոսի կամ Պամբոյի պատկերներում աջից ձախ կամ ձախից աջ հավասարագլուխ (իզոկեֆալուս) մարդկանց շարքերին, ապա դա արևելյան հնավանդ երևույթ է, որից նկարիչն օգտվել է ճգնավորական խստակյացությունը և սրբազան մթնոլորտը ոչ միայն գույնով, այլև կոմպոզիցիայով շեշտելու համար, մինչդեռ 1441 թ. Գրիգոր Տաթևացու և աշակերտների նկարում վեղարավոր վանականները բազմայարկ են և ոչ միօրինակ կեցվածքներով:

Նույն մթնոլորտի շեշտումն է հետապնդում նաև հայրերի պատկերումը մուգ ֆոնի վրա, որ ծանոթ էր նաև կիլիկյան և բյուզանդական վարպետներին («Ութ մանրանկարիչների Ավետարան»):

Մեր կարծիքով, նման զուտ ֆորմալ, գեղարվեստական երևույթները փոքր-ինչ դժվար է կապել իսիխազմի (ճգնավորական, աստվածացման և այլն) հունական միստիկական շարժման հետ: Իրոք ճերմակ փայլերը հայ մանրանկարչության մեջ հայտնվում են Ղրիմի դպրոցում բյուզանդական որմնանկարչության ազդեցությամբ, բայց դրանք թեև ավելի պակաս շեշտված տեսնում ենք և Թորոս Ռոսլինի մոտ: Իսկ Տաթևի և Գլաձորի դպրոցներում աստվածաբանական միտքը զարգանում էր իր բոլոր ընդգրկումներով և նրբություններով, շնորհիվ որի մեծ հետաքրքրություն էր դրսևորվում նաև Արեոպագիտիկաների և դրանց մեկնությունների նկատմամբ, որի արտահայտությունն են այդ երկերի ընտիր ընդօրինակումները Կիլիկիայում (ԺԳ դար) և դրանց՝ Եսայի Նչեցու խմբագրումը (Գլաձոր, ԺԳ-ԺԴ դդ.):

Տիկին Սթոունն իր ենթադրություններն անում է մեծ տակտով՝ միաժամանակ հստակ պատկերացնելով հայկական միջավայրում եղած, իսիխազմի ծայրահեղություններին ու հոռետեսությանը չհասնող, բայց նրան ժամանակակից խմորումները:

Բուն ձեռագրին նվիրված գլխում հիշատակարանների հիման վրա տիկին Սթոունը վերստեղծում է աշխատանքային այն մթնոլորտը, որ իշխում էր Կաֆայի Ս. Անտոնիոսի մենաստանում - գրիչ և նկարիչ Թադեոս Ավրամենցն իբրև «արտասովոր մեծ հետաքրքրությունների գիտնական» (էջ 28), րաբունապետ Սարգիսը, որ իր դասախոսություններում ընդգրկում էր Արիստոտել ու Պորփյուր և ուսուցիչն էր մեր գրչի ու նրա ընկերների, Գլաձորի ու Տաթևի համալսարանների ավանդույթները վանքում, որի մի արտահայտությունը մեր նույն գրչի կողմից 1428 թ. Հովհաննես Որոտնեցու երկերի ընդօրինակումն է (Վենետիկ, Մխիթարյանների մոտ. N 595) և Դավիթ Անհաղթի. Որոտնեցու և Տաթևացու գործերի հանդեպ նրա հետաքրքրությունը:

Ձեռագրագիտական տվյալները ներկայացված են բարեխղճությամբ, ըստ պրակների: Հիշատակարանների միջոցով ներկայացվում է ձեռագրի պատմությունը և տարագրությունը, նաև նրա նախօրինակը և այն ձեռագիրը Բրիտանական թանգարանում, որի համար մեր ձեռագիրը օրինակ է ծառայել: Նշված է նույնիսկ այնպիսի մանրամասն, որ ձեռագրի թուղթն արևելյան է, առանց ջրանիշների, և որ լավ պահպանված են գրի և նկարների գույները (էջ 32):

Տիկին Սթոունը կարծում է, որ գրիչ Թադեոսը, հայերեն օրինակից օգտվելիս ավելացնելով հունարեն օրինակից ևս հատվածներ, թերևս օգտվել է նաև հունարեն ձեռագրի մանրանկարներից, քանի որ, ըստ մեզ, որոշ մանրանկարներ հունական ցայտուն գծեր ու-

նեն (օրինակ, սրբի պատկերը մուգ ֆոնի վրա, սերը ճերմակ փայլերի. ախրաշագանակագույն խիստ երանգների նկատմամբ և այլն): Դրանք ավելի մեծ չափով առկա են այստեղ և ոչ այլ հայկական ձեռագրերում (հատկապես Պափնոտիոսի շարքը):

Երրորդ գլուխը նվիրված է ձեռագրի մանրանկարների թեմատիկ-սյուժետային տարբեր շարքերին, որոնք խմբավորված են այս կամ այն սրբի շուրջը: Այդ ձևով կազմվում են «Հայր Պամբոյի վարքի մի խումբ նկարազարդումներ», «Պափնոտիոսի պատմությունները», «Մակարիոսի պատմությունները» և այլն:

Ընդ որում պատկերագրությունը և ոճը դիտված են հաճախ մի միասնական ենթագլխում, քանի որ հեղինակը չի ցանկացել, ասենք, տարբեր սրբերի (օրինակ, ճգնավոր խոտաճարակ Պամբոյի և ծովվապետ, նոր պլատոնական, հարուստ գիտելիքներով օժտված Թեոփիլոսի) տարբերությունն իրենց շքախմբերի հետ սահմանափակել միայն հագուստների, կեցվածքների, արդուզարդի (մի դեպքում՝ ասկետիկ, մյուս դեպքում՝ ավելի ճոխ) և նրանց կանգնած տեղերի նկարագրությամբ (մի խումբը բոկոտն է, ապառաժուտ, քարքարոտ վայրում, մյուս խումբը՝ կանաչ ծաղկած մի վայրում), այլ դա կապել է նաև հորինվածքի կառուցվածքի, գունային արտահայտության և այլ ոճական խնդիրների հետ:

Էլ ավելի հետաքրքիր է «Վեց վանականներ, որոնք գտնվում են եդեմական այգում» (էջ 81, նկարը): Բանն այն է, որ պատմությունը հարմարեցված է Ներսես Շնորհալու ժամանակին (ձեռագրում՝ Ներսես Կլայեցի): Այս եզակի նկարն իր պարզությամբ, բազմաժամանակյա գործողությունների փուլերով (հինգ վանական դրախտի լեռան առջև, իսկ նրանցից մեկը լալով Ներսես Շնորհալուն պատմում է իր տեսած հրաշքի մասին) նման է Ս. Պամբոյի և Ս. Թեոֆիլոսի պատմությանը: Ներսես Շնորհալին, ինչպես նախորդ նկարում Թեոֆիլոսը, ավելի շեշտված ներկայացված է որպես գիտնական կաթողիկոս:

Տիկին Սթոունը զուգահեռ է անցկացնում Հաղբատի Ավետարանի «Մուտք Երուսաղեմի» պատկերի հետ, որտեղ Երուսաղեմի դռների առջև կանգնած է քաղաքի ծերը, իսկ այստեղ՝ մուտքում նստած է Ս. Ներսեսը: Հնարամտորեն ու գունային շքեղությամբ է պատկերված Եդեմը լեռան գլխին, դեպի որը հոսում են դրախտի չորս գետերը (ի դեպ, դրախտի չորս գետերի մասին տիկին Սթոունն ունի մի առանձին գեղեցիկ հոդված): Նկարն առավել հարազատ է դառնում Ներսես Շնորհալու ներկայությամբ:

4-րդ գլուխը նվիրված է «սրբապատկերային» դիմանկարներին և փոքր տեսարաններին: «Դիմանկարները և նրանց առնչությունը «սրբապատկերային» դիմանկարների ու բյուզանդական իկոնաների հետ» և «Դիմանկարները որպես իկոնաների նախօրինակներ» ենթագլուխներում (էջ 97-101) տիկին Սթոունը մեզ ներկայացնում է այդ փոխակերպության մի գեղեցիկ ակնարկ: Բայց խնդիրն այն է, որ անկախ այն բանից, թե միջնադարում հայերն իկոնա ունեցել են, թե ոչ, հայ վարպետներն ունեցել են դեմքեր նկարելու և քանդակելու դարավոր փորձ[2]:

---

[2] Հայերը, որ դեմք նկարելու զանազան ուղղություններ և գեղարվեստական ձևերի են հետևել, երևում է ոչ միայն մատենագրական վկայություններից (եկեղեցիներում պատկերների թվարկումը Վրթանես Քերթողի մոտ..Զ դարի վերջ), այլև վաղ միջնադարյան որմնանկարների մնացորդներից (օր.՝ Թալինի մեծ եկեղեցում նախահայրերի պատկերների հետքերը գլխավոր խորանի կամարի վրա): Գիտենք նաև, որ ԺԲ-ԺԳ դդ. սովորություն է եղել նկարել թագավորներին և այլ պատկերներ տախտակի վրա՝ այն տեխնիկայով, ինչ հայտնի է վաղ Վերածննդի ժամանակ (նախ կապերով գծագրել և ապա գույն դնել, տե՛ս Լ. Խաչիկյան, Հայ արվեստի պատմության կարևոր սկզբնաղբյուրները - Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, հ. IV, Երևան, 1981, էջ 39 և հետո):

Տարբեր դեմքեր նկարելու այդ հմտությանն է նվիրված «Ամբողջապես սրբապատկերային դիմանկարներ և փոքր տեսարաններ» գլուխը, ուր տիկին Սթոունը նախ ներկայացնում է յուրաքանչյուր սրբի կենսագրությունը, այնուհետև նրա պատկերագրությունն ու ոճը քննվող ձեռագրերում:

Ինչ վերաբերում է իսիխազմի, իբրև հոգևոր կատարելագործման ուղղության ազդեցությանը (նույնն է. ինչ պալեոլոգյան շրջանի հոգևոր ազդեցությունը) հայ իրականության վրա՝ դա լինի Պատմական Հայաստանում, թե Ղրիմում, գրեթե չի վկայված: Փոխարենը Հայաստանում և Կիլիկիայում վարդապետական մեծ շարժումը, որ ոչ միայն կրոնական, այլև, կարելի է ասել, արտաքին ու ներքին ակտիվ քաղաքական շարժում էր, սկսած Գրիգոր Տուտեորդու և Մխիթար Գոշի ժամանակից մինչև Գրիգոր Տաթևացին և նրա աշակերտներն ու հետևորդները, ազդում էր հայ կյանքի բոլոր բնագավառների, այդ թվում նաև՝ նոր անապատական կազմավորումների վրա (Տաթև, Լիմ): Եվ ինչպես Գրիգոր Պալամայի ուսմունքը իսիխազմի դեպքում, հայոց վարդապետական շարժման ուսմունքը հայ հոգևոր կյանքի ոլորտներում մեծապես կրում էր Արիոպագիտիկաների աստվածաբանական ազդեցությունը:

Իսկ որ ղրիմահայ մանրանկարչական դպրոցը ստեղծել է օրինակներ, որոնք անմիջապես բյուզանդական, ընդ որում՝ պալեոլոգյան շրջանի ազդեցություն են կրում, տեսնում ենք Գրիգոր Սուքիասյանի մանրանկարներում (1332 թ. Ավետարան, Մատ. N 7664), որի հիմքում տիկին Կորխմազյանը տեսնում է հունական նախօրինակ[3]:

Տիկին Սթոունի ուշադրությունը կհրավիրենք Կաֆայի ևս մի հայկական ձեռագրի վրա (1401 թ., Մատ. N 3863, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»), որ ընդօրինակել է մանրանկարիչ Նատերի որդի Ստեփանոսը, պատկերազարդել թոռը՝ Հովհաննեսը: Ըստ տիկին Կորխմազյանի, այդ ժամանակ Կաֆան ճենովացիների ձեռքում էր: Ուստի լույսուստվերի ու ծավալի զգացողությամբ նկարված պերսոնաժների դեմքին նա տեսնում է ապրումների վառ արտահայտություն, որը համարում է իտալական նախավերածննդի ազդեցության արդյունք: Բայց պալեոլոգյան ազդեցությունն այդ ձեռագրի մանրանկարներում ևս զգալի է, ինչպես և զգալի են որոշ առնչություններ մեր Հարանց վարքի ձեռագիր մանրանկարների հետ: Նման կապ նկատվում է նաև Գրիգոր Տաթևացու և նրա աշակերտների 1449 թ. թվագրվող պատկերի հետ, որտեղ Երևի Երուսաղեմի մեր ձեռագրի պատկերների ոճական որոշ հատկանիշներ հասցվում են դասական արտահայտության, այդ պատճառով էլ այն դրված է տիկին Սթոունի գրքում (նկ. 104): Այդ մանրանկարն ավելի շուտ Հարանց վարքի ազդեցությունն է ցույց տալիս, քան Տաթևի դպրոցի, որին վերագրում էր մանրանկարը Դուռնովոն:

Այսպիսով, շնորհիվ անապատական հայրերի վարքը բովանդակող ձեռագրի պատկերազարդմանը նվիրված տիկին Սթոունի գրքի, մենք ունենք համակողմանի մի ուսումնասիրություն, որն իր կարևոր տեղն ունի հայկական առանձին մանրանկարչի կամ առանձին մի ձեռագրի նվիրված մի քանի աշխատությունների շարքում: Այն գրված է մեծ սիրով, գործիմացությամբ, ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրների հմուտ ու ճաշակով օգտագործմամբ:

---

[3] Э. М. Корхмазян. Армянская миниатюра Крыма (XIV-XVII вв.), Ереван, 1978, ст. 52.

## ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

*ԱՍՏՂԻԿ ՍԱՂԱԿՅԱՆ*

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ

Հայ կենսամատենագիտական բառարանագրությունը վերջերս հարստացավ ևս մի արժեքավոր գործով՝ Ա. Փաշայանի «Տիտղոսակիր հայեր» խորագիրը կրող կենսագրական բառարանով. Երևան Արմենակոբ. 2001 թ.: Մի արժեքավոր աշխատություն, ուր ընթերցողը կգտնի անհրաժեշտ տեղեկություններ 15-19-րդ դարերում գիտական աստիճանի, կոչման և այլ տիտղոսների արժանացած հայազգի գործիչների կյանքի ու գործունեության մասին, որոնց մեծ մասն այդ կոչումներին արժանացել են օտար երկրներում՝ վայելելով այդ երկրների ղեկավարության հարգանքն ու զորակցությունը:

Նշված 600 հայորդիներն իրենց տիտղոսներին արժանացել են տարբեր բնագավառներում ունեցած արդյունաշատ գործունեության և անխոնջ նվիրումի շնորհիվ: Այդ տիտղոսներն են՝ գիտության դոկտոր, թեկնածու, մագիստրոս, ակադեմիկոս, պրոֆեսոր, դոցենտ, այս կամ այն գիտական ընկերության նախագահ, անդամ:

Ներկայացված գործիչների շուրջ քառորդը բժիշկներ են, բնագետներ, պատմաբաններ, մշակույթի գործիչներ, բանասերներ և հոգևորականներ:

Անհրաժեշտ է նշել, որ Ա. Փաշայանի գրքում ներկայացված են և շուրջ 50 տիտղոսակիր եկեղեցականներ, որոնք հիմնականում Էջմիածնի և Մխիթարյան միաբանության անդամներ են: Նրանցից շատերը գիտության և մշակույթի հանրածանոթ դեմքեր են՝ Կոմիտաս վարդապետ, Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան), Իգնատիոս Փափազյան, Մեսրոպ Աղաչրադյան, Մեսրոպ Տեր-Մովսիսյան, Մանվել Քաջունի, Քերովբե Քուշներյան և ուրիշներ:

Արդյո՞ք շատերին է հայտնի, որ նշված այս և մի շարք այլ գործիչներ արժանացել են նաև գիտական տարբեր ծանրակշիռ տիտղոսների.

**Ստեփանոս Լեհացի** - Աստվածաբան, թարգմանիչ, փիլիսոփա,: Ծննդավայրում՝ Լվովում, սկզբնական կրթությունն ստանալուց հետո տեղափոխվել է Վաղարշապատ, դարձել Ս. Էջմիածնի միաբանության անդամ, հոգևորական ձեռնադրվել, կատարելագործել հայերենի իր իմացությունը, կարևոր դեր խաղացել ժամանակի մտավոր-գրական շարժման մեջ՝ արժանանալով «Քաջ հռետոր», «Անհաղթ փիլիսոփա» և «Ներհուն թարգմանիչ» բնորոշումներին:

**Գալուստ Տեր-Մկրտչյան** (Միաբան) - Հայագետ, պատմաբան, բնագրագետ-աղբյուրագետ, թարգմանիչ: Գրիչ և մանկավարժ Հովհաննես Կարնեցու ծոռն է: Ուրարտագիտության և հնագիտության ասպարեզում ունեցած վաստակի համար 1894-ին ընտրվել է հիշյալ ընկերության թղթակից անդամ, իսկ 1900-ից՝ իսկական անդամ:

**Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան** - Մշակութային գործիչ, հայագետ, մանկավարժ, Ս. Էջմիածնի միաբան և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս 1943-ից: 1890-ին ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: 1892-1896 թթ. սովորել է Բեռլինի, Հալլեի, Լայպցիգի համալսարաններում: 1898 թ. ձեռնադրվել է վարդապետ: 1897 թվականին Լայպցիգում

ստացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Ընտրվել է և Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության իսկական անդամ:

**Խորեն եպիսկոպոս Ստեփանե** - Մանկավարժ, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ և բանաստեղծ: Ավարտել է Մոսկվայի համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետը, 1871 թ. ձեռնադրվել է վարդապետ, դասավանդել Էջմիածնի վանական, ժառանգավորաց և ծխական դպրոցներում: Խմբագրել է «Արարատ» հանդեսը, հայ իրականության մեջ առաջին անգամ 1899 թ. աշխարհաբարով լույս ընծայել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ը: Հանդես է եկել «Իշխան Բագրատունի» գրական կեղծանունով:

**Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան** - Բանասեր, մանկավարժ և աղբյուրագետ: 1891 թ. ավարտել է Դորպատի համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1901 թ. Պետերբուրգում պաշտպանել է ատենախոսություն և ստացել հայ բանասիրության մագիստրոսի աստիճան: 1909 թ. ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան, ապա և ձեռնադրվել եպիսկոպոս: Հեղինակ է 130 աշխատությունների:

**Մաղաքիա Պատրիարք Օրմանյան** - Ազգային-պահպանողական ուղղության հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, պատմաբան, բանասեր, Կ. Պոլսի հայոց Պատրիարք: 1865 թ. ստացել է աստվածաբանության մագիստրոսի գիտական աստիճան: 1868 թվականին ստացել է փիլիսոփայության, եկեղեցական իրավագիտության մագիստրոսի գիտական աստիճան, ընտրվել Հռոմի աստվածաբանական ակադեմիայի անդամ:

Խիստ ուշագրավ է Մխիթարյան միաբանության և Ֆրանսիայի աստղագիտական ընկերության անդամ, աստղագետ Խորեն Սինանյանի գիտական հետաքրքրությունների պատմությունը: Տաղանդավոր այս հոգևորականը 1894 թ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում տեղակայված աստղադիտարանում հայտնագործել է Լուսնթագ (Յուպիտեր) մոլորակի 6-րդ արբանյակը, սակայն Վատիկանի դիտարանի հանձնաժողովն այդ գյուտը չի հաստատել և չի գրանցել Սինանյանի անունով:

Ուշագրավ շատ կողմեր ունի և Մեծ եղեռնի զոհ, բնագետ, մշակութային գործիչ Ստեփան Սարյանի կյանքը: Մխիթարյան միաբանության այս գործիչն աստվածաբանության և փիլիսոփայության դոկտոր էր, 1902 թ. Վենետիկում լույս տեսած «Էակների ծագումը» և այլ մենագրությունների հեղինակ:

Ցուրօրինակ այս հանրագիտարան-կենսագրական բառարանում շատ ու շատ պատմական փաստեր և իրողություններ են դրվել գիտական շրջանառության մեջ:

Թեև հեղինակը գրքի առաջաբանում համեստորեն ասում է. «Պետք է նկատի ունենալ, որ սույն բառարանը մատենագիտական տեղեկատու չէ, ուստի շատ ու շատ անվանի հեղինակների կենսագրություններում (Հ. Աճառյան, Ք. Պատկանյան, Մ. Աբեղյան, Ն. Ադոնց, Մ. Քաջունի, Հ. Թումանյան, Գ. Արծրունի և ուրիշներ) տրված են նրանց հիմնարար երկու-երեք աշխատությունները միայն», սակայն այն ինչ-որ տեղ անգամ նման տեղեկատուի դեր է կատարում, ինչպես գրքի գրախոս, բանասիրության դոկտոր Ծ. Գրիգորյանն է գրում. «Առանց ավելորդ ժամանակ և ջանք գործադրելու ընթերցողը դրանում կհայթայթի անհրաժեշտ տեղեկություն և գիտելիք 15-19-րդ դարերում գիտական աստիճանի և տարբերույթ այլ տիտղոսների արժանացած հայազգի մտավոր գործիչների կյանքի ու գործունեության մասին»:

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 31-ին, Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով, Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, ինքնական Ուխտի Պատարագը մատուցեց Կ. Պոլսի հայոց պատրիարքության միաբան Տ. Շահան արքեպս. Սվաճյանը: Ձեռամբ Սրբազան Հոր քահանայական ձեռնադրություն և օծում ստացան երկու սարկավագներ:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, Մայր Տաճարում կատարվեց նորընծաների կոչման արարողություն, որի ընթացքում ընծայացուները միաբերան մերժեցին և նզովեցին հերետիկոսներին ու հերձվածողներին՝ ուխտելով հետևել Սուրբ Առաքյալների և Հայոց Հայրապետների հավատքին:

Կիրակի, հընթացս Ս. Պատարագի, երկու ուխտյալները սաղմոսների փոխասացության ներքո ծնկաչոք բարձրացան Ավագ Ս. Խորան: Դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը՝ նրանք բարձրացրեցին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման: Մեծ հանդիսավորությամբ Ս. Խորան բերվեց Սրբալույս Մյուռոնը, և ձեռնադրող Սրբազան Հայրն օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Արմեն սրկ. Ավագյանը վերակոչվեց Տ. Նարեկ քահանա, Արամ սրկ. Պարսամյանը՝ Տ. Մեսրոպ քահանա: Շահան Սրբազանը նորաօծ քահանաներին փոխանցեց նաև Հաղորդության սկիհը՝ նրանց փալով պատարագելու և Տիրոջ մարմինն ու արյունը ժողովրդին բաշխելու իշխանությունը:

Սրբազան Հայրն իր քարոզում շնորհավորեց նորաօծ քահանաներին և անդրադարձավ Ս. Էջմիածնի խորհրդին (տե՛ս էջ 39):

Ձեռնադրությունից հետո Ավագ Ս. Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանները և կարդինալ Ուիլյամ Քիլերի գլխավորած Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակության անդամները՝ համբուրելով քահանաների Սրբալույս Մյուռոնով օծված ճակատներն ու ձեռքերը:

Հընթացս Ս. Պատարագի հանուն Վեհափառ Հայրապետի կաթոլիկ հոգևորականներին ողջունեց Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ անդրադառնալով երկու Եկեղեցիների եղբայրական հարաբերություններին: Պատասխան խոսք ասաց կարդինալ Ուիլյամ Քիլերը:



ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՊԱՀԸ

Академия наук Армянской ССР Фундаментальная библиотека



ՆՈՐԸՆԾԱՆԵՐԻ ՆՈՐԱՕԾ ՄՅՈՒՌՈՆԱԲՈՒՅՐ ԱՋԵՐՆ ԱՌԱՋԻՆԸ
ՀԱՄԲՈՒՐՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Ս. Պատարագին ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Հայաստանում հյուրաբար գտնվող ԱՄՆ-ի Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությունը, Ռումինիայի մշակույթի և կրոնի գործերի նախարար Լոռենցիու Թրնազեն և մի խումբ պոլսահայ ուխտավորներ:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, կատարվեց նորաօծ երկու քահանաների՝ Տ. Նարեկ աբեղայի և Տ. Մեսրոպ աբեղայի վեղարի փվչության և աբեղայի օրհնության կարգը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



**Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆ**
(ավազանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1979 թ. օգոստոսի 12-ին Արագածոտնի մարզի Օշական գյուղում:

1986-1996 թթ. սովորել է Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցում:

1996-2002 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո նախ աշխատել է Մայր Տաճարում որպես լուսարար, հետո՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վարչակազմակերպական գործերի կառավարչի քարտուղար: Ցայսօր պաշտոնավարում է Մայր Աթոռում որպես պարետ:

2002 թ. մայիսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Համաբեսական Ավետարանների արևելահայերեն թարգմանության դարձվածային միավորները» թեմայով:

2002 թ. օգոստոսի 31-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Շահան արքեպս. Սվաճյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



**Տ. ՄԵՍՐՈՊ ԱԲԵՂԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ**
(ավազանի անունը՝ Արամ)

Ծնվել է 1981 թ. մայիսի 15-ին Երևան քաղաքում:

1987-1997 թթ. սովորել է մայրաքաղաքի Լեոյի անվան թիվ 65 միջնակարգ դպրոցում:

1997-2002 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002-2003 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո Վեհափառ Հայրապետի գավազանակիր-գործավարն է:

2002 թ. մայիսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ «*Ա»* և *Ի* նախդիրների իմաստային առումները ըստ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց Պատերազմին» մատյանի» թեմայով:

2002 թ. օգոստոսի 31-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Շահան արքեպս. Սվաճյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

# Տ. ԴԱՆԻԵԼ ԱԲԵՂԱ ՖԸՆՏԸԳՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ



Օգոստոսի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Նյու Յորքի Ս. Ներսես ընծայարանի տեսուչ Տ. Դանիել աբղ. Ֆընտըգյանի վարդապետական թեզի պաշտպանությունը: Քննիչ հանձնախմբի կազմում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը և Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը: Քննիչ հանձնախումբը «Եկեղեցու նավակատիքի հնագույն արարողությունը» ծիսական, աստվածաբանական և պատմաբանասիրական ուսումնասիրությունը համապատասխան գտավ վարդապետական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

Նույն օրը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ մասնավոր վարդապետական աստիճանի տվչության արարողություն՝ ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի: Եկեղեցական արարողության ընթացքում նորընծա վարդապետին տրվեց վարդապետական աստիճանի և իմաստության խորհրդանիշ հանդիսացող օձագլուխ գավազան: Մասնավոր վարդապետության աստիճանով նրան տրվեց Ս. Գիրքը և Հայոց Եկեղեցու դավանանքը քարոզելու և մեկնելու իշխանություն:

*
* *

## Տ. ԴԱՆԻԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՖԸՆՏԸԳՅԱՆ

Ծնվել է 1962 թ. ԱՄՆ Տեխաս նահանգում:

1980-1985 թթ. սովորել է Նյու Յորք նահանգի պետական համալսարանում՝ ստանալով քիմիկոսի բակալավրի աստիճան: Զուգահեռաբար նույն համալսարանում ուսանել է երաժշտության պատմություն:

1985-1989 թթ. սովորել է Նյու Յորքի Ս. Ներսես ընծայարանում: Ավարտելով ընծայարանը՝ պաշտպանել է թեզ ««Մեծացուցէ» շարականների աստվածաբանական ուսումնասիրությունը» թեմայով: Զուգահեռաբար հաճախել է Ս. Վլադիմիր օրթոդոքս ճեմարան:

1986-1990 թթ. սովորել է նաև Նյու Յորք քաղաքի համալսարանի երաժշտության բաժնում: 1990 թ. ստացել է երաժշտության փեսության և պատմության մագիստրոսի կոչում պաշտպանելով թեզ «Կլավդիո Մոնտեվերդիի մադրիգալների 8-րդ գիրքը» թեմայով:

1989 թ. սեպտեմբերի 14-ին՝ Ս. Խաչի տոնին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի:

1990 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հետևել է հայագիտության ու եկեղեցագիտության մասնավոր դասընթացների:

1992-1997 թթ. սովորել է Հռոմի Պապական արևելագիտության ինստիտուտի ծիսագիտության բաժնում: 1997 թ. ստացել է դոկտորական աստիճան՝ պաշտպանելով թեզ՝ նվիրված Ստեփանոս եպս. Սյունեցու Ժամակարգության մեկնությանը:

1997 թ. Ս. Խաչի տոնին Նյու Յորքի Ս. Վարդան առաջնորդանիստ եկեղեցում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի:

Նույն թվականից դասախոսել է Ս. Ներսես ընծայարանում:

2000 թ. նշանակվել է Ս. Ներսես ընծայարանի փեսուչ:

2003 թ. օգոստոսի 7-ին ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները՝ պաշտպանելով թեզ «Եկեղեցու նավակատիքի ինագույն արարողությունը» թեմայով:

# ՁԵՌԱՄԲ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԱՌԱՔԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԱՐԱՄՅԱՆԻ ՕԾՎԵՑ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՋՐԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ Ս. ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ԵԿԵՂԵՑԻՆ

Օգոստոսի 23-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Կոտայքի թեմի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում ձեռամբ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի օծվեց Ս. Թուխ Մանուկ նորակառույց եկեղեցին:

Ս. Թուխ Մանուկ եկեղեցին կառուցվել է Ժորա և Մխիթար Գրիգորյանների անմիջական նախաձեռնությամբ և փեղի ժողովրդի ջանքերի շնորհիվ:

Առաքել Սրբազանն իր խոսքում խորին շնորհակալություն հայտնեց եկեղեցու բարերարներին հավատքի այս նոր տան կառուցման համար՝ վստահ լինելով, որ այս եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը միշտ պիտի լինեն նրանց սրտերում և հոգիներում:

«Հավատքի այս տները դարեր շարունակ եղել են մեր ինքնության խորհրդանիշն ու այն անխորտակելի վեմը, որի խնկաբույր կամարներից անդադար աղոթք ենք վերառաքել առ Աստված՝ մեր երկրի զորացման ու մեր Եկեղեցու շինության համար»,- նշեց Սրբազան Հայրը:

Օծման արարողությանը մասնակցում էին Գեղարքունյաց թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանը, Կոտայքի թեմի հոգևորականներ, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Ս. Թուխ Մանուկ եկեղեցու օծման ավարտին նորակառույց եկեղեցու բակում տեղի ունեցավ մեծ փոնախմբություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ՋՐԱՌԱՏԻ Ս. ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՆՈՐԱՕԾ ԵԿԵՂԵՑԻՆ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



«ԵՐԱՆԻ՜ ԵԿԵՂԵՑԻ ԾԻՆՈՂԱՑ»

# ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Օգոստոսի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ընդունեց ուխտավորների նոր խմբին: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով Ս. Էջմիածին էին ուխտավորաբար եկել մի խումբ գերմանահայեր՝ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Բեկչյանի առաջնորդությամբ:

Հանուն Նորին Սրբության՝ ուխտավորներին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Հայր Սուրբը մասնավորապես նշեց, որ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը ինչպես անցյալում, այնպես էլ այսօր շարունակում է ուղղորդել հայության ընթացքը դեպի հավերժություն և փրկություն:

Ապա ուխտապահ ժողովրդին դիմեց պատարագիչ Սրբազան Հայրը՝ անդրադառնալով Ս. Էջմիածնի խորհրդին և հորդորելով հավատարիմ մնալ Մայր Եկեղեցուն և լուսավորչահաստատ Ս. Աթոռին:

«Եկել ենք մեկ անգամ ևս մեր ուխտը նորոգելու Աստծո և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Սուրբ Սեղանի առաջ՝ զորանալու հոգեպես՝ աղոթելով, որպեսզի Ամենակալ Տերը մեր հավատքը հաստատ և անսասան պահի, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական մեր Եկեղեցին ու մեր նորանկախ պետությունը»,- ասաց Սրբազան Հայրը (տե՛ս էջ 36):

Հավարտ Ս. Պատարագի Վեհարանում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետն իր օրհնություններն ու բարեմաղթանքները փոխանցեց գերմանահայերին, որոնց հոգևոր հովիվն է եղել շուրջ 30 տարի առաջ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆ ԺՈԶԵՖ ՔՐՈՈՒԼԻԻՆ

Կիրակի, օգոստոսի 10-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի Կոնգրեսի անդամ Ժոզեֆ Քրոուլիին: Սա պրն Քրոուլիի անդրանիկ այցն էր Հայաստան և հայոց հոգևոր կենտրոն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Ողջունելով կոնգրեսականի այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Հայրապետը ծանոթացրեց հյուրին Հայ Եկեղեցու պատմությանը և հոգևոր դարավոր հարուստ ժառանգությանը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց կոնգրեսական Քրոուլիին տարբեր խնդիրների շուրջ նրա ծավալած հայանպաստ գործունեության համար:

Հանդիպման ընթացքին խոսվեց նաև հայոց պատմամշակութային և հոգևոր հուշարձանների պահպանության խնդրի մասին՝ մասնավորաբար Թուրքիայի և Ադրբեջանի տարածքներում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ կոնգրեսական Քրոուլին հավաստիացրեց, որ այս այցը Հայաստան վերջինը չի լինի:

Ս. Էջմիածին այցելության ժամանակ կոնգրեսականին ուղեկցում էին իր աշխատակազմի ղեկավար Քրիստոֆեր Մաք Քենըը և վերլուծաբան Սարիկ Արմենյանը:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՍԵՆԱՏՈՐՆԵՐԻ ԵՎ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Օգոստոսի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամերիկայի Հայկական Համագումարի հրավերով Հայաստան ժամանած ԱՄՆ սենատորների և կոնգրեսականների աշխատակազմի պատվիրակությանը: Պատվիրակությանն ուղեկցում էին ԱՀՀ-ի տարածաշրջանային տնօրեն Արփի Վարդանյանը և ԱՀՀ-ի կոնգրեսական կապերի տնօրեն Ռոբ Մոշերը:

Ողջունելով պատվիրակության այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին Ս. Աստվածածնի վերափոխման տոնին՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նրանց և ի դեմս նրանց բոլոր այն անձանց, ովքեր իրենց զորակցությունն են բերում հայ ժողովրդին:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի մասին: Անդրադառնալով արցախյան ազատամարտին՝ Նորին Սրբությունը նշեց. «Մենք հավատում ենք, որ ղարաբաղյան խնդիրը ևս իր արդար լուծումը պիտի գտնի, և մեր ժողովրդի զավակները պիտի ապրեն խաղաղության մեջ՝ կերտելով իրենց կյանքն իրենց հայրենի հողում»:

Ներկայացնելով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու գործունեությունը՝ Վեհափառ Հայրապետը մասնավորապես անդրադարձավ քրիստոնեական դաստիարակության, եկեղեցականների պատրաստության, եկեղեցաշինության, սոցիալական սպասավորության ոլորտներում առկա խնդիրներին:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց պատվիրակության անդամների հարցերին:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՖՅՈԴՈՐ ԿՈՆՅՈՒԽՈՎԻՆ

Օգոստոսի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց աշխարհահռչակ ռուս ճանապարհորդ Ֆյոդոր Կոնյուխովին՝ Հայաստանում Ռուսաստանի Հայերի Միության ներկայացուցիչ Գագիկ Աբրահամյանի, Ռ. Ծրացյանի, Հ. Ղուշչյանի, Վ. Գալստյանի և Տատյանա Կալաշնիկովայի ուղեկցությամբ:

Ողջունելով Մայր Աթոռ Ս. Էջմիածին փիար Կոնյուխովի այցելությունը՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նրան բարի և ազնիվ առաքելության համար:

Տեղեկացնելով Նորին Սրբությանը Արարատ լեռը բարձրանալու իր առաջիկա ծրագրի մասին և հայցելով Հայոց Հայրապետի օրհնությունը՝ ճանապարհորդը նշեց. «Ես միայն երեկ եկա Հայաստան, և ինքնաթիռից իջնելիս տեսնելով Արարատ լեռը, մտածեցի, թե որքան երջանիկ է այս ազգը, որ տեսնում է այն: Ես բարձրացել եմ բազում լեռնագագաթներ, սակայն ուխտել էի, որ Արարատ լեռը պետք է բարձրանամ, երբ լինեմ հիսուն տարեկան: Եվ այժմ այս նախաձեռնությամբ ցանկանում եմ ոչ միայն իմ, այլև բազում իմ հայազգի ընկերների երազանքը կատարել»:

Հանդիպման ավարտին Ֆյոդոր Կոնյուխովն այցելեց նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարաններ:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԼՈՌԵՆՑԻՈՒ ԹԸՆԱՋԵԻՆ

Օգոստոսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի մշակույթի և կրոնի գործերի նախարար Լոռենցիու Թընազեին: Պատվարժան հյուրին ուղեկցում էր Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը:

Ողջունելով նախարարի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Ռումինիա կատարած իր հայրապետական այցին և այն ջերմ հարաբերություններին, որոնք առկա են Հայ Առաքելական և Ռումին Ուղղափառ Եկեղեցիների միջև:

«Մենք անչափ ուրախ ենք, որ մեր եղբայրական կապերը Ռումինիայի ժողովրդի հետ եկեղեցական և պետական մակարդակների վրա շարունակում են սերտանալ և ամրանալ»,- նշեց Նորին Սրբությունը:

Ի պատասխան Նորին Սրբության խոսքերի՝ Ռումինիայի մշակույթի և կրոնի գործերի նախարարը խորին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: Նա անդրադարձավ նաև Ռումինիայում ապրող հայ համայնքի պատմական նշանակությանը ռումին ժողովրդի կյանքում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Օգոստոսի 3-ին, կիրակի.- Բ. կիր. զկնի Վարդավառի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տարոն եպս. Ճերեճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Միա մայր քո» (Հովհ. ԺԹ 27) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 22):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Օգոստոսի 10-ին, կիրակի.- Գ. կիր. զկնի Վարդավառի:***

Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 25):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Օգոստոսի 16-ին, շաբաթ.- Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի բաց լուսաւորչին Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:***

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Անուշավան վրդ. Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ Նմա» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 28):

***Օգոստոսի 17-ին, կիրակի.- Վերափոխումն Ս. Աստուածածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Եւ տեղին այն լիցի տուն Աստուծոյ եւ տուն աղօթից» (Ագաթանգեղոս, Հայոց Պատմություն) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 31):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի եկեղեցական թափորը, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, շարժվեց Բաց Խորան, որտեղ և կատարվեց խաղողօրհնություն:

***Օգոստոսի 18-ին, երկուշաբթի.- Բ. օր Վերափոխման: Յիշատակ մեռելոց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գեղարդ աբղ. Վահունին:

Պատարագի սրբազան արարողությունից հետո կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրեն ննջեցելոց»:

***Օգոստոսի 24-ին, կիրակի.- Բ. կիր. զկնի Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գարեգին արքեպս. Բեքչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 36):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Օգոստոսի 31-ին, կիրակի.- Դ. կիր. զկնի Վերափոխման: Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շահան արքեպս. Սվաճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Գործակից ենք ձեր՝ եւ աղաչենք, մի՛ ընդունայն զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ» (Բ Կորնթ. Զ 1) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 39):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

# "ЭЧМИАДЗИН" ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Авгут 2003 г.)

## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

1. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 400-летия основания армянской епархии Новой Джуги, 13 августа 2003 г., N 360 (стр. 3-5).
2. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Преосвященству епископу Тарону Чаречяну по случаю его награждения орденом «Св. Нерсес Шнорали», 5 августа 2003 г., N 179 (стр. 6-7).
3. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян. Его Высокопреосвященству архиепископу Татеву Гарибяну по случаю его 40-летия со дня рукоположения и пастырского служения, 21 августа 2003 г., N 362 (стр. 8-9).
4. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну и г-же Арсту и Монике Ерканянам по случаю награждения их орденом «Св. Григорий Просветитель», 21 августа 2003 г., N 182 (стр. 10-11).
5. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Рафаэлу Папаяну по случаю его награждения орденом «Св. Нерсес Шнорали», 15 августа 2003 г., N 180 (стр. 12-13).
6. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, бывшим выпускникам армянских училищ Египта по случаю их сбора в Ереване, 15 августа 2003 г., N 358 (стр. 14-15).
7. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 70-летия основания Армянского политехнического университета, 8 августа 2003 г., N 359 (стр. 16-17).
8. Патриаршие награды (пожалование энциклик, благословений и орденов Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, духовным и светским лицам, оказавшим большие услуги Армянской церкви) – (стр. 18).
9. Решением Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, лишен духовного сана иерей Армавирской епархии Маштоц Исаян, 25 августа 2003 г. (стр. 19).
10. Его Преосвященство епископ Тарон Чаречян удостоен ордена «Св. Нерсес Шнорали», 5 августа 2003 г. (стр. 20).
11. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, вручил Почетную грамоту директору Каджаранского медно-молибденового комбината Максиму Акопяну, 16 августа 2003 г. (стр. 21).

## ПРОПОВЕДИ

12. Проповедь Его Преосвященства епископа Тарона Черечяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 3 августа 2003 г. (стр. 22-24).
13. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Усика Сантуряна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 10 августа 2003 г. (стр. 25-27).
14. Проповедь архимандрита Анушавана Жамкочяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 16 августа 2003 г. (стр. 28-30).
15. Проповедь Его Преосвященства епископа Парена Аветикяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 17 августа 2003 г. (стр. 31-35).
16. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Гарегина Бекчяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 24 августа 2003 г. (стр. 36-38).
17. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Шаана Свачяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета и рукоположения во иерея, 31 августа 2003 г. (стр. 39-41).

## РЕЛИГИОЗНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

18. Панегирик св. Епифания Кипрского Святой Богоматери Деве Марии (перевод с древне-армянского диакона Тиграна Багумяна) - (стр. 42-50).
19. **ВЕРХОВНЫЙ АРХИМАНДРИТ ШНОРК ГАСПАРЯН** – Иерей при совершении Литургии (стр. 51-58).
20. **АРМИНЭ КАЗАРЯН** – Психологические особенности в деятельности сект; их «миссия» и психологические механизмы вовлечения людей в секты (научное исследование) – (стр. 59-63).

## НАРЕКАЦИ И НАРЕК

21. **ЗАРЕ ХРАХУНИ** – Нарек Нарекаци (стихотворение, посвященное 1000-летию «Книги скорбных песнопений» Григора Нарекаци) – (стр. 64-65).
22. **ВРЕЖ МКРТИЧЕВИЧ ВАРДАНЯН** - Григор Нарекаци в рамках мироощущения времени (научное исследование) – (стр. 66-77).
23. **АРАКЕЛ СУРЕНОВИЧ ОВАННИСЯН** – Поэма Григора Нарекаци «Книга скорбных песнопений» как общечеловеческое психоисследование (научное исследование) – (стр. 78-87).
24. **АКОП ПЕТРОСЯН** – Новая книга о Нарекаци и Нареке (о книге Ашота Петросяна «Нарек-лечебник») – (стр. 88-90)

## ИСКУССТВОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

25. **ЭММА КОРХМАЗЯН** – Особенности миниатюры Высокой Армении в конце XIII и XIV вв. (научное исследование) – (стр. 91-95).
26. **ЛИЛИТ ЗАКАРЯН** – Один эпизод из армяно-арабских культурных отношений (научное исследование) – (стр. 96-106).
27. **ВИГЕН ОВАНЕСОВИЧ КАЗАРЯН** – Исследование, посвященное иллюстрированной в Крыму рукописи (О труде Нири Стоун, посвященного скопированной в 1430 г. в Феодосии иллюстрированной рукописи «Житиия святых») - (стр. 107-111).

## РЕЦЕНЗИИ

28. **АСТХИК СААКЯН** – Новый биографический словарь (О биографическом словаре А. Пашаяна "Титулованные армяне") – (стр. 112-113).

## В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

29. Рукоположение и Литургия Обета в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 31 августа 2003 г. (помещены биографии иеромонахов Нарека Авакяна и Месропа Парсамяна) – (стр. 114-117).
30. Иеромонах Даниэл Фиттян возведен в сан архимандрита, св. Эчмиадзин, 7 августа 2003 г. (помещена и биография иеромонаха Даниэла Фиттяна) – (стр. 118-119).
31. Глава Котайкской епархии Его Преосвященство епископ Аракел Карамян освятил новопостроенную церковь св. Тух Манук в квартале Джрарат города Раздана, 23 августа 2003 г. (стр. 120).
32. Литургия Обета армянской Епархии Германии в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 24 августа 2003 г. (стр. 121).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

33. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял конгрессмена США Жозефа Кроулина, 16 августа 2003 г. (стр. 122).
34. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял делегацию сотрудников аппарата Конгресса США, 16 августа, 2003 г. (стр. 123).
35. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял известного русского путешественника Федора Конюхова, 23 августа 2003 г. (стр. 124).
36. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял министра по делам культуры и религии Румынии Лоренцину Тенезе, 26 августа 2003 г. (стр. 125).

37. Краткие церковные новости. Информация о Святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Святом Престоле Эчмиадзина в течение августа 2003 г. (стр. 126-127).

# "ETCHMIADZIN" OFFICIAL MONTHLY REVIEW OF HOLY ETCHMIADZIN

(August, 2003)

## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

1. Letter of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the 400[th] anniversary of the establishment of the Diocese of New Julfa, August 13, 2003, no. 360 (p. 3-5).
2. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Grace Bishop Daron Jerejian on the occasion of his decoration with the Order of "St. Nerses the Graceful", August 5, 2003, no. 179 (p. 6-7).
3. Letter of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Eminence Archbishop Datev Gharibian on the occasion of the 40[th] anniversary of his ordination to the priesthood, August 21, 2003, no 362 (p. 8-9).
4. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. and Mrs. Aret and Monique Yerganian on the occasion of their decoration with the Order of "St. Gregory the Illuminator", August 21, 2003, no. 182 (p. 10-11)
5. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Rafael Papayan on the occasion of his decoration with the Order of "St. Nerses the Graceful", August 15, 2003, no. 180 (p. 12-13).
6. Letter of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the alumni reunion of Egyptian-Armenian schools in Yerevan. August 5, 2003, no.358 (p. 14-15).
7. Letter of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of 70th anniversary of the establishment of the Armenian Engineering University, August 8, 2003, no. 359 (p. 16-17).
8. Pontifical Awards (In August 2003, a number of clergymen and laymen, having provided considerable service to the Armenian Church, were granted with Orders and Letters of Blessing by the Pontifical Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians)- (p. 18)
9. Rev. Fr. Mashtots Isayan from Armavir Diocese is declared defrocked by the Pontifical Order of His Holiness Karekin II, August 25, 2003 (p. 19)
10. Bishop Daron Jerejian was decorated with the Order of "St. Nerses the Graceful", August 5, 2003, (p. 20)
11. His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, awarded a diploma to Maxim Hacobian, the director of the Copper-Molybdenum industrial complex of Kacharan, August 16, 2003 (p. 21).

## SERMONS

12. Sermon delivered by Bishop Daron Jerejian in the Mother Cathedral of Holy Etchmiadzin during his Divine Liturgy of Oath, August 3, 2003 (p. 22-24).
13. Sermon delivered by Archbishop Hussik Santurian in the Mother Cathedral of Holy Etchmiadzin, August 10, 2003 (p. 25-26).
14. Sermon delivered by Very Rev. Fr. Anoushavan Jamgotchian in the Mother Cathedral of Holy Etchmiadzin, August 16, 2003 (p. 27-30).
15. Sermon delivered by Bishop Paren Avedikian in the Mother Cathedral of Holy Etchmiadzin during his Divine Liturgy of Oath, August 17, 2003 (p. 31-35).
16. Sermon delivered by Archbishop Karekin Bekjian in the Mother Cathedral of Holy Etchmiadzin during his Divine Liturgy of Oath, August 24, 2003 (p. 36-38).
17. Sermon delivered by Archbishop Shahan Svajian in the Mother Cathedral of Holy Etchmiadzin during his Divine Liturgy of Oath and Ordination of Priests,. August 31, 2003 (p. 39-41).

## RELIGIOUS STUDY

18. The Praise of the Holy Mother of Christ and Always Virgin Mary, by Bishop St. Epiphan of Cyprus (translated from Classical Armenian to Modern Armenian by Deacon Tigran Baghumian), (p. 42-50)
19. Very Rev. Fr. Shnork Kasparian - "Priest as Celebrant of Divine Liturgy", (p. 51-58).
20. Armine Ghazarian "The psychological peculiarities of the activities of cults: their "mission" and the psychological mechanisms of the people's involvement in cults" (research work) (p. 59-63).

## Narekatsi and Narek

21. **ZAREH KHRAKHUNI** – Narek of Narek (a dedication poem devoted to 1000th anniversary of the "Book of Lamentations" by Gregory of Narek) (64-65).
22. **VREJ MKRTITCH VARDANIAN** – Gregory of Narek in the framework of the disposition of time, (research work) (p. 66-77).
23. **ARAKEL SOUREN HOVHANNISSIAN** - The poem "Lamentations of Narek" by Gregory of Narek as a universal psychoanalysis, (research work) (p. 78-87).
24. **HAKOB PETROSSIAN** – A new book about Gregory of Narek and Narek (about the book "Narek as a book of healing" by Ashot Petrossian) (p. 88-90).

## ART STUDY

25. Emma Kourkhmacbian - The peculiarities of the miniature of Great Hayk in the end of the 13th and in the 14th century, (research work) (p. 91-95).
26. Lilit Zakarian – An Episode from Armenian- Arabic Cultural Relations, (research work) (p. 96-106).

27. Viken Hovhannes Zakarian – Research Devoted to a Manuscript Illustrated in Ghrim (about the work by Nira Stone dedicated to "Harants Var", illustrated Manuscript Reproduced in 1430, Theodosia (Ghrim)). (p. 107-111).

## CRITICAL REVIEW

28. **ASTGHIK SAHAKIAN** – A New Biographical Dictionary (About the biographical dictionary "Titular Armenians" by A. Pashayan), (p. 111-113).
29. Ordination of Priests and Divine Liturgy of Oath in the Mother See of Holy Etchmiadzin, August 31, 2003 (The Biographies of Rev. Fr. Narek Avagian and Rev. Fr. Mesro Parsamian included) - (p. 114-116).
30. Rev. Fr. Daniel Findikian was bestowed with the rank of Archimandrite, Holy Etchmiadzin, August 7, 2003 (the biography of Rev. Fr. Daniel included), (p. 114-116).
31. The newly built Church of "Tukh Manuk" of Djrarat, Hrazdan was consecrated by Bishop Arakel Karamian, Primate of the Diocese of Kotayk, August 23, 2003 (p. 119).
32. The Divine Liturgy of Oath of the Armenian Diocese of Germany in the Mother Cathedral of Holy Etchmiadzin, August 24, 2002 (p. 120).

## AUDIENCES AT THE MOTHER SEE

33. Audience granted by His Holiness Karekin II Catholicos of All Armenians to the member of US Congress Joseph Crowley, August 10, 2003 (p. 121).
34. Audience granted by His Holiness Karekin II Catholicos of All Armenians to the delegation of Staff of US Congressmen, August 16, 2003, (p. 122).
35. Audience granted by His Holiness Karekin II Catholicos of All Armenians to Russian traveler Fyodor Koniukhov, August 23, 2003, (p. 123).
36. Audience granted by His Holiness Karekin II Catholicos of All Armenians to the Minister of Culture and Religious Affairs of Romania, Dr. Laurentiu Tanase, August 23, 2003, (p. 124).
37. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during August 2003 (p. 125-126).